Ա. Ս. ԾԱՐՈՒՐՅԱՆ

ՀՐԱՀԱՏ ՏՅՈՒՍԱՓ

Ա. Ս. ՇԱՐՈՒՐՑԱՆ

891.99.092.[Տյոսար]

ՍՐԲՈՒՀԻ ՏՅՈՒՍԱԲ

ԿՅԱՆՔԸ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Ա 2ՀՅՅՏ3

ՀԱՅԿ ԳԻՏ. ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
1 9 ❋ ԵՐԵՎԱՆ ❋ 6 3

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Աշխատությունը նվիրված է հայ առաջին վիպասանուհի Սրբուհի Տյուսաբի կյանքի ու ստեղծագործության ուսումնասիրությանը: Քննության են առնված ինչպես գրողի վեպերը, այնպես էլ նրա բանաստեղծական ու հրապարակախոսական ժառանգությունը, հասարակական - մանկավարժական գործունեությունը: Արծարծված են նաև բանասիրական-գրականագիտական բնույթի զանազան խնդիրներ՝ կապված անցյալ դարի 80-ական թվականների արևմտահայ գրական շարժման հետ:

Հրատարակվում է
Երևանի Պետական համալսարանի
խմբագրական-հրատարակչական խորհրդի
որոշմամբ

ШАРУРЯН
АЛЬБЕРТ СРАПИОНОВИЧ
СРБУИ ТЮСАБ
Жизнь и творчество
(На армянском языке)
Издательство Ереванского государственного
университета
10 * Ереван * 63

Նվիրում եմ քրոջս՝

ԼԵՆԱ ՇԱՐՈՒՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Հեղինակ

ՀԱՍՊ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՓԱՏԵՐԱՆ № 2
ՈՒԿ ԴՅՄՈՒ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Թերըմբռնված ու չհասկացված մտավ Սրբուհի Տյուսաբը մեր գրականության պատմության մեջ։ Գնահատանքի ու մեծարանքի անկեղծ խոսքերը գրողի անվան շուրջը միախառնվել են կշտամբանքի ու զայրույթի նույնքան անկեղծ պոռթկումների հետ։ Բոլորի համար չէ, որ նա «հզոր միտք» էր, «համակրելի ու տաղանդավոր գրագիտուհի», «անզուգական հայուհի» և կնոջ-դատի «հանճարեղ ախոյան»։ Նա նաև «ծայրահեղ» էր ու «հեղափոխական», անբարոյականության ջատագով, որ երկու սեռերի իրավահավասարություն պահանջելով, ոճիր էր գործում։ «Ի՞նչ դատ, ի՞նչ միամտություն... այր մարդու կողմը կը բռնե Ս. Տյուսաբ...»,—զարմանքով բացականչել է քննադատներից մեկը[1]։

Ժամանակը մոռացության սարդոստայնով չպատեց հայ վիպասանուհու անունը։ Ընթերցողն այս աշխատության հավելվածներում կգտնի ցանկն այն ունումնասիրությունների ու հոդվածների, որ նվիրվել են Տյուսաբին։ Ի՞նչ տեսակետներ են արծարծվել, ընդունելի թե՞ մերժելի, այդ մասին կխոսվի ըստ անհրաժեշտության։ Այստեղ բավարարվենք նշելով, որ գրականագետները այսպես թե այնպես զբաղվել են Տյուսաբի ստեղծագործության ընդհանուր բնութագրմամբ միայն, առանց ի մոտո քննելու ինչպես նրա վեպերի գաղափարա-գեղարվեստական արժեքը, այնպես էլ դրանց ստեղծման հանգամանքներն ու հարուցած արձագանքները, ակնարկել են հեղինակի բանաստեղծական փորձերի մասին, բայց մոռացել են հրապարակախոսին ու հասարակական

[1] Միհրան Հովհաննիսյան, *Գրական համբավներ և անոնց քննահան արժեքը*, կ. Պոլիս, 1909, էջ 127։

գործչին։ Եթե ավելացնենք նաև, որ չի ստեղծվել գրողի գիտական կենսագրությունը, և նրա կյանքի ու գործունեության հետ աղերսվող մի շարք հարցեր մնացել են անպատասխան, ապա պարզ կդառնա, որ կատարված գործը եղել է թերի։ Ահա թե ինչու Սրբուհի Տյուսաբի կյանքի ու ստեղծագործության ամբողջական պատկերը գծագրելիս, անհրաժեշտ է դառնում ոչ միայն գրականագիտական, այլև բանասիրական և, եթե կուզեք, ոչ այնքան գրականագիտական, որքան բանասիրական աշխատանք։ Այդպես էլ պատկերացրել ենք խնդիրը և այդ ճանապարհով էլ ջանացել լուծել այն։

Գրիչը ճշմարտության գործիքն ըլլա-
լու է. ի՞նչ փույթ եթե հալածվի և
դատապարտվի:

ՍՐԲՈՒՀԻ ՏՅՈՒՍԱՔ

ԳԼՈՒԽ Ա

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԷՋԵՐ: ԳՐԱԿԱՆ ՆԱԽԱՓՈՐՁԵՐ

Բոսֆորի եվրոպական ափին բազմել է Միջագյուղը դույզ եկեղեցիներով, հարուստ ու պճնամոլ ազգայիններով, բամբասասեր կանանցով, «շատ կանոնավոր խեղճության» մեջ գտնվող վարժարանով, գողերով և ծովեզերքին թափված շների դիակներով՝ ահա Կոստանդնուպոլսի այդ նշանավոր թաղամասի պատկերը՝ Հակոբ Պարոնյանի նկարագրությամբ:

Հարստությունն ու ապականությունը, սակայն, նրա միակ հատկանիշները չէին: Միջագյուղը (Օրթագյուղ, Օրթաքյո) նշանավոր է նաև նրանով, որ այստեղ երկար տարիներ ապրել ու ստեղծագործել են պոլսահայ մտավորականության մի շարք կարկառուն դեմքեր՝ ինքը, մեծանուն երգիծաբանը, բանաստեղծ ու թատերագիր Մկրտիչ Պեշիկթաշլյանը, պատմավիպասան Ծերենցը, արքունի ճարտարապետ Հակոբ Պալյանը և շատ ուրիշներ:

Միջագյուղում էր բնակվում Վահանյան գերդաստանը, որտեղ և 1841 թվականին ծնվեց ապագա վիպասանուհին[1]:

---

[1] *Ինչպես արևմտահայ շատ գրողների, այնպես էլ Ս. Տյուսաբի կյանքի մասին քիչ բան է հայտնի: Գրողի կենդանության օրոք, որքան գիտենք, նրա կենսագրությունը չի շարադրվել: Մի փորձ արել է Ա. Ալպոյաճյանը իր «Ուսումնասիրություն Սրբուհի Տյուսաբի (վիպագիրը)» աշխատությունում («Բազմավեպ», 1900, №№ 8, 11, 12), որտեղ, սակայն, կան ժամանակի մամուլից քաղված մի քանի ընդհանուր տեղեկություններ: Թե որքան պակասավոր էր այդ կենսագրությունը, կարելի է դատել նրանից, որ անգամ ծննդյան որևէ տարեթիվ չի հիշատակված: Վիպասանուհու քիչ թե շատ հանգամանալի կենսագրությունը հրապարակվեց միայն նրա մահախոսականում («Արևելք», 1901, հունվարի 4, № 4526), որը և հետագա ուսումնասիրողների համար ար-*

Ո՞վ է եղել ընտանիքի հայրը՝ Սարգիս Վահանյանը, հասարակական ի՞նչ դիրք է գրավել, հայտնի չէ։ Գիտենք միայն, որ նա կեսարացի էր, Մաղաքիա Օրմանյանի բնութագրությամբ՝ «ընտիր և պատվական անձ»[1], որ մահացել է, երբ նրա դստրիկը մեկ տարեկան էր, և թաղվել Ննիգյուղի եկեղեցում։ Թեև ոչ Ա. Ալպոյաճյանի «Պատմություն հայ Կեսարիո» աշխատության մեջ և ոչ էլ ժամանակակիցների մոտ Սարգիս Վահանյանի մասին որևէ ուշագրավ փաստ չենք գրտնում, բայց կարելի է ենթադրել, որ նա ունևոր անձնավորություն է եղել, որի թողած կարողությունը ապահովել է ընտանիքի նյութական բարեկեցիկ վիճակը։ Վիպասանուհին տխրությամբ է հիշում իր անհայր մանկությունը։ «...Իմ մանկությո՛ւնս ալ մահատիպ քողերու մեջ փաթթվեցավ...

Ժանահավատ ազբյուր ծառայեց (մասնավորապես Ալպոյաճյանն իր «Ուսումնասիրության» առանձին հրատարակության կցեց մի «հավելված», ուր օգտագործեց «Արևելք»-ի հաղորդած կենսագրական փաստերը)։

Համաձայն «Արևելք» օրաթերթի, Տյուսաբը ծնվել է «1841 ին տաեննեերը»։ Ա. Ալպոյաճյանը, Լեոն, ակադ. Հր. Աճառյանը և ուրիշներ նրա ծննդյան թվականը նույնպես ընդունել են 1841-ը (Ա. Ալպոյաճյան, Ուսումնասիրություն Սրբուհի Տյուսաբի, Վենետիկ, էջ 77, Լեո, պրական կորուստները, Տիկին Սրբուհի Տյուսաբ, «Մուրճ», 1901, № 7, էջ 188, Հր. Աճառյան, Տիկին Սրբուհի Տյուսաբ, «Էջմիածին», 1951, հունվար—մարտ, էջ 41)։ Սակայն շատ չանցած Վրթ. Փափազյանը, իսկ վերջին տարիներս նաև Մ. Ճանաշյանը, Տյուսաբի կենսագրությունը շարադրելիս, նրա ծննդյան թվականը տեղափոխեցին 1842-ը (Վ. Փափազյան, Պատմություն հայոց գրականության, Թիֆլիս, 1910, էջ 686, Հ. Մեսրոպ Վ. Ճանաշյան, Պատմություն արդի հայ գրականության, հ. Ա, Վենետիկ, 1953, էջ 251)։ Երկու թվականներից մեզ առավել հավանական է թվում 1841-ը։ Մոր մահվան առթիվ տպագրված հուշերում Տյուսաբը պատմում է, որ ինքը հորից զրկվել է, երբ մանկիկ է եղել («Մասիս», 1884, № 3741, էջ 316)։ Թեոդիկը մի առթով հաղորդում է, որ Տյուսաբի հայրը մահացել է 1842 թվականին («Ամենուն տարեցույցը», Փարիզ, 1927, էջ 566)։ Եթե այս տեղեկությունը հավաստի է, ապա ավելի ճիշտ կլինի վիպասանուհու ծննդյան թվականը համարել 1841-ը։ Հոր մահացած տարում ծնված լինելու դեպքում Ս. Տյուսաբը վերը բերված հուշերում, անշուշտ, որևէ կերպ կանհարկեր այդ հանգամանքը։

[1] «Մասիս», շաբաթաթերթ, կ. Պոլիս, 1884, № 3733, էջ 104 («ի մահ բարեհիշատակ տիկնոջ Նազելվո Սարգսյան Վահանյանց»)։

ե՛ս ալ խաղացի սուգի շղարշներով. նախ և առաջ ականջներս ըմբռնեցին մայրական հեծեծանքը... Ինձ պատասխանեցին՝ երբ կհարցնեի, թե ո՞ւր էր հայրս. «Քու հայրդ Աստված է»։ Դժբախտությունն իմ ճակատիս վրա՛ ալ դրոշմից իր աղետանիշ կնիքը...»[1]։ Փոքրիկ Սրբուհու խնամքն իր վրա վերցրեց մայրը և կրկնակի հոգատարությամբ շրջապատեց նրան։ «Մինչ մանկիկ էի հայրս մեռավ, որը մնացի, սակայն որբություն չճանաչեցի, այնչափ մայրս բոլորովին սեր էր և անձնվիրություն»,—երախտագիտությամբ գրել է Տյուսաբը[2]։ Հիրավի, Նազլը Վահանը (1814—1884) ոչ միայն «մայր էր եզական. մայր պաշտելի և փարելի», այլև ժամանակի ամենազարգացած և հարգված հայ կանանցից մեկը։ Նա նույնպես կեսարացի էր. Արզումանյան ամիրայի դուստրը։ Տիրապետելով ֆրանսերենին ու հունարենին և ծանոթ լինելով եվրոպական գրականությանը, Նազլը Վահանը այն աստիճան գիտեր հայերենը, որ, ինչպես Մ. Օրմանյանն է պատմում, «կարող կը լիներ իբրև ընտիր ոք հայկաբան դասախոս յուր սիրասնունդ թոռնեկաց ոսկեղեն դարուն լեզվային գանձուց գեղեցկությունները հաղորդել և գաղտնիքները բացատրել»[3]։ Նազլը Վահանը մեծ ջանքեր է գործադրել արևմտահայ կրթական-լուսավորական շարժումը ծավալելու գործում. նա է հիմնել Միջագյուղի «Ս. Հռիփսիմյանց» իգական նշանավոր վարժարանը (1859)[4] և Աղքատախնամ տիկնանց ընկերությունը (1864), մեծ օգնություն է ցույց տվել նաև Գալֆայան որբանոցին. Նարեկյան ու Համազգյաց վարժարաններին։ Այդ ամենի համար էլ ազգասեր ու բարեգործ կինը վայելել է ժամանակակիցների սերն ու հարգանքը[5]։

---

[1] Թեոդիկ, *Ամենուն տարեցույցը*, 1923, Կ. Պոլիս, էջ 77 («Հատվածներ տիկն. Տյուսաբի օրագրեն»)։

[2] «Մասիս», 1884, № 3741, էջ 316։

[3] «Մասիս», 1884, № 3733, էջ 104։

[4] Ս. Տյուսաբը գրել է, թե իր մայրը Հռիփսիմյան վարժարանի *առանուհիներին սիրել է «անհուն սիրով» «բազում տարիներ գառնալով նրանց վահանը»* («Աշխարհաբար հայ լեզուն», Կ. Պոլիս, 1880, «Զոն...»)։

[5] Ժամանակակիցները, տարբեր առիթներով, համակրանքով են խոսել Նազլը Վահանի հանրային օգտաշատ գործունեության մա-

Սրբուհին մեծացել է մոր բարոյական ազդեցության տակ. «Մայրս և ես, մենք երկուքնիս աշխարհ մի կը կազմեինք իրարու համար»[1], և գրողի այն խոստովանությունը, թե իրեն շատ են քաջալերել մոր «զարգացած ու լուրջ գաղափարները», անկասկած ճշմարտություն է։ Նազլը Վահանը ոչինչ չէր խնայում իր դստեր բազմակողմանի զարգացման համար։ Թագուհի Շիշմանյանը (Սերենցի դուստրը) իր հուշերում պատմում է, թե ինչպիսի խստությամբ է նա հետևել Սրբուհու ուսումնական պարապմունքներին։ «Գլխավորապես հոգ տարած էր,—գրում է նա,—նախ իր աղջկան երաժըշտության մասին, կը փակե եղեր զայն պզտիկության դաշնակին սենեկին մեջ, կարը առնլով դրան դիմացը կը նստի մինչև որ երկու-երեք ժամեր հոն անցնե դաշնակին ձայնը լսելով։ Աս խնամքն ալ պարապը չէր գացած վասնզի ամենը կըսեին, թե օր. Վ. [ահան] լավ երաժիշտ է, և երբ Թագուկ հոն երթար և զայն դաշնակին դեմը նստած գտներ, չէր ուզեր որ ելնե...»[2]։ Մի այլ վկայությունից իմանում ենք, որ մինչև տասը տարեկան հասակը Սրբուհին ուսանել է Միջագյուղի ֆրանսիական դպրոցում[3]։ Այստեղ ստացած գիտելիքները չկարողացան գոհացնել ուշիմ ու խելացի աղջկան, ուստի նրա հետագա դաստիարակությունն ստանձնում է եղբայրը՝ Հովհաննեսը (1832—1891)։ Նա քրոջից մեծ էր 9 տարով, բարձրագույն կրթություն էր ստացել Փարիզում և Կ. Պոլիս վերադառնալուց մեկ տարի անց, 1853 թվականին հրատարակել «Սկզբունք քիմիական գիտության. ի պետս արհեստավորաց և նոր ուսանողաց» աշխարհաբար աշխա-

---

[1] «Մասիս», 1884, № 3741, էջ 318։

[2] ՀՍՍՌ Գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Սերենցի ֆոնդ, 25/I, էջ 19։

[3] ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, Հ. Աստուր [«Հայ մատենագրությունը և հայ մատենագիրները»], 17/I, էջ 331։

տությունը։ Հետագայում, 60-ական թվականներից, Հովհաննես Թողեց գիտությունը և ընդունելով Վահան անունը, նվիրվեց պետական գործունեության՝ գրավելով մի շարք բարձր պաշտոններ։ Նա վայելում էր Մերենցի, Գրիգոր Օտյանի, Միքայել Փորթուգալ փաշայի, ինչպես նաև Կ. Պոլսի ֆրանսիական դեսպանի և այլոց մտերմությունը։ Այս անձնավորությունն էլ ահա դառնում է քրոջ առաջին ուսուցիչը՝ սովորեցնելով նրան ֆրանսերեն, բնական գիտություններ և պատմություն։

Ժամանակակիցներից ոմանք իրենց հիշողություններում դանագան տեղեկություններ են հաղորդում Սրբուհի Վահանյանի երիտասարդական տարիների մասին։ Պատմում են, օրինակ, որ նա ֆրանսերենից բացի տիրապետում էր իտալերենին ու հունարենին, 12 տարեկան հասակում կարդում էր Պլուտարքոսի «Մեծ մարդոց կյանքը»[1], աչքի էր ընկնում երաժշտական փայլուն ձիրքով և ամեն անգամ, երբ մոր հետ երևում էր Կոստանդնուպոլսի ազգային շրջաններում, «զմայլանքի մրմունջներ առաջ կը բերեր իր շուրջը՝ նույնքան իր ազնվականությամբ, որքան իր կանխահաս տաղանդին համբավովը»[2]։ Այդ հուշերի մեջ հատկապես արժեքավոր է Սրբուհի Երիցյանի վկայությունը, որից օգտվել են Տյուսաբի գրեթե բոլոր ուսումնասիրողները։ «Այդ օրիորդը (Ս. Վահանյանը— Ա. Շ.) իր բարեկամուհյաց շատերի նման, եթե հայատյաց չէր, գոնե շատ օտարասեր էր։ Նա գեղեցիկ խոսում էր ֆրանսիերեն, հունարեն, իտալերեն և անգղերեն[3], հիանալի դաշնամուր էր զարնում և հայերենի մասին խոսք եղած ժամանակ ուղղղղկան սեռական ասելով ծաղրում էր»[4]։

Թերևս այդպես էլ անցներ՝ նրա կյանքը և հայ բարձր հասարակության մյուս զավակների նման նա էլ մնար օտա-

---

1 ԳԱԹ, Թ. Ագաթյանի ֆոնդ, Հ. Ասատուր [«Հայ մատենագրությունը և հայ մատենագիրները»], 17/I, էջ 331։

2 Տ. Ա. (Տիգրան Արփիարյան), «Օրվան մահերը», «Մասիս», 1901, № 2, էջ 30։

3 Ս. Երիցյանը միակն է, որ խոսում է Ս. Վահանյանի անգլերենի իմացության մասին։

4 «Փորձ», Թիֆլիս, 1877, գիրք չորրորդ, էջ 194։

բասիրտ, եթե մի բարեբախտ պատեհություն օգնության չգար։ Բարեկամներից մեկի տանը Սրբուհին ծանոթանում է Մկրտիչ Պեշիկթաշլյանի հետ։ Մեծ բանաստեղծը, որի գործերը, Մատթեոս Մամուրյանի վկայությամբ, «ժողովրդյան սրտին մեջ դրոշմյալ են, քան թե թղթի վրա»[1], իր լայն համբավով ու կրակոտ հայրենասիրությամբ բորբոքեց օրիորդի նիրհած ազգային զգացումները, և Սրբուհին ցանկություն հայտնեց աշակերտել նրան։ Նազլը վահանը, որ ձգտում էր դստերը տեսնել ժողովրդի համար պիտանի մարդ, ինչ խոսք, սիրով համաձայնվում է։ Եվ ահա Սրբուհին սկսում է հայրենի մասնավոր դասեր առնել։

Ամեն անգամ, երբ առիթ է ներկայացել խոսել Պեշիկթաշլյանի և ապագա վիպասանուհու փոխհարաբերությունների մասին, ուսումնասիրողները գերազանցապես հրապուրվել են խնդրի ինտիմ կողմով։ Տակավին 1868 թվականին, բանաստեղծի մահվան թարմ տպավորության տակ գրած իր մի ոտանավորում («Ի մահ Պեշիկթաշլյանի») Մինաս Չերազը ակնարկում է այն զգացմունքների մասին, որ տածել է Պեշիկթաշլյանը դեպի Սրբուհին.

Նա, բընության մտերիմ,
Նոր խանդ քաղեր ի ծաղկանց.
Նա գեվյուռին թեթև թևոք
Գյուր ողջույնները խանդակաթ
Առաքեր առ հայրենի
Սրգալըռիկ գերբուկները,
Եվ առ կույսն այն վառաբախտիկ
Որ այժմ ըղնա գուցե ողբա,
Բոկոտն և հերաթձակ,
Ընդ հովանյավ նոճեստանաց,
Հեծեծաձայն բողոք բարձալ
Ընդդեմ վըճռո Կըթածին...»[2]

Հետագայում, հատկապես Ս. Տյուսաբի մահից հետո, ավելի ու ավելի բարձրաձայն սկսեցին խոսել այն ուժեղ

[1] Վրույր (Մ. Մամուրյան), *Հայկական նամականի*, Զմյուռնիա, 1872, էջ 216։

[2] Մինաս Չերազ, *Գրական փորձեր*, երկրորդ տիպ, Կ. Պոլիս, 1874, էջ 2։ (Ընդգծումը մերն է)։

սիրո մասին, որ տածել է Պեշիկթաշլյանը դեպի սևաթույր աչքերով ու սամույրե խոպոպիկներով «անուշիկ կուսիկը», որ դրսանքի դուրս գալիս՝

Տըված մազերն հովուն է ծուփ,
Կը թըռչըտի ընդ քար, ընդ փուշ,
Դարե է դար, թուփե է թուփ.[1]

Բանաստեղծի տաղերում որոնել են այդ մեծ սիրո տխուր արձագանքները, ոմանք կշտամբել են գեղեցիկ ու կենսախինդ օրիորդին, որ չի կարողացել սիրել իր ուսուցչին[2]։ Այդ օրինակ աշխատանքը, որ առաջին հերթին հետաքրքիր է Պեշիկթաշլյանի կյանքի և ստեղծագործության համակողմանի ուսումնասիրման տեսակետից, անշուշտ շնորհակալ է։ Բայց հարկավոր է նաև մեծ բանաստեղծի և հայ առաջին վիպասանուհու փոխհարաբերությունները քննել ավելի լայն առումով՝ աշակերտուհու վրա ուսուցչի ունեցած գրական-հասարակական ներգործության իմաստով։ Առանց այդպիսի քննության չի կարելի ճիշտ պատկերացնել Սրբուհի Տյուսաբի ստեղծագործության վաղ՝ բանաստեղծական շրջանը։

Մինչև այդ մասին խոսելը պարզենք մի հարց. ե՞րբ է Սրբուհի Վահանյանն աշակերտել Պեշիկթաշլյանին։ Հրանտ Ասատուրը[3] և նրա հետևությամբ էլ Ա. Ալպոյաճյանը[4] այդ թվականը համարել են 1861-ը։ Սակայն մի հետաքրքիր փաստ գալիս է ոչ միայն ճշտելու այդ, այլև լուսաբանելու մի քանի այլ կարևոր խնդիրներ։

1939 թվականին «Բազմավեպ»-ը «Նշխարներ մեր Ան-

---

[1] Մ. Պեշիկթաշլյան, *Տաղեր, Երևան, 1961, էջ 35։ Տե՛ս նաև 181-րդ էջի ծանոթագրությունը։*

[2] Ա. Զոպանյան, *Մկրտիչ Պեշիկթաշլյանի կյանքն ու գործը, Փարիզ, 1907, էջ 213։ Տե՛ս նաև Հ. Ասատուր, Դիմաստվերներ, էջ 151, Ա. Պիպեռեյան, Հուշարձան Մ. Պեշիկթաշլյանի, Կ. Պոլիս, 1914, գլուխ ԺԱ, և այլն։*

[3] Հ. Ասատուր, *Դիմաստվերներ, Կ. Պոլիս, 1921, էջ 155։ Հեղինակը նախապես, 1914 թ. գրած իր մի անտիպ աշխատության մեջ այդ թվականը համարել է «1862 ի առեննները»* (ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, 17/1, էջ 331)։

[4] Արշակ Ալպոյաճյան, *Պատմություն հայ կեսարիո, Բ հատոր, Դահիրե, 1937, էջ 2115։*

մահներեն» ընդհանուր խորագրի տակ հրապարակեց իր տրամադրության տակ եղած մի քանի նյութեր։ Դրանցից մեկը Մ. Պեշիկթաշլյանի նամակն է Ա. Բագրատունուն՝ գրված 1864 թվականի մայիսին։ Այդտեղ Պեշիկթաշլյանը խընդրում է Բագրատունուց՝ տպագրության հանձնարարել իր աշակերտուհու մի բանաստեղծությունը. «Ընկալչիք ընդ գրոյս,—գրում է նա,—եւ զնամակ աշակերտուհւոյս Սրբուհի Վահանեան օրիորդին թոռին Արզումանեանց, մի ի ջերմ զարմացողաց Ձերոց, զարմանալի եւ ինքն ուշիմութեամբն եւ քերթողասէր ախորժակօք. նամակն այն եւ ուղերձն առ Ձեզ եւ քերթուածն Գառուն յորս չիք ամենեւին սրբագրութիւն, արդիւնք են միամեայ աշակերտութեան իւրոյ. զԳառուն, եթե այնպես հաճոյ թուեսցի Ձեզ, տաջիք յիւրում ի Բազմավիպին ի խրախոյս նմանասեռ հասակցաց»[1]։

Այս վավերաթուղթը նախ ցույց է տալիս, որ Սրբուհի Վահանյանն աշակերտել է Պեշիկթաշլյանին 1863 թվականից և, ապա, հմտացել է գրաբարին ոչ թե չորս տարում, ինչպես կարծում է Ս. Երիցյանը, այլ մեկ տարում[2]։ Սովորաբար Տյուսաբի գրական բեմելը կապում են Պեշիկթաշլյանի մահվան առթիվ լույս ընծայած նշանավոր բանաստեղծության հետ։ Բայց ահա պարզվում է, որ տակավին ուսուցչի կենդանության օրոք և վերջինիս ջանքերով տպագրվել է Սրբուհու բանաստեղծությունը։ Եվ իրոք, «Բազմավեպի» 1864 թվականի օգոստոսյան համարում հանդիպում ենք

---

[1] «Բազմավեպ», 1939, էջ 253։

[2] «Փորձ», Թիֆլիս, 1877, գիրք չորրորդ, էջ 194։ Ս. Երիցյանի վերեւում վկայակոչված խոսքերը Ա. Զոպանյանն ընկալել է այնպես, թե մինչև Պեշիկթաշլյանին աշակերտելը Սրբուհին «բառ մը հայերեն չէր գիտեր» («Մկրտիչ Պեշիկթաշլյանի կյանքն ու գործը», էջ 56)։ Իրականում աշակերտուհին այս կամ այն չափով իմացել է հայերենը, բայց պետարբեր է եղել գեպի մայրենի լեզուն։ Հակառակ դեպքում հազիվ թե Պեշիկթաշլյանին հաջողվեր մեկ տարում նրան այնքան գրաբար սովորեցնել, որ վերջինս կարողանար նամակ ու բանաստեղծություններ գրել։ Այդ տեսակետից ավելի վստահելի տեղեկություն է հաղորդում Ք. Շիշմանյանը։ Սրբուհին, գրում է նա, «Զափազանց մաքուր հայերեն մը կը խոսեր թեպետ, բայց երբ բառը իրեն պակսեր՝ տաճկերեն ու պարսկերեն բացատրությունքը կօգնեին իրեն...» (ԳԱԹ, Մերենցի ֆոնդ, 25/1, էջ 18)։ Տե՛ս նաև Հ. Ասատուր, Դիմաստվերներ, էջ 155։

«Գարուն» խորագրով մի բանաստեղծության, իսկ Պեշիկթաշլյանի հիշատակած «Նամակն» ու «Ուղերձը» տպագրված են ավելի ուշ՝ 1939 թվականին։ «Գարուն» բանաստեղծության վերջում, ուր սովորաբար դրվում է հեղինակի ստորագրությունը, խմբագրությունը զետեղել է այսպիսի մի ծանոթություն. «Ազգային ուսումնասեր Պոլսեցի օրիորդի մը մեկ տարվան աշակերտության երկասիրություն է եղեր այս գրվածքս, զոր ի քաջալերս իրեն ջանիցը և ի գեղեցիկ հորդոր համազգի և ջանասեր օրիորդաց կը խնդրվինք հրատարակելու»[1]։

«Գարունն» էլ ահա Տյուսաբի առաջին տպագիր գործն էր։

Ժամանակակիցներից շատերին հայտնի են եղել «Պեշիկթաշլյանի սանուհուս այլ բանաստեղծություններ։ Այսպես, Սրբուհի Երիցյանը պատմում է, որ տակավին ուսուցչի կենդանության օրոք, «Օրիորդ Սրբուհի Վահանյանի գրչի տակից դուրս եկավ մի փոքր բանաստեղծություն Թառամյալ տերեվ[2] անունով, որ ձեռագիր Փարիզ ուղարկվեցավ Պրյուդոմ հայագետին, որպեսզի ֆրանսիերեն թարգմանե իր ժողովածուների մեջ»[3]։ Ավելի ուշ Գրասեր Ատոմը (Ծղիա Տեմիրճիպաշյան) գրում էր, թե ինքը իմացել է, որ «Սրբուհին հատորավոր ոտանավորներ ուներ»[4] և տարբեր առիթներով խոսում է «վաղուց անվանի քերթուհու» հորինած երգերի[5],

---

[1] «Բազմավեպ», 1864, էջ 245։ Ի դեպ նկատենք, որ ժամանակակիցներից ոմանք իմացել են, որ «Գարնան» հեղինակը Տյուսաբն է։ Ազգային երեսփոխան Աբրահամ Այվազյանը մի առիթով Տյուսաբին համեմատում է հին հունական քնարերգու Սապֆոյի (Սաֆո) հետ, քանի որ նա «երբեմն բնության գարունը երգեց Բազմավիպին մեջ» («Մամուլ», կ. Պոլիս, 1882, № 905, էջ 159)։

[2] Մ. Ճանաշյանը «Սրբուհի Տյուսաբ» հոդվածում հայտնում է, թե իրեն չի հաջողվել գտնել այդ ոտանավորը («Բազմավեպ», 1949, էջ 108)։ Այդ հոդվածը մինակ ուսումնասիրությունն է, ուր ուշադրություն է դարձված Ս. Տյուսաբի բանաստեղծություններին։

[3] «Փորձ», 1877, գիրք չորրորդ, էջ 194։

[4] «Մասիս», 1880, № 2709։

[5] «Մասիս», 1881, № 2891։

«Մեծահատոր անտիպ տաղարանի» մասին[1]։ Ա. Պիպեռճյանը վկայում է, որ «Օր. Սրբուհի Վահանյանի անտիպ քերթվածոց ձեռագիրը» գտնվել է Պեշիկթաշլյանի ժամանակակիցներից մեկի՝ Թովմաս Եսայանի մոտ[2]։

Ինչ է եղել այդ բանաստեղծությունների ճակատագիրը, անհայտ է։ Տյուսաբի մահից տարիներ անց միայն, տարբեր առիթներով տպագրվեցին մի քանի գործեր, որոնք թույլ են տալիս գաղափար կազմելու հեղինակի բանաստեղծական գործունեության մասին։

Ինչպես Տյուսաբի գրական առաջին ելույթը՝ «Գարուն»-ը, այնպես էլ մեր ձեռքի տակ եղած մյուս բանաստեղծությունները գրաբար են և գրվել են 60-ական թվականներին։ Պարզելու համար այդ բանաստեղծությունների նշանակությունը Տյուսաբի ստեղծագործության համար, համառոտակի ծանոթանանք այն միջավայրին, ուր իր առաջին քայլերն է արել գրողը։

Ունևոր և հարգված գերդաստանի դուստր Սրբուհի Վահանյանը ստացել էր հիմնավոր կրթություն։ Նա լավ ծանոթ էր եվրոպական ժողովուրդների անցյալին, կարդացել էր Պլատոն ու Արիստոտել, Հերոդոտ ու Քսենոֆոն, Հոմերոս, Սոֆոկլես, Եվրիպիդես, Վերգիլիոս, Հորատիոս, Դանթե, Միլտոն, Շիլլեր, Բայրոն, Լամարթին, Մյուսե, երկրպագում էր Հյուգոյին, բայց... հեգնում էր հայոց լեզուն։ Աշակերտելով Պեշիկթաշլյանին «ուշիմութեամբ և քերթողասէր ախորժակօք» զարմանալի Սրբուհին, ինչպես գիտենք, այնքան է առաջադիմում, որ գրում է գրաբար նամակ ու բանաստեղծություններ, որոնք «չիք ամենեւին սրբագրութիւն»։ Պեշիկթաշլյանը ոչ միայն մեծ ազդեցություն է թողնում սանուհու վրա, այլև մտերմանում է Վահանյանների ընտանիքին[3]։

---

[1] «Գրական և իմաստասիրական շարժում», 1885, տետր յոթերորդ, էջ 120։

[2] Ա. Պիպեռճյան, Հուշարձան Մ. Պեշիկթաշլյանի. Մեծ բանաստեղծի կյանքն ու գործերը, կ. Պոլիս, 1914, էջ 145 (ծանոթագրություն)։

[3] Երբ Պեշիկթաշլյանի հիվանդությունը ծանրացել էր, Վահանյանները (մանավորապես Սրբուհին) հաճախ են այցելել, խնամել ու մխիթարել նրան։ Իր նամակներից մեկում բանաստեղծը նկատի ունե-

Ուսուցիչն աշակերտուհուն վարակում է հայրենասիրությամբ, ներարկում ազգային հպարտության ազնիվ զգացումներ, արթնացնում նրա մեջ խորունկ սեր ու հետաքրքրություն մեր ժողովրդի հոգևոր մշակույթի նկատմամբ։ Այժմ նա ուշադիր հետևում էր հայկական պարբերականներին, հատկապես Մխիթարյանների հրատարակություններին։ Սրբուհին, որի հոգում խամրել էին ազգային զգացումները, երգի է վերածում Պեշիկթաշլյանի գեյթունյան շարքի նշանավոր գործերից մեկը՝ «Մահ քաջորդույն» հայրենասիրական բանաստեղծությունը, կարդում հայ մատենագիրներին և ուսումնասիրում մեր պատմությունը։ Նրա ուսումնասիրության տարինների մասին հետաքրքիր հուշեր է պատմում Գրասեր Ատոմը։ «Մանուկ էի դեռ,—գրում է նա,— և հայնժամ իր հարյուրավոր բերաններով «Ծղբայր համ մեքի», «Գեյթունցի պատանիի» և «Արշակ Բ»-ի հեղինակի անվան պրեթև հավասար տարածած էր նորա «սանուհվույն» անունը, որ եկած մինչև իմ ականջներս ալ դղված էր։ Երկու գրաքիւոք... օր մը կը վիճաբանիին, թե ո՞րն է Պեշիկթաշլյանի պլուխ գործոցն. երրորդ մը կարծիք հայտնեց, թե Սրբուհի վահանն էր մեր ազգային բանաստեղծին առաջին հրաշակերտն»[1]։

Պեշիկթաշլյանի ազդեցությամբ էլ Սրբուհին ծանոթանում ու հրապուրվում է Մխիթարյան գրողներով։ Այդ պարզ երևում է Արսեն Բագրատունու նկատմամբ նրա ունեցած վերաբերմունքից։ Դեռևս 1852 թվականին կարդալով «Հայկ դյուցազն»-ի ձեռագիրը, Պեշիկթաշլյանը նրա հեղինակին է հղում մի նամակ, ուր այդ «հանճարի հրաշակերտ» գործը ավելի բարձր է գնահատում, քան Տասսոյի «Ազատագրված Երուսաղեմը» և դասում է Հոմերոսի ու Վերգիլիոսի գլուխ գործոցների շարքը[2]։ Տասներկու տարի անց Պեշիկթաշլյանի

նալով նրանց մարդասեր վերաբերմունքը, երախտագիտությամբ գրել է. «Օրհնյալ ըլլան անոնք, որ իրենց արտին գանձերը աննախանձ կը բանան տառապելոցն առջև...» (Մ. Պեշիկթաշլյան, Մատենագրություններ, կ. Պոլիս, 1870, էջ Դ)։

[1] «Մասիս» 1880, № 2709։

[2] Տե՛ս «Բազմավեպ», 1904, էջ 42։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏ. Ի-ՏԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
Ա 93353

991—2

աշակերտուհին Բագրատունուն գրած նամակում նույնպես իր հիացումն է հայտնում նրա հանճարին և գտնում է, որ «Հայկ դյուցազն»-ի «վսեմութիւն ոճոյն, ճոխութիւն և միանգամայն փափկութիւն իմաստից, համայն ասել ճարտարութիւն գործոյն՝ կարգեն զնա ի դաս չքնաղագիւտ քերթուածոց»[1]:

Սրբուհի Վահանյանի ակնածալից վերաբերմունքը դրսևորվել է նաև նույն շրջանում գրած. «Ուղերձ առ Հ. [այր] Ա.[րսէն] Կ.[ոմիտաս] Բագրատունի» ոտանավորում[2]: 23-ամյա հայուհին, անշուշտ, Բագրատունու համակրանքին արժանանալու համար ջանացել է իր չափածո ձոնը գրել «վսեմ ոճով»: Ավելին, նա ընդօրինակել է նաև «Հայկ դյուցազն»-ի տաղաչափությունը՝ ընտրելով այսպես կոչված «հայկական չափը»՝ յամբական ազատ քառանդամի ոտանավորը: Ս. Վահանյանն այստեղ դիմում է հուսահատված «Քերթողական ոգուն»[3]: Արտասվաթոր վարսերը սքողել են նրա չքնաղ դեմքը, որովհետև չկան այլևս իր «շքեղափայլ պսակի» ծաղիկները՝ Հոմերոսը, Վերգիլիոսը, Տասսոն ու Միլտոնը: Հեղինակը մխիթարում է Ոգուն, հորդորում սրբել հորդահոս արցունքները, քանի որ կա Բագրատունին, որը փոխարինում է իր եղբայրներին: Ոտանավորը վերջանում է այսպիսի կոչով.

Ոգի՛ մո՛ւտ զըւարճ է կայք օ՛ն զառաջեաւ որդեկիդ
Ի գայլայլիկ երկնագեղ գաշնակաւոր իւր նըւագաց.
Եւ գափնեօք ըզգըլուխըն պըսակեալ, կարդա՛ ի խանդ
«Փառօք կեցցե՛ս յաւէտ Մեծ Արսէն Բագրատունիդ»:

Բագրատունին հեղինակություն էր մնում Ս. Վահանյանի համար նաև հետագա տարիներին: Պեշիկթաշլյանի միջոցով ստանալով նրա լուսանկարը, Ս. Վահանյանը 1866 թվականին մեր մատենագրության «մեծ արքային» գրում է երկրորդ նամակը, ուր հավատացնում է. «Պաշտելի կենդանագիր Ձեր

---

[1] «Բազմավեպ», 1939, էջ 254:

[2] «Բազմավեպ», 1939, էջ 255:

[3] Նկատենք, որ «Քերթողական ոգի» արտահայտությունը գործածել է նաև Մ. Պեշիկթաշլյանը (հիշենք «Քերթողական ոգին Հայաստանում և քուն» բանաստեղծությունը և այլն):

խրախոյս կարդա ինձ և՛ ևս քրտնաջան բերիլ յուսումն մեծոց դպրութեանց»[1]:

Եթե «Ուղերձը...» դեղարվեստական տեսակետից հետաքրքրություն չի ներկայացնում, ապա «Գարունը» արդեն մատնում է հեղինակի բանաստեղծական նուրբ զգացողությունը: Դա բնության գարնանքի մի ոգևորված գովք է՝ հյուսված վառ երևակայությամբ ու նկարեն պատկերներով: Բանաստեղծուհին ողջունում է գարնան գալուստը, երբ շողով ու փայլով պճնված արևգակը առատորեն լույսի փնջեր է թափում տարփելի բնության վրա: Հառնում է բնությունը և ուրախացած լեռները, բլուրներն ու հովիտները պճնվելու հրավեր են կարդում: «Գողտր երաժիշտքըն օդային»՝ թռչուններըը, որ ձմռան սարսափից օտար երկրներ էին պանդխտել, այժմ կարավան կազմած վերադառնում են: Ահա. և գեղահասակ ու փափկամեջք ծառերը, որ սիրատենչ իրար են փարվում՝ միմյանց հետ խառնելով տերևներն ու երանգները և իրենց քաղցր մրմունջը: Հովառածիծաղ քնքուշ առվակը անուշ ձայնով առաջ է հոսում, և ափին մնացած անմիտ թռչնիկը իր դողդոջուն պատկերիկն է դիտում նրա հայելում, և իր դայլայլին պատասխան չստանալով, տրտմած շտապում է թառել ոստիկի վրա:

«Գարուն»-ի վրա դժվար չէ տեսնել Մ. Պեշիկթաշլյանի համանուն բանաստեղծության ապդեցությունը, որն ինչպես հայտնի է, դրված է ավելի վաղ[2]: Աշակերտուհու մոտ նույն հովիկն է, որ գգվում է ծաղիկներին, նույն թռչնիկը, որ երգում է ծառերի միջից և նույն հանդարտիկ առվակը, միայն թե նրա հեղինակած բանաստեղծությունը չունի ուսուցչի դողտրիկ ստեղծագործության հասարակական հնչեղությունն

---

[1] «Բազմավեպ», 1940, էջ 26: *Ինչպես երևում է բագրատունին խորհուրդ է տվել Պեշիկթաշլյանի աշակերտուհուն կարդալ հայ մատենագիրներին: Այդ կարելի է եզրակացնել Ս. Վահանյանի նամակի հետևյալ տողերից. «Ընթերցայց, զի հրամայես, զնախնիս մեր երբեմն. ըայց գաճաճս վաստակեցայց կրթիլ եւեթ ընդ հետս հսկայիդ» (Նույն տեղում, էջ 26):*

[2] *Այս մասին տե՛ս Մ. Պեշիկթաշլյան, Տաղեր, Երևան, 1947, էջ 94, ծանոթագրություն:*

ու վարպետությունը։ Ս. Վահանյանի «Գարուն»-ը թեև գրաբար է, բայց նույնպես գրված է պարզ, դյուրասահ տողերով.

Գեղածածան ի մոլջ ծառոց
Որպէս անոյշ երգ բըղխելոց,
Զայն մ'ի լուր գայ եւ գաղարի,
Եւ վերըստին բսկըսանի.[1]

Անշուշտ, Պեշիկթաշլյանի ազդեցությամբ, Ս. Վահանյանն աշխատել է իր բանաստեղծությունը ևս երգի նմանեցնել, այդ նպատակով է նա կիրառել տարբեր չափեր, ստեղծել դյուրահունչ հանգեր, մի քանի անգամ միտումով կրկնել առաջին քառատողը.

Ահա գարուն
Այն սիրասուն
Ի գեղ ի գարդ
Ի դէմք գըւարթ։

Կարելի է հարց տալ, ինչո՞ւ Պեշիկթաշլյանը, որ աշխարհաբար տաղեր էր գրում, ոչ միայն չի խանգարել իր աշակերտուհուն գրաբար բանաստեղծություն հորինել, այլև նպաստել է նրա տպագրությանը։ Գրաբար բանաստեղծելն, անտարակույս, եղել է Սրբուհի Վահանյանի աշակերտական պարտականություններից մեկը՝ որպես այդ լեզվին կատարելապես տիրապետելու մի միջոց (Ջմռուանանք, որ «Բազմավեպ»-ի խմբագրությունը «Գարուն»-ը համարում է «մեկ տարվա աշակերտության երկասիրություն»)։

Ժամանակագրական կարգով Ս. Վահանյանի հաջորդ գործերը կրում են «Ուղերձ սիրոյ» և «Ինչէ՞» վերնագրերը, որոնք լույս են տեսել «Ամենուն տարեցույց»-ում։ Սրանցից առաջինը գրված է 1867 թվականին, իսկ երկրորդը՝ 1868 թվականի հոկտեմբերի 12-ին։ Թեև Թեոդիկը տպագրելով այս գործերը չի նշում աղբյուրը, բայց հավանաբար դրանք այն «մեծահատոր տաղարանի» էջերից են, որոնց մասին ակնարկում է Ե. Տեմիրճիպաշյանը։

«Ուղերձ սիրոյ» ոտանավորը[2] նվիրված է Մերենցի դստերը՝ օր. Թագուհի Շիշմանյանին (1859—1888)։ Մերենցը,

---

[1] «Բազմավեպ», 1864, էջ 244։

[2] Թեոդիկ, *Ամենուն տարեցույցը*, 1915, կ. Պոլիս, էջ 159—160։

ինչպես դիտենք եղել է Վահանյան ընտանիքի, հատկապես Սրբուհու եղբոր բարեկամներից մեկը։ Թ. Շիշմանյանը իր հուշերում պատմում է, թե ինքը հոր հետ այցելել է Վահանյանների Միջագյուղի բնակարանը և «փաղաքշելու շատ վարպետ» օրիորդ Վահանյանը իր վրա «շատ ազդեցություն բրավ»[1]։ Հետագայում, երբ հայր ու աղջիկ գտնվում էին Կիպրոսում, նրանք նամակագրական կապի մեջ էին իրենց պոլսեցի բարեկամների հետ. Ծերենցը նամակ էր գրում Տյուսաբի մորը՝ նապլը Վահանին, իսկ Թագուկը՝ Սրբուհուն[2]։ Չափածո այս ձոնն, ահա, Սրբուհի Վահանյանի՝ Թագուհի Շիշմանյանի հանդեպ ունեցած համակրանքի դրսևորումն է։ Ս. Վահանյանը դրվատում է նրա մտավոր ընդունակությունները և ֆիզիկական բարեմասնությունները. ո՞վ է, որ տեսնելով նրա «գրգռուն հասակը» չի զարմանում. «նորատի իմաստունի» առաջ ապուշ են կտրում նրա «նորընձիւղ բնկերուհիք»։ Բանաստեղծուհին այնքան է հափշտակվում, որ դժվարանում է նույնիսկ որոշել, թե ինչ է նա.

Զի՞նչ եցես դու, ասա՛, հրեշտա՞կ կամ թե պլպլուլ, զի՞նչ, ասա՛,
Ընդէ՞ր լռես, ո՛ հանճարիկ, զի՞նչ լինչ անուն քեզ հընչեցէց.

Սրբուհու ոճը այս ոտանավորում դարձյալ վերամբարձ է. հասկացնելու համար, թե իր հերոսուհին քանի տարեկան է, նա գրում է. «Ի գարնայնոյ լոկ ութ պըսակ ի զարդ գրկիսոյդ գեղագանգուր». կամ որպեսզի ընդգծի նրա լեզվի ճարտարությունը, ահա թե ինչ համեմատություն է անում.

Քարոզես գեղեցկաձայն զըՍկիպիոն և զԱննիբաղ.[3]
Եւ ճարտար քո լեզուաւ ճառես դահեղ նոցուն ըզմարտս։

Անցյալի պատմական նշանավոր դեմքերին վկայակոչելը, ծանրակուտակ մակդիրները, հաճախակի կրկնվող հռետորական հարցումներն ու կոչերը վկայում են, որ Ս. Վահանյանը շարունակում էր հետևել Մխիթարյան հեղինակներին։

---

[1] ԳԱԹ, Ծերենցի ֆոնդ, 25/I, էջ 18։

[2] Նույն տեղում. Թագուհի, «Նամակներ», 2/II, էջ 58—59։

[3] Ակնարկում է կարթագենյան զորավարներ Էմիլիան Սցիպիոնին (մ. թ. ա. 185—129 թթ.) և Հաննիբալին (մ. թ. ա. 247—183 թթ.)։

Ի հակադրություն «Ուղերձ...»-ի, «Ինչէ՞»-ն[1] կրում է քնարական մեղմ շունչ։ Սրբուհու խոսքն այստեղ իլոք անպաճույճ է, նա չի ձգտում հասնել հանդիսավորության. խոսքը չի համեմում բազմաբարդ բառերով ու ճոռոմ արտահայտություններով։ Հեղինակը պարզ ու անկեղծ արտահայտում է իր մտորումներն ու իղձերը կյանքի այլազան երևույթների հանդեպ։ «Ինչէ՞»-ն ուշագրավ է նաև նրանով, որ Տյուսաբի հայտնի բանաստեղծություններից առաջինն է, ուր, այսպես թե այնպես, երևում են վաղ շրջանի նրա հասարակական ըմբռնումները։ Բանաստեղծուհին ափսոսում է, որ արևգակը չերմացնի աղքատի գետնատարած անկողինը (խրճտին) և տոթակեզ ամայի վայրով անցնող մարդը աղբյուր գտնի, որ մենավոր բանտարկյալի հոգու հուրը զովացնի դթության ցողը, մայրը մահանա որդու դրկում, իսկ մանկիկը չմրմնջա «ո՜ւր թռար մայր», որ գողտրիկ կույսին չասեն «ա՜յ խարդախ»։ Բայց Սրբուհին ուրիշ նվիրական ցանկություններ էլ ունի, որոնք ուսուցչի գաղափարական ներգործության արդյունքն են.

Ինչէ՞ գահուց ոճիրներէ ծանրացած
Տապալիլ Ագաուբեան հրզօր ըլնչեն.
Ինչէ՞ իւր ծոց գըտնալ գքաջեր հայրենեաց.

Բանաստեղծությունը վերջանում է Աստծուն ուղղված մի սրտամորմոք աղերսով.

Եվ ինչէ՞ ինձ, Տե՜ր գըթութեան, ոչ եւս տեսնել
Ըզգերեզման վաղամեռիկ սիրելւոյ.
Ինչէ՞ հոգւոյս չըսել ի յոյզ «աւա՜ղ մեռաւ»
Ինչ՜, ո՜ Տեր, կի շառաչ լացի վերա շիրմացւոյ։

Ինչպես Ս. Տյուսաբի ստեղծագործության, այնպես էլ նրա և Մ. Պեշիկթաշլյանի փոխհարաբերությունների ուսումնասիրման տեսակետից բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում «Աւ Քերթողն պ. Մ. Պեշիկթաշլեան. երգե՛ա քերթող» բանաստեղծությունը, որը լույս է տեսել Ա. Պիպեռճյանի ուսումնասիրությունում։ Հրատարակչի վկայությունից երևում է, որ Պեշիկթաշլյանի մահվան առթիվ գրած

[1] Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1921, կ. Պոլիս, էջ 28։

բանաստեղծությունից բացի «Հանճարեղ աշակերտուհին՝ իր մեծ վարպետին անվան նվիրած է նաև ուրիշ քերթվածներ ալ», որոնցից մեկն էլ «Երգե՛ա քերթող»-ն է[1]: Մեսրոպ Ճանաշյանն այս բանաստեղծությունը համարում է Ս. Վահանյանի լավագույն գործը և ենթադրում է, թե այն Պեշիկթաշլյանի «Յիշե՛ դիս, կո՛յս...» երգի պատասխանն է[2]:

Մեզ թվում է, որ «Երգե՛ա քերթող»-ն ունի կենսագրական ստույգ և պատասխանն է ոչ միայն «Յիշե՛ա դիս, կո՛յս»-ի, այլև «Յետին հառաչք» և «Քնար ու շիրիմ» բանաստեղծությունների: Պեշիկթաշլյանի կենսագրություններում, ինչպես նկատել ենք, նշել են, որ նա անպատասխան սիրով սիրել է իր աշակերտուհուն: Ա. Զոպանյանը գրում է. Սրբուհին «խորապես հարգելով ու որդիական գորովով սիրելով հանդերձ իր վարպետը, չէ կրցած ըլլալ այնքան վսեմ որ այդ թոքախտավոր, տգեղ ու չունևոր մտավորականին ուզեր տալ իր ամբողջ սիրտն ու ամբողջ կյանքը»[3]:

Բայց արդյոք աշակերտուհին չի՞ սիրել ուսուցչին: Որքան էլ դժվար լինի այդ հարցին որոշակի պատասխան տալ, քանի որ չունենք որևէ ուղղակի հիշատակություն, այնուամենայնիվ «Երգե՛ա քերթող» բանաստեղծությունը, որն ի միջի այլոց Զոպանյանին անծանոթ էր, այդպիսի ենթադրության համար որոշ հիմք տալիս է: Բանաստեղծության յուրա-

---

[1] Ա. Պիպեռեյան, Հուշարձան Մ. Պեշիկթաշլյանի, էջ 148: Տանոմատության մեջ հեղինակն ավելացնում է, որ Թ. Նազարյանն իրեն է հանձնել Ս. Վահանի «Երկու քերթվածները», որոնցից նա հրատարակում է մեկը՝ «Երգե՛ա քերթողը»:

[2] «Բազմավեպ», 1949, էջ 105:

[3] Արշակ Զոպանյան, Մկրտիչ Պեշիկթաշլյանի կյանքն ու գործը, Փարիզ, 1907, էջ 213: Դժվար է համաձայնվել Զոպանյանի հետ, թե «վսեմության» բացակայությունն է խանգարել Ս. Վահանյանին՝ սիրել ուսուցչին: Կային ավելի դրամական պատճառներ, և թերևս հենց գլխավորն նկատի ուներ բանաստեղծը, որ «Հնար և շիրիմում» սիրո էակին համարում էր եղեմական բարձրագույն դարևանդի վրա տնկված անմահ մի վարդ, որին հասնելու համար «իմ յոյժ նըբին էին թեւք: Չիրավի, ամերայի դուստր Նապլը վահանը կհամաձայնվե՞ր արդյոք, որ իր Սրբուհին ամուսնանա մի հիվանդ ուսուցչի հետ, համ՝ սեռական բաթձրաստիճան պաշտոնյա վահան էֆենտին թուլլ կտա՞ր քրոջը՝ դառնալ ազքատ բանաստեղծի կին:

քանչյուր տողը համակված է Պեշիկթաշլյանի հանդեպ ունածած քնքուշ ու խոր ղդացմամբ։ Սրբուհին սիրում է դալուկ կույսի բերնից ելնող հառաչանքը, ամպերի տակ լռկլյան հեծծող լուսինը և ամեն ամեն բան, ինչ հիշեցնում է Պեշիկթաշլյանի «սևասպարիսակ» փանդիռը։ Ավելին.

Սիրեմ, քերթող, զերզ քո մազոտ որ ի յոլոջն իմ սըպրդի.

Նա ուզում է իմանալ, թե ինչու քերթողը վհատված միրժում է իր փանդիռը. մի՞թե ավարտել է ցավերի բաժակը, որ չի թրթռում քնարը։ Բանաստեղծության այս խոսքերը կարելի է հասկանալ միայն մտաբերելով Պեշիկթաշլյանի «Քնար և շիրիմի» հետևյալ տողերը.

Որպես և սիրտ իմ փշրեցաւ, և գո՛ւ Ջընար, բեկեցիս ջախջախ,
կամ՝
Տրոմաղդեցիկ իմ Ջընա՛ր, ե՛կ ընդ իս, այլ ոչ խարխոյիս...

Իսկ բանաստեղծն ուզում էր կոտրել քնարը, որովհետև չկար այլևս իր «ոսկեթել խոպոպներով» կույսը։ Մեր կարծիքով Պեշիկթաշլյանի ինչպես այս, այնպես էլ «Յիշե՛ա գիս, կո՛յս» ու «Յետին հառաչք» բանաստեղծությունները գրվել են այն ժամանակ, երբ Սրբուհին պատրաստվում էր նշանվել, կամ արդեն նշանված էր մի բժշկի հետ, և աշակերտուհին էլ «երգե՛ա քերթողը» հորինել է հենց այդ օրերին (հավանաբար մինչև նշանվելը)[1]։ Դրանում համոզվելու համար շարունակենք լսել Սրբուհուն։ Բանաստեղծուհին ցավում է, որ լռել է քերթողի քնարը և.

---

[1] *Այդ առթիվ Ա. Զոպանյանը գրում է. «Պեշիկթաշլյան դժնդակ չարչարանքով մը գալարված է՝ իր սիրուն չփոխարինված ըլլալը հատատելով. և այդ չարչարանքը ամենասուր է դարձած՝ երբ օր. Վահանյան նշանված է Տր. Վահանյան անունով բժշկի մը։ Բայց այդ նշանուքը խզված է քիչ հետո. և Պեշիկթաշլյան ատով իր ցավը քիչ մը մեղմացած զգալով, կըցած է բարեկամական կապեր պահպանել մինչև մահը՝ իր աշակերտուհվույն հետ...» («Մկրտիչ Պեշիկթաշլյանի կյանքըն ու գործը», էջ 214)։ Ս. Վահանյանի նշանված լինելու մասին լուրը հաստատում է Թ. Շիշմանյանը՝ ավելացնելով, որ «այդ նշանը ետ տրվեց բժշկին կողմեն, վասնզի վարվուն և խոսուն աղջիկը ահաբեկ դաբձուց հանդարտ և խոհուն մարդը (բժշկին — Ա. Շ.), որ մտածեց թաքուն թե ան որ վարժած էր դովվիլ, երևիլ և շլացնիլ՝ ընտանեկան անձուկ շրջանին մեջ երջանիկ պիտի չըլլար և չըներ» (ԳԱԹ, Մերենցի ֆոնդ, 25/I, էջ 19)։*

Հայցեմ ձայնիս մրմնջմունքեան, և ըղձանացն եմ նըրով,
Աւտիկ գամ երիւզած տալ ի քս ձեռդ ըզփանդիս.

Նա երազում է նորից լսել վանդիոի ձայնն ու բերկրալ դրա մրմունջից և բարեկամաբար հորդորում է քերթողին՝ շտրամել իր ներկայությամբ.

Չի յիշե՛ս թէ դուցէ վերջին անգամ գարուն իսկ ժըպտի,
Ցիշեա՛ թէ դուցէ յետին այս ազաչանքս է, քերթո՛ղ։

Ինչպես անջրդի վայրում ջրի կաթիլ տեսնչացող մարդը, նա ևս ծարավ է քերթողի «երկնապարիկ» երգերին, ուստի և աղաչում է նրան երգել.

Երգե՛ա, դի օր ևկեսցէ որ վիշտ քեզ լեցի քս մերժում,
Ցանժամ ի դուր դուն գոլծիցես բերկրացնել զանտրուփ իմ սիրտ։

Այս և նախորդ տողերը, թուլլ են տալիս ենթադրել, որ Սրբուհու սրտում ևս անթեղված է եղել մի ուժեղ զգացում, և նա նշանվել է ոչ առանց կսկիծի։

Սրբուհի Վահանյանի մյուս գեղեցիկ բանաստեղծությունը, անկասկած, «Ի յիշատակ պ. Մ. Պեշիկթաշլեանի» ողբերգն է, որը գրվել է ուսուցչի մահից (1868, նոյեմբերի 29) անմիջապես հետո և զետեղվել «Մասիս» շաբաթաթերթի դեկտեմբերի 7-ի համարում։

Պեշիկթաշլյանի մահը հուզել է մեր մտավորականությանը և նրանցից ոմանք այդ ծանր կորստի ճնշմամբ գրել են մի շարք ոտանավորներ։ Սակայն մեծ բանաստեղծին տված ամենաարտաուղ հրաժեշտը, նրա շիրիմին գրված ամենաբուրավետ ծաղկեփունջը Սրբուհու ողբերգն էր։ Գրիգոր Օտյանի «Ցրտաստրտուտ մատախլապատ ի վիմէդ» ոտանավորը[2] անհույզ է և գուրկ պոետական խոսքի փայլից, Էդուարդ Հյուրմուզյանի դամբանագիրը[3] անարվեստ է ու խրթին, իսկ Մինաս Չերազի «Ի մահ Պեշիկթաշլյանի» ոտանավորը[1], թեև

---

[1] *Համեմատիր «Ցետին հառաչք»-ի հետևյալ տողերը.*
... Ո՛կոյս, թոյլ տուր յետին եւ այս ընդադ
Հայիլ ի քեզ, պըշնուս ի դէմդ. և աչերոյդ լուղիլ ի լոյս,
Ի քոյդ խոպոպս գընալ ծածան որպես և այնք յայտիցդ ի վայր,
Ցետոյ մեկնիլ ի նոցունց, սըրտակըտուր մեկնիլ ի քէն...
(«Տաղերք», էջ 122, 123)։

[2] Մ. Պեշիկթաշլյան, *Մատենագրություններ*, կ. Պոլիս, 1870, «Հրատարակությունն առ ընթերցողս» առաջաբանում, էջ Ը։

[3] Նույն տեղում, էջ Ը—Թ։

[4] Մինաս Չերազ, *Գրական փորձեր*, էջ 1—4։

աշխարհաբար, բայց երկարաբան է, չոր ու ճոռում-ի տարբերություն այս գործերի, Ս. Վահանյանի ողբերգն ունի գեղարվեստական արժեք։ Ա. Ջոպանյանն այն համարում է «շատ պեղեցիկ» մի քերթված. «այնքան հզորապես հղացված, աղնըվապես զգացված և հաջողապես արտահայտված է՝ հակառակ քանի մը սակավաթիվ տկար տողերու, որ կարելի չէ չզարմանալ ու չցավիլ որ այդ բանաստեղծությունն արտադրելե հետո օր. Վահանյանն քնարը բոլորովին լքած ըլլա»[1]։ «Երբ Սրբուհի Վահանի եղերգն հրատարակվեցավ,—վկայում է Ե. Տեմիրճիպաշյանը,— ոմանք գեղեցիկ, հույժ գեղեցիկ գտան ոտանավորն, այլք Հայր Արսեն Բագրատունիին ա-նունն արտասանեցին նորափայլ քերթուհվույն վրա, որ ոսկեդարյան Հայերենով կտաղեր իր սրտի վիշտն...»[2]։

Աշակերտուհու անկեղծ ու խորապես հուզիչ բանաստեղծությունը ցույց է տալիս, թե նա որքան ճիշտ էր կարողացել հասկանալ իր ուսուցչին. չկա այլևս նա, ով իր քնարը ձոնել է ազգին ու հայրենիքին, որի քաղցր հրդը բազմամյա խորախորհուրդ նիրհից արթնացնում է հավերժի դյուցազուններին ու իր թատերգություններում ճառել տալիս հայրենիքի փառքի, խորհատակ տառապանքների ու բյուրավոր վերքերի մասին։ Չկա նա, որի նվագավոր աղերսանքներին ի պատասխան հայրերը պատռում էին իրենց պատանները և մերկացնելով արյունաթաթավ լանջերը՝

Ցայտ առնել թե արիւն իւրեանց շըրջի ի մեզ,
Թ'են նոյն մեր քաջք, նոյն մեր ոսոխք, նոյն մեր շահք»։

Չկա նա, որի խանդավառ մեղեդիները ցրտահար սրտերում վառում էին սիրո կայծը և բաժանված սրտերը միմյանց փարելով խնդաբարբառ ձայնում էին. «Եղբարք համք մեք»։

Բանաստեղծուհին սգում է նաև իրեն հասած անամոք վիշտը։

---

[1] «Մկրտիչ Պեշիկթաշլյանի կյանքն ու գործը», էջ 222։
[2] «Մասիս», 1880, № 2709։
[3] «Մասիս», 1868, № 378։

Մինչ լալէիր մուսայական ըղդաշնակ
Տալ ի յորդոր փորձել մատանցս, ո՛ քերթող,
Զըլեատէի թ՛էը իմ քընար հընչելոց
Զայս սըգաւոր դիմ ողջոյն ո՛հ առ քո տապան։

Բայց վշտաբեկ աշակերտուհին մխիթարում է «մեծոգի» բանաստեղծին՝ հանգիստ ննջել, որովհետև քառասուն գարունները, որ ապրել է նա, նրա կյանքին փառք են բարդել.

Հանգի՛ր. յուշ քո կեցցե ցորչափ աղնիւն ու լաւն,
Ցորչափ հանճարոն պաշտեսցի, հանգի՛ր, Ո՛դի։

Ըստ երևույթին իրավացի է Զոպանյանը. այս ողբերգից հետո Սրբուհի Վահանյանը այլևս չի բանաստեղծել[1]*։ Իհարկե, եթե անգամ պահպանված լինեին նրա բոլոր բանաստեղծությունները և տպագրվեին ժամանակին, արևմտահայ չափածոյի վրա, որն ուներ Պեշիկթաշլյանի և Դուրյանի նման դագաթներ, դարձյալ նկատելի հետք չէին թողնի։ Դատելով քննած մի քանի դործերից, դրանց թեմատիկան նեղ է, դաղափարական հագեցվածությունը թույլ, գրիչը դեռևս անվարժ և, որ առավել կարևորն է, գրված են գրաբար*[2]*։ Այդ ամենը ղդացել է նաև հեղինակը և տարիներ անց, երբ նա համբավավոր վիպասանուհի էր, հրատարակության չի հանձնել իր դրական նախափորձերը։ Բայց կորստից փրկված այդ մի քանի պատառիկներն անգամ՝ շատ բան են ասում։ Դրանք ամենից առաջ օգնում են մեզ պատկերացում կազմելու Սրբուհի Տյուսաբի 60-ական թվականների ստեղծագործության մասին և պարզելու նրա ու Պեշիկթաշլյանի փոխ-*

---

[1] *Այս ասելով, մենք նկատի չենք առնում „Berceuse“ («Օրորոց») վերնագրով ֆրանսերեն ոտանավորը («Լույս», 1903, № 41, էջ 644), որը հորինել է Ս. Տյուսաբը դատեր՝ Դորիի (1872—1891) օրորոցի մոտ երգելու համար։*

[2] *Հետագայում Ս. Տյուսաբը գրել է մի արձակ գրաբար «Նզերգ» («Մասիս» 1880, № 2783), որտեղ նա ողբում է իր ազդականուհու վաղաժամ մահը։ Հետաքրքիր է, որ այդ «Նզերգին» կցված նամակը աշխարհաբար է։ Տյուսաբն այդպես է վարվել՝ կարծելով, որ գրաբարն ավելի հարմար է տառապագին զգացումները արտահայտելու համար։ Դրանից հետո գրողն առհասարակ հրաժարվեց գրաբարից և ստեղծագործեց աշխարհաբարով, որի պաշտպանությանն է նվիրված նրա «Աշխարհաբառ հայ լեզուն» աշխատությունը (Կ. Պոլիս, 1880)։*

հարաբերությունների որոշ կողմերը։ Այդ գործերը խոսում են նաև Տյուսաբի բանաստեղծական օժտվածության մասին, որն այնքան վառ կերպով դրսևորվեց նրա գեղարվեստական արձակում։

Գրական փորձերին զուգընթաց Սրբուհի Վահանյանը սկսում է ապրել հասարակական շահերով, ուշադիր հետևում է մամուլին ու գրական աշխարհի երևույթներին։ Նա ևս իր մոր և ուսուցչի օրինակով նվիրվում է հանրային գործունեության։

Երբ Նազլը Վահանը 1864 թվականի մարտին հիմնեց «Աղքատախնամ տիկնանց ընկերությունը»[1] և ստանձնեց նրաատենապետությունը, Սրբուհին դարձավ այդ ընկերության օգնական ատենադպիրը։ Ընկերության անդամները, տոգորված «աղքատին Քրվառ վիճակը» բարվոքելու ցանկությամբ, այդ նպատակով կազմակերպում էին զանազան միջոցառումներ՝ ստացված հասույթը հատկացնելով չքավորներին։ Առանձնապես նշանավոր են 1866 թվականի Բարեկենդանին տրված թատերական 9 ներկայացումները, որոնցից մեկի վերջում ճառով հանդես է եկել Մ. Պեշիկթաշլյանը[2]։

Սրբուհի Վահանյանի վաղ շրջանի (60-ական թվականների) հայացքների գնահատման տեսակետից չափազանց հետաքրքիր է նրա վերաբերմունքը դեպի Գրիգոր Չիլինկիրյանի «Ծաղիկը»։ Հայտնի է, որ զմյուռնահայ նշանավոր դեմոկրատը անհաշտ պայքարի մեջ էր մտել արևմտահայ պահպանողականության դեմ։ Չկարողանալով այլևս հանդուրժել «Ծաղիկ»-ի խմբագրի աղատախտհությունն ու մարտական գրոհները, ռեակցիան ավելի ու ավելի էր ուժեղաց-

---

[1] Այս ընկերության մասին տե՛ս Հ. Եփրեմ Վ. Պողոսյան, Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հ. Ա, Վիեննա, 1957, էջ 192—196։

[2] Հ. Եփրեմ Վ. Պողոսյան, Պատմություն հայ մշակութային ընկերություններու, էջ 195։ Պեշիկթաշլյանի ճառը («Օրթագյուղի Աղքատախնամ ընկերության ի նպաստ. թատերական ներկայացումեն վերջը խոսեցյալ») տե՛ս «Մկրտիչ Պեշկիթաշլյանի քերթվածներն ու ճառերը», ծանոթագրություններով հրատարակեց Արշակ Զոպանյան, Փարիզ, 1904, էջ 155—157։

նում հալածանքները։ Եվ ահա ներկայացավ պատիճ առիթը։ Չիլինկիրյանն իր հանդեսի 1865 թվականի մարտի 1-ի համարում տպագրեց «Ժևոն-Ժաններուն պարահանդեսը» վերնագրով մի անստորագիր թղթակցություն, որտեղ նկարագրված էր Իզմիրի (Զմյուռնիա) պարահանդեսներից մեկը։ «Մաղիկ»-ը ծաղրում էր հայ երիտասարդներին, որոնք ժամերով կանգնում էին հայելու առաջ, պճնվում, զարդարվում գոհարեղեններով և պարահանդես գնում արկածներ որոնելու ու եվրոպական հոռի սովորույթները կապկելու համար։ «Հայ աղջիկները, ինչպես նաև Իզմիրի երիտասարդաց մեծագույն մասը,— գրում էր հանդեսը,— ապագային ոչի և նախանձախնդրություն չունին։ Կը թողուն ինչ որ ազգային է, ինչ որ ավանդական է և իրենց կը սեփականեն ինչ որ օտարինն է՝ առանց առանալ ուզելու ասոր նաև այն հատկությունը, որ կը կազմե մարքին ազնվապետականությունը»[1]։

Գաղտագած պահպանողականները Չիլինկիրյանին մատնեցին դատաստանական ատյանին՝ ամբաստանալով անբարոյականության մեջ։ «Մաղիկ»-ի խմբագիրը բանտարկվեց, իսկ հանդեսի հրատարակումը դադարեցվեց մի քանի շաբաթով։ Չիլինկիրյանի գաղափարակից և մերձավոր բարեկամ Մատթեոս Մամուրյանը (Վրույր), որ այդ տարիներին պաշտոնավարում էր Կ. Պոլսում, իր մի թղթակցությունում (1865, մարտի 30) պատմում է, թե ինչպիսի արձագանքներ է առաջ բերել «Ժևոն-Ժաններուն պարահանդեսը» մայրաքաղաքում։ Ակումբում Մամուրյանի ուշադրությունն է գրավում «Գեղանի և աշխույժ» մի օրիորդ՝ Ս. Վահանյանը, որ զայրույթով դատապարտում է Իզմիրի հետադեմների քստմնելի գործերը։ «Մաղիկն անարգած չէ պարահանդիսին գեղանիներն,— ասում է օրիորդը,— այլ անոնց իբր պաշտպան կանգնող անձինք...»[2]։ Նրա համոզմամբ Չիլինկիրյանը պետք

---

[1] «Մաղիկ», Զմյուռնիա, 1865, № 107, էջ 358։

[2] Վրույր (Մ. Մամուրյան), Հայկական նամականի, էջ 54։ Թեև հեղինակը ուղղակիորեն չի տալիս Ս. Վահանյանի անունը (ինչպես որպեսզի հայ բարոյախիտ մտավորականների դիմանկարները դծագրելիս նրանց ներկայացնում է զանազան կեղծանունների տակ), սակայն մի վկայություն տարակույս չի թողնում, որ խոսքը Պեշիկթաշլյանի աշա-

է փառավորվի որպես «կարծյաց ազատության նահատակ»։ Մամուրյանը «սիրուն ատենաբանի» դատողությունների առթիվ նկատում է. «Գեղագեմ օրիորդին այս պարզ ու իմաստալից խորհրդածությունները լսելով՝ գետնե գետին անցա. մերթ կզմայլեի անոր անկեղծության և Իզմիրի կանայքը պաշտպանելու և երիտասարդությունը դատապարտելու երկսայրի լեզվին վրա, մերթ կսրտմտեի, որ նորաբույս կույս մը մեզնե ավելի ազատամիտ՝ մեզի կանացի բնության վրա դաս տալու կհանդգնի, մանավանդ, երբ կնշմարեի, որ բազմականները ներքին ախորժ մը կզգային զիս անոր առջև շանթահար և ափ ի բերան ընկած տեսնելով»[1] և փափագում է, որ ապագա սերնդի դաստիարակման համար այդպիսի կանայք շատ լինեն։

Ճիշտ չէր լինի, անշուշտ, վերոբերյալ փաստից հանգել այն եզրակացության, թե արդեն 60-ական թվականներին Սրբուհի Վահանյանի մեջ մշակվել էր որոշակի աշխարհայացք։ Այդ տարիները ավելի շուտ կարելի է դիտել որպես մի շրջան, երբ ապագա վիպասանուհին գտնվելով իր մոր և Պեշիկթաշլյանի գաղափարական ազդեցության տակ, ուղիներ էր որոնում ինչ-որ ձևով օգտակար լինելու հայ հասարակությանը։ Այդ շրջանում էլ հենց նրա մեջ սկսում են ծնվել հասարակական որոշ հետաքրքրություններ ու հայացքներ, որոնք վերջնականորեն ձևավորվեցին միայն 80-ական թվականներին։

Վերտուհու մասին է։ Ժամանակակիցներից մեկը՝ բանաստեղծ ու գրականագետ Մինրան Հովհաննիսյանը, Ալպոյաճյանի «Ուսումնասիրություն Սրբուհի Տյուսաբի» աշխատության մասին դրախոսականում հաստատում է, որ Մամուրյանի գրուցակիցը Ս. Վահանյանն է։ Նա գրում է. «Իսկ Զիլինկիրյան, որ իր 107 թիվ Ծաղկին մեջ գրածին համար դատափետվեցավ Զմյուռնիո մեջ, հոս միայն (կ. Պոլսում—Ա. Շ.) աշխույժ օրիորդ մը գտավ, որ իր դասը պաշտպանեց ակումբի մը առջև, ուր կը գտնվեր Մ. Մամուրյան, երբ տակավին դիվանադպիր էր...

Այդ երբեմնի օրիորդը օր մը տիկին եղավ և Իզմիրի պարահանդեսին վրա ինչ որ կը խորհեր՝ նույնպես խորհեցավ իր միջավայրին վրա. ուստի գրիչը ձեռք առավ և գրեց («Մասիս», 1901, օգոստոսի 11, № 32, էջ 511)։

[1] Վրույր (Մ. Մամուրյան), Հայկական նամականի, էջ 56։

* * *

Սրբուհի Վահանյանի՝ 70-ական թվականների կյանքի ու գործունեության մասին սուղ տեղեկություններ կան միայն։ 1869 կամ 1870 թվականներին Սրբուհին ամուսնանում է Ֆրանսիացի երաժշտագետ Պոլ Տյուսաբի հետ[1]։ Նրա ամուսնու մասին նույնպես քիչ բան է հայտնի։ Տյուսաբների գերդաստանը հավանաբար վաղուց էր հաստատվել Թուրքիայի մայրաքաղաքում, քանի որ նրանք Շիշլի թաղամասում ունեին իրենց տոհմական կաթոլիկ դերեզմանատունը։ Պոլը վարում էր արքունական երաժշտախմբիղեկավարի պաշտոնը, դաշնակահար էր և Սրբուհու երաժշտության ուսուցիչը։ 1882 թվականին մի հաղորդման մեջ Պ. Տյուսաբը հիշվում է որպես բեյ[2], իսկ հետագայում, 80-ական թվականների երկրորդ կեսին, նա ստանում է փաշայի տիտղոս։ Վիպասանուհին ամենաջերմ կերպով է արտահայտվել նրա մասին և դոհ է եղել ճակատագրից, որ իրեն է պարգևել «ամուսիններուն լավագույնը»[3]։ Պոլ Տյուսաբը ոչ միայն չի

---

[1] «Արևելքը», (1901, № 4525), իսկ ապա նաև Ա. Ալպոյաճյանը («Ուսումնասիրություն...», էջ 77), Հ. Ասատուրը («Դիմաստվերներ», էջ 158) և այլ հեղինակներ գտնում են, որ Ս. Վահանյանն ամուսնացել է 1871-ին և նույնիսկ նշում են ամսաթիվը՝ հունվարի 27։ Բայց այդ փաստի վավերականությունը խիստ տարակուսելի է։ Մ. Գեշիկթաշլյանի երկերի առաջին ժողովածուի («Մատենագրություն») հրատարակիչները «Հրատարակություն առ ընթերցողս» առաջաբանում դեռևս Ս. Վահանյանի՝ ուսուցչի հիշատակին ձոնված բանաստեղծությունը, կցել էին մի այսպիսի ծանոթություն. «Մեզի պարտք կը համարինք այս համառոտ հառաջաբանը վերջացնել այս տողերով, զոր յուր աշակերտաց առաջիններեն երբեք օրիորդն Սրբուհի Վահանյան (Տիկին Տյու Սափ)» (էջ Թ)։ Ինչպես տեսնում ենք, Սրբուհին 1870 թ. արդեն ամուսնացած է եղել և առաջաբանի հեղինակը (Մերենց) անհրաժեշտ է համարել նշել նրա ամուսնական ազգանունը՝ Տյու Սափ։

[2] «Մամուլ», հանդես ազգային, կ. Պոլիս 1882, № 931, էջ 363 («Արծրունյան վարժարան»)։

[3] «Հատվածներ տիկն. Տյուսաբի օրագրեն», Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1923, կ. Պոլիս, էջ 73։

խանգարել կնոջը զբաղվելու հանրօգուտ գործերով, · այլև ինքը ևս այս կամ այն չափով մասնակցել է դրանց։ Որպես մի ազատամիտ ֆրանսիացի, նա խրախուսել է Սրբուհուն և պաշտպանել նրա հայացքները։ Ահա թե ինչու «Մայտայի» առաջաբանում հեղինակը անկեղծորեն և երախտագիտությամբ գրում էր. «Վերջապես հասավ այն օրը հորում բախտակից եղավ ինձ գեղարվեստի զավակ մի, այսինքն անհունության զավակ՝ զի գեղարվեստն անծիրն է։ Ներդաշնակության աշխարհներու մեջ ազատորեն դեգերող ճոխ միտքը բնականապես սահմանափակ միջավայրներու և նախապաշարմանց թշնամին ըլլալով, ազատ թողուց զիս մտածելու և· բողոքելու։ Այսօր հրապարակավ երախտագիտությանս տուրքը կը մատուցանեմ Ամուսնուս, հոգվույս պետքը հասկցած, քաջալերած և կերպով մի Մորս ընթացքը շարունակած ըլլալուն համար»[1]։

Սրբուհին մինչև 80-ական թվականները ամբողջովին նվիրվում է իր երեխաների՝ Դորիի և Էդգարի դաստիարակությանը[2]։ Տյուսաբ ամուսինները պահում էին իրենց սալոնը, ուր դումարված հավաքույթներին մասնակցում էին Պոլսի հայ և ֆրանսիացի նշանավոր մտավորականները, զրուցում գրական ու այլ հարցերի շուրջը։ Տարիներ անց Սրբուհի Տյուսաբը իր նամակներում հաճույքով էր մտաբերում այդ օրերի մասին, երբ նրանք հավաքված վիճում էին ու «ազնվանում»[3]։

---

[1] Ս. Տյուսաբ, *Երկեր*, Երևան, 1939, էջ 3։

[2] Էդգար Տյուսաբը վիպասանուհու կրտսեր զավակն էր։ Նա ավարտել էր Փարիզի իրավաբանական վարժարանը և 900-ական թվականների սկզբին որպես թարգմանիչ պաշտոնավարում էր Ջմյուռնիայի ֆրանսիական հյուպատոսարանում։

[3] Հ. Եսայի Տայեցի, *Հուշագիր կենաց և գործունեության նախկին կայսերական լուսանկարիչ Գեորգ Ապտուլլահի*, Վենետիկ, 1929, էջ 110։ Հայերից Տյուսաբների սալոն տարբեր ժամանակներում մուտք են ունեցել Մագաքիա Օրմանյանը, տաղանդավոր լուսանկարիչ Գեորգ Ապտուլլահը, հասարակական գործիչ Հովհաննես Թորոսյանը, Գրիգոր Զոհրապը, Պետրոս Ադամյանը։

Թեև մի ամբողջ տասնամյակ Սրբուհի Տյուսաբի անունը մամուլում կամ գրական շրջաններում չի հոլովվում, բայց հենց այդ տարիներին է, որ նա հանգում է կնոջ ազատագրության դաղափարին, դաղափար, որ այնքան հետևողականությամբ և այնպիսի կրքոտությամբ նա հռչակեց ու պաշտպանեց 80-ական թվականներին։

991—3

ԳԼՈՒԽ Բ

ԾԱՆՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Անհնար է ճիշտ հասկանալ և արժեքավորել ութսունական թվականների մեր մշակույթի արևմտահայ գործիչների, այդ թվում նաև Սրբուհի Տյուսաբի ստեղծագործությունը՝ առանց թեուշիկ ակնարկ նետելու պատմական դժվարին այն ժամանակաշրջանի վրա, որտեղ ապրել և որի ծանր փորձություններին շատ հաճախ ննջակա են եղել նրանք։

Անցյալ դարավերջի քառորդին Թուրքիան շարունակում էր մնալ աղքատ ու հետամնաց մի երկիր։ Բարեփոխումների հրկիզոտ փորձերը, որ արվել էին նախորդ տասնամյակներում, էական հետք չէին թողել երկրի հասարակական կառուցվածքի վրա։ Ջալմային փոխարինել էր ֆեսը, գործում էր եվրոպական տիպի փոստ, մտցված էր անձնագրային սիստեմ, բայց անկարելի էր քաղաքակրթության շպարով սքողել օսմանյան կայսրության տխուր վիճակը։ Պետական աղքատ դանձարան, արտաքին մեծագումար պարտքեր, կիսաքաղցրանակ, հյուծված տնտեսություն, սովի ու կարիքի ճիրաններում գալարվող աշխատավորներ և ազատագրվելու անդուլ փորձեր անող նվաճված ժողովուրդներ... Ո՞րն էր ելքը, ինչպե՞ս լուծել բազում ու կնճռոտ խնդիրները։ Նվ սուլթան Աբդուլ-Համիդը՝ «թուրքական Նիկոլայ Երկրորդը»[1] պատավ այդ ելքը. «հղորացնել» բռնապետությունը, տարածել ահ ու սարսափ, խանձարուրի մեջ խեղդել կամ դարպասել ամեն մի ազատ խոսք ու պայծառ գաղափար։

Այսպես սկսվեց լրտեսության, անլուր հալածանքների,

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հրատ., հատ. 15, էջ 216։

տոկումների, նախարարների հանապազօրյա փոփոխությունների և մինչև անհեթեթության հասնող խստությունների այն ժամանակաշրջանը, որը Թուրքիայի պատմության մեջ է մտել «Զուլումի ժամանակաշրջան» ամոթալի անվամբ։ Սահմանադրության հեղինակ Միդհաթ փաշային գլխատելուց առաջ սուլթանը գլխատեց Սահմանադրությունը՝ ցրելով մեջլիսը (1878)։ Մոռացվեցին դեմոկրատիայի, ազատության մասին ամենատարրական պատկերացումները։ «Մեր դնված միջավայրին մեջ... գավազանը կտիրեր, քան արդարությունն»,—գրում էր Մատթեոս Մամուրյանը (Շահնուր)[1]։ Ամենուրեք ճանապարհ էր հարթում բիրտ կամայականությունն ու այլասերվածությունը։ Անգամ կառավարական պաշտոնները առուծախի առարկա էին դառնում։ «...Այժմ Թուրքիայում,—նկատում էր «Ռեպուբլիկ Ֆրանսեզ» թերթը,—իդեալական նախարարը նա կլիներ, ով ըստ պահանջման դրամ մատուցաներ սուլթանին և չխառնվեր պետական գործերի մեջ»[2]։

Ողբերգականորեն ծանր էր հայության վիճակը։ Ռուս-Թուրքական պատերազմի (1877—78) հաղթական ավարտը և Սան-Ստեֆանոյի դաշնագիրը հայերին ազատագրվելու հույսեր էին ներշնչել։ Բայց նրանց բազձանքները չիրականացան։ Բեռլինի կոնգրեսում Ռուսաստանից խլվեցին նրա հաղթանակի պտուղները, Թուրքիան ավելի ու ավելի մեծ կախման մեջ ընկավ Արևմուտքից և դարձավ նրա կիսագաղութը, իսկ «հայկական հարցը» մղվեց հետին պլան։ Աննախընթաց չափերի էր հասնում հայ գյուղացիության թալանը, պանդխտությունը շարունակվում էր պանդխտության հոսանքը։ Հայերը տարերայնորեն ապստամբում էին (1878 և 1884 թթ.՝ Չեյթունի, 1880 թ.՝ Վասպուրականի, Սասունի, Ալաշկերտի, 1886 թ.՝ Վանի ազգային-ազատագրական ելույթները) և վերստին ակնկալում այն անձկալի օրը, երբ իրենք էլ սլավոնների նման կթոթափեն մահմեդական լուծը։

Թե՛ 1839 և թե՛ 1856 թվականների բանզիմաթները («խաթթը-Շերիֆ» և «խաթթը-Հումայուն») քրիստոնյա հպա-

---

[1] «Արևելյան մամուլ», 1880, էջ 59 («Թղթակցություն»)։

[2] «Արձագանք», 1882, № 12, էջ 656 («Թուրքիա»)։

տակներին չէին տվել խոստացած հավասարությունը, չէին ապահովել ո՛չ նրանց կրոնի, ո՛չ կայքի և ո՛չ էլ նույնիսկ անձի ազատությունը։ «Ջուլումի» տարիներին Բ. Դուռը նույնպես խոստումներ էր շռայլում Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածն իրագործելու պատրաստակամության մասին, հավատացնում էր, որ հայկական վիլայեթներում կանցկացվեն «բարվոքումներ ու բարենորոգումներ»։ Բայց դրությունը մազաչափ անգամ չէր փոխվում. նո՛ւյն հարստահարությունները, նո՛ւյն ասպատակությունները։ Եվրոպական տերությունները, որ պարտավորություն էին վերցրել վերահսկել Բ. Դռան գործունեությունը, միայն շողոքորթ ճառեր էին արտասանում և, անգլիական կանոնիկոս Մելկոլմ Մաքոլի վկայությամբ, «մատն անգամ չէին շարժում» հայերին օգնելու մասին «Ամենաբարձրյալի առաջ տված խոստումները կատարելու համար»[1]։ «Դիվանագետներ, թագավորներ, կայսրեր, ամենքը միաբերան «Քրիստոնեից վիճակին բարվոքում» կըսեն, ի վերա այսր ամենայնի ես իմ վիճակին մեջ բարվոքում մը չեմ կրնար տեսնել»,—այս առիթով գրում էր Հակոբ Պարոնյանը[2]։

Աբդուլ-Համիդը հետևողականորեն իրագործում էր «Բոսֆորի ջրերը հայերի արյունով ներկելու» և այդ կերպ հայկական հարցից ազատվելու իր ծրագիրը։ Ճիշտ է, 80-ական թվականներին նրա քաղաքականության մեջ վճռական դերը դեռևս յաթաղանը չէր խաղում, բայց սուլթանը ձգտում էր այդ հրեշավոր նպատակին հասնել «խաղաղ» ճանապարհով՝ քրիստոնյա հպատակներին օսմանացնելու միջոցով։ Նա ընտրել էր այնպիսի զինակիցներ, ինչպես պանիսլամիզմը, բանտն ու աքսորը, և խնամքով նյութում էր մեր ժողովրդի այն ահավոր ողբերգությունը, որի առաջին արարը եղավ 1895—96 թվականների ջարդը. «Ամեն կողմ բանտ, ծեծ, արյուն, հալածանք,—ահա մեզի համար 61-րդ հոդվածի գործադրությունը»,—Բեռլինի կոնգրեսից հետո ստեղծ-

---

[1] „Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году". М., 1896, стр. 196.

[2] Հ. Պարոնյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. չորրորդ, Երևան, 1934, էջ 14։

ված իրադրությունը այսպես էր բնութագրում Արփիար Արփիարյանը (Հայկակ) իր մի թղթակցության[1]։ Արդեն 1880 թվականին Բ. Դուրը հատուկ ծանուցագրերով պատրիարքարանից պահանջում էր, որ «Հայաստան» բառը «չկըրնար պաշտոնապես գործածվիլ»[2]։ Ժողովուրդը մատնված էր հոգևոր ստրկության, փակ էր հայոց թատրոնը, կրթական նախարարությունը արգելել էր հայոց թագավորների ու զորավարների նկարների տպագրությունը, չէր կարելի հայրենասիրական ոտանավորներ արտասանել, թուլյատրվում էր միայն կրոնական հավաքույթներ գումարել։

«Ավերակք Հայաստանի կառավարության կողմեն ամեն օր կը փնտռվին, ինչպես նաև այն ամեն գիրքերն, որոնց մեջ Հայաստան բառն կը գտնվի։

Ամեն որ կը ձերբակալվին և կը բանտարկվին Հայկա և Վարդանա պատկերներն»,—կարդում ենք Պարոնյանի «Զեռատետրում»[3]։

Մտավորականությունն ապրում էր հարավրդով կյանքով։ «Երբ գավառական թղթաբերը մեզ նամակ կը բերե, տակավին չը բացած առաջին մտածությունիս այն է, թե այս անգամ որո՞ն աքսորանաց լուրը պիտի առնունք»,—իր մեկ այլ թղթակցությունում պատմում է Արփիարյանը[4]։

Թեև հայ մամուլի վրա պաշտոնապես գրաքննություն հաստատվեց միայն 1888 թվականին[5], բայց այդ փաստը, ըստ էության, ուներ ձևական նշանակություն։ Թուրքիայում գործում էր ամենաբարբարոս մի գրաքննություն։ Տպագրական տեսչությունը ամեն մի պատրվակով («վնասակար հրատարակության», «ժողովրդյան միտքը գրգռելու համարձակած լինելու», «օրինավոր սահմանեն դուրս լեզու մը գործածած լինելու», «ինչ-ինչ հոդվածներ» տպագրելու),

---

[1] «Մշակ», 1883, № 15 («Նամակ Թուրքիայից»)։

[2] «Մասիս», 1880, № 2718 («Ազգային լուրեր»)։ Տե՛ս նաև «Մասիս», 1880, № 2735 («Թագրիր Ս. պատրիարք հոր»), «Փունջ», 1880, № 1507, «Արևելյան մամուլ», 1880, հոկտեմբեր, էջ 365—368։

[3] Հ. Պարոնյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, էջ 138։

[4] «Մշակ», 1887, № 43 («Նամակ Թուրքիայից»)։

[5] Տե՛ս Արփ. Արփիարյան, Պատմություն ժթ դարու Թուրքիո հայոց գրականության, Գահիրե, 1943/44, էջ 76։

որոնք շատ հաճախ անհասկանալի էին մնում նույնիսկ իրենց՝ խմբագիրներին, փակում էր հայկական թերթերն ու հանդեսները։ Միայն 1883 թվականին «Մասիս» օրաթերթը դադարեցվել է չորս ամսով[1]։ Կային թերթեր, որ տառացիորեն ապրում էին թիֆեռի կյանքով։ Արամ Աշճյանի «Լապտեր Դիոգենոն» զավեշտաթերթը խափանվից միայն առաջին համարը լույս ընծայվելուց հետո[2]։ Դեռևս 1880 թվականին Բ. դուռը հայ և հույն խմբագիրներին ուղղված մի հատուկ գրությամբ զգուշացնում էր, որ եթե նրանք առաջիկայում ևս «օտար լրագրաց ոմանց հոդվածներն ընդօրինակեն», ապա առհասարակ կխափանվեն նրանց թերթերը[3]։ Իսկ 1884 թվականին ներքին գործոց նախարարի հրամանով տեղական լրագրերին արգելվում է առանց օտար լրագրության դիվանի քննության ու համաձայնության եվրոպական մամուլից սեփական ընտրությամբ նյութեր արտատպելը[4]։ Մեկնաբանելով այդ հրամանը, թուրքական «Օսմանլը» լրագիրը գրում է. «Օտար մամուլը նույնքան և ավելի չարիք կարող է բնել մեզ, որքան հեղափոխական դաղափարներ տարածող մարդոց խումբ մը», և իբրև օրինակ բերում է անգլիական «Թայմզ» լրադրում 61-րդ հոդվածի մասին տպագրված մի նյութ, որը «կրնար Հայոց միտքը գրգռել»[5]։ Գրաքննական խստությունների մասին չի՞ խոսում արդյոք այն փաստը, որ Թուրքիայում արգելված էր արևելահայ մամուլի («Մշակ», «Փորձ», «Մեղու Հայաստանի») մուտքը, որ վտանգավոր հրատարակություններ գտնելու հույսով խուզարկություններ էին կատարվում հայ գրախանութներում, լսատ որում՝ «կառավարության համար» վտանգավոր էին համարվում և բռնագրավվում ինչպես ազգային երգարանները, այնպես էլ Ղևոնդ Ալիշանի «Սիսվանն» ու «Շիրակը»[6]։

Ճնշելով ու սեղմելով հայ լրագրերի իրավունքները, Բ.

---

1 Տե՛ս «Մասիս», 1883, № 3484 և № 3558։

2 Նույնը, 1883, դեկտեմբերի 10, № 3558։

3 Նույնը, 1880, № 2674 («Ներքին լուրեր»)։

4 «Արևելք», 1884, № 98 («Ներքին լուրեր»)։

5 Նույնը, 1884, № 99 («Ներքին լուրեր»)։

6 Տե՛ս «Մասիս», 1881, № 2249 («Ազգային լուրեր») և «Արձագանք», 1886, № 6, էջ 84 («Ներքին տեսություն»)։

դաան համաձայնությամբ, թուրքական մամուլը միաժամանակ մահմեդական բնակչության ատելություն էր բորբոքում հայերի նկատմամբ։ 1880 թվականին, երբ հայկական գավառներում նորից մոլեգնում էր սովը, մահն առատ հունձ էր կատարում աղքատ ու անպաշտպան գյուղական բնակիչների մեջ, Սուվելոյ խնամատար կենտրոնական հանձնաժողովը դիմում էր արևելահայերին՝ օգնության աղերսով. «...Մանկան բերան հաց չունի, մորն ստինք կաթ չունի, հորն բաղուկ ույժ չունի, աղջկան ծոց քող չունի»[1]։ Բայց ահա «Օսմանլը» լրագիրը գրում էր, որ սով ու հարստահարություն հնարել են հայերը՝ իրենց գաղտնի նպատակներին հասնելու համար։ Թուրք ռեակցիոն մամուլի հարձակումներն այնքան լկտի բնույթ են կրել, որ պատրիարք Ներսես Վարժապետյանը նույնիսկ ստիպված է եղել պաշտոնապես դանգատվել սուլթանին տպագրական տեսչության դեմ, որը «թուրք մամուլին այս հարձակմանց դեմ անտարբեր կը դտնվի»[2]։ Բայց այդ բողոքները մնացին անհետևանք։

1863 թվականին վավերացված «Ազգային Սահմանադրությամբ» ստեղծվել էին Ազգային ժողով, կրոնական ու բաղաքական ժողովներ, ինչպես նաև մի քանի խորհուրդներ։ Բայց Աբդուլ-Համիդի տիրապետության տարիներին բոլոր այդ մարմինները զրկվել էին որևէ նշանակալից գործ ձեռնարկելու իրավունքներից և, Արփ. Արփիարյանի վկայությամբ, զբաղված էին «ունայն վեճեր» մղելով[3]։ «Կոշիկներով մանել եկեղեցի թե՞ ոչ»,—այս և նման վեճերը նկատի առնելով էր, որ Գր. Արծրունին Ազգային ժողովը ծաղրելով, անվանում էր «ազգային գժատուն» և «հոգեկան հիվանդների մի գումարումն»[4] մոռանալով, որ բանտ ու աքսոր էր սպասում բոլոր նրանց, ովքեր կհամարձակվեին խոսել «Ազգային Սահմանադրության» մասին։ Չէ՞ որ հրատարակիչ Հովսեփ Գավաֆյանը 1881 թվականին ձերբակալվեց միայն նրա հա-

---

1 «Մասիս», 1880, № 2737։

2 Նույնը, № 2712։

3 «Մշակ», 1886, № 20 («Նամակ Թուրքիայից»)։

4 Նույնը («Ֆելիետոն») և № 40 (առաջնորդող)։

մար, որ գործ էր ածել ոչ թե «Վարչական կանոնադրություն», այլ «Հայկական սահմանադրություն» բառերը[1]։

Կառավարությունը ճնշում էր գործադրում պատրիարքարանի վրա, իսկ պատրիարքի անձնավորությունը ծաղրի առարկա էր դառնում թուրք լրագրերի էջերում։ Բ. դուռը ամենակոպիտ կերպով միջամտում էր պատրիարքարանի ներքին գործերին, պահանջում պաշտոնանկ անել այս կամ այն առաջնորդին[2]։ Ավելին. արհամարհելով գոյություն ունեցող կարգը, կառավարությունը երբեմն, առանց հաշվի առնելու պատրիարքին, ինքն էր վավերացման հրովարտակ տալիս իրեն ցանկալի այս կամ այն առաջնորդին։ Այս ձևով էր, որ Բ. դուռը 1881 թվականին, շրջանցելով պատրիարքարանը, հաստատեց Կիլիկիայի կաթողիկոսին[3]։

Վայրենի հայահալածությանը զոհաբերվելու վտանգն էր սպառնում հայ լեզվին ու մշակույթին։ Այդ գործում իրենց զազրելի դերն էին խաղում արևմտյան երկրների վերաբերվող գործակալները՝ միսիոներները, որոնք մորեխի նման լցվել էին հայաշատ վայրերը և ոչինչ չէին խնայում մեր ազգային զգացմունքներն ու սովորույթները ժամ. առաջ թաղելու համար։ Հատկապես սանձարձակ էին դարձել ամերիկյան միսիոներները, որոնք, Բյուզանդ Քեչյանի («Բյուզանդ») վկայությամբ, իրենց ճաշակն էին խառնում... «մինչև իսկ կերակուրներուն մեջ»[4]։

Այս պայմաններում, երբ հասարակական կյանքի բոլոր ոլորտներն էր ներխուժում ռեակցիայի թանձր խավարը, հայ դպրոցների ու կրթական-լուսավորական զանազան ընկերությունների հիմնումը ուներ վճռական նշանակություն։ Դրանք այն սակավաթիվ ապաստարաններից էին, ուր կարող էին, այսպես թե այնպես, իրենց ինքնուրույն գոյությունը պահպանել հայ լեզուն ու մշակույթը։ Դա հիանալի էին գիտակցում մեր մտավորականության ականավոր ներկայացուցիչները, և բնավ պատահական չէ, որ նրանցից շատերը (Հ.

---

[1] «Մամուլ», 1881, № 798, էջ 138 («Ազգային լուրեր»)։

[2] Տե՛ս «Մասիս», 1881, №№ 2793, 2838, 3012։

[3] Տե՛ս նույնը, №№ 2957, 2959։

[4] Նույնը, № 2810 («Կրթություն հայ իգական սեռի»)։

Պարոնյան, Գ. Զոհրապ, Ա. Արփիարյան, Մ. Մամուրյան, Գր. Չիլինկիրյան) գլխավորում էին լուսավորական օջախների աշխատանքները։

* * *

Սրբուհի Տյուսաբի անունը սերտորեն առնչվում է 80-ական թվականների արևմտահայ կրթական շարժման հետ։ Ժամանակակիցներից շատերը հարգանքով են խոսել Տյուսաբի՝ «հայրենասեր» և «պանծալի հայ տիկնոջ» (Եղիա Տեմիրճիպաշյան), հասարակական «անխոնջ աշխատողի» (Հրանտ Ասատուր) մասին։ «Տիկին Տյուսաբ,—գրել է Արշակ Ալպոյաճյանը,—հայ իգական սեռին նախաձեռնությամբ կազմված բոլոր ընկերությանց նախաձեռնարկներեն և ամենեն գործոն անդամներեն մեկը եղած է»[1]։ Արամ Անտոնյանը (Մերսետես) նույնպես նշում է Տյուսաբի «հանրային շա՛տ դնահատելի և օգտակար» գործունեությունը[2]։ Դրվատական քիչ խոսքեր չեն ասել Գրիգոր Չիլինկիրյանը, Զարուհի Գալեմքերյանը, Լեոն և շատ ուրիշներ։ Բայց, տարաբախտաբար, անվանի գրողի կրթական-լուսավորական գործունեությունը մինչև օրս ինչպես հարկն է չի լուսաբանվել և դրան վերաբերող բազմաթիվ փաստեր մնում են ցան ու ցիր ժամանակի մամուլի էջերում։

Ինքնըստինքյան հասկանալի է, որ հայկյան բռնապետության մղձավանջային տարիները չէին կարող ծանր հետևանքներ չունենալ հայերի կրթական շարժման վրա։ Հայերը Կոստանդնուպոլսի 37 թաղերում 1883 թվականին ունեին 13 արական, 11 իգական և 28 երկսեռ դպրոց՝ 5525 աշակերտներով[3]։ Զգալի թվով դպրոցներ կային նաև մյուս հայաշատ վայրերում։ Դպրոցների մեծ մասը հիմնված էին կրթական-լուսավորական ընկերությունների կողմից (միայն Կ. Պոլսի «Միացյալ ընկերություն հայոց» բարեգործական

---

[1] Ա. Ալպոյաճյան, *Ուսումնասիրություն Սրբուհի Տյուսաբի*, էջ 15։

[2] «Մասիս», 1901, № 2, էջ 22։

[3] Տե՛ս Ալ. Երիցյանի «Համառոտ տեսություն ներկա Ցաճկահայոց» հոդվածը («Արձագանք», 1884, № 9, էջ 132)։

հաստատությունը գավառներում 1882 թվականին պահում էր 32 դպրոց), գործում էին նաև մասնավոր դպրոցներ, որոնցից հայտնի էին Կ. Պոլսի Պերպերյան, Մեզպուրյան, Տեր-Սահակյան, Հայկական (Գուրգենյան), Կարինի Սանասարյան, Երզնկայի Ընկերական, Վանի Կենտրոնական և այլ վարժարանները։

Դպրոցների այս քանակը, Մ. Մամուրյանի խոսքերով ասած, «բավական չէ մեր (հայերի—Ա. Շ.) անհուն պիտույից համեմատությամբ»[1] (բավական է հիշել, որ միայն Թուրքիայի մայրաքաղաքում 80-ական թվականների սկզբին ապրում էին 250 հազար հայեր[2])։ Սակայն դրանք էլ չէին կարողանում ծավալել լայն գործունեություն, քանի որ ենթակա էին հալածանքների ու զուրկ նյութական միջոցներից։ «Արևելք» օրաթերթը իր խմբագրականներից մեկում (1888), որ կրում էր «Կրթական խնդիր» բնորոշ վերնագիրը, գրում էր. «Կարծես թե Թուրքիո այլ և այլ կողմերը տիրող երաշտությունը՝ բնական կամ գերբնական օրինաց անիմանալի գործողությամբ մը՝ հակահարված մ՝ ունեցած լինի Կ. Պոլսո թաղային վարժարանաց վրա»[3]։ Եվ իսկապես, հարկավոր է ուշի ուշով թերթել ժամանակի արևմտահայ մամուլը՝ համոզվելու համար, որ այդ ճիշտ է ոչ միայն 1888-ի, այլև ամբողջ 80-ական թվականների բոլոր դպրոցների համար։ Կառավարությունն արգելել էր հայոց պատմության, աշխարհագրության գրքերի հրատարակությունը, վարժարաններում հաճախ էին կատարվում խուզարկություններ՝ «վնասակար հրատարակություններ» գտնելու պատրվակով։ «Մեղու Հայաստանի» թերթի թղթակիցը (Հ. Գ. Հ.) պատմում է այսպիսի դեպք. «Երեք օր առաջ խումբ մ՝ ոստիկաններ կառավարական պաշտոնեից ընկերակցությամբ հանկարծ կը խուժեն Իսկյուտարու (Պոլսո ասիական եզերքին վրա) Սելամլըզ թաղի աղգային վարժարանը և թանգարանին ու գրասեղաններուն մեջեն ժողովելով հայոց պատմության և

---

[1] «Արևելյան մամուլ», 1880, էջ 430 («Թղթակցություն»)։

[2] Ստ. Պալասանյան, Պատմություն հայոց սկզբից մինչև մեր օրերը, Թիֆլիս, 1902, 3-րդ տպագրություն, էջ 507։

[3] «Արևելք», 1888, № 1373։

աշխարհագրության վերաբերող գրքերն, կը պատուեն զանոնք և վառարանին մեջ կայրեն. նույնպես վար առնելով պատեն կախված Հայաստանի և սրբուհյն Վարդանա պատկերներն, խայտառակությամբ կ'այրեն զանոնք ու կը մեկնին»[1]։

Արևմտահայ կրթական շարժման լայն ու արդյունավետ գործունեությանը մեծապես խոչընդոտում էր նաև այն, որ հայկական դպրոցներում, «Մասիս» օրաթերթի խոստովանությամբ, թագավորում էին «կրթական անիշխանություն», չկար «կրթական օրենք մը, ուսմանց Հայտագիր մը, որ ճշտե, թե Հայ մանուկն ի՛նչ պիտի սովորի, որչա՛փ ժամանակի մեջ և ի՛նչ մեթոտով պարտի ուսնիլ... Ամեն թաղական կամ դասատու յուր ըմբռնման համեմատ կրթական օրենքներ և հայտագրեր կը սահմանե»[2]։

Չնայած բոլոր այս խստություններին, չնայած իրենց խեղճությանը, հայկական դպրոցները փորձում էին ըստ հնարավորին հոգալ մատաղ սերնդի հոգևոր պահանջները։ Առաջադեմ մանկավարժները ոչ միայն գրաճանաչություն էին տարածում, այլև ջանում էին, հատկապես օգտագործելով տարեվերջի հանդեսները, սաների մեջ բորբոքել հայրենասիրություն, մտահոգել նրանց սեփական ժողովրդի ճակատագրով։ Ահա թե ինչու ներքին գործոց նախարարությունը 1883 թվականին մի հատուկ ծանուցագրով հարկ համարեց Պատրիարքարանի ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ «Օսմ. երկրին քանի մը կողմերն հայոց ազգային վարժարանաց մրցանակաբաշխության հանդեսներուն մեջ գրգռիչ ճառեր և երգեր կը կարդացվին»[3]։

Արևմտահայ կրթական շարժմանը, որ սկսել էր աշխուժանալ 70-ական թվականների վերջերից, հատկանշական էր մի նոր երևույթ. այդ շարժման մեջ կանայք ևս խաղում էին կարևոր դեր։ Սիպիլը 1878—1879 թվականները համարում էր «հայ կնոջ մտավոր զարգացումի, բարձրացումի» փուլեր։ «Կինը,— գրում էր նա,— միշտ հրայրքոտ, միշտ

---

[1] «Մեղու Հայաստանի», 1882, № 16։

[2] «Մասիս», 1884, № 3600 («Ազգային տարեկան տեսություն»)։

[3] Նույնը, 1883, № 3462 («Ազգային լուրեր»)։

տեղնուտ, կինը միշտ գերազանցության մրցումին հետամուտ, արդուզարդի, պերճանքի հաղթանակներուն չէր հետապնդեր այն ատեն այնքան տեղնով, որքան ազնիվ գաղափարի մը, գեղեցիկ գործի մի փառասիրությամբ կոգեվորվեր»[1]: Այդ «ազնիվ գաղափարն» ու «գեղեցիկ գործը» հենց մատաղ սերնդի, հատկապես իգական սեռի դաստիարակությունն էր: Նույնն է վկայում նաև Մ. Մամուրյանը իր թղթակցություններից մեկում: Խոսելով այն մասին, որ անհրաժեշտ է «քաղաքային, կրոնական, կրթական, գրական, կարծյաց և սովորութեանց» վերանորոգում, Մամուրյանը գրում էր. «Ո՞գիտե, թերևս այս վերանորոգության պաշտոնը հայ կանանց տրված է գլուխ հանել, և կտեսնեմ որ զանազան ընկերություններ, զանազան անվամբ կճգնին՝ նոր սերունդ մը պատրաստելու»[2]:

Պետք է նկատել, որ կանանց կրթության, լուսավորության խնդիրը այդ ժամանակաշրջանում առանձնահատուկ կարևորություն էր ներկայացնում: «Մարդկության հարկավոր եղած անհրաժեշտ գիտելյաց ուսումը՝ ամեն աստիճանի թե՛ մանչ և թե՛ աղջիկ տղայոց հավասարապես ծավալել»: «Ազգային Սահմանադրության» հռչակած այս «հիմնական սկզբունքներից» մեկը[3] նույնպես մնացել էր թղթի վրա, և հայ կինը շարունակում էր խարխափել տգիտության ու խավարի մեջ՝ հլու հնազանդ կրելով ամեն մի նվաստություն: «Դպրոց, վարժարան, լսարան, գոց էին իր առջև...»,— այս էր նրա իրական վիճակը[4]:

Սրբուհի Տյուսաբն էլ ահա, Սիպիլի և այլոց հետ եղավ արևմտահայ այն առաջին կանանցից մեկը, որ ձեռնարկեց կնոջ լուսավորության գործը:

1880 թվականի ապրիլ-մայիսից մենք տեսնում ենք Նրան կանգնած Կ. Պոլսի Միջագյուղի «Դպրոցասեր Հա-

---

[1] Ընդարձակ օրացույց Ս. Փրկչյան հիվանդանոցի հայոց, 1903, Կ. Պոլիս, էջ 391 («Մեր կիները»):

[2] «Արևելյան մամուլ», 1880, նոյեմբեր, էջ 499:

[3] «Ազգային Սահմանադրություն հայոց», Կ. Պոլիս—Սբ Հանպոլ, 1863, էջ 11—12:

[4] «Արևելյան մամուլ», 1882, էջ 173 (Շահնուր, «Թղթակցություն»):

յուհյաց ընկերության» գլուխ՝ որպես նրա ընդհանուր ժողովի ատենապետ[1]։

Չպետք է մոռանալ, որ հայ ընկերություններն ու դպրոցները կարիք էին զգում նյութական անհրաժեշտ միջոցների, որոնց բացակայությունը խախտում էր նրանց ծրագրերը։ Մաքրիգյուղի Արծրունյանց վարժարանում, օրինակ, «դրամական անձկության պատճառավ» չի դասավանդվել հայոց պատմություն[2]։ Նույն պայմաններում էր նաև Դպրոցասեր հայուհյաց ընկերության վարժարանը, որ բացվել էր 1879 թվականի նոյեմբերի 5-ին։ Ժամանակակիցներից մեկը (Տ. Ա.—Տիգրան Արփիարյան) այսպես է նկարագրել այդ դպրոցը. «...Գյուղին (—Օրթագյուղի—Ա. Շ.) հեռավոր մեկ անկյունը խարխուլ տուն մը վարձեցին իբրև դպրոց, ուր իրենք՝ օրիորդները կերթային դասախոսել ու կառավարչություն ընել կարգով»[3]։ Ահա թե ինչու Սրբուհի Տյուսաբը ստանձնելով Դպրոցասեր հայուհյաց ընկերության ատենապետությունը, իր առաջին գործը համարեց դրամական միջոցների հայթհայթումը։

Տյուսաբն սկսում է նրանից, որ գրում և 1880 թվականին հրատարակում է «Աշխարհաբառ հայ լեզուն» աշխատությունը՝ նրանից ստացվող հասույթը նվիրելով Դպրոցասեր հայուհյաց ընկերությանը։ Զբաղվարարվելով դրանով, նա օգ-

---

[1] «Դպրոցասեր հայուհյաց (կամ՝ տիկնանց) ընկերությունը» արևմտահայ կանանց երկրորդ խոշոր ընկերությունն էր, որ հիմնվել էր 1879 թ. մայիսի 1-ին՝ նպատակ ունենալով գավառների համար վարժուհիներ պատրաստել։ Որոշ հեղինակներ (Մ. Ճանաշյան և այլն) այս ընկերության հիմնադիրը են համարում Ս. Տյուսաբին, որ ճիշտ չէ։ Տյուսաբը եղել է նրա ակտիվ գործիչը, իսկ ընկերությունը հիմնել են Հռիփսիմյան վարժարանի ատենուհիներ Նուբիկ Սիմոնյանը, Թագուհի Գալդազարյանը և Արմավենի Սահակյանը (Տե՛ս «Դպրոցասեր Տիկնանց ընկերություն. հիմնական կանոնագիրը», հատուկ տարբեր, կ. Գուլիս 1910 թ., էջ 5)։ Նույն տարվա ապրիլի 11-ին Իսկյութար թաղամասում Զապել Յանճյանը (Սիսիլ) հիմնել էր «Աղգանվեր հայուհյաց ընկերությունը» խնդիր ունենալով «հայ ազգի իգական սեռի գաստիարակությանն օգնել»։

[2] «Մամուլ», 1882, № 931, էջ 363 («Արծրունյան վարժարան»)։

[3] «Արևելք», 1895, № 3351 («Դպրոցասեր տիկնանց ընկերություն»)։

տրվելով հասարակության մեջ իր գրաված բարձր դիրքից և վայելած հեղինակությունից, եռանդուն հանգանակություններ է կատարում։ «Այս արժեքավոր կինը,— մտաբերում է Զ. Գալեմքեարյանը,— ...ուժերը նվիրեց նաև կանացի մտքերը զորացնելու, հանգանակություններ սարքելով և աղջկանց դաստիարակության նպատակներու նվիրված ժողովներ վարելով»[1]։

Ժամանակի մամուլում տպագրված են մի շարք լուրեր, որոնք հաստատում են Գալեմքեարյանի այդ վկայությունը։ Ահա դրանցից մեկը. «Գոհությամբ կը լսեմք, թե Դպրոցասեր-Հայուհյաց ընկերության Ընդհ. ժողովո Ատենապետ՝ Ազնվուհի Տիկին Սրբուհի Տյուսաբ ի նպաստ Ընկերության այլ և այլ Պանքաններ անձամբ այցելելով՝ 40 լիրայեն ավելի հանգանակած է»[2]։ Տյուսաբը մտադրվել էր Կ. Պոլսում բացել մի կենտրոնական վարժարան, ուր ձրի ուսում պիտք է ստանային տեղացի ու պանդուխտ հայ աղջիկները։ Այդ նպատակով նա 1880 թվականի սեպտեմբերին դիմում է պատրիարք Ն. Վարժապետյանին՝ առաջարկելով յուրաքանչյուր ընտանիքից ըստ կարողության գանձել 10, 5, 3 կամ 1 դահեկան տուրք[3]։ Թեև վերջինս համաձայնվել է, բայց այդ առաջարկությունը չի իրագործվել։

Մ. Մամուրյանը պատմում է, թե Դպրոցասեր հայուհյաց ընկերության ատենապետը ինչ միջոցներով է դուրս բերել ընկերությունը «դրամական տագնապից»։ Տյուսաբը «հայրենասեր ու ողորմասեր հոգիներ երաժշտության և դեղեցկության հրապույրներով բարեգործության գրգռելու և կըրթության դատն արդյունավորելու» փափագով ծուլի վրա կազմակերպել է հանդես՝ վարձելով մի շոգենավ։ Դրա շնորհիվ հաջողվել է վաստակել 100 ոսկի[4]։

Տյուսաբի ատենապետության օրով ընկերության Կետիկ-Փաշայի մասնաճյուղը տեղի թատրոնում ի նպաստ ընկե-

---

[1] Զարուհի Գալեմքեարյան (Եվաերպե), *Կյանքիս համբեն*, Անթիլիաս, 1952, էջ 333—334։

[2] «Մասիս», 1881, № 2808 («Ազգային լուրեր»)։

[3] Նույնը, 1880, № 2712։

[4] «Արևելյան մամուլ», 1881, էջ 230։

թության 1881 թվականի մարտի 7-ին տվել է թատերական ներկայացում։ Հայկական խումբը ղեկավարել է Ազնիվ Հրաչյան՝ բեմադրելով «Աղքատք Փարիզի» թատերգությունն ու «Ճաշարան Ռոմպարտոյի» զավեշտը[1]։ Կարևոր է եղել նաև հաջորդ տարվա փետրվարին Տյուսաբի անմիջական նախաձեռնությամբ Բերայում կազմակերպված հայ նկարիչների ու քանդակագործների գեղարվեստական ցուցահանդեսը, որի նկամուտը նույնպես տրամադրվել է ընկերությանը։ Դա եղել է առաջին հայկական ցուցահանդեսը Պոլսում և իր վրա է գրավել շատերի ուշադրությունը։ Այստեղ նկարիչներ՝ Նշանյանի, Ճիվանյանի, Զրրաճի Շաշյանի, Տիրացույանի, Վասիլյանի, Հովհ. Սաքըզի, օրիորդ Սերվիչեի և քանդակագործ Ոսկանյանի գործերից բացի ցուցադրվել են նաև Հովհաննես Այվազովսկու 9—10 կտավներ, որ տրամադրել է արքունի ճարտարապետ Սարգիս Պալյանը[2] (ի. դեպ Այվազովսկին Ս. Տյուսաբի, Գր. Չիլինկիրյանի և այլոց հետ եղել է Դպրոցասեր հայուհյաց ընկերության պատվավոր անդամ)։

Տյուսաբն իր ատենապետության տարիներին անդադրում աշխատել է Դպրոցասեր հայուհյաց ընկերության հանդուն ու բազմամյա գործիչներից մեկը՝ Նուրիկ Սիմոնյանը (Ն. Ս.) իր հուշերում վկայում է, թե ինչ բարեխղճությամբ է Տյուսաբը պատասխանել ստացված բազմաթիվ նամակներին։ «Սպասել չէր սիրեր,—գրում է նա։—Ձեմ կարծեր որ 10—15 ոսկի ստանող գրագիրները ավելի դիր գրեն, քան տիկին Տյուսաբ...»[3]։ Անգամ այն ժամանակ, երբ Տյուսաբը հիվանդացել է, նրա տան դռները միշտ բաց են եղել ընկերության աշխատողների առաջ։

Եվ Տյուսաբի ջանքերը ապարդյուն չեն անցել։ Ընկերության վարժարանը, որը նախապես ուներ 20, ապա, երբ արդեն տեղափոխվել էր նոր շենք (1880 թ. մայիս), 35 աշակերտուհի[4], 1881 թվականի փետրվարին ուներ 40 աշակերտուհի։ Նրանցից բացի դպրոցը պահում էր 5 գիշերօթիկ

---

[1] «Մասիս», 1881, № 2834 («Ազգային լուրեր»)։
[2] «Մեղու Հայաստանի», 1882, № 14։
[3] «Մասիս», 1901, № 6, էջ 90։
[4] Նույնը, 1880, № 2770։

ասնուհիներ, որոնք ուսումնառությունից հետո, որպես վարժուհիներ, պետք է մեկնեին գավառները[1]։ Այժմ կային նաև մասնագետ ուսուցիչներ։ Դպրոցը ունեցել է երկու տարվա նախապատրաստական և 5 տարվա նախակրթարանի շրջաններ։ Նախակրթարանում դասավանդել են հայերեն, պատմություն, աշխարհագրություն, կրոն, թվաբանություն, բնագիտություն, ֆրանսերեն, գեղագրություն, գծագրություն, ասեղնագործություն և կարուձև[2]։ Դպրոցն առաջին շրջանավարտները տվել է 1885-ին, թվով 3 մարդ, որոնցից երկուսը, լինելով վանեցիներ, մեկնել են իրենց հայրենիքը պաշտոնավարելու. հաջորդ տարին դպրոցն ավարտել են 2 հոգի, իսկ 1888-ից նրանց թիվը շատացել է[3]։

Տյուսաբի ծառայությունները բարձր են գնահատվել ժամանակակիցների կողմից։ Գր. Զիլինկիրյանը նրան համարում էր «Դպրոցասիրաց ճոգին»[4]։ Իսկ Դպրոցասեր հայուհյաց ընկերության երկրորդ տեղեկագրում կարդում ենք. «...Գոհությամբ կը հայտարարեմք աստ թե ամեն պարագայի մեջ մեզ առաջնորդ հանդիսացավ ընկերության Ատենապետ Տիկին Սրբուհի Տյուսաբ և նորա արդյունավետ աջակցությունը հույժ դյուրացուց մեր ձեռնարկ»[5]։ Տյուսաբն իր հասցեին ասված ամեն մի դրվատական խոսք համարում էր չափազանցություն և տրտնջում իրեն մեծարելու դեմ։ Ժամանակակիցները, տեսնելով նրա արդյունավետ հասարակական գործունեությունը, անվանում էին նրան «ազգասեր», իսկ Տյուսաբը համեստորեն մերժում էր այդ «տիտղոսը»՝ գրելով. «Պարզապես Հայուհի մ՚ եմ, որ հօգուտ ազգին կաշխատիմ դույզն ինչ, ինչպես կաշխատին մյուս հայուհիները... Ազգասիրի բարձր տիտղոսը, մեծ պատասխանատվության, մեծ

---

[1] «Մասիս», 1881, № 2812 («Հաջալեբության արժանի մի նոր ձեռնարկ»)։

[2] Հ. Ներսես Վ. Պողոսյան, «Պատմություն հայ մշակութային ընկերություններու», հ. Ա, Վենետիկ, 1957, էջ 257։

[3] «Դպրոցասեր տիկնանց ընկերություն. հիմնական կանոնագիր», Հառաջաբան, կ. Պոլիս, 1910, էջ Ը։

[4] Գր. Զիլինկիրյան, «Ուղեվորություն ի Կոստանդնուպոլիս», Ժմյուռնիա, 1883, էջ 125։

[5] «Մասիս», 1881, № 3051։

աշխատության, մեծ զոհերու կենթարկեն մարդիկ։ Կատարած գործերս կատարելապես աննշան են, իսկ ազգասիրի տիտղոսը՝ հսկա»[1]։

1882 թվականին Տյուսաբը վատառողջության պատճառով փորձում է հրաժարվել ընկերության ատենապետությունից, բայց ազգային հրեստոխան Աբրահամ Այվազյանը կտրականապես բողոքում է այդ մտադրության դեմ։ Գր. Զիլինկիրյանին ուղղված մի նամակում Այվազյանն ասում է, թե Տյուսաբի հրաժարականը նշանակում է ընկերության հրաժարական։ «Անչափ զգալի են Ձեր (Տյուսաբի—Ա. Շ.) բարեգործությունները,—գրում է նա,—որ անտարբերներն անգամ կզգան, կը վկայեն և եթե լռվին՝ քարերն անգամ պիտի աղաղակեն... Տ. Տյուսաբ... կը մոռնա թե յուր կյանքը՝ հասարակաց մոր մը կյանք է։ Ինքը Ազգինն է և Ազգը՝ իրեն»[2]։ Ըստ երևույթին այս հոանդուն բողոքը խաղացել է իր դերը, և 1883 թվականի մայիսին ատենադպիր Թադևոսի Պալդազարյանն ու ատենապետ Զապել Ֆրնտըքլյանը շնորհակալություն են հայտնում Տյուսաբին, որ «այս տարի ևս հնազանդեցավ յուր թանկագին օժանդակությամբը մեռնակրցիլ ընկերության ջանից...»[3]։

Մի շարք ուսումնասիրողներ (Ա. Ալպոյաճյան, Հ. Ապատուր և այլն) նշում են, թե Տյուսաբի հասարակական գործունեությունը, որպես Դպրոցասեր հայուհյաց ընկերության ատենապետ, ավարտվել է 1883 թվականին։ Սակայն նման պնդումը ճիշտ չէ ու կարոտ վերանայման։ Այդ է վկայում «Մասիս» շաբաթաթերթի 1887 թվականի սեպտեմբերի 12-ի համարում տպագրված հետևյալ հաղորդումը. «Դպրոցասեր Տիկնանց ընկերության բարեկամներ, ցավելով կիմացունեն մեզ թե Վսեմ. Տիկին Սրբուհի Տյուսաբ փաշա անձնական հոգերու և տկարության պատճառավ հարկադրվեր է հրաժարիլ ընկերության ատենապետության պաշտոնեն, որ կը վարեր այնքան փայլուն և արդյունավետ կերպիվ»[4]։

---

1 «Մամուլ», 1882, № 905, էջ 158։

2 Նույնը, էջ 159։

3 «Մասիս», 1883, № 3473։

4 Նույնը, 1887, № 3889, էջ 283 («Ազգային»)։

Տարբեր ժամանակներում Տյուսաբը օգնություն է ցույց տվել նաև պոլսահայ կրթական այլևայլ հաստատություններին։ Նա եղել է Միացյալ ընկերությունների պատվավոր անդամ[1], անդամակցել Բերայի Նարեկյան վարժարանի աշակերտների նյութական և բարոյական վիճակի բարելավման նպատակով ստեղծված «Պատվավոր հայ տիկիններու խնամակալութեյանը»[2]։ Տյուսաբը հաճախ է այցելել Պոլսի վարժարանները, հետաքրքրվել աշակերտների պարապմունքներով։ 1882 թվականի հուլիսի 25-ին նա իր ամուսնու հետ ներկա է գտնվել Արծրունյան վարժարանի սաների մրցանակաբաշխության հանդեսին և տեսնելով դպրոցի վատ վիճակը, հանդեսից հետո հանգանակել է 1500 ղուրշ[3]։

Սրբուհի Տյուսաբը հետագա տարիներին նույնպես, երբ արդեն դադարել էր ստեղծագործելուց, չլքեց հասարակական աշխատանքները։ Բայց այդպիսի գործունեության ամենաբեղուն շրջանը զուգադիպեց նրա ստեղծագործական տարիներին։ Էժանագին հեղինակություն ձեռք բերելու քաղքենիական մտահոգությունը չէ, որ խոսում էր Տյուսաբի մեջ, այլ քաղաքացիական պարտքի ու պատասխանատվության զգացումը։ Եվ հենց մեր ժողովրդի մեծ հատվածին ու նրա դաբաղվոր մշակույթին սպառնացող օսմանացման վտանգի գիտակցությունն էլ մղել է Տյուսաբին հանրօգուտ գործունեության։ Այդ չե՞ն հաստատում արդյոք նրա հետևյալ խոսքերը. «Բնական օրենք է, որ հզորը յուր լուծին հետ միատեղ ընդունիլ տա և յուր սովորությունները, բարքերն ու լեզուն»[4]։

* * *

Գրեթե բոլոր ուսումնասիրողները հայտնել են այն կարծիքը, որ Սրբուհի Տյուսաբի վեպերը համակված են հրապարակախոսական շնչով։ Ավելին. եղել են գրականագետ-

---

[1] «Արեւելք», 1901, № 4525։ Միացյալ ընկերությունները նպատակ ունեին Հայաստանում և Կիլիկիայում կրթություն ծավալել։

[2] «Մասիս», 1883, № 3407 («Ազգային լուրեր»)։

[3] «Մամուլ», 1882, № 931, էջ 364։

[4] Սրբուհի Տյուսաբ, Աշխարհաբար հայ լեզուն, կ. Պոլիս, 1880, էջ 7։

ներ, որոնք Տյուսաբին առաջին հերթին գնահատել են որպես հրապարակախոսի։ Այսպես, Ա. Բաբայանը տարիներ առաջ հրապարակած մի հոդվածում գրել է. «...Տյուսաբը շատ ավելի մեծ է որպես ինտելեկտուալ գրող, որպես հրապարակախոս, քան որպես գեղագետ»[1]։ Նման պնդման մեջ զարմանալի ոչինչ չէր լինի, եթե Ա. Բաբայանը կամ մյուս ուսումնասիրողները (Ա. Ալպոյաճյան, Լեո, Վրթ. Փափազյան, Ա. Տերտերյան, Հ. Աճառյան, Մ. Ճանաշյան) անդրադառնային Տյուսաբի բուն հրապարակախոսությանը՝ նրա հոդվածներին, փորձեին գտնել որևէ ընդհանրություն կամ կապ գրողի հրապարակախոսական ու վիպական գործերի միջև։ Մինչդեռ առանց այդպիսի մոտեցման, առանց հեղինակի հրապարակախոսության քննության Տյուսաբի գեղարվեստական երկերի ամեն մի ուսումնասիրություն մնում է պակասավոր։

Սակայն ամենից առաջ խոսենք Տյուսաբի «Աշխարհաբար հայ լեզուն» աշխատության մասին։

* * *

Աշխարհաբարը թեև վաղուց էր տիրապետող դարձել, բայց պայքարը նրա և հին լեզվի՝ գրաբարի կողմնակիցների միջև շարունակում էր բորբոքվել։ Այդ վեճը, որ հայտնի է գրապայքար անվամբ, արևմտահայ իրականության մեջ սկզբնավորվեց 50-ական թվականներից և տևեց մի քանի տասնամյակ[2]։ Այդտեղ հարկ չկա մտնել խնդրի մանրամասնությունների մեջ[3], միայն ասենք, որ գրաբարը գրական լեզու հռչակելու պահանջը առաջադիմական չէր, քանի որ այն դադարել էր ժողովրդին հասկանալի լինելուց։ Բայց, չդիտակցելով այդ և անտեսելով ժամանակաշրջանի պահանջները, արևմտահայ մտավորականներից ոմանք 80-

[1] Տեղեկագիր ՍՍՌՄ ԳԱ Հայկական ֆիլիալի, 1941, №№ 3—4, էջ 28։

[2] Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 504—505։

[3] Այս մասին տե՛ս պրոֆ. Հ. Աճառյանի նշված աշխատության (2-րդ մաս) Իթ գլուխը («Գրապայքար, վերջամշակումներ և մեռյան փորձեր»)։

ական թվականներին շարունակում էին կառչել «գրոց լեզվին» և փորձում էին պարտադրել այն գրականությանը։ Այդ տեսակետից հետաքրքիր է 1880 թվականի վերջերից ծավալված վեճը արևմտահայ մամուլում։ Գրաբարի պաշտպանության դրոշը պարզեց Ջապել Խանճյանը (հետագայում՝ Սիպիլ)։ Նա «Անահիտ» ստորագրությամբ տպագրած մի շարք հոդվածներում գտնում էր, որ արդի գրական լեզուն պետք է ճանաչվի «ազգին գլխավոր պարծանքն և գրականության փայլն եղող» գրաբարը[1]։ Նրան հակադրվեց Բյուզանդ Քեչյանը («Արամազդ»)։ Հետագայում այդ վեճը երկուստեք ունեցավ իր կողմնակիցները (Արմեն Լուսինյան, Ստեփան Ցազճյան, Արնեն Այտընյան, Մատաթիա Գարագաշյան, Հայրուհի Մրմրյան և այլք)՝ երկար ժամանակ զբաղեցնելով հասարակայնության ուշադրությունը։ 1886 թվականին Մ. Գարագաշյանն ու Հ. Գուրգենը Կ. Պոլսում հրատարակեցին «Ճաշակ ոսկեղէն դպրութեան» գրաբար հանդեսը՝ ձգտելով արմատավորել հին լեզուն։ Բայց, ահա, Սրբուհի Տյուսաբը, Զ. Խանճյանի և Բ. Քեչյանի վեճից ամիսներ առաջ, լույս ընծայեց «Աշխարհաբառ հայ լեզուն» աշխատությունը (Կ. Պոլիս, 1880) և միանգամից վճռականորեն բռնեց աշխարհաբարի կողմը։ Այդ նկատի ունենալով է, որ պրոֆ. Հ. Աճառյանը գրում էր, թե «Աշխարհաբառ հայ լեզուն» գրքույկում երևում է հեղինակի «առաջադիմասեր ոգին»[2]։

Տյուսաբի աշխատությունը գիտական տեսակետից, իհարկե, մեծ արժեք չի ներկայացնում։ Հեղինակը մասնագիտական-լեզվաբանական պրպտումներ չի կատարում, ինչպես, ասենք, նրանից առաջ արել էին Ա. Այտընյանը («Քննական քերականություն», Վիեննա, 1866) կամ Մ. Չեբրազը («Ազգային դաստիարակություն», Կ. Պոլիս, 1876), բայց դրանով հանդերձ այնտեղ տեղ են գտել բազմաթիվ ուշագրավ մտքեր և խելացի դիտողություններ։

Ամենից առաջ ճիշտ են լեզվի մասին հեղինակի պատ-

---

[1] «Մասիս», 1881, № 2798 («Հայերեն լեզու»)։

[2] «Էջմիածին», 1951, հունվար—մարտ, էջ 41։ Համանման կարծիք է հայտնել նաև Լեոն («Մուրճ», 1901, № 7, էջ 192)։

կերացումները. «Լեզուն թարգմանն է մտաց. նովավ մեր պետքերը կը հայտնենք, ուրիշներու հետ ի հաղորդակցություն կը մտնանք... Լեզուն մարդկային պետքերեն մեկն է և որչափ միտքը մշակվի և զարգանա, նույնչափ ալ լեզուն կը կատարելագործվի»[1]: Տյուսաբը հանդես է բերում պատմական մոտեցում՝ լեզվի զարգացումը քննելով ժամանակաշրջանի պահանջների լույսի տակ և պատմական իրադարձությունների փոխազդեցության մեջ: «Եթե մեր հայկական լեզվին համառոտ տեսությունը ընելու ըլլանք,— գրում է նա,— կը տեսնենք թե յուր կրած փոփոխությունները հինքն կը կրե զոգին ժամանակին և այն ազգաց, որոնք տիրեցին Հայաստանի՝ մտավորական կամ սրո զորությամբ»[2]:

Այս աշխատությունը նորից ու նորից ցույց է տալիս, թե Տյուսաբը որքան լավ գիտեր մեր ժողովրդի անցյալը: Նա համառոտակի խոսում է գրերի ստեղծման պատմության մասին, հիշատակում այն երկպառակությունները ու «արտաքին շփոթությունները», որոնք վրդովել են հայ գրականության բնականոն զարգացումը: Այս կարգի շատ դատողություններ հետագայում տեղ գտան նրա «Հայերուն մտական հառաջդիմության վրա քանի մը խոսք» բանախոսության մեջ, որի մասին խոսք կլինի ստորև:

Նոր ժամանակները նոր պահանջներ են առաջադրում: Ելնելով այս ճշմարիտ դրույթից, Տյուսաբը եզրակացնում է. «Գրաբառը թեև կանոնավոր և հարուստ լեզու մը, սակայն չէ այնչափ գործածական իբրև զաշխարհաբառ և մանավանդ թե մեծ դժվարություններ կը հարուցանե նա աշխարհիկ լեզվին բոլորովին տարբերելովը, մինչև անհմանալի ըլլալու գրեթե նոցա համար, որոնք հայերենի մասնավոր գիտության չեն զբաղած»: Աշխարհաբարը ծնվել է «մայր լեզվից»՝ գրաբարից, բայց այն «կանոնի վրա հիմնված չըլլալով անիշխանության մեջ կրծփա»[3]: Ուրեմն հարկավոր է աշխարհաբարին տալ «ողորկ, սահուն և ներդաշնակ կերպարանք»: Տյուսաբը մեղադրում է բոլոր նրանց, ովքեր լեզուն համա-

---

1 «Աշխարհաբառ հայ լեզուն», էջ 6:
2 Նույն տեղում, էջ 6:
3 Նույն տեղում, էջ 8, 9:

րում են «իմաստը բացատրելու» ձև միայն և գտնում, որ «նույնիսկ հօգուտ իմաստին ձևը զոհվացնելու է, որպեսզի անոր ամենայն կատարելութիւնները երևան ելլան»[1]:

Բայց ինչպե՞ս հասնել դրան:

Հեղինակը ակնարկելով 1853 թվականին Կ. Պոլսում Ն. Ռուսինյանի, Գր. Օտ՛յանի և Թնկրյանի լույս ընծայած «Ուղղախոսություն արդի հայ լեզվին, հոլ.ինված ուսումնական խորհրդակցությամբ» աշխատությունը, նշում է, որ այն «ընդունելություն չգտավ»: Նա անդրադառնում է նաև «Մեծն Պեշիկթաշլյանի» գործունեությանը և հայտնում այն կարծիքը, թե վերջինս «աշխարհաբարին մասնավոր կերպարանք մը տվավ յուր ոճույն զարմանալի գեղեցկությամբն և թատերական երկասիրությամբքը»: Տյուսաբը բարձր է դասում իր ուսուցչի ծառայությունները (Նրան տված գնահատականները մեզ արդեն ծանոթ են «Ի յիշատակ պ. Մ. Պեշիկթաշլեանի» բանաստեղծությունից)[2] և ավելացնում, որ Պեշիկթաշլյանը նրանցից էր, որոնց «բառերն անմահ են, որովհետև սրտերուն մեջ քանդակյալ են»[3]: Բայց, ըստ էության, հեղինակին չեն բավարարում ո՛չ նախորդների, ո՛չ ուսուցչի և ո՛չ էլ «մատենագրական ընտիր տաղանդների» փորձերը, որովհետև «ամեն ոք յուր անձնական ճաշակին հետևելով լեզվին մեծածավալ դաշտին մեջ, չքնաղ մտավորական ծաղիկներ սփռեց աստ և անդ, առանց փունջ մը կազմելու նիրդաշնակութեամբ միավորյալ»: «Լեզու մը ըստ հաճոյից յուրաքանչյուրին չի ձևանար, այլ հմուտ կաճառի մը պաշտոնն է այդ»,—ահա Տյուսաբի եզրակացությունը: Նրա կարծիքով հարկավոր է «հմուտ և հայագետ» մարդկանցից կազմել մի խումբ և լուծել «լեզվին դժվարին կնճիռը», իսկ առանձին անհատների կանոնադրությունները միայն ավելացնում են շփոթությունը:

---

[1] «Աշխարհաբառ հայ լեզուն», էջ 14:

[2] Առաջինը Ա. Ալպոյաճյանն է նկատել, որ «Աշխարհաբառ հայ լեզուն» գրքույկում Պեշիկթաշլյանին նվիրված տողերը Տյուսաբն հայտնի, բանաստեղծության «արձակ մեկ կրկնությունը կրնա համարվիլ» («Ուսումնասիրություն... էջ 31—32):

[3] «Աշխարհաբառ հայ լեզուն», էջ 11:

Իր այս ժամանակահարմար առաջարկությամբ Տյուսաբը նպատակ չուներ «միջին ու հաշտարար ուղղություն» բռնել դրաբարի և աշխարհաբարի միջև, ինչպես կարծում է Մեսրոպ Ճանաշյանը[1]։ Նա խնդիր էր դնում ունենալ «ընդհանուր աշխարհաբառ», այլապես «պիտի տեսնենք խառնիխուռն դրաբառ դարձվածք մը ուղղախոսականին հետ, տաճկական մը ռուսականին հետ, դաղղիական մը աշխարհաբառյանին հետ, ճշգրիտ պատկեր լեզվաց Բաբիլիոնի»[2]։

«Աշխարհաբառ հայ լեզուն» գրքույկի ընդարձակ գրախոսությամբ հանդես եկավ Գրասեր Ատոմը (Ե. Տեմիրճիպաշյան)[3]։ Ելնելով իր գեղագիտական ըմբռնումներից, նա քննադատում էր Տյուսաբի ոճը, որից չի երևում թե նա «անպատճառ կենակցած է Պեշիկթաշլյանի հետ, քաղած է, պողցած է նորա մեծության գաղտնիքն, նորա մտածման ու բացատրության եղանակն, նորա խանդալիր ոգին, նորա գունալիր և ստեպ շեշտալիր ոճն...»։ Բուն աշխատության Տեմիրճիպաշյանը նվիրում է մի քանի նախադասություն՝ դառնելով, որ այն չի կարող գոհացնել ոչ գրագետներին և ոչ էլ ժողովրդին։ «Ժողովրդյան համար պետք էր ավելի պարզ գրված ըլլալ»,—ասում է նա։ Այս վերջին դիտողության մեջ ճշմարտություն կա։ Տյուսաբի այս գործում գրաբարյան դարձվածքներն ու ոճերն (վաղ ընդ. փույթ, ձայնմ, ի ճոցանե, նովավ, արբունս, պանծայր, ոչ եւս, շղթայիւ, զոմանս ի բաց նետելով, ի նմանէ և այլն) իրոք զգալի տեղ են բռնում, և գրքույկը ընթերցողների լայն շրջանների համար դյուրամատչելի չէին դարձնում։ Ինչ վերաբերում է այն դիտողությանը, թե Տյուսաբի ոճը «գեղեցիկ չէ», ապա այստեղ արդեն Տեմիրճիպաշյանն իրավացի չէ։ Աշխատության ոճը շատ ավելի «գունալիր» է, քան այդ թերևս անհրաժեշտ էր։ Հրանտ Ասատուրը ճիշտ է նկատել, որ «Աշխարհաբառ հայ

---

1 «Բազմավեպ», 1950, էջ 8։ Ավելի տարօրինակ է Մ. Ճանաշյանի այն պնդումը, թե «Տյուսաբ լեզվապայքարի հարցին մեջ գրաբարյան մնաց գործնականին մեջ, ավելի ճիշտ հետեվեցավ ժամանակի լեզվին» (նույն տեղում)։ Ո՛չ Տյուսաբին, ո՛չ էլ ժամանակի լեզուն գրաբարյան չի եղել։

2 «Աշխարհաբառ հայ լեզուն», էջ 11։

3 «Մասիս», 1880, №№ 2709, 2713։

լեզուն» գրված է «ժամանակին՝ Գարագաշյանի, Պերպերյանի, Գուրգենի գործածած ոճով, որուն տված է բանաստեղծական դրոշմ մը»[1]։

Այնուհետև, Ե. Տեմիրճիպաշյանը թերություն է համարում այն, որ Տյուսաբը չի հիշատակել Գ. Օտյանի, Ն. Ռուսինյանի, Կ. Ութուճյանի անունները, չի մատնանշել նրանց մատուցած ծառայությունները։ Երկու տասնամյակ անց նույնը երկրորդեց նաև Ա. Ալպոյաճյանը։ Նա Տյուսաբի հայտնած կարծիքները համարելով «բավականին ուղիղ», միաժամանակ կշտամբում է հեղինակին, որ առանց Պ. Դուրյանի և Գր. Օտյանի աշխարհաբարի մասին խոսելու փառաբանել է Պեշիկթաշլյանին «մինչև զայն «Մեծն» կոչելու աստիճան»[2]։ Հիրավի, Տյուսաբը շատ է մեծարում Պեշիկթաշլյանին, և այդ գալիս էր ուսուցչի նկատմամբ տածած խորին հարգանքից։ Բայց, ինչպես արդեն ասվել է, նա դժգոհ է «մասնավոր անձանց» ջանքերից, ովքեր որ լինեն, այլ ուզում է «կաճառի մը միջոցավ լեզվին հիմունքը հաստատել»[3]։ Եվ վերջապես, չմոռանանք, որ «Աշխարհաբառ հայ լեզուն» գիտական ուսումնասիրություն չէ, այլ ավելի շուտ հրապարակախոսական մի ելույթ, որ հեղինակը համարում է աշխարհաբարի պաշտպանությամբ հանդես եկած «զորավոր լեզուներին» «տկար արձագանքն»։ Տյուսաբը խոստովանում է, որ աշխարհաբարի կանոնադրությանը ձեռնարկելու հրավեր կարդալով, ինքը ունկնդրել է իր «հոգու մրմունջին» և ջանա-

---

[1] ԳԱԹ, Թ. Ագաթյանի ֆոնդ, 17/I, էջ 333։

[2] Ա. Ալպոյաճյան, *Ուսումնասիրություն Սրբուհի Տյուսաբի*, էջ 22—23։

[3] «Աշխարհաբառ հայ լեզուն», էջ 14։ Երկու տարի անց «Հայերուն մտակառ հառաջդիմության վրա քանի մը խոսք» դասախոսության մեջ Տյուսաբը նորից անդրադառնալով լեզվի հարցերին, պաշտպանում է նույն տեսակետները։ Բարձր գնահատելով «Բառերով և խոսքով ճոխ գրաբառ լեզուն», նա նախապատվությունը տալիս է գրաբարի դասերը՝ աշխարհաբարին, քանի որ այն համապատասխանում է «գրաբուս ոգվույն»։ Տյուսաբը հույս է հայտնում, որ «ժամանակին գաղափարաց և գրության ընթացքին համեմատ փոփոխվելով աշխարհաբարը, որ «տակավին ամուր հիմանց վրա հաստատված չէ», կկատարելագործվի։

ցել օգտակար լինել ազգին։ Եվ մեզ համար էականը հենց այդ հոգու մրմունջն է, ազգին օգտակար լինելու ազնիվ ցանկությունը։

* * *

Ոչ միայն իր վեպերով, այլև հրապարակախոսությամբ Սրբուհի Տյուսաբը մեր իրականության մեջ արձագանքել է Արևմուտքում ծայր առած կանանց շարժմանը։

Հայտնի է, որ կանանց շարժումը, կամ ինչպես սովորաբար անվանում են՝ ֆեմինիզմը (լատիներեն femina—կին) հրապարակ նետեց բարձրացող բուրժուազիան, երբ նա ծաղկուն էր իշխանության և աշխատավորական զանգվածների մեջ սերմանում էր «ազատության, հավասարության և եղբայրության» անխուսափելի, անհապաղ եվ լիակատար հաղթանակի պատրանքներ, պատրանքներ ոչ թե բուրժուական, այլ համամարդկային ռեսպուբլիկայի մասին, ռեսպուբլիկա, որը երկրի վրա խաղաղություն և մարդկանց մեջ հաճություն էր հաստատելու»[1]։ Ժան-Ժակ Ռուսոն և ուտոպիստ-սոցիալիստները, ֆրանսիական լուսավորիչները և ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատները, ինչպես նաև Ամերիկայում և Եվրոպայում կանանց շարժման դաղափարախոսները (Մերսի Օտտիս Ռուրրեն, տիկին Ադամս, Ժան Անտուան Կոնդորսե, Մարիա Ուոլստոնկրաֆտ և այլք) կանանց համար պահանջելով տղամարդկանց հավասար իրավունքներ, անկեղծորեն հավատացած էին, որ երկու սեռերի իրավահավասարության դեպքում միայն կարելի կլինի խոսել իսկական դեմոկրատիայի մասին։ Ու թեև այդ գաղափարները հալածվում էին ու ծաղրվում, բայց շարունակում էին ապրել, տարածվել ու շահել նորանոր համակիրներ։

Կանանց շարժումը առանձնապես լայն տարածում գտավ XIX դարի երկրորդ կեսում, երբ բուրժուազիան վճռականորեն դավաճանեց իր երբեմնի դավանած սկզբունքներին, և կապիտալիստական շահագործումը ընդունեց լկտի բնույթ։ Կապիտալիստը կնոջը շնորհել էր միայն շահագործվելու ազա-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 15, էջ 46։

տություն։ Հասարակական կյանքի ամենատարբեր բնագավառներում՝ տնտեսական, քաղաքական, իրավական, բարոյագիտական, նա, Ավգուստ Բեբելի արտահայտությամբ, «արհամարհելի մեծություն» էր։ Այս շրջանում է, որ ֆեմինիստները աշխուժացրին իրենց գործունեությունը և հանդես եկան ընտրելու և ընտրվելու, կրթության, պետական պաշտոններում աշխատելու և այլ պահանջներով։ Ավելի ուշ, Անգլիայում առաջացավ մի ուղղություն՝ սուֆրաժիզմ (անգլերեն՝ suffrage—ձայնի իրավունք), որը բացառապես պայքարում էր կանանց ընտրական իրավունքի համար։ Թեև ֆեմինիստները ձգտում էին կնոջ էմանսիպացիան իրագործել բուրժուական հասարակարգի ներսում՝ առանց խորտակելու նրա տնտեսական ու դասակարգային հիմքերը, այնուամենայնիվ նրանց քարոզած հայացքները օբյեկտիվորեն ձևոք էին բերում առաջադիմական բովանդակություն, քանի որ կանանց մեջ մշակում էին քաղաքական գիտակցականություն և նախապատրաստում նրանց հասարակական ակտիվության։ Վ. Լ. Բիլշայը իրավացիորեն նկատում է. «Պահանջելով կանանց իրավահավասարություն տղամարդկանց հետ, ֆեմինիզմն ընթանում էր բուրժուա-ազատագրական շարժման ուղիով՝ իր ետևից տանելով նաև աշխատավոր դասակարգերի կանանց որոշ մասին»[1]։

Ֆեմինիստական գաղափարները ծնվելով Արևմուտքում, շուտով թողեցին իրենց հայրենիքը և թևածեցին օտար հորիզոններում։ Այդ գաղափարների համար Թուրքիայում արգասաբեր հող չկար, ուստի և դրանց ծլարձակումն այստեղ բեղմնավոր չեղավ։ Դրան մեծապես խոչընդոտում էին բրոնակալական կարգերը, որոնք երկիրը հրում էին դեպի տրնտեսական անկում ու քաղաքական հետամնացություն։ Ֆեմինիզմի գլխավոր պահանջներից մեկը՝ կանանց ընտրական իրավունքի հարցը Թուրքիայում առհասարակ չառաջադրվեց. մի երկրում, ուր ցրված էր մեջլիսը և չէին անցկացվում ընտրություններ, կանանց ընտրական իրավունքների մասին խոսակցությունն անգամ դառնում էր անիմաստ և վտանգա-

[1] *В. Бильшай*, Решение женского вопроса в СССР, изд. второе, Госполитиздат, М., 1959, стр. 49.

յին նույն նկատառումներով էլ Թուրքիայում չհարուցվեց կնոջ հասարակական կյանքին մասնակցելու խնդիրը[1]։ Ահա թե ինչու թուրք գրողներն ու հրապարակախոսները ստիպված էին բողոքել միայն ամուսնական հին օրինքների դեմ (Իբրահիմ Շինասիի «Ինչպես է ամուսնանում բանաստեղծը» կատակերգությունը 1860 թ., Շեմս-էդ-դին Սամիբեյի «Թալթայի և Ֆիֆինեթի սերը» վեպը), բարձրացնել ազատ սիրո հարցը (Մհմմեդ Նամըկ Քեմալ-բեյի «Խեղճ երեխան» դրաման 1873 թ.), և այլն։ Ընդհանրապես պետք է ասել, որ ֆեմինիզմը թուրք մտավորականության մեջ ականավոր ներկայացուցիչներ չունեցավ. ո՛չ Թեվֆիկ-բեյ Աբու-զիան 1899 թվականին հրատարակված իր «Կանանց օրայությունում» և ո՛չ էլ Ֆաթիմա Ալիյե խանումը անցյալ դարավերջին գրած իր «Իսլամական կանայք» աշխատության մեջ ոչ միայն չարծարծեցին համարձակ տեսակետներ, այլև իդեալականացրին մուսուլմանուհուն՝ հակադրելով նրան եվրոպացի կնոջը[2]։

* * *

Մինչև Տյուսաբը կնոջ ճակատագիրը մեր հրապարակախոսությանը շատ է զբաղեցրել[3]։ Բայց պատմական նոր իրադրության մեջ, 80-ական թվականներին, այդ հարցը չարունակում էր կարևորություն ներկայացնել։ Հասարակու-

---

[1] Այս տեսակետից բնորոշ է թուրք հրապարակախոս և գրող Շեմս-էդ-դին Սամիբեյի (մհց. 1904 թ.) խոստովանությունը իր «Կանայք» աշխատության մեջ Սամիբեյը գրում է, որ ինքը շրջանցել է կնոջ հասարակական կյանքին մասնակցելու խնդիրը, որովհետև չունի պրաքննության թույլտվությունը (տե՛ս акад. В. А. Гордлевский, Избранные сочинения, II том. Изд. восточной лит. АН СССР, М., 1961, стр. 386):

[2] Այս, ինչպես և վերը թվարկված հեղինակների մասին տե՛ս ակադ. Վ. Գորդլևսկու «Ակնարկներ օսմանյան նոր գրականության» ուսումնասիրությունը նրա երկերի հիշատակված հրատարակության երկրորդ հատորում։

[3] Տե՛ս Ա. Հովհաննիսյան, «Նալբանդյանը և նրա ժամանակը», գիրք առաջին, Երևան, 1955, բաժին II, գլուխ երրորդ, («Հայ կնոջ պատասխանի խնդիրը»)։

Թյունը ավելի էր «քաղաքակրթվում», լուսավորական գաղափարներ էին տարածվում, բայց կինը շարունակում էր մնալ նույն այդ հասարակության ամենաճնշված ու արհամարհված անդամը։ Արևմտահայ կնոջ վիճակը լավ է նկարագրել Գր. Զիլինկիրյանը. «Մնիլ և անիծվիլ... ծննդաբերության մեքենա մը դառնալ, մատնոցը ձեռքեն չթողուլ, տունին հավքտուքովն և ավելին կոթը բռնելով օրերը անցունել, խոհանոցին մեջ հոտիլ...»[1],—ահա թե ինչի էր դատապարտված նա։

Այն ժամանակ, երբ արևմտահայ առաջադեմ մտավորականությունը (Ստ. Ոսկանյան, Կ. Փանոսյան, Մ. Մամուրյան, Գր. Զիլինկիրյան և այլք) մտահոգված էր կնոջ անտանելի վիճակով և ձգտում էր նրան ազատագրել, պահպանողականները, ընդհակառակն, քարոզում էին հնազանդություն և համակերպություն։ «Կինը տանը հրեշտակն է, ուստի անոր պաշտոնը միայն աղոթել ու փառաբանել զԱստված»,—հետադիմական «Ընտանիք» հանդեսում այսպես էր գրում «Արգամ» ստորագրությամբ մի հեղինակ իր «Իգական սեռի դաստիարակության նկատմամբ» հոդվածում[2]։ Նույն հանդեսը «Ապահարզան և հայ կին» անստորագիր հոդվածում հայերի համար «կործանարար» էր համարում ապահարզանի օրենքը և հույս էր հայտնում, որ «ապահարզանի և այլօրինակ մոլոր դրությունք մուտ չպիտի գտնեն հայ ընտանյաց քարեբաստիկ վիճակին մեջ»[3]։ Զայնակցելով «Ընտանիք»-ին, Հակոբ Հաճյանի «Ծաղիկ»-ը նույնպես մերժում էր ամուսնալուծության օրենքը՝ «Ամեն բարեփոխություն վնասակար է, հայը հայուն մնալու է. շռայլություն չենք կրնար ընել, Հայ կույսը Ազգին Հայու զավակներ տալու է»[4]։ Բայց կյանքը պահանջում էր իրենը։ Անգամ լիբերալ հայ մտավորականներից ոմանք, անշուշտ Եվրոպայում ծավալված շարժման ազդեցության տակ, ավելի ու ավելի հաճախ էին հանդես գալիս հայ կնոջ իրավունքների պաշտպանությամբ՝ ընդունելով

---

[1] Գր. Զիլինկիրյան. *Ուղեվորություն ի Կոստանդնուպոլիս*, էջ 114- 115։

[2] «Ընտանիք», Կ. Պոլիս, 1883, № 2, էջ 20։

[3] Նույնը, № 7, էջ 101, 102։

[4] «Ծաղիկ», 1887, № 86, էջ 682 («Ամուսնական օրենք»)։

կրթության, հիմնավոր դաստիարակության և նույնիսկ ապահարզանի անհրաժեշտությունը։ «Խանդունի» կեղծանվամբ մի հեղինակ «Ամուսնական օրենք» հոդվածում արտահայտվում էր «Ամուսնական լիակատար օրենքի»՝ ապահարզանի օգտին[1], իսկ Բ. Քեչյանը «ամուսնալուծության օրենքը» համարում է դեղ «ընտանեկան ու ընկերային ինչ-ինչ ախտերու համար»[2]։

Սրբուհի Տյուսաբի հասարակական գործունեությունը ցույց է տալիս, որ ութսունական թվականներին նրա մեջ ծնվել էին նոր հետաքրքրություններ։ 1880 թվականի վերջերին ծանոթանալով Տյուսաբին, Հրանտ Ասատուրը գտնում է նրան «նրբամիտ ու պատրաստաբան», որ ուներ իր «սիրելի հարցը»՝ հայ կնոջ ազատագրության խնդիրը։ «Հզոր միտք մըն էր այդ կինը,—վերհիշում է Ասատուրը,—և պահ մը պիտի մոռնայի, թե տկար սեռին կը պատկաներ։ Եթե շրլլացյին զարդերը իր մետաքս պլուզին, գոհարները, որ իր կուրծքին վրա կը շողային, իր մազերուն խոպոպները և կանացի դիմագիծերուն շնորհալի արտահայտությունը»[3]։ Մարդասիրական անորոշ իղձերով ապրող երբեմնի աշակերտուհին, ինչպիսին պատկերանում էր նա մեզ «Իցէ՞» ոտանավորում, այժմ համակված էր մեկ ցանկությամբ. ձեռք մեկնել տգիտության և թշվառության մեջ թաղված հայ կնոջը, լուսավորել նրան։ Տեսնելով հայ կնոջ իրավազուրկ ներկան, ներշնչվելով ֆրանսիական լուսավորիչներից ու գրողներից, ինչպես նաև ամերիկյան ու եվրոպական ֆեմինիստների գաղափարներից, Տյուսաբը նախ իր հրապարակախոսության մեջ, ապա, ավելի մեծ ուժով, վեպերում արծարծեց կանանց հարցը, փնտրեց դրա լուծման ինչ-ինչ ուղիներ և փորձեց հասարակությունից հայ կնոջ համար տղամարդուն հավասար իրավունքներ կորզել։

Տյուսաբ-հրապարակախոսը միանգամից չհանգեց կնոջ ազատագրության գաղափարին։ Նրա հրապարակախոսական

---

[1] «Արշալույս Արարատյան», Ժմյուռնիա, 1884, № 1298։

[2] «Մասիս», Կ. Պոլիս, 1884, № 3793, էջ 102 («Ամուսնալուծություն»)։

[3] Հրանտ Ասատուր, Դիմաստվերներ, էջ 184։

առաջին հերթը «Կանանց դաստիարակությունը» հոդվածն է[1], ուր նա գերազանցապես բավարարվում է կրթության, լուսավորության պահանջով։ Հեղինակը կանանց կրթության խնդիրը քննում է ամբողջ ազգի առաջադիմության շահերի տեսանկյունից։ Նրա համոզմամբ, իսկական առաջադիմությունը ձեռք է բերվում միայն ուսման ու բարոյական կրթության զուգակցումով։ Տյուսաբը «բարոյական մարդը պատրաստելու նվիրական պաշտոնը» վերագրում է կնոջը և եզրակացնում, որ հարկավոր է բարվոքել կանանց դաստիարակությունը, այն «հորդ աղբյուրը», որտեղից «մարդկության ապագան պիտի հոսե»։

Դյուրին է տեսնել հոդվածագրի հերթական դրույթի. (առաջադիմության շարժիչ ուժը դաստիարակությունն է) իդեալիստական կեղևը։ Դա ֆրանսիական մեծ լուսավորիչների վաղեմի նախապաշարումն էր, որից չկարողացավ ազատագրվել ոչ միայն ինքը՝ Տյուսաբը, այլև նրա նախորդներից ու ժամանակակիցներից շատերը։ Տակավին 1866 թվականին Մ. Պեշիկթաշլյանը Միջագյուղի «Աղքատախնամ տիկնանց ընկերության» օգտին տրված թատերական. ներկայացումից հետո արտասանած իր ճառում հավատացնում էր, թե ազգը կարող է փրկվել, «եթե հանճն առնու կրթվիլ», և դաստիարակությամբ է, որ «Աստված բժշկելի ըրավ ազգերը»[2]։ Գր. Զիլինկիրյանը (Գ. Զ.) նույնպես լուսավորության մեջ էր տեսնում ազգի «փրկության բանալին ու արքիմեդյան լծակը»[3]։ Տյուսաբի այն փաստարկումը, թե կինն է պատրաստում մարդկության ապագան, հայ հասարակության համար նոր չէր։ Ավելի քան երկու տասնամյակ առաջ Ստ. Ոսկանյանի «Արևմուտքը» քարոզում էր. «Կիներու

---

[1] Ս. Տյուսաբի այս հոդվածը, որը տպագրվել է «Մասիս» օրաթերթի 1880 թ. ապրիլի 1-ի և 2-ի 2587 և 2588 համարներում, մեր գրականագիտության անծանոթ է, ժամանակակիցների ոտ անգամ այս հոդվածի մասին հիշատակություն չենք գտնում։

[2] Մկրտիչ Պեշիկթաշլյանի երկերն ու ճառերը, Փարիզ, 1904, էջ 156։

[3] Տե՛ս «Ազգային զարթուման» հոդվածը («Արևելյան մամուլ», 1880, էջ 447, 448—449)։ Այս առիթով մենք նկատի ունենք Զիլինկիրյանի 80-ական թվականների գործունեությունը։

ձևաքն է բարքը և ինչպես ուզեն կը շինեն զայն... կիներու բնրնի մեջ է լեզվի մը կազմը և մաքրությունը... կիներու սիրտին մեջ է հայրենիք»[1]: Եվ առհասարակ պետք է խոստովանել, որ մեր ականավոր մտավորականները տարբեր ժամանակներում հաճախ են կնոջը վերապահել բացառիկ դեր հասարակության զարգացման գործում: Մ. Մամուրյանն, օրինակ, ուղղակիորեն հայտարարում էր, որ «...Ազգապահպանության գործին մեջ մեծագույն դերը կպատկանի հայ կնոջ»[2]: Նման սահմանափակ ըմբռնումը, սակայն, չի խանգարել նրանց արծարծելու մի շարք խորապես առաջավոր մտքեր: Մասնավորապես, Տյուսաբը «ծուռն» է համարում այն կարծիքը, թե «բարձրագույն ուսմամբ կազդուրյալ միտք մը անկարող է լավ ամուսին և լավ մայր ըլլալուն: Միայն կանոնավոր կրթություն ստացած կինը կարող է դառնալ լավ ամուսին, մայր և պիտանի լինել հասարակությանը: Տյուսաբը դժգոհ է եվրոպական «անհիմն» դաստիարակությունից, որ «առանց որոշ սկզբանց և հարևանցի գիտությամբ միայն կը պատրաստե կինը ընկերության մեջ փայլելուն: Կանանց դաստիարակությունը պետք է ազատ լինի կրոնական ավերյորդապաշտություններից, որոնք «միտքը կը սահմանափակեն և անկարող կընեն զկին որևիցե ազատամիտ և գեղեցիկ ձեռնարկության, մանավանդ թե նա հանգետս գործիք կըլլա նենգավոր խորհրդոց գործադրության, որով կաշխատին ազատությունը կաշկանդել՝ արգելքներ հարուցանելով լուսավորության ծավալմանը»[3]: Կրոնական ազդեցությունից բացի, որը կնոջը մոլորեցնում է «խավարամած սահմանաց մեջ շիջուցանելով ի նմա ամենայն խանդ դեպ ի մեծագործություն և ազատություն», գոյություն ունի նաև երկրորդ վտանգը՝ «աշխարհային ազդեցությունը», որը կնոջ մեջ արթնացնում է թեթևսոլիկ ճաշակներ: Այդ երկու ազդեցությունների հետևանքով է, որ կինը դառնում է մի էակ «առաւլել ի վնաս քան թե հօգուտ ընկերության»[4]:

---

[1] «Արևմուտք», 1859, № 18, էջ 141 («Միշլեին նոր գիրքը»):

[2] «Արևելյան մամուլ», 1889, էջ 196 («Հայ կնոջ դերն ազգին մեջ»):

[3] «Մասիս», 1880, № 2587:

[4] Նույն տեղում:

Համիդյան Թուրքիայում կանանց կրթության պահանջն ինքնին մի խիզախ քայլ էր։ Եթե հիշենք, որ թուրք մտածողները ստիպված էին շրջանցել այդ ցավոտ խնդիրը, որ Շեմս-էդ-դին Սամիբեյը միայն դարավերջին համարձակվեց բացատրել կանանց կրթության առավելությունները, իսկ «Միլլեթ» («Ազգ») թերթը, ինչպես վկայում է ակադ. Վ. Ա. Գորդլևսկին, փակվեց սոսկ նրա համար, որ տպագրել էր մի թարգմանական հոդված, ուր խոսվում էր «կրթության համար կանանց արտասահման ուղարկելու անհրաժեշտության մասին»[1], ապա անտարակույս պատշաճը պետք է հատուցել արևմտահայ գործիչներին (Նիկ. Զորայան, Հովհ. Հիսարյան, Ստ. Ոսկանյան, Մ. Մամուրյան, Ռ. Պերպերյան և այլք), որոնց վիճակվեց հարուցել այդ կարևոր խնդիրը։ Գալով Սրբուհի Տյուսաբին, ապա նա ոչ միայն ընդունում է կանանց «հաստատուն և բարձրագույն» կրթության անհրաժեշտությունը, այլև ցույց է տալիս կրոնի անհամատեղելիությունը իսկական առաջադիմության հետ և կրքոտությամբ պայքարում կրոնական վտանգի դեմ։ «Ցորչափ ազգության գաղափարը կրոնքի գաղափարեն չի զանազանվի,— գրել է Տյուսաբը,— ցորչափ կրոնքը իբրև ազատ խղճի խնդիր մը չի համարվի ու ազգությունը իբրեվ ժողովրդյան էական կյանքը, ցորչափ կրոնքը և ազգությունը, այս երկու որոշ սկզբունքները, յուրյանց սեփականացյալ սահմանաց մեջ չամփոփվին, միության, ազգության և հառաջադիմության բառերը սնոտի հույսեր են»[2]։ Տյուսարն, իհարկե, կրոնին դեմ չէ, նա մերժում է սոսկ կրոնական «աղետալի պայքարը» և Մ. Պեշիկթաշլյանի նման պաշտպանում ազգի «միության» ու «եղբայրության» գաղափարը։ Այդ պառակտումները անտեղի կերպով «ազգը կը հուզեն, կը փեռեկտեն, եղբայր եղբոր դեմ կը զինեն, վիհեր կը բանան, որոնց մեջ կը խորասուզին այնչափ ապարդյուն ճիգեր, երիտասարդական եռանդներ,

---

[1] Տե՛ս Վ. Գորդլևսկու նշված հատորի 388-րդ էջի ծանոթագրությունը։

[2] «Մասիս», 1880, № 2588, (ընդգծումը մերն է)։

հասուն մտաց ծնունդները, որոնց մեջ կը փշրվին, ափսո՜ս, այնչափ մտավորական կարողություններ»[1]։

Տյուսաբը արծարծում է նաև բարոյական դաստիարակության հարցը։ Անհրաժեշտ է նկատել, որ հայ հրապարակախոսներից ոմանք, կողմ լինելով կանանց կրթությանը, բան էության նեղացնում էին նրա շրջանակները, երբ կրթության նպատակը տեսնում էին լոկ տանտիկին պատրաստելու մեջ։ Այսպես, Բ. Քեչյանը «Կրթություն հայ իգական սեռի» հոդվածում հայտարարում էր. «Գիտուն և լեզվագետ լինելն ավելի, մեր օրիորդները բարոյագետ և բարոյասեր, տնտեսագետ և տանտիկին պետք է լինին»[2]։ Նույն հայացքն էր բաժանում նաև «Արձագանքը»՝ գյուղական դպրոցների նպատակը համարելով «վալ տանտիկին, հասկացող, հաշվետես, մաքրասեր և մշակ տանտիկին պատրաստելը»[3]։ Իսկ Տյուսաբն անհամեմատ հեռու էր գնում։ Բավական չէ միայն վարժարաններում մտքեր զարգացնել և «ապագա ամուսիններ ու մայրեր» պատրաստել։ Հեղինակի համոզմամբ, կինը դպրոցից պետք է սովորի «ընտանեկան կամ ընկերական շահը վերադասել անձնականին», լինի հաստատակամ, առաքինի, ձեռք բերի «տնտեսական գիտություն»։ Մայրը պարտավոր է իր զավակից դուրս բերել ոչ միայն «բարեկիրթ ու մեծոգի» մարդ, այլև «ազգասեր մը, որուն համար սուրբ են ազգին հառաչանք և արտասուք, սուրբ են նորա հրճվանք, սուրբ են նորա իրավունք...»[4]։ Սրանք էլ հենց կնոջ երեք՝ «ամուսնական, մայրենի և ընկերական» դերերն են։ Ազգասերներ պատրաստելու պահանջը Տյուսաբի աշխարհայացքի կարևոր մոմենտներից է։ Նա քաջ հասկանում էր բռնակալության հալածանքների ներքին իմաստը, ուստի «հզոր ու ճարտար» մտածողների պարտքն էր համարում բարձրացնել «ազգության նվազյալ ոգին»[5]։

---

[1] «Մասիս», 1880, № 2588։

[2] Նույնը, հոկտեմբերի 13, № 2744։

[3] «Արձագանք», 1882, № 38, էջ 886 («Գյուղական աղջիկների կրթությունը»)։

[4] «Մասիս», 1880, № 2588 (ընդգծումը մերն է)։

[5] Նույն տեղում։

Տյուսաբի այս հայացքները հիշեցնում են Մ. Նալբանդյանի ըմբռնումները։ Այդ երևում է թեկուզ հետևյալ համադրությունից։ Կոմս Էմմանուելը դիմելով կանանց ասում է. «Մայրը պիտի ուսուցանե յուր զավակներին ազգային լեզուն. մայրը պիտի տնկե տղայական սրտերի մեջ ազգության սերմը... Դուք ձեր աղջիկներից պիտի նոր մայրեր պատրաստեք գալոց սերունդի համար. դուք ձեր աղջիկների մեջ պարտական եք տնկել և սնուցանել ազգության տունկը և ծնողական սուրբ իրավունքներով պարտք դնել նոցա վերա նույնը ավելի աճեցուցած տալ յուրյանց զավակներին»[1]։ Բայց այդ միայն արտաքուստ, եթե Նալբանդյանը, ինչպես նշել է ակադ. Ա. Հովհաննիսյանը, շոշափելով կանանց դաստիարակության հարցը, «մտահոգված էր միայն աշխատավոր կնոջ խնդրով»[2], ապա Տյուսաբը ելնում էր ազգի «եղբայրության» ու «միասնության» պեշիկթաշլյանական պատկերացումից և մտածում ընդհանրապես հայ կնոջ մասին։

«Կանանց դաստիարակությունը» հոդվածից է սկսվում հրապարակախոսի ծավալած պայքարը տղամարդու և կնոջ իրավահավասարության համար։ Նա գտնում է, որ «բնությունը ընկերության ներդաշնակությունը հաստատած է երկու սեռին բարոյական և մտավոր հավասար զարգացման վրա»։ Սկսելով կրթության և դաստիարակության հարցերից, Տյուսաբը իրավահավասարության այդ պահանջը շուտով տարածեց նաև մնացած բնագավառների վրա։

Ժամանակին անբարյացակամ քննադատները մեղադրել են Սրբուհի Տյուսաբին, թե նա հայ կնոջ համար ընդունել է լոկ սիրո ազատության անհրաժեշտությունը և գրողին նույնիսկ համարել են անբարոյականության ջատագով։ Սակայն ոչ միայն նրա վեպերը, այլև «Քանի մը խոսք կանանց անգործության մասին», «Կանանց աշխատության սկզբունքը» հոդվածները ապացուցում են, որ Տյուսաբի համար հիմնականը եղել է աշխատանքի հարցը։ Իրավացի էր Զապել Եսա-

---

[1] Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. առաջին, Երևան, 1948, էջ 456—458։

[2] Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, էջ 167։

յանը, երբ գրում էր, որ «...իր (Տյուսաբի—Ա. Շ.) գլխավոր թեզը կնոջ աշխատությունն է»[1]:

«Քանի մը խոսք կանանց անգործության մասին» հոդվածը լույս տեսավ «Թերճեմանը էֆքյար» («Թարգման կարծյաց») թերթի 1881 թվականի № 1212-ում, որն արտատպվեց նախ Զմյունիայի «Արևելյան մամուլ» հանդեսում[2], ապա և Թիֆլիսի «Մեղու Հայաստանի» լրագրում[3]:

Տյուսաբն այստեղ հիմնավորում է աշխատանքի փրկարար նշանակությունը հայ կնոջ համար: Նա իր հարվածներն առաջին հերթին ուղղում է «բարձրագույն ընկերական դասերի դեմ», որոնք «դժբախտ օրինակ մ' եղած են խոնարհության դասերուն»: Հեղինակը համակրական շատ խոսքեր է ասում ընչազուրկների մասին. «կյանքը կը խոստանա հարուստին արև, մարդագետին զարմանապան ծաղկոք, վայելք և հույս, մինչդեռ աղքատին՝ գիշեր, սառնամանիք, զրկանք և անհուսություն: Աղքատը կենաց զառիվերեն պիտի ելլանե, մինչդեռ հարուստն ողորկ զառիվայրեն պիտի սահի»: Քննադատներից մեկը («Բանասեր») «Մայտայի» հեղինակին համարելով խիստ ծայրահեղ, կարծում էր, թե նա շեղվել է «Քանի մը խոսք կանանց անգործության մասին» հոդվածի ոգուց, որտեղ իբր չի ասված, թե կանայք անհավասար են օրենքի առաջ: «Հոն (հոդվածում—Ա. Շ.) հորդոր կա առ կանայս հպատակելու հաստատյալ իրաց,—գրում է Բանասերը,—հոն ջերմ հրավեր կա նոցա՝ աշխատելու...»[4]: Իհարկե, «Մայտայի» համեմատությամբ Տյուսաբն այս հոդվածում այնքան մարտական չէ, բայց հրապարակախոսը չի թաքցնում իր դժգոհությունը. «նախապաշարմունք և օրենք արդեն բավական ծանրացուցած են կանանց ընկերական վիճակը»,—ասում է նաև ճշմարիտ է, որ նա հորդորում է կնոջն աշխատել, բայց ոչ թե գոյություն ունեցող պայմաններին համակերպվելու, այլ «անկախ վիճակ» ձեռք բերելու համար: Միայն աշխատանքով է հնարավոր հասարակության ապացու-

---

1 «Մաղիկ», 1903, № 13, էջ 151 («Մեր կիները»):
2 «Արևելյան մամուլ», 1881, էջ 345—350:
3 «Մեղու Հայաստանի», 1882, № 16:
4 «Մասիս», 1884, № 3606:

ցել, թե կինը «բարոյապես ու մտավորապես տկար համարված արարածը չէ, թե այդ կարծիքը սխալ է, թե կնոջ կաշկանդյալ կեցության, անգործության, թերի կրթության, օրինաց, սովորության և նախապաշարմանց բռնաբարության տխուր հետևանքն է»[1]։ «Երբ կին մը կը գործե,—շարունակում է հրապարակախոսը,—կը սնանի յուր ճգամբը, ոչինչ կը պարտի այլոց, ազատ է կատարելապես, ազատ մտածելու, խոսելու, գործելու առանց որևէ շահախնդիր օտար ազդեցության ներքև ընկճելու»[2]։

«Քանի մը խոսք կանանց անգործության մասին» հոդվածն արժանացավ հայ մամուլի ուշադրությանը։ Եթե «Մեղու Հայաստանին» կարծում էր, որ Տյուսաբը պայքարում է «կեղծ լուսավորության» դեմ ու կոչ անում կանանց չկտրվել «տնային պարապմունքից»[3], ապա ականավոր դեմոկրատ Մ. Մամուրյանը ճիշտ ընկալեց հրապարակախոսի մտքերը։ «Արևելյան մամուլի» խմբագիրը համաձայն էր Տյուսաբի հետ այն հարցում, որ կանանց անգործությունը մի «իրական աղետ» է ու ազգային ծանր վերք և ցանկություն էր հայտնում, որ «ազնիվ հեղինակն բացատրելու հաճի մեզ, թե ի՛նչ տեսակ աշխատություն կ՚հարմարին մեր թշվառ հայ կանանց դասուն, ինչպե՛ս նաև հարուստին՝ մեր արդի ընկերական վիճակին մեջ...»[4]։ Եվ ահա, անսալով այդ խորհրդին, Տյուսաբը «Արևելյան մամուլի» համար գրում է «Կանանց աշխատության սկզբունքը» հոդվածը։

Այս հոդվածում Տյուսաբը հարցն ավելի արմատականորեն է դնում։ Նա, ինչպես Մամուրյանն է նկատել, գտնում է, որ նախքան խնդրի «գործնական կողմի» մեջ մտնելը ու «հայ կանանց գործունեության առարկաները» բացատրելը պետք է կնոջն ազատել իր ստրկական վիճակից»[5]։

Տյուսաբը հայ կանանց բաժանում է երեք դասի։ Առաջինը «զրկանքե մաշած, կյանքեն հուսահատած» դասի կա-

---

[1] «Արեւելյան մամուլ», 1881, էջ 349—350։
[2] Նույն տեղում, էջ 349։
[3] «Մեղու Հայաստանի», 1882, № 16։
[4] «Արեւելյան մամուլ», 1881, էջ 345։
[5] Նույնը, էջ 452։

նայք են, որոնք միայն գերեզմանում են հանգիստ գտնում։ Այդ աղքատ ու խեղճ կանայք աշխատում են միայն «բնազդմամբ, կենաց պահպանության համար և ոչ թե աշխատության սկզբան ծառայելու մտոք»[1]։ Երկրորդը, միջին դասն է, որ դողդ է ու աշխատանքի թշնամի, և վերջապես երրորդը «անծափարթամ կանանց դասն» է, որի կյանքն անցնում է հարստության ու զեխության մեջ, ու արհամարհում է աշխատանքը։ Տյուսաբը այսպիսով ցանկանում է, որ աշխատանքը լինի ոչ թե մի կտոր հաց ճարելու, «անօթութենն չմեռնելու» աղբյուր, այլ ըմբռնվի որպես սկզբունք, լինի մի միջոց, որով կինը կարողանա հասարակության մեջ գրավել պատշաճ, տղամարդուն հավասար դիրք։

Բայց հրապարակախոսը փաստորեն չի կարողանում որոշակի պատասխան տալ Մամուրյանին հետաքրքրող հարցին։ Նա գտնում է, որ աշխատանքի սկզբունքը առաջադիմական է, իսկ ինչ վերաբերում է բուն խնդրին, ապա «Միթե հնարավո՞ր է ճշտիվ գուշակել թե հառաջադիմական ըսկզբունք մ՝ ի՛նչ ուղղություն կառնու, ընկերական կարգին մեջ որպի՛սի խլրտում կը պատճառե, որպի՛սի պիտոյից ծնունդ կուտա, կանանց բարոյական վիճակն որչա՛փ կը բարձրացնե, և բարձրացնելով աշխատության ո՛ր ճյուղերու կենթարկե զայն»[2]։ Որքան էլ Տյուսաբը փորձում է կոնկրետություն մտցնել, որքան էլ նա պնդում է, թե կնոջ աշխատանքի բնույթը որոշվում է «յուր մտավորական կամ նյութական կարողության համեմատ, յուր ընկերական վիճակին, բնական երկրին սովորությանց, բարուց և մանավանդ հառաջադիմության աստիճանին համաձայն», այնուամենայնիվ նրա ըմբռնումները մնում են անորոշ, և նա, վերջին հաշվով, չի պատկերացնում կնոջն աշխատանքով ապահովելու խնդիրը։ Նա չէր գիտակցում բոլոր այն պայմանների ամբողջությունը, որոնց առկայությամբ միայն կնոջ աշխատանքը երջանկություն կբերեր նրան։ Նա չէր հասկանում, որ կնոջ աշխատանքի կիրառելիության ձևը կամ չափը, նրա մասնակցությունը արտադրության պրոցեսին որոշվում է հասա-

[1] «Արևելյան մամուլ», 1881, էջ 454։
[2] Նույնը, 1881, էջ 453։

րակական կարգով։ Բռնակալական Թուրքիան իր կիսաֆեոդալական, ավերված տնտեսությամբ դրա համար որևէ հնարավորություն չէր ընձեռում, իսկ եթե անգամ կնոջ աշխատանքը լայն գործադրություն գտներ, ինչպես այդ կատարվում էր կապիտալիստական զարգացած երկրներում, միևնույն է, բանվորուհին ու գեղջկուհին դարձյալ կմնային «կրկնակի ճնշված» և կշահագործվեին «չլսված ստոր, զզվելիորեն կեղտոտ, գազանորեն բիրտ» օրենքներով[1]։ Ավելին, եթե նույնիսկ բուրժուական կարգերում իրագործվեին տղամարդկանց հետ կանանց իրավահավասարության մասին ֆեմինիստների բոլոր երազանքները, ապա ինչպես նկատել է Ա. Բեբելը, «դրանով չի ոչնչանա ո՛չ ստրկությունը, որպիսին անհամար թվով կանանց համար ժամանակակից ամուսնությունն է, ո՛չ պոռնկությունը, ո՛չ կանանց հսկայական մեծամասնության նյութական կախվածությունը իրենց ամուսիններից»[2]։ Դրան կարելի էր հասնել «հասարակության արմատական վերափոխմամբ» միայն, որի անհրաժեշտությունը, ցավոք, չգիտակցեց Սրբուհի Տյուսաբը։ Սակայն անկախ դրանից (դա կանանց բուրժուական շարժման էական սահմանափակությունն էր), Տյուսաբի հայացքները իր ժամանակաշրջանի համար առաջադիմական էին։ Այն, որ կնոջ աշխատանքի հարցի լուծումը հրապարակախոսը կապում է նրա ազատագրման հետ, նրա աշխարհայացքի ուժեղ կողմն է։

«Կանանց աշխատության սկզբունքը» հոդվածում է, որ հեղինակը բարձրաձայն հռչակում է կնոջ ազատագրման պահանջը։ «... Ի՞նչ է կինն այսօր, եթե ոչ գեղապաճուճ զոհն ընկերության... Ի՞նչ է կինը նույնիսկ քաղաքակրթյալ Ֆրանսիայի հռչակավոր օրենսդրության (Code Napoléon) առջև,—զայրույթով հարցնում է նա և պատասխանում,—Ի՞նչ է նա եթե ոչ ամուսնուն տեսակ մի ստացվածքը,

---

[1] Վ. Ի. Լենին, *Երկերը*, հատ. 30, էջ 133։

[2] *А. Бебель*, Женщина и социализм, М., 1959, стр. 42.

սորուկը»[1]։ «Կինն ընկերության զոհն է»[2]։ Տյուսաբի այս նզրակացությունը, ինչպես և նրա խորհրդածությունները օրենքի ու հասարակական հարաբերությունների մասին ոչ միայն մատնում են նրա բմբռնումների լայնախոհությունը, այլև ցույց են տալիս, որ հրապարակախոսը, ի տարբերություն իր որոշ ժամանակակիցների, կարողանում էր խորը թափանցել երևույթների պատճառների մեջ։ Բնորոշ է այս կապակցությամբ Գրասեր Աստղի օրինակը։ Նա Տյուսաբի «Քանի մը խոսք կանանց անդործության մասին» հոդվածը համարում էր «նշանավոր» ու «հոգեշունչ» և խոստովանում, թե տյուսաբյան հայացքները «ամենախորին տպավորություն» են թողել իր վրա։ Բայց ահա անդրադառնալով հոդվածում արծարծված խնդրին, Տիրմիրճիպաշյանը զարմացած հարցնում է. «Եվ ո՞վ հնարեց այս անհավասարությունն ընդմեջ սեռերու և ընդմեջ դասերու»[3]։ Տյուսաբը, ինչպես տեսանք, կնոջ սորկություն ասելով չէր հասկանում միայն նրա կախումը տղամարդուց։ Այդպես էր վարվում մասնավորապես հայ կանանց առաջին պարբերականի՝ «Կիթառի» խմբագիր Էլիսա Կեսարացյանը (ե. Կ. Ա. Հայկուհի), որ երկու սեռերի անիրավահավասարության համար մեղավոր էր ճանաչում «մեր հզոր կոչված մասին», այսինքն՝ տղամարդկանց[4]։ Իսկ Տյուսաբը քանիցս ընդգծում էր, որ կինը սորկացված է «ընկերության» կողմից, օրենքների, կրոնի, նախապաշարմունքների ու սովորությունների ուժով։ «Կինը մարդկության թագուհին և տղամարդը թագավոր»,— այս էր Տյուսաբի երազանքը։ Նա խորապես համոզված էր, որ «երկու սեռերու բարոյական ձրից միությամբն է, ու բնկերության ներդաշնակությունը կը հաստատվի»[5]։

---

[1] «Արևելյան մամուլ», 1881, էջ 456։ Տյուսաբի այս նմի շարք այլ մաքեր գրեթե բառացիորեն տեղ են գտել «Մայտա» վեպում (այս մեջբերումը տե՛ս Ս. Տյուսաբ, Երկեր, Երևան, 1959, էջ 104—105)։

[2] Նույն տեղում, էջ 457։ Համեմատիր «Մայտայի» առաջաբանը՝ «Կինն ընկերության ոզորմելի զոհն է» («Երկեր», էջ 4)։

[3] «Մասիս», 1881, № 2982 («Բանախոսություն»)։

[4] Ե. Կեսարացյան, Նամականի առ ընթերցասեր հայուհիս, Կ. Պոլիս, 1879, էջ 19։

[5] «Արևելյան մամուլ», 1881, էջ 458։

Տեսնելով կնոջ իրավազուրկ վիճակը և խիզախորեն ծառանալով դրա դեմ, Տյուսաբը միամտաբար կարծում էր, թե կինը կարող է նվաճել իր ազատությունը, եթե միայն լուսավորվի ու աշխատի։ «Ջոհերը, դատապարտյալները կանայք են. մենք, կանայքս, ուրեմն աշխատի՛նք մեր փրկության համար. փրկության միջոցներն են լույս և աշխատություն»։ Նման պատկերացումը բխում էր հրապարակախոսի ընդհանուր աշխարհըմբռնումից։ Հետևելով ֆրանսիական մեծ լուսավորիչներին, Տյուսաբը գտնում էր, որ «Մարդոց հավասարությունն անհնար դարձնող մե՛կ բան միայն կա. միտքերու անհավասարությունն է այն»[1]։

Չնայած Ս. Տյուսաբը ճիշտ չէր պատկերացնում կանանց փրկության ուղիները, այնուամենայնիվ «լուսավորության և աշխատանքի» նրա ծրագիրը շատ ավելի առաջադիմական էր, քան այն միամիտ տեսակետները, որ պաշտպանում էին նրա ժամանակակից հայ կին գործիչները։ «Դպրոցասեր տիկնանց ընկերության» հիմնադիրներից մեկը՝ Նուրիկ Սիմոնյանն, օրինակ, կնոջ իրավունքների մասին խոսելիս առաջին հերթին հանգեցնում էր «ազգակործան սովորություններից» և առաջին հերթին մոդայամոլությունից հրաժարվելուն՝ հորդորելով կանանց պարզասեր լինել[2]։ Իսկ է. Կեսարացյանը գտնում էր. «Եթե մենք կը բաղձանք արանց հավասարություն ունենալ շատ մասերու մեջ՝ որ իրավացի է, նախ պետք է վեհանձնաբար մեր կերպարանքը նմանեցնել, փոխանակ առասպելյալ թուչունին նման գույնզգույն փետուրներով մեր դլուխը զարդարելու... և այն ատեն օրինավոր հավասարություն պետք է տիրե արանց և կանանց մեջ»[3]։ Իհարկե, Տյուսաբը նույնպես դատապարտում էր եվրոպական հոռի սովորությունների կապկումն ու նորաձևությունները

---

[1] Թեոդիկ, *Ամենուն տարեցույցը*, կ. Պոլիս, 1914, էջ 47։

[2] «Մասիս», 1881, № 2802 («Մի քանի խոսք առ Հայուհիս»)։ Ն. Սիմոնյանի հայացքը պաշտպանություն գտավ այլ հեղինակների կողմից՝ «Բ», «Սուսանվեր Պահլավունի» (տե՛ս «Մասիս», 1881, №№ 2804, 2810)։

[3] Ե. Կեսարացյան, *Նամակներ առ ընթերցասեր հայուհիս*, էջ 35—36։

հրապուրվելը[1], բայց նա երբեք դրանցից հրաժարումը չի դիտել որպես կնոջ ազատագրման միջոց:

Աշխատանքի պաշտպարը Տյուսաբը փոխ էր առել եվրոպական մտածողներից: Գր. Չիլինկիրյանը պատմում է, որ Տյուսաբը խոստովանել է, թե «Աշխատությամբ միայն կը շինվի ազգ մը» «օգտավետ ճշմարտության» հեղինակը Միրաբոն է[2]: Հրապարակախոսը, ինչպես տեսանք, աշխատանքի պահանջը կիրառելի է համարում նաև հայ կնոջ նկատմամբ: Որքան էլ այդ պաշտպարն անիրագործելի լիներ

---

[1] Ա.Ի. Ա. Հովհաննիսյանի «Նալբանդյանը և նրա ժամանակը» մենագրության մեջ կարդում ենք. «Նալբանդյանի պուբլիտանիստական խոստովանանքությունը անհաշտելի է հետագա բուրժուական այն ֆեմինիստներին, որոնք Մ. Տյուսաբի հետ դիտում էին կանացի գարդարանքը, որպես նրանց բնական ձիրքերն ի լույս հանելու և կամ ֆիզիկական բերություններ բողարկելու, այլ խոսքով՝ բնության ձեռագործը սրբագրելու միջոց: Տյուսաբը եկնում էր բնության գեղագարդմանը ձգտող բուրժուական էսթետիկայի հայացքից» (Գիրք առաջին, էջ 107): Ընդգծված տողերը, որոնք ի միջկայլոց քաղված են «Մայոտա» վեպից (տե՛ս «Երկեր», էջ 26), ընթերցողին կարող են այն եզրակացությանը բերել, թե Տյուսաբը կանանց գարդարվելու հրավեր է կարգացել: Եթե շարունակենք հետևել գրողի դատողություններին, ապա հենց հաջորդ պարբերությունից կարելի է համոզվել, որ Տյուսաբը, պերճանքն ու ճաշակով զարդարվելը համարելով բնության «ինքնդանի նկարի» շրջանակը, միաժամանակ դրուշացնում է. «...այդ շրջանակը շարունակ փայփայելով գեղն ու հարդը կը կորսնցնե, և այդ չարաչար գործածությունն ի վնաս նկարին արժանյացն է. ուստի գարդն որ գկին բարձրացնելու հատկությունը պիտի ունենար, յուր գեղծմամբը նվաստացնելու կը ծառայե, և ժբրախտաբար այս երևույթը մեր սեռը չէ ըմբռնած տակավին» (նույն տեղում): Տյուսաբը միշտ էլ ելնում էր կինը «իբրև այն ընկերական շինքին վոխանակ նորա-լոկ գարդը ըլլալու» սկզբունքից («Մասիս», 1880, № 2587) և պախարակելով պախարակում էր այն կանանց, որոնք իրենց դլխավոր հոգսը գարդարվելու մեջ էին տեսնում: «Միծափաբեամ» դասի «սիդապանծ» կնոջը, որը «նորաձևության աչտեն ըմբռնյալ փառք կը համարի ուրիշները գերազանցել յուր շքեղ զգեստներովն ու այլևայլ պաճուճանքներով», նա անվանում էր «ավելորդ և վնասակար գարդ ընկերության» («Արեվելյան մամուլ», 1881, էջ 455):

[2] Գր. Չիլինկիրյան, *Ուղևորություն ի Կոստանդնուպոլիս*, էջ 131: Խոսքը հավանաբար ֆրանսիական տնտեսագետ Վիկտոր Միրաբոյի (Ավագի) մասին է:

ժամանակաշրջանի համար, այն օբյեկտիվորեն ստանում է առաջադիմական նշանակություն։ Լենինը անհրաժեշտ էր համարում նկատել, որ «կանանց ու անչափահասներին արտադրության մեջ ներգրավելն իր հիմքում առաջադիմական երևույթ է»[1]։ Իհարկե, կնոջը աշխատանքի հրավեր կարդալով, Տյուսաբը չէր տեսնում դրա հասարակական լուրջ հետևանքները, բայց նա ելնում էր այն ճշմարիտ նախադրյալից, որ աշխատանքը կնոջը կտա տղամարդու նման «անկախ վիճակ»։ Բնորոշ է, որ արևելահայ իրականության մեջ համանման հայացք էր պաշտպանում նաև Գր. Արծրունին։ Նա քանիցս նշում է, որ «թե տղամարդու և թե կնամարդու էմանսիպացիայի հիմնական սկզբունքն է անկախությունը, իսկ անկախությունը հիմնվում է աշխատանքի վրա, ձեռք է բերվում միմիայն անկախ աշխատանքով»[2]։ Որ իսկապես հետաքրքրող խնդրի առնչությամբ Տյուսաբի ու Արծրունու հայացքները միանգամայն առողջ են, հաստատվում է Լենինի հետևյալ խոսքերով. «...Խոսքն այն մասին չէ, որ պետք է հավասարեցնել կնոջն (տղամարդուն—Ա. Շ.) աշխատանքի արտադրողականության, աշխատանքի ծավալի, նրա տևողության մեջ, աշխատանքի պայմաններում և այլն, այլ խոսքն այն մասին է, որ կինը տղամարդու հանդեպ աշխատության իր տնտեսական դրությամբ»[3]։

Սրբուհի Տյուսաբի հրապարակախոսական ամենանշանավոր ելույթներից մեկը՝ «Հայերուն մտական հասաջդիմության վրա քանի մը խոսք» դասախոսությունը, առանձին ուշադրության է արժանի Թուրքիայի հայ և հույն մտավորականության փոխհարաբերության ուսումնասիրման տեսակետից։

Հայերը և հույները, կազմելով Թուրքիայի քրիստոնյա բնակչության ճնշող մեծամասնությունը, հնթակա էին նույն հալածանքներին. ռեակցիոն մամուլը մահմեդականության տեսությունն էր բորբոքում նրանց նկատմամբ, բարբարոս գրաքննության զոհն էին դառնում հայկական ու հունական

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, էջ 710։

[2] «Մշակ», 1889, № 14 («Կնոջ էմանսիպացիա»)։

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 33—34։ (Ընդգծումը մերն է)։

թերթերը. հույներին նույնպես արգելված էր ազգային թատրոն պահելը, և այլն[1]: Նման պարագաներում բնական է, որ երկու ժողովրդի մտավորականությունը պետք է ձգտեր միաբանվել ու միասին մտորել իրենց ժողովուրդների տխուր ճակատագրի մասին:

Համիդյան արյունոտ տիրապետության տարիներին այդ ուղղությամբ հնարավոր քայլերից մեկը դարձավ երկու ժողովուրդների հոգևոր մշակույթի պրոպագանդումը, որը յուրատեսակ ընդվզում էր սանձարձակ ռեակցիայի ու բռնակալության դեմ: Այդ նպատակով Կ. Պոլսի հունական բանախոսարանի (սիլոդոս) նախագահ, արքունի բժշկապետ Մավրոհենը հրավիրում է Տյուսաբին կարդալ մի բանախոսություն՝ վերջին հիսնամյակում հայերի մտավոր առաջադիմության մասին: Այդ ընտրությունը պատահական չէր: Տյուսաբը հայերեն հոդվածների հետ մեկտեղ, Ե. Տեմիրճիպաշյանի վկայությամբ, տպագրել էր նաև «Ֆրանսերեն լեզվավ քանի մը լուրջ հոդվածներ»[2], որոնք, անշուշտ, ծանոթ էին մայրաքաղաքի հունական ու ֆրանսիական հասարակությանը: Տյուսաբի հեղինակությունը լայնորեն տարածված էր որպես արևմտահայ կանանց երկրորդ խոշոր կազմակերպության՝ «Դպրոցասեր տիկնանց ընկերության» ատենապետ: Կար նաև մի հանգամանք, որ անշուշտ հաշվի էին առել հունական դաղութի շրջահայաց ներկայացուցիչները: Իշխանությունների կասկածները չշարժելու համար հարկավոր էր, որ բանախոսը լիներ հասարակական բարձր դիրքի տեր անձնավորություն: Իսկ Ս. Տյուսաբը այդ տեսակետից

---

[1] Հայերի և հույների նկատմամբ ցուցաբերվող կոպիտ խտրականության առթիվ Հ. Պարոնյանը վրդովված դրել է. «Տպագրական տեսչությունը թող կուտա թուրք լրագիրներուն, որ ամեն թշնամանք և դրպարտություն ընեն հայ և հույն պատրիարքներուն, իսկ բնավ թույլ չտար, որ քրիստոնյա մամուլն թուրք մամլույն պատասխանեքաղաքավար լեզվով» (Նշ., հ. 4, 1934, էջ 98): Տե՛ս նաև «Մեղու Հայաստանեաց» Կ. Պոլսի թղթակից Սոսյունի թղթակցությունը («Մեղու Հայաստանեաց», 1882, № 11):

[2] «Գրական և իմաստասիրական շարժում», 1885, տետր յոթերորդ, էջ 120—121: Տյուսաբի ֆրանսերեն հոդվածների մասին, ցավոք, որևէ այլ տեղեկություն չունենք:

Նույնպես քննություն էր բռնում. նա ամիրայի թոռ էր, նշանավոր գերդաստանի դուստր և պալատական երաժշտախմբի ղեկավարի կինը։

Դասախոսությունն ընթերցվեց ֆրանսերեն, 1882 թվականի մարտի 12-ին Բերայի հունական բանախոսարանում, իսկ մի քանի օր անց Գր. Չիլինկիրյանի թարգմանությամբ և հակիրճ առաջաբանով տպագրվեց «Թերճեմանը էֆքյար» հայատառ տաճկերեն թերթում (24 մարտի, № 1383)[1]։ Տյուսաբն ընդգծում է ժողովուրդների հոգևոր մերձեցման անհրաժեշտությունը և դոհունակությամբ խոստովանում, որ հայերի ու հույների միջև այդպիսի կապեր հաստատվել են հին ժամանակներից։ Խոսելով հայ գրականության անցած ուղու մասին, նա բաժանում է իր ժամանակի գրականագիտության հնավանդ պատկերացումները։ Տյուսաբը ևս հինգերորդ դարը համարում է հայ գրականության «ոսկեդարը», նրա «վսեմ պարզության» աղբյուրը տեսնում հունաց գրականության «փրկավետ ազդման» մեջ և այլն։ Ուշագրավ է, որ բանախոսը հայ մշակույթի զարգացումը դիտում է պատմական հանգամանքների ներգործության տեսանկյունից. «...Օտար ազգեր՝ հետզհետե Հայաստանի տիրելով տրտմալի ազդեցություն մ՚ունեցան անոր գրականության վրա»,— ասում է նա։ Նշելով, որ հայերը, չնայած իրենց «տրտմալի կացությանը», մասնակցել են մտավոր շարժմանը, Տյուսաբը հպարտությամբ ավելացնում է. «Այսօր Հայ ազգին մեջ կըրնամք համրել բազմաթիվ լուսավոր միտքեր, ուշիմ հեղինակներ, նշանավոր գրագետներ, բանասիրներ, գիտուններ և մատենագրության հմուտ մարդեր»[2]։ Պատշաճը մատուցելով Մխիթարյաններին, որոնք նավաբեկության ենթարկված հայ գրականության «փրկության խարիսխ» են եղել, բանախոսը մեղադրում է նրանց՝ «կրոնական ողորմելի նկատմանց

---

[1] «Թերճեմանը էֆքյար», լրագրի այս համարի միկրոֆիլմը մենք ստացել ենք «Հանդես ամսօրյա»-ի (Վիեննա) խմբագրությունից։ Դասախոսության տեքստը նեղագծականով ու անհրաժեշտ ծանոթագրություններով տպագրել ենք հայկ. ՍՍՌ ՆԳՄ արխիվային վարչության «Բանբեր Հայաստանի արխիվների»-ի 1962 թ. 3-րդ համարում։

[2] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1962, № 3, էջ 167։

արամալի գործիները» դառնալու համար։ Նա համառոտակի պատմում է Հայերի կատարած թարգմանությունների, աշխարհագրական, հնագիտական, բանասիրական ուսումնասիրությունների, դրական երկերի, կերպարվեստի ստեղծագործությունների մասին, նշում Ռուսաստանի, հատկապես Թիֆլիսի հայերի դերը, որոնք մտավոր շարժման մեջ «շատ նշանավոր հանդիսացան»։ Օգտվելով առիթից, Տյուսաբը խոսում է նաև կանանց մասին։ Նա գտնում է, որ «ազգի վերաշինության գործը» կարող է հաջողությամբ պսակվել, եթե կինը նույնպես մասնակցի դրան, որովհետև «...Երկուսեւեւն ունին հինքյանս քաղաքակրթության տարրեր որք կատարյալ կամ փոքր ինչ անկատար կերպով մ՝ իրարու հետ միանալով փոխադարձ կատարելության մը կը հասնին»[1]։

Տյուսաբը խոստովանում էր, որ «հայոց մեջ կատարված հառաջդիմության գլխավոր գործերի» մասին իր շարադրանքը «խիստ անկատար» է և ունի «շատ պակասներ»։ Հիրավի, բանախոսի գծած պատկերը չէր արտահայտում իրերի իսկական վիճակը. նրա բերանը փակել էր համիդյան թանձր ռեակցիան։ Տյուսաբը, որ քաջահմուտ էր հայ ժողովրդի անցյալին և լավ գիտեր արդի պատմությունը, ստիպված էր ոչ միայն «չմոռաբերել» Նալբանդյանին, Աբովյանին կամ Րաֆֆուն, այլև չարտասանել «Հայաստան» բառն անգամ (հիշեցնենք, որ Բ. դռան որոշմամբ 1880 թ. արգելվեց «Հայաստան» բառի պաշտոնական գործածությունը)։ Բանախոսը թերևս այդ հեղձուցիչ մթնոլորտն էր ակնարկում, երբ խոսում էր հայերին «թանձր խավարի» մեջ պահող իրողությունների մասին։

«Հայերուն մտական հառաջդիմության վրա քանի մը խոսք» դասախոսությունը հուզեց ժամանակի հասարակական միտքը։ Գր. Չիլինկիրյանը գրում էր, որ ունկնդրելով առենախոսին, ինքը հպարտություն է զգացել «Հայազգի գտնվելով» և որ այդ ելույթը «Հայ անվան փայլ մ՝ եւսուվավ»։ «Թշվառներ»-ի նշանավոր թարգմանիչը Տյուսաբի դասախոսությունը համարում էր «հառաջդիմության ձեռ-

[1] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1962, № 3, էջ 170։

նարկի մը մեջ հանդիսություն»[1], Մ. Մամուրյանը, հնարավորություն չունենալով արտասպել դասախոսությունը, դրան նվիրեց մի ծավալուն հաղորդում, ուր հայ կնոջ օտար բեմի վրա երևալը դնահատում էր որպես պատվաբեր ու պատմական նշանակություն ունեցող երևույթ, որ «ցույց կուտա կանանց հակումն ու մասնակցությունն ազգային բարոյական ու մտավոր զարգացման»[2], Կ. Պոլսի եվրոպական մամուլում նույնպես երևացել են հաղորդագրություններ այդ երույթի մասին։

Արևելահայ թերթերը ևս անտարբեր չվերաբերվեցին դասախոսությանը։ «Մեղու Հայաստանի» թերթը նախ տպագրեց իր թղթակից Սոսյունի ծանուցումը[3], ապա դեռևդեմ դրա մանրամասն նկարագրությունը[4]։ Պարզվում է, որ Տյուսաբին լսելու համար հավաքվել են շուրջ 500 մարդ, ու «հայ և հույն պետական և ուսումնական անձինք» շնորհակալություն են հայտնել նրան «ճարտարախոսության համար[4]։ Այն ժամանակ, երբ Կ. Պոլսի «Ստամպուլ» և «Լևոնթ հերալտ» («Արևելյան մունետիկ») եվրոպական թերթերը, «Արևելյան մամուլ»-ի վկայությամբ, Տյուսաբի բանախոսության մեջ տեսել են «նորանշան հանդիսության մը» դրսևորումը, «որու գրգիռն անշուշտ հայրենասիրական բուռն զգացման հետ միացած գովանի փառասիրություն մ'է, ազնիվ հոգիներու հատուկ»[5], «Մ. Վ.» կեղծանվան տակ թաքնված «Մշակ»-ի մի պահպանողական թղթակից շտապեց ամբողջովին մրոտել այն։ «Մ. Վ.»-ն ելնում էր այն հետևդեմ հայացքից, թե հույների «ո՛չ բարեկամությունը մեզ հարկավոր է և ո՛չ ալ թշնամությունը աղետալի», և Տյուսաբի դասախոսությունը համարում էր հայի «ստորության ոգու» մի ապացույց։ Հայտարարելով, թե իբր հույն հասարակությունը «արժանավայել ընդունելություն» ցույց չի տվել

---

[1] «Բանբեր Հայաստանի արխիվներից», 1962, № 3, էջ 163։

[2] «Արևելյան մամուլ», 1882, էջ 173։ Այս ինֆորմացիան արտատպվեց Կ. Պոլսի «Հուսյս» լրագրում (1882, № 247)։

[3] «Մեղու Հայաստանի», 1882, № 27։

[4] Նույնը, № 29։

[5] «Արևելյան մամուլ», 1882, էջ 173։

դասախոսին, թղթակիցը բանախոսությունը որակում է որպես «ծայրե ի ծայր պարզ մի խնկարկություն դեպի հունաց ազգը»՝ թունոտ նկատելով, որ դրանից խուսափելու դյուրին միջոցը կլիներ «բնավ չի դասախոսելը»[1]։ «Մ. վ.»-ն չէր հասկանում, որ հայերի առաջադիմության մասին խոսակցությունը մի տեսակ բողոք էր թուրքական ռեակցիայի հայհալած քաղաքականության դեմ և ոչ թե հույներին հաճոյանալու առիթ։ Թղթակցի այն խոսքերը, թե դասախոսը «մոռացել» է հիշատակել «մեր ռուսիաբնակ ազգայնոց ցույց տված եռանդն և հառաջադիմությունը», պարզապես զրպարտություն էին Տյուսաբի հասցեին։ Տյուսաբը չի տվել ոչ արևելահայ և ոչ էլ արևմտահայ որևէ գործչի անուն և դրա պատճառը ոչ թե նրա անբարյացակամությունն էր, այլ քաղաքական իրադրությունը։ «Զուլումի» տարիներին ռուսահայ մտավորականների մասին ամեն մի լավ խոսք դիտվում էր որպես դավադրություն տիրող հասարակարգի դեմ։

Տյուսաբին անհամեմատ ճիշտ հասկացավ Հայկակը (Ա. Արփիարյանը)։ Իր թղթակցությունում նա ցավում էր, որ դասախոսը «զգուշացավ հիշել մի անգամ իսկ Հայաստան անունը մեր ժամանակակից պատմության վերաբերյալ մասերուն մեջ»[2]։ Հայկակը լավ գիտեր դրա պատճառները և դառնությամբ խոստովանում էր, որ «Քաղաքագիտությունը կը պահանջե այս եղանակավ խոսիլ»[3]։

---

[1] «Մշակ», 1882, № 54։ «Մեղու Հայաստանի»-ում տպված «Հ. Գ. Հ.» կեղծանվամբ մի այլ հեղինակի նամակ (1882, № 36) ցույց է տալիս, որ Տյուսաբի ատենախոսությունը ջերմ ընդունելության է արժանացել։ «Ատենաբան տիկնոջ խոսքերն,—գրում է նա,—ստեպ եռանդագին և երկարատև ծափահարության արժանացան և հետ ավարտման բոլոր հանդիսականք, մանավանդ ծանոթք ու բարեկամք, սույն գեղեցիկ ատենախոսության համար հատկապես շնորհավորեցին գտիկին Տյուսաբ և արժանի գովեստներ ուղղեցին նմայ։ Պարզվում է նաև, որ Տյուսաբին խնդրել են մի ուրիշ անգամ կրկնել «ալերճախոս ատենաբանությունը», բայց նա հրաժարվել է՝ խոստանալով «մոտ օրեն ուրիշ մի ատենախոսությամբ ներկայանալ բանասեր հասարակության»։ Տյուսաբն այս խոստումը դժբախտաբար չի կատարել։

[2] «Մշակ», 1882, № 55։

[3] Ա. Արփիարյանը բանախոսության առթիվ անելով մի քանի ճիշտ դիտողություններ, ի միջի այլոց գրում է. «Մինչեւ Տեր-Սարգսեանցի

Տյուսաբի առնախոսության քննադատությունը «Մշակ»-ի էջերում շարժից «Մեղու Հայաստանի» թերթի թղթակից Սոսյանի գայրույթը պատճառելով այն մեղադրանքին, թե բանախոսը անտեսել է մի շարք իրողություններ, Սոսյանը գրում է. «...Մ. վ. լավ դիտեր, թե մոռացությամբ չէ այդ (ռուսահայերին չհիշելը—Ա.. Շ.) և պ. Հայկակի նման անղյակ էր նաև, թե արդարության պաշտոնեից խորհրդականին քույրը և արքունի պալատան հրաժշտապետի տիկինը բազմաթիվ խոհական անձանց խորհրդով հրավիրված էր Հայաստան բառն անգամ գործածելն դդուշանալու ևս առավել օսմանյան հպատակ և օտար հարկի մը ներքև ապրասիրական զուլգներով արդին անքուն կասկածները գրգռելու, թող թե ռուսահայոց մտավորական և բարոյական հառաջադիմության դուպակշիռն ընելու...»[1]։

Իր ամբողջ «դդուշավորությամբ» ու թերատածությամբ հանդերձ հայ կնոջ առաջին՝ «Հայերուն մտական հառաջդիմության վրա քանի մը խոսք» բանախոսությունը հետաքրքրքիր երևույթ էր։ Այդ, դաժան բռնակալության պայմաններում, մեր հոգևոր մշակույթը պրոպագանդելու ուշագրավ փորձ էր և հայ ու հույն մտավորականության մերձեցման ճանապարհին մի կարևոր քայլ։

«Հայ ընկերություն»—այսպես է կոչվում Տյուսաբի հրապարակախոսական վերջին հոդվածը։ Այն գրված է Գր. Չիլինկիրյանի խնդրանքով և պարզում է հեղինակի հայացքը կրթական-լուսավորական ընկերությունների մասին։ Տյուսաբը, որ 1880 թվականից լայնորեն ներգրավվել էր հասարակական գործունեության մեջ, այս հոդվածում փորձում է պատասխան տալ այն հարցին, թե ինչ կերպ կարելի է աշխուժացնել հայ ընկերությունների աշխատանքը, որոնք

Շահենը Իզմիրի թարգմանության չափ արժեք չունի՞ մեր գրականության համարյա։ Հարկ ենք համարում նշել, որ Տյուսաբը չէր կարող անգամ թվարկել Սեղբակ Տեր-Սարգսենցի (Տևկանցի) «Շահենն և Սիպիր կամ Դաղթական հայրը» վեպը (կ. Պոլիս, 1877), որովհետև այն արգելված էր գրաքննության կողմից, իսկ նրա չվաճառված օրինակները հրկիզվել էին (տե՛ս Լևոյի «Վանի գրականությունից (Քառասնամյակի հուշեր)» հոդվածը («Գեղարվեստ», 1917, № 6, էջ 209)։

[1] «Մեղու Հայաստանի», 1882, № 45։

զուրկ էին նյութական միջոցներից ու ներքին հալածանքներից։

Թեև տարիներ շարունակ ընկերություններ են ծնվում ու անհետանում, չնայած «զանազան արգելից և դժվարությանց», նշում է Տյուսաբը, դրանց գործը չի կորչում, քանի որ «հառաջադիմական սկզբունքն երբեք չմեռնիր»[1]։ Առաջադիմության ապաստարկուներ կարող են դառնալ և՛ արական և՛ իգական ընկերությունները, միայն թե հարկավոր օգնության ցույց տրվի նրանց։ Գիտենք, որ մոտ երկու տարի առաջ, 1880 թվականի սեպտեմբերին, Տյուսաբը պատրիարք Ներսես Վարժապետյանին առաջարկել էր յուրաքանչյուր ընտանիքից, ըստ կարողության, գանձել որոշ տուրք, որով հնարավոր կլիներ Կ. Պոլսում բացելու մի կենտրոնական վարժարան տեղացի ու պանդուխտ հայ աղջիկների համար։ Այդ առաջարկությունը թեև չիրագործվեց, բայց Տյուսաբը դրանից չէր հրաժարվել։ Այժմ էլ նա կրկնում է այն, միայն ավելի ընդհանրացած ձևով. «...Եթե ամեն Հայե տարեկան տուրք մ՝ առնվի, մեծ և որոշ հաստյթ մի կը գոյանա, որով մեր ընկերության վիճակը կապահովի, գործող անձանց եռանդը կարծարծի՝ երբ անոնք ստույգ միջոցներ կը տեսնեն»[2]։ Եվ այդ ամենը մի նպատակով՝ «Դպրոցները բազմացնենք, լույս ծավալվի ամենուրեք»։

Այս առաջարկը հավանության արժանացավ թե՛ Կ. Պոլսում և թե՛ բուն Հայաստանում։ Զմյուռնիայում դրան արձագանքեց Գր. Չիլինկիրյանը՝ ցանկություն հայտնելով, որ Տյուսաբի այդ գաղափարները «ամեն հայաբնակ երկիրներու մեջ հռչակվեին և տարածվեին այն ամեն գրագետներու և խմբագիրներու կողմեն, որք իրենց դրիչը միայն դրամ շահելու համար չեն շարժեր»[3]։ Տյուսաբը Երևանում ևս գտավ իր խանդավառ պաշտպանին։ «Խադունի» կեղծանվամբ մի հեղինակ հանդես եկավ ծավալուն հոդվածով, որտեղ ողջունեց այդ առաջարկը։ «Թող մեր մամուլը, մեր հրապարակախոսները,—գրում է նա,—անուշադիր չմնան հայասեր տի-

---

[1] «Արևելյան մամուլ», 1882, հատոր, էջ 245։

[2] Նույն տեղում, էջ 250։

[3] Նույն տեղում, էջ 243։

կին Տյուսաբի այս երկրորդ առաջարկին ևս, թող արծարծեն այս մասքը։ Այդ դժվարին մտքի իրագործման մեջ մենք տեսնում ենք ազգի միության մեծ խնդիրը»[1]։ Այս առաջարկը ևս գործնական կիրառում չգտավ, բայց այն մնում է Տյուսաբի լուսավորական ծրագրի հանգուցակետերից մեկը։

* * *

Սրբուհի Տյուսաբի հրապարակախոսության կենտրոնական հարցը՝ կնոջ ազատագրման խնդիրը, դարձավ նաև նրա վիպասանության առանցքը։ Դրա հետ մեկտեղ հեղինակի հրապարակախոսության մեջ արդեն շոշափելիորեն նկատվում են մի շարք առանձնահատկություններ, որոնք հատկանշական են «Մայտա», «Սիրանույշ» և «Արաքսիա կամ վարժուհին» վեպերին։

Ամենից առաջ Տյուսաբին խորթ են անտարբեր շարադրանքը, փաստագրությունն ու չոր դատողությունները։ Ինչի մասին էլ գրելիս լինի, լեզվի, կանանց, թե լուսավորական-բարեգործական ընկերությունների, նրա խոսքը տպավորիչ է, որովհետև առկա է պատկերավոր մտածողությունը։ Ահա մի հատված «Կանանց դաստիարակությունը» հոդվածից. «Ո՞վ լավագույն քան զնա (մայրը—Ա. Շ.) պիտի ձայնի գնդեցիկ ներդաշնակությամբ սպրդել մատաղ որդվույն սրտին մեջ. ո՞վ հարմարագույն է ձևակերպելու այն փափուկ կենդանի զանգվածը, որ պիտի կրի դրոշմ յուր ճարտարության և սիրո աստիճանին։ Թևրևս Հռովմ յուր Գրակկոսները չունենար, եթե մեծոգի Կուռնելիան նոցա մայր չըլլար։ Թևրևս Լամարթինի քնարը այնչափ ազու ու ներդաշնակ չհնչեր՝ եթե նորա թևերը լարած չըլլային մատունք մոր մը, որ սիրտ ուներ հրեշտակի։ Թևրևս Պայրընի մռնչյունը այնչափ ահավոր և գոռոզ չըլլար, եթե այն աստիճանի խստասիրտ մայր մը չունենար»[2]։ Կամ լսենք նրա դատողությունները առաջադիմական գաղափարների մասին. «...Լուսավորու-

---

[1] «Պատկ», 1882, № 31։ Նույն հեղինակը, ի միջի այլոց, Տյուսաբի «Աշխարհաբար հայ լեզուն» համարում է «գողտրիկ» գործ և ցավում, որ նրա առաջարկը մնացել է թղթի վրա։

[2] «Մասիս», 1880, № 2587։

թյան շենքերու փլատակաց ներքև, ուր նույնիսկ մահ կը մակաբերվի, կյանք կա։ Մեն մի ավերակ ամբողջ փորձառության, ամբողջ պատմության, ամբողջ փիլիսոփայության աշխարհ մ' է. ամեն սերունդ կուսումնասիրե անդ, ավերակ մի կառնե կը տանի, և երբ ավերակաց կույտը կանհետանա վերջապես, կյանքը՝ մերկացյալ յուր պահարաննն՝ ի լույս կուգա և սրարշավ կը շրջի կրկին ուժով, գոյացած ուրիշ կենսական զորությանց հետ միանալով»[1]։

Հրապարակախոսը սիրում է իր խոսքը համեմել խոհափիլիսոփայական դատողություններով ու իմաստալից արտահայտություններով։ Առանձին ուշադրության են արժանի նրա փիլիսոփայական խորհրդածությունները, որոնք վկայում են հեղինակի մտավոր լայն զարգացման մասին. «Ամենայն ինչ շղթայապես կապված է։ Այժմյան արդյանց պատճառը հետազոտելու է անցելույն փոշվույն մեջ իսկ» («Հայ ընկերություն»), «Այնպիսի ներդաշնակությամբ կցորդված են իրարու բնության շղթաները, որ անհնարին է նոցա մին խորտակել, առանց մյուսներու քայքայումը պատճառելու», «Ամենայն իր նպատակի մը համար ստեղծված է. ամեն բարոյական պատճառ արդյունք մ' ունենալու համար է» («Կանանց դաստիարակությունը»), «Նույն կետին վրա կինալը հետս ընկրկիլ է...» («Աշխարհաբառ հայ լեզուն») և այլն և այլն։

Տյուսաբի հրապարակախոսության այս և այլ առանձնահատկությունները (համեմատություններ, փոխաբերական պատկերներ, հռետորական դիմումներ ու հարցումներ, իմաստը սաստկացնելու համար առանձին բառերի միտումնավոր կրկնություն) արտահայտվել են նաև նրա գեղարվեստական արձակում, իսկ վեպերը, և հատկապես «Մայտան», տոգորված են հրապարակախոսական շնչով։ Այս իմաստով էլ ահա կարելի է ասել, որ Տյուսաբ-հրապարակախոսը ոչ միայն գաղափարական լիցք է հաղորդել, այլև նախապատրաստել է Տյուսաբ-վիպասանուհուն։

---

[1] «Արևելյան մամուլ», 1882, էջ 245։

ԳԼՈՒԽ Գ

«ՄԱՅՏԱ»

Հրապարակախոսությունը Սրբուհի Տյուսաբի վիպական գործունեության նախերգանքն էր։ Չորս տարում, 1883—1886 թվականներին, նա հրապարակեց երեք վեպ («Մայտա», «Սիրանույշ», «Արաքսիա կամ Վարժուհին»), որոնք բոլորն էլ նվիրված են կնոջ դատի պաշտպանությանը։

Ինչո՞ւ Տյուսաբը թողեց հրապարակախոսությունը։ Այս հարցին պատասխանում է գրողը «Մայտա»-ի նշանավոր առաջաբանում։ Երբ հեղինակը գրում էր, թե ինքը ցանկանում է «ճշմարտությունը հայտնել ախորժելի ձևի ներքև»[1], ապա դրանով իսկ նա խոստովանում է, որ «ախորժելի ձև» ընտրելը, այսինքն՝ վիպագրության անցնելը, նրա համար եղել է լիովին գիտակցված վճիռ Հիրավի, հրապարակախոսությունը, որքան էլ այն կարևոր տեղ գրավեր Տյուսաբի ստեղծագործական կյանքում, միայն առաջին քայլն էր։ Այն գրողի գաղափարական հասունացման վկայությունն էր. Տյուսաբը ցույց էր տվել, որ նա ապրում էր ժամանակի հուզիչ խնդիրներով, ուներ իր հասարակական դավանանքը, որի համար պատրաստ էր անվհատ պայքարել։ Բայց դրանով գոհանալ չէր կարելի։ Հարկավոր էր առաջ գնալ, դուրս գալ հոդվածի անձուկ շրջանակներից, փորձել ընդգրկել կյանքն իր բազմազանությամբ ու բարդությամբ, գեղարվեստական խոսքի ուժով բողոքել ապերջանիկ ու նկուն հայ կնոջ «ցա-

---

1 Սրբուհի Տյուսաբ, *Երկեր*, հայպետհրատ, Երևան, 1959, էջ 4։ *Այսուհետև ևս օգտվելու ենք այս հրատարակությունից՝ էջերը նշելով տեքստում, փակագծերի մեջ։*

վալի վիճակի» դեմ, ներշնչել նրան հավատ սեփական ուժերի նկատմամբ և մղել խորտակելու ստրկական կապանքները։

Ահա թե ինչու Տյուսաբը գրիչ վերցրեց իր ձեռքը և գրեց իր վեպերը։

* * *

Սրբուհի Տյուսաբի անդրանիկ վեպը՝ «Մայտա»-ն, լույս տեսավ Կ. Պոլսում, 1883 թվականին։ Բերո՞ւմ էր արդյոք նորություն այդ գործը և ի՞նչ տեղ է գրավում այն մեր գրականության պատմության մեջ։ Այս հարցերին պատասխանելու համար հարևանցիորեն ծանոթանանք մինչտյուսաբյան շրջանի վիպագրությանը։

Արձակը և, առաջին հերթին, վիպագրությունը մեր գրականության երկու հատվածներում՝ արևմտահայ և արևելահայ, հավասար զարգացում չունեցավ։ Արևելահայ գրողները, պատմական հանգամանքների բերումով, ապրում էին նպաստավոր պայմաններում։ Նրանք ստեղծագործում էին բուն ժողովրդի մեջ կամ նրան մոտ, տեսնում և զգում էին աշխատավոր մարդու ցավերը, ծանոթ էին նրա սովորություններին ու հոգեբանությանը և լավ էին հասկանում նրա երազանքները։ Արևելահայ վիպասանները ենթարկվեցին ժամանակաշրջանի այրող խնդիրների թելադրանքին և գրեցին սոցիալական ու պատմական տենդենցիոզ երկեր։ Այդպիսին էր Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին», այդպիսիք էին Մ. Նալբանդյանի, Գ. Տեր-Հովհաննիսյանի, Պ. Պռոշյանի, Ղ. Ալայանի, Ռ. Պատկանյանի, Րաֆֆու վեպերը։

Արևմտահայ վիպագրությունը մինչև «Մայտա»-ն նույնպես անցել է երկար ճանապարհ, բայց նրա ձեռք բերած արդյունքները, որ հետևանք էին տնտեսական, քաղաքական և կուլտուրական որոշակի պատճառների, անչափ համեստ էին։ Հրապարակը ողողված էր արևմտաեվրոպական, հատկապես ֆրանսիական հեղինակների թարգմանական երկերով, իսկ բուն ազգային վեպերը մատների վրա էին հաշվվում։ Ա. Ալպոյաճյանի (Ս. Անգեղյա) տվյալներով 1800—1865 թվականներին լույս տեսած 52 անուն վեպերից միայն

չորան էին ինքնուրույն[1]։ Հետագա քանակական դրան քիչ բան ավելացրին։

Եվրոպական վեպերը միայն ընթերցանության անը չէին արթնացնում, այլև դաստիարակում էին ճաշակ ու բարքեր։ Եվ որովհետև չկային սեփական վեպեր, ընթերցողներն ագահությամբ կլանում ու ընտելանում էին այն ամենին, ինչ ապագրվում էր մամուլում կամ լույս ընծայվում առանձին գրքերով՝ Գյոթե ու Շատոբրիան, Վոլթեր ու Սյու, Սանդ ու Հալևվի, Սկոտ ու Ռիչարդսոն, Դյումա ու Վերն, Էմոն Աբու ու Պատկոպեն Արևմտահայ վիպագիրներից ոմանք, չունենալով սեփական գեղագիտական կոնցեպցիա, հարմարվում ու ենթարկվում էին ընթերցողի ճաշակին և «ազգային վիպասանության» անվան տակ շատ հաճախ հրամցնում եվրոպական երկերի անշնորհք նմանություններ՝ միամիտությով ու հոռետեսությամբ, դավերով ու անտիմնաստ նկարագրություններով լեցուն։

Ահա, օրինակ, Հովհաննես Հիսարյանի «Խոսրով և Մաքրուհին», որ արևմտահայ առաջին վեպն էր («Բանասեր», 1851, №№ 1—10)։ Իր գործի առաջաբանում հեղինակը եվրոպական վեպերը բաժանում է երեք խմբի՝ «առօրյին կամ նկարագրականը», «քաղաքական կամ իմաստասիրականը» և «բարոյական վիպասանությունը», կամ կրոնականը։ Հիսարյանը նման դասակարգումն, ըստ էության, ճևական էր համարում և շտապում էր ավելացնել, որ այդ երեք կարգի վեպերի հիմքում ընկած է սերը, ավելի ճիշտ սիրո որևէ տեսակը։ Գալով «Խոսրով և Մաքրուհուն», ապա հեղինակի խնդիրն է եղել «իրեք դասերուն ալ սահմաններեն ելլելով, իրեքն ալ մեկզմեկու հարև ու կցորդև, որն որ տեսակ մը սիրո ի հարկե դերի չեղած, սիրո բնությունը նկարագրե ինչպես որ է...»[2]։

Բայց Հիսարյանն իր վեպով հերքում է իր իսկ առաջադրած «տեսությունը»։ Նա ելնում է միայն հետադիմական-ռոմանտիկական վեպի սկզբունքներից և «սիրո բնությունը»

---

[1] «Մաղիկ», 1903, № 34—35, էջ 395 («Ուրցակ Թրքահայ գրականության մեջ եղած վեպերու (1800—1865)»)։

[2] «Բանասեր», 1851, № 1, էջ 23։

հանգեցնում է ճակատագրի առաջ նրա անզորությանը։ Սերը խաղալիք է ճակատագրի ձեռքին, որ փշրում է սիրտ ու զգացում, կամք ու բանականություն։ Մարդն անօգնական է, ճակատագիրը՝ հզոր ու անողորմ՝ սա է «Խոսրով և Մաքրուհու» դաղափարական առանցքը։

Իր երկրորդ՝ «Նեռն կամ կատարած աշխարհի» վեպով (Կ. Պոլիս, 1867) Հիսարյանը փորձեց արձագանքել հասարակական հարցերին։ Այստեղ հեղինակի հետադեմ հայացքներն ու կրոնա-պահպանողական բարոյականությունը նորից զգացնել են տալիս իրենց։ Այդ վեպը մի չարամիտ գրպարտություն էր հայ դեմոկրատական շարժման հասցեին։

Հակոբ Հաճյանը նույնպես չէր թաքցնում, որ իր ստեղծագործական ներշնչումն առել է եվրոպական վեպերի հայերեն թարգմանություններից։ «Եվրոպացի վիպասանության թարգմանությունները տեսնելով,— գրում է նա,— փափաք մ՝ ունեցա մեր ազգին մեջ ալ վիպասանական երկասիրության մ՝ օրինակ ըլլալ»[2]։ Ու ահա եռամյա տքնությունից հետո Հաճյանը հրապարակ է նետում «Հեղինե կամ գաղտնիք մը ի Կոստանդնուպոլիս» երկհատոր վեպը, որ սպանությունների, թունավորումների, կեղծ նամակների ու սուտ երդումների, խարդավանքների ու չարագուշակ պատմություններով մի հավաքածու է, ուր ամեն ինչ կատարվում էր հանուն հետաքրքրաշարժության[3]։

Հայ ժողովրդի մռայլ կացությունը, նրա պատմական ճակատագրի հարցը դարձավ նաև արևմտահայ վիպասանների ուշադրության առարկան։ Նրանց մի շարք ստեղծագործություններում ազգային-ազատագրական պայքարի գա-

---

[1] Հ. Հիսարյանի վեպերի մասին մանրամասն տե՛ս Ս. Սարինյան, «Իննադատական ռեալիզմի սկզբնավորումը հայ գրականության մեջ», Երևան, 1955, էջ 119—124, «Հայ նոր գրականության պատմություն», երկրորդ հատոր (Երևան, 1962), ինչպես նաև՝ Ա. Հովհաննիսյան, «Նալբանդյանը և նրա ժամանակը», գիրք 1, էջ 583—584։

[2] Հ. Հաճյան, Հեղինե կամ գաղտնիք մը ի Կոստանդնուպոլիս, Կ. Պոլիս, 1869, հ. 1, հառաջաբան։

[3] Այս հեղինակը 1885-ին հրատարակեց համանման մի այլ վեպ՝ «Բեքայի գլուխները» խորագրով։

զափարախոսություններ ուղեկցվում էր սուլթանիզմի ու ցարիզմի համարձակ քննադատությամբ։

Արմենակ Հայկունու (Ճիզմեճյան) «Էլիզա կամ վերջին Արևելյան պատերազմի ժամանակ տեղի ունեցած իրական դեպք մը» վեպը (Զմյուռնիա, 1861) վերարտադրում է Ղրիմի պատերազմի ժամանակվա իրադարձությունները։ Ազգային-ազատագրական պայքարի տրամադրությունների արտահայտիչը իտալացի Մաթթեոն է, որը եղել է Հայաստանում և շատ լավ կարծիքի է հայերի մասին։ Բայց այդ պայքարի արձագանքները խլանում են հեղինակի (որ վեպի պերսոնաժներից է) և էլիզայի արկածալից սիրո պատմության նկարագրությամբ։

Արևմտահայ պատմա-գեղարվեստական արձակի հետաքրքիր էջերից մեկը Մ. Մամուրյանի «Սև լեռին մարդը» վեպն է, որը միաժամանակ հեղինակի ամենավիպական գործն է[1]։ Այն հրատարակվեց «Արևելյան մամուլ»-ի 1871—81 թվականների համարներում և մնաց անավարտ՝ գրաքննական տրտիլքի պատճառով։ Հեղինակը պատկերում է 30-ական թվականների իրադրությունը և առաջադրում քաղաքական բնույթի հարցեր՝ կապված դպղթի, դեպի սուլթանական Թուրքիան ու ցարական Ռուսաստանն ունեցած վերաբերմունքի հետ և այլն։

«Սև լեռին մարդու» հետ շատ ընդհանուր գծեր ունի Սեդրակ Տեր-Սարգսեցի (Տևկանց) «Շահենն ի Սիպիր կամ

---

[1] *Մամուրյանի առանձին երկեր ունենն գեղարվեստականության, շատ հաճախ-բավականին ուժեղ արտահայտված տարրեր։ «Հայկական նամականի»-ում (1872) կան գեղարվեստական շնչով գրված ամբողջ հատվածներ, կենդանի դիմաստվերներ, բայց դրանցով հանդերձ այն հրապարակախոսական գործ է։ «Անկլիական նամականի կամ հայու մը ճակատագիրը» երկում (1881) կրոնի, եկեղեցու, քաղաքականության, դպղթի, պատմության, լուսավորության և հասարակական այլ երևույթների մասին խորհրդածությունները երբեմն-երբեմն ընդմիջվում են Նելսոն Մամիկոնյի (Ներսես Մամիկոնյան) և Լիլիի (Շուշան) ռոմանտիկ սիրո պատմությամբ։ Անցումներն հրապարակախոսականից վիպականին այնքան թույլ են և բռնազբոսիկ, որ նույնիսկ այդ նկատում է ...«վիպական պատմության» մասնակիցներից մեկը՝ անգլիացի Վուտը. «Պատմութենե ոչրս անցանք. անբնական անցում մը կերևի...»,— խոսակովանում է նա («Անկլիական նամականի...», էջ 108)։*

Գաղթական Հայը» վեպը։ Տեր-Սարգսեանցն ընդունում է վեպերի մեծ ներգործութիւնը մարդկանց հասարակական հայեացքների ձևավորման վրա։ Նա գտնում է, որ հայկական վիպասանութիւնը «իրեն համար առանձին ուղղութիւն ունենալու է» և բնավ պարտադիր չէ ֆրանսիական վեպերի օրենքը «անհղլի պահել»[1]։ Հեղինակն ասում է, թե ինքը նպատակ է ունեցել «ազգային հին ու նոր կենաց մի քանի պատկերներ նկարել» և իր գործն անվանում է «հայրենի վիրաց» պատմավեպ[2]։ Դժվար է չհամաձայնվել այս գնահատականի հետ։ «Շահենն ի Սիպիր»-ում իրոք ցնցող պատկերներով է տրված «մարտիրոսաց երկիր» Հայաստանի տխուր վիճակը 40-ական թվականներին։ Քրդական ասպատակութիւնները, թուրքական հարկային քաղաքականութիւնը, ինչպես նաև ռուսական չինովնիկութեան կաշառակերութիւնն ու կամայականութիւնը ժողովրդին նետել են թշվառութեան գիրկը։ Մամուրյանի նման՝ Տեր-Սարգսեանցը նույնպես մերժում է գաղթականութեան գաղափարը և գտնում, որ հայ ժողովուրդը պետք է բարեկեցիկ դրութեան հասնի իր պապենական հողի վրա։

Արևմտահայ աշխարհաբար վիպագրութեան այս մի քանի նմուշներին պետք է ավելացնել նաև Մերենցի «Թորոս Լևոնի» պատմավեպը (Կ. Պոլիս, 1877), որի նյութը, ինչպես հայտնի է, առնված է Կիլիկիայի պատմութիւնից[3]։

Այս թռուցիկ քննութիւնն անգամ ցույց է տալիս, որ արևմտահայ վիպագրութեան թեմատիկան իսկապես նեղ էր։ Այդ գործերը արտացոլում էին հետու և մոտիկ պատմական անցյալը, արծարծում էին քաղաքական հարցեր, կամ էլ, Հաճյանի «վեպերի» նման, գրական մարզանքներ էին՝ գրված էժանագին հետաքրքրութեանը հագուրդ տալու համար։ Ժամանակակից կյանքը դուրս էր մնացել նրանց հեղինակների տեսադաշտից։

---

[1] Ս. Տեր-Սարգսեանց. Շահենն ի Սիպիր, կամ Գաղթական Հայը, Կ. Պոլիս, 1877, էջ ԺԱ։

[2] Նույն տեղում, էջ ԺԳ, ԺԴ։

[3] Հիշատակված գործերով չի սպառվում արևմտահայ վիպագրութեան՝ մեզ հետաքրքրող շրջանը։ Այդ մասին ավելի հանգամանորեն տե՛ս «Հայ նոր գրականութեան պատմութիւն», հ. երկրորդ։

Դիտելի է, որ արևմտահայ վեպերը դեղարվեստական տեսակետից լուրջ քննության չեն բռնում, վերևում թվարկված ստեղծագործությունները արկածապատում են, լի անհավանական միջադեպերով։ Որոշ հեղինակներ սիրում են պղուշացնել, թե իրենց պատմածը «իրական դեպք մ՚ է» (Հայկունին նույնիսկ «շատ հիվանդոտ մոքերի» նկատմամբ հավատ ներշնչելու նպատակով տղատակին բերում էր դանադան փաստաթղթեր), բայց միևնույն է, դարձյալ չեն համոզում, որովհետև բացակայում է դեղարվեստական վարպետության վեպերը մեծ մասամբ զրված են դրական միօրինակ հնարքներով, թույլ է գործողությունը. իրադարձությունները ոչ թե ցուցադրվում, այլ պատմվում են կա՛մ հեղինակի, կա՛մ էլ որևէ գործող անձի միջոցով («Խոսրով և Մաքրուհի», «Էլիզա...», «Սև լեռին մարդը»)։ Հերոսները բարու կամ չարի բևեռացումն են, որոնց բնավորությունը չի բացահայտվում կոնկրետ գործողություններով, այլ բնութագրվում է հեղինակային խոսքով («Նեռն կամ կատարած աշխարհի», «Թորոս Լևոնի»)։ Կոմպոզիցիոն տեսակետից այդ վեպերը կուռ չեն, որքան ուզեք անհարկի մանրամասնություններ, պատմական տեղեկություններ և անգամ ավելորդ գլուխներ (օրինակ, «Էլիզա...»-ի ԻԳ՝ «Հարավային կողման ռուսները» կամ «Շահենն ի Սիպիր...»-ի ԺԲ՝ «Հանդունդ հանդունդ» գլուխները)։ Բացառությամբ Տեր-Սարգսենցի վեպի, ուր դիալոգները կենդանի են և համոզին է օգտագործված ժողովրդական բառն ու բանը, մյուս գործերում հերոսների խոսքն անհատականացված չէ, իսկ հեղինակների լեզուն կամ չոր է, կամ էլ սենտիմենտալ, բայց ոչ հուզական, հաճախ նաև գրաբարախառն («Նեռն կամ կատարած աշխարհի»-ն գրված է աշխարհաբարով խճողված գրաբարով)։

Այս ամենը հաստատում է Ա. Արփիարյանի այն եզրակացությունը, որ 1850—1880 թվականներին արևմտահայ գրականության «էն քիչ մշակված ճյուղը վիպականը եղավ»[1]։ Տյուսաբի վեպերի գեղարվեստական պակասությունները,

[1] Ա. Արփիարյան, Պատմություն ժթ դարու Թուրքիո հայոց գրականության, Գահիրե, 1943/44, էջ 37։

ահա, որոնց մասին դեռ խոսք կլինի, զգալի չափով պայմանավորված էին արևմտահայ վիպագրության այդ ընդհանուր հետամնացությամբ։

Այսպիսին էր արևմտահայ վիպագրության պատկերը, երբ լույս տեսավ Սրբուհի Տյուսաբի «Մայտա»-ն։ Այն «Ագապիի պատմությունից» (Կ. Պոլիս, 1851) հետո արևմտահայ գրականության երկրորդ, իսկ աշխարհաբար վեպերի մեջ առաջին գործն է, որ ունի սոցիալական բովանդակություն։ Ավելին. Տյուսաբն առաջին հայ գրողն է, որ մեր գրականության մեջ հուզեց կնոջ ազատագրության կարևոր խնդիրը։ Այդ էլ հենց Տյուսաբի պատմական ծառայությունն է հայ գրականությանը։

Սրբուհի Տյուսաբը նաև հայ անդրանիկ վիպասանուհին է։ Մինչև Տյուսաբը մենք ունեցել ենք մշակույթի կին գործիչներ։ Միջնադարում, օրինակ, շարականներ են հորինել Սահակդուխտը, Սրբուհի Մարիամը, թարգմանություններ է կատարել Մարիամ Բագրատունին, 1728 թվականին Վենետիկում «Ակն հոգւոյ» խորագրով հրահանգներ է լույս ընծայել և հոգևոր քարոզներ թարգմանել Մարիամ Քարաքաշյանը[1]։ Մեզ արդեն ծանոթ Էլիպս Կեսարացյանը 1862 թվականին Կ. Պոլսում հրատարակել էր կանանց առաջին հանդեսը («Կիթառ») և տպագրել հրապարակախոսական մի գրքույկ («Նամականի առ ընթերցասեր հայուհիս»), Սրբուհի Երիցյանը Թիֆլիսում տպագրել էր «Վարդուհի» վերնագրով մի պատմվածք («Փորձ», 1876, գիրք առաջին), Սոփիա Մաերյանցը Մոսկվայի «Փարոս Հայաստանի» հանդեսի խմբագիր-հրատարակիչն էր 1881 թվականից, և այլն, բայց նրանցից ոչ մեկը չէր խիզախել հանդես դալ վեպով։

* * *

«Մայտայի» ամբողջական ուսումնասիրման տեսակետից կարևոր է պարզել նրա ստեղծագործական պատմությունը։ Դրա անհրաժեշտությունը թելադրվում է նաև այն նկատառումով, որ քննադատությունը ժամանակ առ ժամա-

---

[1] Այս մասին տե՛ս Հ. Վարդան Վ. Հացունի, Հայուհին պատմության առջև, Վենետիկ, 1936, էջ 174, 244, 293 և այլն։

նակ անդրադառնալով «Մայտայի» ստեղծագործական պատմությանը, առաջադրել է մի շարք հարցեր, գերազանցապես որպես ենթադրություններ, որոնք մինչև այժմ մնացել են անպատասխան։

Սակայն նախքան այդ տեսակետներին ծանոթանալը, հիշեցնենք, որ թե՛ Տյուսաբի օրագրության հրատարակված պատառիկներում և թե՛ մեր ձեռքի տակ եղած հոդվածներում ու նամակներում հետաքրքրող խնդրի կապակցությամբ ոչինչ չենք գտնում։ Միակ աղբյուրը, ուր այսպես թե այնպես գրողը խոսել է իր վեպի ստեղծման հանգամանքների մասին, «Մայտա»-ի առաջաբանն է։ Տյուսաբն այստեղ իմիջի այլոց խոստովանում է. «...Այս երկը հորինելու մղվեցա նաև հանճարեղ և ներոլամիտ բարեկամների որոց ձայնը միշտ ազդեցություն ունեցած է վրաս» (էջ 4)։

Հավանաբար Հեղինակի այս խոսքերն էլ առիթ են տվել որոշ ուսումնասիրողների վեպի մտահղացման դաղափարը վերագրել ուրիշների և որոնել վիպասանուհու բարեկամներին։

Վեպի լույս ընծայումից մի քանի ամիս անց «Բանասեր» կեղծանվան տակ թաքնված մի քննադատ հանդես եկավ «Մայտա» և ազատագրություն կանանց» ծավալուն հոդվածով։ Բանասերը հայ իրականության համար անընդունելի էր համարում վիպասանուհու դաղափարները և գտնում էր, որ եթե Տյուսաբը «յուր պաշտպանած դաղափարաց հաստատ համոզումն ունի և ուզած է բան մ՝ ընել ի նպաստ նոցա իրականացման... ապա պետք է որ թարգմանաբար հրատարակեր յուր երկն ֆռանսերեն լեզվավ—որպես կ՝ ըսվի թե ի սկզբան առաջադրած էր ընել»[1]։

Ինչպես տեսնում ենք, այստեղ ակնարկ անգամ չկա, թե «Մայտա»-ն գրված է եղել օտար լեզվով, այլ խոսքը գնում այն մասին, թե Տյուսաբը մտադրվել է իր վեպը ֆրանսերեն հրատարակել։ Նույն հոդվածագիրը տեղեկացնում է նաև, թե «Մայտա»-ն գրվել է «ի խնդրո բարեկամաց, կ՝ ըսվի, օգուտ քաղելով 1882 տարվո ամառային եղանակի հանգստի օրե-

---

[1] «Մասիս», 1884, № 3606 (ընդգծումը մերն է)։

րեն զորս բարեբախտաբար վայելած է շնորհիվ Մաքրիգյուղի կազդուրիչ օդույն»։

Բանասերի արած ենթադրությունը (որ Տյուսաբը մտադրվել է ֆրանսերեն հրատարակել իր վեպը) տարիներ անց «ճշտվեց» մեկ այլ ենթադրությամբ, թե նա իր գործերը գրել է ֆրանսերենով։ «Ըստղներ կան,—գրում է Ա. Ալպոյաճյանը,— թե իր երկերը մեծ մասամբ գաղղիերենով խճողված են իր ինքնագիր բնագրին մեջ, որ ուրիշներու ձեռքով հայերենի վերածված է»[1]։ Այս կարծիքը, ասես, ամրապնդվում է «Արեվելք» լրագրի հետևյալ հաղորդմամբ, որ հրապարակվեց գրողի մահից հետո. «Կը լսենք թե հանգուցյալ Տիկին Սըրբուհի Տյուսաբի թուղթերուն մեջեն գտնվեր է իր Մայտայիճ ֆրանսերեն բնագիրը։ Այս առթիվ կը տեղեկանանք թե Տիկին Տյուսաբ իր այդ վեպը ֆրանսերեն գրած է նախ և հետո թարգմանած է հայերենի»[2]։ Այս լուրը արտատպում են մի շարք այլ թերթեր ու հանդեսներ»[3], որոնցից շատերը «Մայտայի» ֆրանսերեն օրինակը համարել են հենց բնագիրը։ Սակայն շատ չանցած, Միհրան Հովհաննիսյանը Ա. Ալպոյաճյանի ուսումնասիրության մասին գրած իր գրախոսականում «ձրի» է համարում այն տեսակետը, թե «Մայտա»-ն նախապես ֆրանսերեն է գրվել և ապա թարգմանվել հայերենի։ Գրախոսը առաջ է քաշում նաև այն հավանական ենթադրությունը, թե Տյուսաբը ֆրանսերեն է գրել «մտքի գոհացում տալու իր ամուսնույն»[4]։ Մ. Հովհաննիսյանը նույն հոդվածում հայտնում է նաև մի այսպիսի միտք. «Իր (Տյուսաբի—Ա. Շ.) երկրորդ վեպը («Սիրանույշը»—Ա. Շ.) գրելու զբաղած էր, երբ Զիլինկիրյան հին օրերը հիշեց (նկատի ունի 1865 թվականը—Ա. Շ.) և իրեն այցելության գնաց. ահա ադկից հետևցուցին ոմանք որ ինք սրբագրած ըլլա այդ վեպը»[5]։ Այստեղ «երկրորդ վեպ» արտահայտությունը կամ

---

[1] Ա. Ալպոյաճյան, *Ուսումնասիրություն Սրբուհի Տյուսաբի*, էջ 26։

[2] «Արեվելք», 1901, № 4534։ («Ազգային լուրեր»)։

[3] Տե՛ս «Բյուրակն», 1901, № 4, էջ 64, «Նոր-դար», 1901, № 20, «Մասիս», 1901, № 3, էջ 41, և այլն։

[4] «Մասիս», 1901, № 32, էջ 509։

[5] Նույն տեղում, էջ 511։

սխալ է գործածված, կամ էլ նկատի է առնված հենց «Մայ-
տա»-ն։ Բայց կարևորն այդ չէ, այլ այն, որ Չիլինկիրյանի
անունը որոշակիորեն հիշատակվում է որպես Տյուսաբի վի-
պի «սրբագրող»։ Հ. Ասատուրը 1914 թվականին գրած իր
մի անտիպ աշխատության մեջ, նշելով, որ Տյուսաբը մտե-
րիմ է եղել Չիլինկիրյանի հետ, գրել է. «Չիլինկիրյան խոր-
հուրդ կուտա Տիկին Տյուսաբի, որ իր դաղափարները գրի
առնե և Տիկինը նախ ֆրանսերեն կը գրե վերջ մը՝ Մայտան
զոր հետ թարգմանելով կը հրատարակե 1883-ին...»[1]։ Սա-
կայն հետագայում, հավանաբար զգալով այս կարծիքի ան-
հիմն լինելը, Ասատուրը հրաժարվեց դրանից և իր «Դի-
մաստվերներում» (1921) Չիլինկիրյանի անունը հիշատա-
կեց այլ առնչությամբ. նա գրում է. «Մայտայի հրատա-
րակման գլխավոր դրդիչը եղած է Դրիդոր Չիլինկիրյան, որ
այն ատեններն քանիցս Իզմիրեն Պոլիս եկած էր դատական
գործերով, և Տիկին Տյուսաբի ծանոթացած»[2]։

Մեր օրերում «Մայտայի» ստեղծագործական պատմու-
թյան առիթով արտահայտվել է նաև Տյուսաբի «Երկեր»-ի
հրատարակության ծանոթագրող Հ. Ղազարյանը։ Նա գտնում
է, որ Տյուսաբին վեպ գրելու մտահղացումը թելադրել են
Չիլինկիրյանն ու Մամուրյանը։ «Չիլինկիրյանը,— գրում է
նա,— խորհուրդ էր տալիս Տյուսաբին երբեք չընկրկել որևէ
դժվարության առաջ, պայքարել մինչ ի մահ՝ երազած ծրա-
գրերը իրականացնելու նշանաբանով։ Սակայն ինչպես Չի-
լինկիրյանը, այնպես էլ Մ. Մամուրյանը խորհուրդ էին տա-
լիս նրան հանդես գալու ավելի մեծ կտավի գործերով։ Ով
ահա, հավատացնում է ծանոթագրողը, ոգևորված այս խրա-
խույսից, Տյուսաբը «ձեռնարկեց գրելու նոր, ավելի ընդար-
ձակ գործ, որը հետագայում հրատարակվեց «Մայտա» վեր-
նագրով»։ Ծանոթագրողը նույնպես ընդունում է, որ «Մայ-
տա»-ն «սկզբում գրված էր ֆրանսերեն լեզվով, քանի որ
հեղինակը տակավին վստահ չէր իր ուժերի վրա, թե կկարո-
ղանա հայերեն լեզվով մեծածավալ ստեղծագործություն գրել։

---

[1] ՀՍՍՌ Գրականության և արվեստի թանգարան. Թորոս Ադամ-
յանի ֆոնդ, 17/I, էջ 333։

[2] Հ. Ասատուր, *Դիմաստվերներ*, էջ 159։

Շարադրելուց հետո Տյուսաբը թարգմանից հայերենի և նոր միայն հրատարակից այն Կոստանդնուպոլսում» (էջ 648, ընդգծումը մերն է—Ա. Շ.)։ Պետք է խոստովանել, որ Տյուսաբի ամենաանբարյացակամ քննադատներն անգամ ընդունել են, որ նա «քաջ հայագետ» է, «Մայտան» համարել են «աշխարհաբարի պսակին վրա իբր փառազարդ ադամանդ մը» և ամենաշատը, որ համարձակվել են ասել, այն է, թե նա ֆրանսերենը հայերենից ավելի լավ է իմացել[1]։ Իսկ թե Տյուսաբը հայերեն ինչքան լավ գիտեր, ցույց է տալիս վերը արդեն հիշատակված Մ. Պեշիկթաշլյանի 1864 թվականին գրված նամակը։ Ակադ. Հր. Աճառյանը նույնպես Տյուսաբի հայերենի իմացությունը գտնում է «հիմնավոր»[2]։

Վերոբերյալ կարծիքները պահանջում են քննության առնել վեպի ստեղծագործական պատմության հետ առնչվող մի քանի խնդիր. ի՞նչ լեզվով է գրվել «Մայտան»-ն, սրբագրվե՞լ է այն որևէ մեկի կողմից, արդյոք Գր. Չիլինկիրյանը կամ Մ. Մամուրյանն ի՞ն Տյուսաբին ավել վեպ գրելու խորհուրդը։

Գոյություն է ունեցել «Մայտան»-ի ֆրանսերեն տարբերակը։ Սա փաստ է, և ոչ ոք չի կարող հերքել կամ վիճարկել այն։ Բայց արդյոք այդ տարբերակը հենց վեպի բնագի՞րն է, որ հետագայում թարգմանվել է հայերենի, ստուգապես հայտնի չէ։ Մի բան անհերքելի է, որ Տյուսաբը շատ լավ գիտեր հայերեն, որ նա իր օրիորդ ժամանակ գրել ու հրապարակել է գրաբար բանաստեղծություններ, իսկ նրա «Կանանց դաստիարակությունը» հոդվածը և «Աշխարհաբառ հայ լեզուն» գրքույկը լույս են տեսել 1880 թվականին, այսինքն այն ժամանակ, երբ նա ծանոթ չի եղել Գր. Չիլինկիրյանի հետ (այդ մասին ավելի հանգամանալից խոսք կլինի ներքևում), և հետևաբար չէին կարող նրա օգնությամբ գրված լինել։ Տյուսաբը բավականաչափ լավ գիտեր հայերեն, որպեսզի չդիմեր ուրիշի օգնությանը։ Հավանական է Բանասերի այն կարծիքը, որ Տյուսաբը սկզբնապես ցանկացել է

---

[1] Տե՛ս Բանասերի նշված հոդվածը և Ա. Ալպոյաճյանի ուսումնասիրությունը (էջ 22)։

[2] «Էջմիածին», 1951, հունվար—մարտ, էջ 41։

վեպը հրատարակել ֆրանսերեն, մանավանդ, ինչպես գիտենք, նա Պոլսի եվրոպական մամուլում ևս տպագրել է մի շարք ֆրանսերեն հոդվածներ։ Թերևս անհիմն չէ նաև Մ. Հովհաննիսյանի այն ենթադրությունը, որ վիպասանուհու ամուսինը, կամ նույնիսկ նրա սալոնի ֆրանսիացի հյուրերը հետաքրքրվել են այնքան աղմուկ հանած այդ գործով, և Տյուսաբը նրանց «մտքին գոհացում տալու» համար թարգմանել է այն ֆրանսերենի։ Բայց, կրկնում ենք, սրանք սոսկ ենթադրություններ են և կարոտ են ապացուցման։

Երկրորդ հարցին (ո՞վ է սրբագրել Տյուսաբի վեպը, կամ պրծել նրան՝ գրելու այն) պատասխանելուց առաջ հարկավոր է պարզել «Մայտա»-ի գրության թվականը, մանավանդ, որ այդ խնդիրը, ինչպես տեսանք, Տյուսաբի բազմաթիվ քննադատներից հարևանցիորեն զբաղեցրել է միայն Բանասերին։

Մինչև հրապարակ գալը «Մայտա»-ն իր շուրջը հետաքրքրություն է առաջ բերել։ «Դեռևս լույս չտեսած,— պատմում է Մ. Մամուրյանը,— կը հռչակվեր Մայտա իբրև երփնագույն գոհար, որ պիտի շողար մեր գրական աղուո հորիզոնին վրա, և իր ինքնաբուն նշույլներով պիտի լուսաբաններ կնային ազատության մեծ խնդիրը»[1]։

«Մայտա»-ի լույս ընծայման մասին առաջին ծանուցումները Իզմիրում և Կ. Պոլսում երևացին 1883 թվականի հուլիսին[2]։ Բայց վեպը հրատարակվել է փոքր ինչ շուտ, մեկ ամիս առաջ, քանի որ դատելով Գյուտ քահ. Աղանյանցի հրատարակած «Միծաղ»-ից, Հակոբ Պարոնյանն իր «Այտաս»-ը տպագրել է հունիսին[3]։ Վերջապես կա Ե. Տեմիրճի-

---

[1] «Արևելյան մամուլ», 1883, էջ 339։

[2] «Արշալույս Արարատյան», 1883, № 1206, «Մասիս», 1883, № 3493։

[3] «Միծաղ», Թիֆլիս, 1899, էջ 480։ Այս կապակցությամբ անհրաժեշտություն է զգացվում վերանայել մեր բանասիրության մեջ արտահայտված այն կարծիքը, թե Հ. Պարոնյանի «Միծաղ»-ն ընդհատվել է մայիսին (տե՛ս, օրինակ, Վահան Ջարդարյան, Հիշատակարան, Ե հատոր, 1939, Գահիրե, էջ 41, Գ. Մադոյան, Հակոբ Պարոնյան, Երևան, 1960, էջ 153 և այլն)։ Այդ է հաստատում Ե. Տեմիրճիպաշյանը, որն իր «Գրական և իմաստասիրական շարժումը»-ի 1883 թ. հունիսյան տետրում գրում է, թե շարունակվում է «Միծաղ»-ը։

պաշյանի մի վկայությունը։ Նա «Գրական և իմաստասիրական շարժում» հանդեսի 1883 թվականի վեցերորդ ամսատետրակում հաղորդում է. «Բերկրությամբ լսեցինք թե Տիկին Սրբուհի Տյուսաբ ալ դաստիարակության վրա վիպաձև երկ մը հանձնած է տպագրության»[1]։ Այս «վիպաձև երկը» հենց «Մայտա»-ն է, որ լույս է տեսել նույն ամսում, որին և իսկույն արձագանքել է մեծանուն հրդիծաբանը։

Սակայն ե՞րբ է գրել Սրբուհի Տյուսաբը իր անդրանիկ վեպը։ Այս հարցի պատասխանը անուղղակի կերպով տալիս է Գր. Չիլինկիրյանը Պոլսից գրած իր նամակաշարում, որը նախ հրապարակվեց Իզմիրի «Արևելյան մամուլ»-ում, ապա ընծայվեց առանձին գրքով 1883 թվականին՝ «Ուղևորություն ի Կոստանդնուպոլիս» խորագրի տակ։ Չիլինկիրյանը մի նամակում (ժ, 1881) խոստովանում է, թե ինքն առաջին անգամ Պոլիս է եկել «տասնութ տարի առաջ»[2], այսինքն՝ 1863 թվականին։ Ութերորդ նամակում (1881, Հունիսի 7) Չիլինկիրյանը որոշակիորեն ասում է, թե ինքը Տյուսաբին «նոր ճանչած ըլլալու պատիվը ունեցած» է[3]։ Այդ ծանոթության շնորհիվ, որ, ինչպես տեսնում ենք, տեղի է ունեցել 1881 թվականի կեսերին, նրանց միջև հաստատվում է մտերմություն։ Չիլինկիրյանը չափազանց լավ տպավորություն է ստանում Տյուսաբից, որի միտքը «այժմյա (moderne) հառաջդիմության գաղափարներու բույն մ՚ է»[4]։ Չիլինկիրյանը ոչ միայն բազմաթիվ ջերմ տողեր է ընծայում նրան իր «Ուղևորություն»-ում (նամակ Ը), այլև, երբ Տյուսաբը 1882-ի մարտին Բերայի հունական բանախոսարանում կարդում է «Հայոց մտական հառաջդիմության մասին քանի մը խոսք» ֆրանսերեն առեներախոսությունը, հայերենի է թարգմանում այն և իր նախաբանով տպագրել տալիս «Թերճեմանը էֆքյար»-ում, նրան խնդրում է գրել մի հոդված («Հայ ընկերություններ») «Արևելյան մամուլ»-ի համար։

---

[1] «Գրական և իմաստասիրական շարժում», 1883, տետր 6-րդ, էջ 120 («Ծնդակցություններ և շնորհակալություններ»)։

[2] Գր. Չիլինկիրյան, *Ուղևորություն ի Կոստանդնուպոլիս*, էջ 150։

[3] Նույն տեղում, էջ 128։

[4] Նույն տեղում, էջ 131։

Տյուսաբը, որ արդեն մտահոգված էր կանանց հարցով (1880—1881 թվականներին հրապարակված «Կանանց դաստիարակությունը» և «Քանի մը խոսք կանանց անգործության մասին» հոդվածները դրա համոզիչ ապացույցներն են), ծանոթանալով Չիլինկիրյանին և հանձին նրա գտնելով համախոհի, տալիս է նրան կարդալու «Մայտա»-ի ձեռագիրը, որն արդեն դրված-ավարտված էր։ Այդ մասին պարզ ակնարկում է հենց Չիլինկիրյանն իր «Ուղևորության» ժԱ. նամակում։ Այստեղ նա, կատարելով հերթական գնում, գրում է. «Ամանք իրր ցնորք կը նկատեն մարդկային սիրտը, ա՜յն բուլը որուն մեջ կը կազմվի մարդկության պատմությունը» կ՝ ըսե հայ գրագիտուհի մ՝ իր մի երկին մեջ, ուրուն ձեռագիրը կարդալու չնորհիը վայելեցի»[1]։ Ու այս գրագիտուհին Սրբուհի Տյուսաբն է և ձեռագիր երկը «Մայտա» վեպը, կարելի է համոզվել, եթե բաց աննենք «Մայտա»-ն և կարդանք հետևյալ խորհրդածությունը. «Մարդկային սիրտը բուլ մ՝ է ուր կը ձուլվի մարդկության պատմությունը» (էջ 15)։

Ե՞րբ է կարդացել Չիլինկիրյանը «Մայտա»-ն։ Հիշատակված նամակի (ժԱ) տակ, ինչպես առանձին հրատարակության մեջ, այնպես էլ «Արևելյան մամուլ»-ում, նշվում է. «Բևրա, 1882», բայց այդ թվականի վրա կասկածելու լուրջ հիմքեր կան։ Բանն այն է, որ նախորդ նամակը (ժ) թվագրված է՝ «15 Հունիս 1881», ժԲ նամակը նույնպես «1881» և մեյն հաջորդ նամակներն են (Ա, Բ, Գ) կրում «1882» թվականը։ Պարզ է, որ ժԱ նամակի թվականը թյուրիմացաբար է նշվել «1882», քանի որ Չիլինկիրյանն իր նամակները գրել է ժամանակագրական կարգով, այդ իսկ պատճառով էլ նոր տարուց (1882) սկսվող նամակները համարակալված են ոչ թե ԺԳ, ԺԴ և այլն, այլ՝ Ա, Բ, Գ։ Ուրեմն՝ «Մայտա»-ն պատրաստ է եղել արդեն 1881 թվականին։ Այդ երևում է նաև մեկ այլ փաստից։ «Արևելյան մամուլ»-ում հրապարակված ԺԲ նամակում («1881») Չիլինկիրյանը բնության մի նկարագրության մեջ գրում է այսպիսի տողեր. «Քանի մը հետևորդ աստղեր, զոր վաղվուն երևակայության տեր Հա-

[1] Գր. Չիլինկիրյան, *Ուղևորություն...*, էջ 163 (ընդգծումը մերն է)։

յուհի մը «Աստուծո աչքին ընկած լուսեղեն արտոսր» կանվանեն բանահյուսաբար...»[1]։ Դժբախտաբար «Մայտայի» մեջ այս համեմատությունը անհնար եղավ գտնել (ըստ երևույթին այն դուրս է մնացել հետագա խմբագրության ընթացքում, ինչպես որ այլափոխվել է առաջին խորհրդածությունը), բայց որ խոսքը դարձյալ Տյուսաբի մասին է, անկասկած է։ «Ուղևորության» առանձին հրատարակության մեջ այդ տողերին հանդիպում ենք նույնությամբ, միայն ընդգծված բառերը փոխարինված են «զուր իր վաղուց երևակայությամբը Տիկին Տյուսար...»[2] բառերով։ Հասկանալի է, որ այս դեպքում Տյուսաբի անունը թաքցնելն անիմաստ էր, քանի որ արդեն ընթերցողին էր հանձնված նրա վեպը և Զիլինկիրյանն էլ իր գիրքը ձոնել էր «Մայտայի» հանճարեղ հեղինակին»։

Վերը շարադրվածից անխուսափելիորեն բխում է երկու կարևոր եզրակացություն.

Նախ՝ «Մայտա»-ն գոնե իր սկզբնական տեսքով գրված է եղել 1881 թվականին և երկրորդ՝ Գրիգոր Զիլինկիրյանը չի տվել Տյուսաբին այդ վեպը գրելու միտքը։ Զիլինկիրյանը, անշուշտ, խրախուսել է Տյուսաբին, հորդորել նրան արագացնելու վեպի տպագրությունը, ինչպես վկայում է «Մայտա»-ի առաջաբանը։ Հնարավոր է նաև, որ նա վեպի ընթերցանության ժամանակ առաջարկած լինի ինչ-ինչ փոփոխություններ, որոնք հաշվի են առնվել հեղինակի կողմից։

Ինչ վերաբերում է Մ. Մամուրյանին, ապա նրա կողմից Տյուսաբին «ավելի մեծ կտավի գործերով» հանդես գալու մասին տված խորհուրդը ևս ոչ մի փաստով չի հիմնավորվում։

* * *

Սրբուհի Տյուսաբը արծարծելով կանանց հարցը, ուներ իր հասարակական իդեալը, որի իրագործմանը նա անկեղծորեն հավատում էր։ Ներկայի մշուշից, թշվառության ու

---

[1] «Արևելյան մամուլ», 1882, էջ 405 (ընդգծումը մերն է)։

[2] Գր. Զիլինկիրյան. *Ուղևորություն...*, էջ 133 (ընդգծումը մերն է)։

արհամարհանքի միջից նրան էր ժպտում ազատագրված, մարդուն տրվող բոլոր իրավունքների հաճույքն ըմբռշխնած, հասարակության պիտանի անդամ դարձած հայ կինը։ Երկու տների իրավահավասարությունը նրա համար անտարակելի ճշմարտություն էր։ Տյուսաբը դժգոհ էր իր ժամանակից. այդ զգացվում է ոչ միայն նրա հրապարակախոսությունից, այլև 1882 թվականին Վարդուհի Չիլինկիրյանին ուղղած մի նամակից. «Դարձ՛ւր աչքերդ մարդկության վրա,—գրում է նա,—ի՞նչ կտեսնես հոն։ Անմեղությունը մոլութենն զբաղարտված, պոռնկությունը բարձրաձայն հռչակված, պարկեշտ աղքատությունը արհամարհված, արժանիքը՝ հարստության հանդեպ խնկարկու և քծնող, խիղճը՝ անօրենության առջև խոնարհած, կրոնքը՝ ննդության լծակը, բարեպաշտ հոգիներու չարշարանքը դարձած։ Ու հնք մարդկությունը մերթ վհատ, մերթ խավարամած ու մերթ լուսափողփող, սերունդներու հարվածը կ՛կրե իրենց ատություններով, իրենց նախապաշարումներով, իրենց մոլորություններով, և երբեմն իրենց լույսերով»[1]։ Բայց այդ դժգոհությունը անորոշ էր ու անտարակ. Տյուսաբը նկատում էր հետևանքները՝ չտեսնելով բուն պատճառները, ուներ իդեալներ՝ անծանոթ մնալով դրանց հասնելու իսկական ուղիներին, ուզում էր պայքարել՝ չիմանալով ում դեմ, ուստի և նրա դժգոհությունն ուղղված էր ոչ թե որևէ դասակարգի կամ սոցիալական այս կամ այն խմբավորման, այլ ընդհանրապես մարդկության, նախապաշարմունքների, կրոնի, սովորությունների և օրենքների դեմ։ Եվ քանի որ նա չէր տեսնում ո՛չ կանանց հարցի սոցիալ-դասակարգային արմատները և ո՛չ էլ տնտեսական, քաղաքական, իրավական ու բարոյական այն ահավոր ուժերը, որոնք կնոջը ստրկության մեջ էին պահում, այդ իսկ պատճառով էլ կնոջ ազատագրումը նրան թվում էր ոչ թե «երևակայա-

---

[1] «Արևելյան մամուլ», 1908, առաջին նոամեայ, էջ 27։ Վ. Չիլինկիրյանը (Գաղտաղլյան) Մ. Մամուրյանի կնոջ քույրն էր և Գր. Չիլինկիրյանի կինը, գյումրնահայ նշանավոր հասարակական գործիչ, որ 1879—1893 թթ. գլխավորել է տեղի «Տիկնանց հոգաւոար ընկերությունը», իսկ 1893-ից հետո՝ «Տիկնանց հոգաւոար որբախնամ ընկերությունը»։

կան ցնորք», այլ միանգամայն «գործադրելի պահանջ»։ Սա էլ հենց Տյուսաբի քաղաքական ռոմանտիզմն էր և աշխարհայացքային այն հիմքը, որ նրան տարավ նաև դեպի ստեղծագործության ռոմանտիկական մեթոդը։

Բայց սա նշանակո՞ւմ է արդյոք, թե Տյուսաբի քարոզած հայացքները, երկու սեռերի իրավահավասարության վերաբերյալ նրա պահանջը հայ իրականության հետ որևէ աղերս չուններ, որ գրողը «Ոչ օրվան կյանքը ձեռք առած է և ոչ ալ իր ժամանակին մոտ դեպքեր ներկայացուցած է իր վեպերուն մեջ, որ ընդհանրական հայեցվածքի մը կերպարանք և իրականութենեն դուրս, առօրյա դեպքերե դուրս՝ տեղի ունեցած ըլլալ կը թվին»,—ինչպես պնդում է Ա. Ալպոյաճյանը[1]։ Ո՛չ ամենևին։ Կնոջ վիճակը մնում էր իրոք ողբերգական, և մենք արդեն գիտենք, որ հայ հրապարակախոսները վիպասանուհուց մի քանի տասնամյակ առաջ ուշադրություն էին դարձրել այդ խնդրի վրա։ Բայց եթե անգամ կնոջ էմանսիպացիայի հարցը հասունացած էլ չլիներ, ապա մի՞թե գրողը չէր կարող այն առաջադրել։ Ինքը Տյուսաբը քաջ գիտեր, որ «նոր տեսություն մ՝ որ ընդունված օրինաց, կարծյաց և սովորությանը դեմ կը կանգնի, ընդհանրապես չծառայեր այն դարուն հորում ծնունդ կառնու՝ քանի որ մտքերն ըստ բավականի հարդարված չեն մինչև անոր հանգամանացն հասնելու» (էջ 169)։ Բայց դրանով իսկ նա գիտակցաբար քարոզում էր այդ «նոր տեսությունը», որովհետև համոզված էր, որ վաղ թե անագան հաղթանակելու էր։ Հազար անգամ իրավացի էր Գր. Զիլինկիրյանը, երբ հակադրվելով «Մայտա»-ի քննադատներին, պաշտպանում էր գրողի այդ «սուրբ պարտքը»։ «Ջկա սկիզբ մը, ճշմարիտ գաղափար մը, որ ժամանակեն հառաջ քարոզվելուն պատճառավ վնասակար եղած ըլլա և որ ընդհակառակն ապագային մեջ ծլած, ծաղկած և իր պտուղը տված չըլլա»,—ասում էր նա[2]։

Հիմնովին մերժելի է այն տեսակետը, թե Տյուսաբը հայ կնոջ մասին դատում էր «ֆրանսերեն վեպերու ընթերցումներեն»՝ մեխանիկորեն հայացնելով Արևմուտքում հարուցված

[1] Ա. Ալպոյաճյան, *Ուսումնասիրություն...*, էջ 17։

[2] «Մասիս», *1883*, № *3543*։

խնդիրները։ Ա. Արփիարյանը արժեզրկում էր Տյուսաբի ստեղծագործությունը, երբ գտնում էր, թե նրա վեպերին պակասում է ոչ միայն արվեստը, այլև իրականության ճըշմարիտ արտացոլումը, «ընկերական կյանքի գիտությունը»։ «Մայտային հեղինակը,—գրում էր նա,—ո՛չ հայ կինը կը ճանչնար, ո՛չ հայ ընկերությունը, ո՛չ հայ կյանքը... Ինչ որ հեռվեն «չարիք» կը թվի եվրոպաբնակ ֆրանսագետ հայ կնոջ աչքին, թերևս անդին «բարիք» է»[1]։ Արփիարյանը այստեղ հանդես էր գալիս որպես ռեալիստ քննադատ, որի համար ռոմանտիկ Տյուսաբի ստեղծագործությունը խոցելի էր։ Այո՛, Տյուսաբը ռոմանտիկ էր իր աշխարհայացքով և իր խառնվածքով։ Նա վերջին մոհիկանն էր արևմտահայ ռոմանտիկ վիպագիրների այն սերնդի, որոնց մասին խոսվեց վերևում։ Ավելորդ է ասել, թե ռոմանտիկ հեղինակի երկերում նույնպես պատկերվում է իրականությունը, մանավանդ, եթե դրանք, նույն Արփիարյանի խոստովանությամբ, «ազնվապզի զգացումներև ներշնչված են»։ Շատ ավելի օգտակար է հարցն այնպես դնել, թե որևէ գրողի, տվյալ դեպքում Տյուսաբի ռոմանտիզմը նպաստո՞ւմ է իրականության ճանաչողությանը, իո՞րն է ընդգրկել հասարակական միջավայրը, ճի՞շտ է նշել նրա զարգացման հեռանկարները։ Ճշմարտությունն այն է, որ վիպասանուհին պաշտպանում էր հայ կնոջ դատը, գրում էր նրա համար և հաշվի էր առնում հայ կյանքի յուրահատուկ պայմանները։ Խոսելով իրականության արտացոլման մասին, պետք է նկատի առնել, որ Տյուսաբի մոտ այն ուներ մի շարք յուրահատկություններ, որոնք պայմանավորված են ինչպես գրողի աշխարհայացքով, այնպես էլ նրա ընտրած ուղղությամբ, ժամանակաշրջանի բնույթով և այլն։

Տյուսաբն ընդունում էր, որ ինքը նպատակ ունի ասել ճշմարտությունը։ «Մայտա»-ի առաջաբանում նա իրեն անվանում էր «անիրավության և նախապաշարմանց թշնամի» և բողոքում կնոջ անիրավահավասար վիճակի դեմ։ Նա չէր թաքցնում իր ստեղծագործության տենդենցիոզ բնույթը

[1] Արփիար Արփիարյան, Պատմություն ժ-թ դարու թուրքիո հայոց գրականության, Գահիրե, 1943/44, էջ 222—223։

և հայտնում էր, որ ինքը վեպ է գրել «խղճմտական քաջությամբ» ճշմարտությունն արտահայտելու համար։ «Գրիչը ճշմարտության գործիքն ըլլալու է. ի՞նչ փույթ եթե հալածվի և դատապարտվի»,—ահա հեղինակի հավատամքը, որ կարող է նրա բուլանդակ ստեղծագործության բնաբանը համարվել։ Վիպասանուհու համար ճշմարտությունը նրա դուրգուրած իդեալն էր՝ կնոջ ազատագրությունը։ Նա ցավով էր տեսնում, որ իրականության մեջ ճշմարտությունը հալածված և խեղդամահ է արված։ «... Միթե լուծի ներքև ճշմարտությունը կրնա՞ ապրիլ երբեք»,—հարցնում է նա։ Ինչ ճշմարտության մասին կարող է խոսք լինել, երբ կինը կաշկանդված է շղթաններով, երբ «կ՚ամաչի նա սիրելու՝ այսինքն սիրտ մ՚ունենալը խոստովանելու կ՚ամաչի արդարություն բառը հընչելու այսինքն իրավունք մ՚ունենալը հայտարարելու. կ՚ամաչե կրոնից և օրինաց զեղծմունքը հայտնելու՝ այսինքն խիղճ և բանականություն ունենալը ապացուցանելու», երբ նա «գլխիկոր, ափ ի բերան կապրի, կանցնի աշխարհես անձայն և անշշուկ...» (էջ 4)։

Այստեղից էլ գրողի անբավարարվածությունն ու հիասթափությունն իրականությունից, ուր տեղ չկար ճշմարտության իդեալի համար։ Տյուսաբի համար ներկան այնքան էր հակակրելի ու ատելի, որ նա կարծես ժամանակ չէր ուզում կորցնել նրա ուսումնասիրման վրա։ Նա ավելի շատ զգում էր, քան տեսնում, որ իրականությունն ախտավարակ է և անհարիր մարդկային հոգու վեհ սլացքին։ Ուստի վիպասանուհին մերժում էր ամեն բան, նզովում օրենք ու կրոն, նախապաշարմունք ու իրավունք և նրա իդեալը արտաքսված իրականությունից, սավառնում էր հեռուներում, մշուշի մեջ։ Իրականության տյուսաբյան քննադատությունը հախուռն էր, բայց ազնիվ, տաքարյուն էր, բայց անկեղծ։

Տյուսաբը, իր իսկ խոստովանությամբ, ձգտում էր ճշմարտությունը հայտնել «ախորժելի ձևի ներքև»։ Բայց հեղինակային ցանկությունից անկախ «Մայտա»-ում այդ տենդենցը դրսևորվել է ուղղակի կերպով, անթաքույց՝ չծուլվելով վեպի բուն այուժեին ու չներթափանցելով նրա մեջ։

Վեպը, որ գրված է որպես նամականի, մի սիրո սենտի-

մենտալ պատմություն է։ Մայտան իր ծնողների միակ զավակն է, որ 15-ամյա հասակում ամուսնացել է 40 տարեկան մի ունևոր մարդու հետ։ Մեկ տարի անց ծնվում է նրանց դուստրը՝ Հուլիաննեն։ Շուտով Մայտան կորցնում է ծնողներին, բայց իրեն երջանիկ է զգում, քանի որ սիրում է ամուսնուն և սիրվում նրանից։ Նա ապրում է ճոխ և ուրախ կյանքով՝ վայելելով «աշխարհային ղվարճությունները»։ Բայց ահա մահանում է Մայտայի ամուսինը և նրա հետ՝ նաև Մայտայի «մենծությունն ու անդորը». «Ամենայն ինչ կորավիցյալ, ավերակ կա միայն շուրջս, և տխուր հիշատակը փառավոր անցելույս» (էջ 20)։ Այժմ նա վարձել է մի հասնատ բնակարան և ամեն գիշեր զբոսնում է ծովափին՝ մտորելով իր անցյալի ու ապագայի մասին։ Հուսաբեկ ու ընկճված Մայտային օգնության է հասնում նրա բարեկամուհի տիկին Սիրան, որ հնուավոր կորֆու կղզուց իր նամակներով «առաջնորդում է» նրան։ Այսպես էլ զարգանում է վիպական պատմությունը. Մայտան իր նամակներով գործողությունն է առաջ շարժում, իսկ Սիրան մտքեր է հաղորդում՝ տալով նրան գործողության ուղեցույց։

Մայտան լսելով տիկին Սիրայի «փրկարար ձայնը», սկսում է զբաղվել դատեր դաստիարակությամբ՝ ձգտելով դարձնել նրան փորձառու, սովորեցնելով «կենաց գիտությունը»։ Սիրայի խորհրդով Մայտան մտնում է «կենաց աշխատավորների բանակը», իր «աննշան տուրքն» է մատուցում հասարակությանը. նա աղքատ հայուհիներին սովորեցնում է մայրենի լեզու ու ազգային պատմություն։ Բայց այս ամենը նրան դեռևս չեն գոհացնում։ Երիտասարդ ու գրավիչ այրու սիրտն ավելի ու ավելի հաճախ է նեղվում մենակության զգացումից, հոգին չի հնազանդվում կամքին, «կը ստամբակի, կը գալարի, հանգույցներ կը խորտակե, կը չարչարվի և հուսկ ուժաթափ կիյնա ճնշման աղաղակով» (էջ 29)։ Եվ նախախնամությունը շտապում է «սիրո նշույլով» լուսավորել Մայտայի կյանքի խավարը։ Փարիզից եկած մի երիտասարդ՝ «խելացի, պերճախոս ու վեհանձն» Տիգրան Գնդունին, Մայտայի տանտիրուհու ազգականը, սիրահարվում է իր գեղեցիկ հարևանուհուն։ Մայտան վերգտնում է իր եր-

ջանկությունը. «կը սիրեմ զՏիգրան և քանի որ զինքը կը սիրեմ, անզգալի եղավ ինձ լքումս և առանձնությունս,—գրում է նա իր բարեկամուհուն։

Տիգրանն ու Մայտան փոխադարձ սիրո խոսքեր են մըրմընջում միմյանց, հանդիպում ծովափին, երդվում չբաժանվել մինչ ի մահ։ Բայց նրանց սիրո վկան միայն լուսինը չէր։ Երբ Տիգրանը Փարիզ մեկնելուց առաջ Մայտային էր հանձնում իր սիրո առհավատչյան՝ ոսկի մատանին, նրանց լրտեսում էր Մայտայի տանտիրուհու հարսը՝ Հերիգան։ Հերիգան իր գեղեցկությամբ բնության հրաշակերտն էր, բայց նրա գեղեցիկ մարմնի մեջ թաքնված էր չար ու վրեժխնդիր մի սիրտ։ Նա նույնպես սիրում էր Տիգրանին, մերժվել է նրանից և այդ իսկ պատճառով չի կարող անտարբեր մնալ ուրիշի երջանկության նկատմամբ։ Ու մինչ Տիգրանը Փարիզում շտապում էր ավարտել իր գործերը և վերադառնալ Պոլիս՝ ամուսնանալու Մայտայի հետ, Հերիգան նյութում էր իր դավերը։ Մայտայի դուստրը Հուլիանեն մտերմացել էր Հրանույշ անվամբ մի թոքախտավոր աղջկա հետ։ Մայր ու աղջիկ խնամում էին նրան որպես հարազատներ։ Հրանույշը զգալով մոտալուտ մահը, ունենում է մի «զարմանալի բաղձանք»՝ խնդրում է Մայտայից թույլ տալ մինչև իր մահը կրելու Տիգրանի նվիրած ոսկի մատանին։ Շուտով վրա է հասնում մահը։ Մայտան, չկարողանալով դիտել Հրանույշի մահվան «սրտաճմլիկ տեսարանը», թողնում է սենյակը, իսկ երբ վերադառնում է՝ այլևս մատանին չի գտնում մատին. Հերիգան մեռած Հրանույշի մատից հանել էր այն։ Ապա Հերիգան սիրո կեղծ խոստումներով գայթակղեցնում է Հրանույշի հորը՝ Պետրոսին, տալիս նրան հափշտակած մատանին, ուղարկում Փարիզ՝ «ապացուցելու» Տիգրանին Մայտայի անհավատարմությունը։ Տիգրանը իսկույն համոզվում է, զայրանում, մեկնում Անգլիա և... ամուսնանում։ Մինչ այդ Հուլիանեն ամուսնանում է տիկին Թորգոմատուենու կրտսեր որդու՝ Լևոնի հետ, և Մայտան, երկար ժամանակ տեղեկություն չունենալով Տիգրանից, մեկնում է Փարիզ։ Այստեղ լսելով Տիգրանի ամուսնության մասին, նա ապրում է հոգեկան ուժեղ ալեկոծություն և «մտածությունն ու զգա-

ցումը» մեռած, շրջում է Փարիզի փողոցներում մինչև որ նվաղած մոնում է առաջին իսկ պատահած դռնից ներս։ Դա Ֆրանսիացի մի կոմսի բնակարանն էր։ Կոմսը երկար խնամում է Մայտային, պատմում նրան իր տխուր կյանքի մասին և իմանալով, որ Մայտան նույնպես սիրո մեջ դժբախտ է, առաջարկում է նրան իր ձեռքը։ Բայց Մայտան հավատարիմ է իր սիրուն։ Նա վշտահար վերադառնում է Պոլիս՝ վանք մտնելու վճռականությամբ։

Հերիգան եղածով չի բավարարվում և ուզում է Մայտային դժբախտացած տեսնել նաև որպես մայր։ Օգտագործելով Պետրոսին, նա կեղծ նամակներ ու սիրահետում է ծրագրում, պղտորում Լևոնի միտքը։ Սակայն Պետրոսը համոզվելով, որ ինքը խաբված է և Հերիգայի մեղքով դաշունահարված, մահից առաջ Լևոնին խոստովանում է ամեն ինչ։ Կարծես թե հանդուցյալը լուծվում է։ Բայց այդ միայն առաջին հայացքից։ Տյուսաբը շարունակում է հյուսել արկածային պատմություններ։ Հերիգան, որին Լևոնը ձերբակալել էր տվել, փախչում է բանտից և գնում Կորֆու, Սիրայի մոտ՝ դառնալով մի տաճիկի կին։ Տիգրանի կինը, զգալով ամուսնու անտարբերությունը, ծննդաբերության ժամանակ զավակի հետ մահանում է։ Տիգրանն այժմ ազատ է և որոշ ժամանակ անց ամուսնանում է Մայտայի հետ։ Հերիգան Սիրայից իմանալով Տիգրանի և Մայտայի երջանկության մասին, թողնում է իր տաճիկ ամուսնուն, վերադառնում Պոլիս։ Մի անգամ, երբ ամուսինները զբոսնում էին ծովափին, ծպտյալ Հերիգան դաշույնը ձեռքին հարձակվում է Մայտայի վրա, բայց Տիգրանը վրա է հասնում և սպանում նրան։ Ապա Տիգրանին ձերբակալում են, իսկ երբ նա բանտից արձակվում է, Մայտային գտնում է մահվան անկողնում։

Մենք այսքան մանրամասն պատմեցինք վեպի սյուժեն, որովհետև այդ մանրամասնությունների մեջ է, որ դրսևորվում են Տյուսաբի ռոմանտիզմի մի քանի առանձնահատկությունները։ Վիպական այս պատմության մեջ չկա բախում անհատի ու հասարակության միջև, չի երևում, թե կինը «ընկերության ողորմելի զոհն է», ինչպես պնդում էր հեղինակը իր գործի առաջաբանում։ Մայտան մի նամակում ա-

սում է, թե հասարակությունը պատրաստ է «դատապարտել և հոշոտել» մարդուն (էջ 8), բայց իրականում նրան «հոշոտում» են ոչ թե հասարակական օրենքներն ու բարքերը, այլ մի ուրիշ կին։ «Մայտա»-ի սիրո պատմությունը հենց այն «ախորժելի ձևն» է, որի մասին խոսում էր Տյուսաբը։ «Ախորժելիության» մասին վիպասանուհու ըմբռնումները «Մայտա»-ում շատ ընդհանուր բան ունեն նրան նախորդած արևմտահայ ռոմանտիկ վիպագիրների պատկերացումների հետ։ Տյուսաբը նույնպես ջանում էր վիպական դործողությունները դարձնել հետաքրքիր, լարվածություն մտցնել դանազան արկածալից, արտասովոր միջադեպերի նկարագրությամբ։ Պատահական, անսպասելի դեպքերը, առհասարակ, Տյուսաբի նախասիրած ձևն են, այն բանալին, որով նա միանգամից թնջկում է գործողությունները կամ լուծում բարդ հանգույցները։ Մատանու խորհրդավոր կորուստը, Տիգրանի անակնկալ ամուսնությունը և նրա կնոջ ու երեխայի նույնքան անակնկալ մահը, կամ Հերիգայի հայտնվելը Կորֆուում և այլն, ըստ էության, մնում են հեղինակային «կամայականություններ», որոնց միջոցով գրողը «ախորժելի» էր դարձնում վեպը։

Մայտայի սիրո պատմությունը վեպում, այնուամենայնիվ, ինքնանպատակ չէ։ Վիպասանուհին դրանով զարգացնում էր որոշակի գաղափար, որ թեև հիմնականը չէ, բայց և այնպես հետաքրքիր է նրա հայացքների ամբողջական ուսումնասիրման տեսակետից։ Կինը, եթե նույնիսկ նա այրի է ու միայնակ, չպետք է ամաչի սիրելուց, նրա իսկական երջանկությունը սիրո մեջ է. «կինը սիրտ մ' ունի և... անով երջանիկ է կամ ապերջանիկ»,—ասում է Սիրան (էջ 131)։ Քանի դեռ կինը չի երջանկացել սիրո մեջ, նա չի կարող օգտակար լինել հասարակությանը։ Մինչև Տիգրանին հանդիպելը Մայտան աշխատում էր, բայց զգում էր ներքին անբավարարվածություն։ Եվ երբ նա վերջապես ամուսնանում է Տիգրանի հետ, նոր միայն նրա մեջ արթնանում է գործելու բուռն եռանդ. «Ըրբ մարդս երջանիկ է,—խոստովանում է նա,—կը փափագի ամենուն ծառայել և զամենքը գոհ ընել» (էջ 141)։

Կինը սրտով է երջանիկ՝ Տյուսաբի այս դրույթը չէր նշանակում սիրո ազատության պահանջի վերջինս անբարոյականության արդարացման ֆորմուլան է, և անբարեխիղճ քննադատներն այդ նպատակով էլ այն վերագրել են գրողին։ Լենինը նշել է, որ «սիրո ազատություն» գործնականում նշանակում է ազատագրություն լուրջ սիրուց, մանկածնությունից և ամուսնական հավատարմությունից[1]։ Իսկ տյուսաբյան ֆորմուլան իր ամբողջ վերացականությամբ ու ռոմանտիկականությամբ սիրո այդպիսի ըմբռնման հակոտնյան է։ Մենք գիտենք, որ վիպասանուհին իրականությունից դժգոհում էր նաև նրա համար, որ այնտեղ չկար իսկական սեր, որ կինն ամաչում էր սիրել, խոստովանել իր սիրտ ունենալը, որ թագավորում էր պոռնկություն։ Ներկայի ապականված սիրուն, հերիգանների սիրուն, Տյուսաբը հակադրում էր անբիծ, անդավաճան, ռոմանտիկ սեր։ Այդպիսին էր Մայտայի սերը։ Նա սիրում էր խորն ու ուժգին և հավատարիմ էր Տիգրանին անգամ այն ժամանակ, երբ հալմոզված էր, թե խաբված է նրանից։ Միաժամանակ Մայտան «կատարելության տիպար» էր, որովհետև մայր էր և՛ աշխատում էր ազգի համար։ Վեպում կործանվում են և՛ Հերիգան, և՛ Մայտան։ Հեղինակը Հերիգային պատժում է, որովհետև նա ուզում էր երջանկանալ ուրիշի երջանկությունը հափշտակելու, ամուսնական հավատարմությունը դրժելու գնով։ Իսկ Մայտայի կյանքը խորտակվում է, քանի որ վիպասանուհու պատկերացմամբ (բայց ոչ պատկերմամբ) իրականության մեջ չկար հող մաքուր անկեղծ սիրո համար։ Այս տեսդենցը իր հիմքում ճշմարտացի էր, և «Մայտա»-ի վիպական պատմությունը, վերջին հաշվով, արտացոլում է այն։

Մենք տեսանք, որ Տյուսաբն իր վեպի սյուժեն կառուցելիս ձգտում էր արտասովորության ու խորհրդավորության։ Նա ռոմանտիկական նույն սկզբունքով էր ղեկավարվում նաև կերպարներ ստեղծելիս։ «Մայտա»-ի գլխավոր հերոսները արտասովոր մարդիկ են և գործում են արտասովոր հանգամանքներում։ Մայտան, Սիրան, Կոմսը կյանքում փոքրիկներ շատ են տեսել. դժգոհ են ու մենաբաղձիկ։ «Մայ-

[1] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 185—188։

բահել բնությունները՝ չարին, ինչպես և բարվույն մեջ չափ չեն ճանչնար»,—մի առիթով գրում է հեղինակը (էջ 152), և այդ նրա մոտ ոչ թե թևավոր խոսք է (այդպիսիք նա շատ ունի), այլ լիովին գիտակցված ու իրականացված սկզբունք։ Մայտան, Տիգրանը, Հերիգան որևէ սկզբի՝ բարու կամ չարի, խտացումներ են և, որպես այդպիսիք, իրոք որ «չափ չեն ճանչնար»։ Սերը նրանց զգացմունքների զգացմունքն է, հանուն որի նրանք տառապում են և կործանվում։ Սերն է Մայտայի հոգևկան տվայտանքների պատճառը, նա սիրում է խորը՝ չհնթարկելով ոչ մի գայթակղության։ Հերիգան իր բնությամբ չար է, սերը նրա համար «այլանդակ բաղձանք» է, խղճի ու պատվի մոռացում, ամեն մի սրբության ոտնահարում։ Սիրո զգացումն այնքան ուժեղ է Տիգրանի մոտ, որ նա, չնայած իրեն հասած ծանր վշտին (երեխայի և կնոջ մահը), պատրաստ է երկու գերեզմանների վրա կոխելով, հասնել Մայտային և ամուսնանալ նրա հետ։

Վեպի բոլոր կերպարները չունեն բնավորության բազմազանություն և սրան մեծ չափով խանգարել է Տյուսաբի ընտրած գրական ձևը՝ նամականին։ Հայտնի է, որ կոմպոզիցիոն այդ եղանակը պահանջում է գեղարվեստական մեծ վարպետություն, երբ գրողը թաքնվելով կուլիսներում, և իրեն «զրկելով» հեղինակային խոսքի «իրավունքից», պետք է կերտի հերոսներին, օժտի նրանց ուրույն բնավորություններով։ Իսկ Տյուսաբի մոտ պակասում է այդ վարպետությունը։ Նա ընտրում է դյուրին ճանապարհ։ Վեպի կերպարներին գլխավորապես բնութագրում է Մայտան՝ առաջին իսկ հայացքից որոշելով նրանց համակրելի (Տիգրան, Լևոն, Հրանուշշ, Կոմս) կամ հակակրելի (Հերիգա, Պետրոս) լինելը, և զարմանալիորեն այդ գնահատականներն անսխալ են դուրս գալիս՝ չսրբագրվելով իրադարձությունների հետագա ընթացքում։ Երբեմն էլ հեղինակը չկարողանալով կերպավորման համապատասխան միջոցներ գտնել, ստիպում է, որ վեպի գործող անձինք իրենք գնահատեն իրենց, նույնիսկ խոստովանեն իրենց հրեշավոր լինելը (Պետրոսի և Հերիգայի նամակները)։

Տյուսաբը գործող անձանց հոգեվիճակը կամ արարքնե-

րը պատկերելու նպատակով սիրում է խտացնել գույները։ Նա գործադրում է ռոմանտիկների մեջ այնքան տարածում գտած մի ձև՝ հակադրություններ, կոնտրաստներ ստեղծելը։ Բացի դրական և բացասական հերոսներին հակադրելուց, նա օգտագործում է նաև այլ կարգի հակադրություններ։ Ամեն անգամ, երբ տուիթը ներկայանում է, Տյուսաբը շեշտում է Հերիգայի հրապուրիչ արտաքինը («Բնության հրաշակերտն է իբրև գեղեցկություն։ Յուր փափուկ, ճերմակ մորթը, հրալից սև աչքերն զորս խիտ հոնքեր իբրև կամարաձև հովանի կը զարդարեն, դիմական գծերու կատարելությունը, փառավոր հասակն և յուր մյուս հատկությունքն արժանի կը հանդիսացնեն զինքը մեծագույն նկարչին իտեալկանն իրականացնելու»), բայց այդ արվում է նրա հոգեկան այլանդակությունն ընդգծելու միտումով («չար ոգի մ'է մարդիկ ի կորուստ մատնելու համար»)։ Հակադրություն ենք նկատում Հրանուշշի կերպարում։ Նա չունի մայր, բարի է որպես հրեշտակ, բայց հայրը չար է և նասևր, ինքը երիտասարդ է, լի ապրելու, կյանքը վայելելու անհագ ցանկությամբ, բայց մահամերձ հիվանդ է և կյանքը նրանից խույս է տալիս։

Վիպասանուհին առանձին հակում ունի դեպի հոգեբանական կոնտրաստները։ Նրա հերոսների՝ Մայոտայի և Տիգրանի բերկրանքն ու թախիծը կատարյալ չէ։ Նրանք ուրախանում են վշտանալու համար և, ընդհակառակն, տխրության մեջ միշտ էլ առկայծում է հույսի շողը։ Մայոտայի և Տիգրանի սերը մթագնվում է Հերիգայի խարդախությունների՝ բայց երբ ճշմարտությունը պարզվում է, նրանց երջանկությունը մնում է թերի, Մայոտան ազատ է, Տիգրանը՝ ամուսնացած։ Մահանում են Տիգրանի կինն ու երեխան, լուծվում է մի վիճակ, բայց գոյանում է մեկ ուրիշը. ձերբակալվում է Տիգրանը։ Իսկ երբ նա ազատվում է, Մայոտան արդեն մահամերձ է։ Այսպիսի բարդ իրավիճակներում բնական է, որ հերոսները պետք է ապրեին հոգեբանական հակասական ապրումներ, որոնք հեղինակը պատկերում է ռոմանտիկական ու սենտիմենտալ հնարքներով։ Տիգրանը, «խաբվելով» Մայոտայից, փորձում է վրեժ լուծել, ամուսնա-

նում է ուրիշի հետ, բայց սիրտը մնում է նրա մոտ. բերանն ուզում է անիծել, իսկ սիրտը պաշտում է։ Այդպես է նաև Մայտան։ Սիրվելով Տիգրանից, նա իր համար երջանկության պատրանք է ստեղծում և իսկույն վախենում այդ պատրանքի հմայքից։ Մայտային թվում է, թե իր երջանկության բաժակը չափից ավելի լի է և կարող է թափվել։ Երկար ժամանակ Տիգրանից նամակներ չստանալով, Մայտան տանջվում է, միաժամանակ «կը հավատա և չհավատար, կը նշմարե և չնշմարեր, կ՝ ապրի և չ՝ ապրիր» (էջ 66)։ Նրա միտքն ու սիրտը մշուշված են և պահեր են լինում, որ շոշափում է սեփական մարմինը՝ համոզվելու համար՝ կենդանի՞ է արդյոք։ Եվ այս ամենից հետո Մայտան ցանկանում է, որ Տիգրանը երջանկացնի իր կնոջը։

Մայտայի հոգեվիճակը բնութագրելիս հեղինակը հաճախ է դիմում բնությանը։ Նա ելնում է այն պատկերացումից, որ բնության մեջ ամեն ինչ ներդաշնակ է ու գեղեցիկ։ Բնությունը երջանկություն է վերապահում բոլոր նրանց, ովքեր կարդում են իր «մեծ գիրքը» (էջ 149), և ընդհակառակն, մարդկային ու հասարակական բոլոր արատների պատճառը բնության սահմանած իմաստուն օրենքներից շեղվելն է։ Մայտայի սերը գեղեցիկ է ու հուզիչ, ուստի և այն հանդես է գալիս բնության հետ ու բնության մեջ, որպես նրա անբաժան մասնիկը։ Մայտան հոգեկան սփոփանք է գտնում միայն ծովի ափին. «Միակ ընկերությունս ծովն է զոր կը սիրեմ անչափ. մտացս կը խոսի, սիրտս կը մրրկե, այն ևս կարծես հրավառ կիրքերով ալետանջ կը հուզվի՝ վայրենաբար և անմրռունչ թավալելով, և երբ մեղկությամբ յուր ջուրերն հառաջ կը վարե գրեթե աննշմարելի շարժմամբ, չի՞ ներկայացներ արդյոք վշտաբեկ հոգով պատկերն հանձնառու եղած տառապելվո, որ վայրիկ մը գոնե կը հանգչի կրած մրրիկներեն և հոգերեն... Ծովուն փոփոխակի կատաղության և հանդարտության մեջ զարմանալի նմանություն կը գտնամ սըրտիս կացության հետ» (էջ 28)։ Նա բնության մեջ է որոնում իրեն տանջող հարցերի պատասխանը, հաճախ է ունկնդրում թռչունների զրույցը՝ ջանալով հասկանալ, թե «ի՞նչ կը խոսին թռչունք, ի՞նչ կուզեն։ Կը ճանաչե՞ն արդյոք իրրև զմեզ

վիշտն ու հրճվանքը. կը ճանաչե՞ն ծնողաց արտին ցավը. կը ճանաչե՞ն կենաց պատրանքը. կողքա՞ն սիրեցյալ բացակայի վրա. կուլա՞ն, կը հյուծի՞ն անհնարին բաղձանքներով»։ Եվ բնությունը սիրում է Մայտայի վշտի համար, կարեկցում նրան։ Ծովն իր ալիքներով հույսի խոսքեր է մրմնջում, նրա հետ միասին ուրախանում Տիգրանի վերադարձով, և թռչուններն էլ ուրախ դայլայլում են (էջ 136)։ Իսկ երբ անագորույն մահը կտրում է նրա կյանքի թելը, նա իր վերջին միխիթարությունը դարձյալ գտնում է բնության մեջ. «Նայեցյավ ծովուն որ լույսով կը շողշողար. նայեցյավ աշնան վերջին չորաբեկ տերևներուն, որք իրեն վիճակակից պիտի ըլլային, ուշ դրավ թռչնուն որ վերջին անգամ կերգեր իրեն համար. նայեցյավ վերջապես բոլոր բնության որ կարծես թե անսովոր դեղեցկությամբ մի՛ կը փայլեր հատկապես, և հառաչելով ըսավ. «Որչափ սքանչելի է բնությունն և ինչպե՞ս ամենայն ինչ կը ժպտի նազելաբար»։ Տյուսաբը որոշակի իմաստ է դրել նաև Մայտայի՝ Տիգրանին ասված հրաժեշտի խոսքերի մեջ. «Հիշե՛ զիս ցորչափ ծովը կոհակ մ՚ունենա ափին շող մի, թռչունը վանկ մի, և սիրտդ բաբախում մի՛ հիշե՛ զիս» (էջ 162)։ Սա բնությանը ձուլվելու, նրա մեջ անէանալու և նրանով անմահանալու փափագն է, որ բխում է Տյուսաբի ընդհանուր աշխարհընկալումից։

Անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսք ասել Կոմսի կերպարի մասին։

Կոմսի կերպարը «Մայտա»-ում կատարում է երկու ֆունկցիա։ Նախ՝ նրա միջոցով վիպասանուհին ընդգծում է Մայտայի հավատարմությունն ու նվիրվածությունը սիրուն (Մայտան մերժում է ազնիվ, առաքինի ու հարուստ Կոմսի ձեռքը, թեև գիտեր Տիգրանի ամուսնության մասին) և երկրորդ՝ արտահայտում իր համոզմունքներն ու հայացքները մի քանի կարևոր հարցերում։

Կոմսը նույնպես գծված է ռոմանտիկ գույներով։ Նա կորցրել է ծնողներին, սիրած աղջկան, իրեն զգում է խորապես դժբախտ, այդ պատճառով էլ կյանքն ու հարստությունը նվիրել է «մարդկության թշվառներին» օգնելու և դժբախտ սիրահարներին ափոփելու նպատակին։ Կոմսը հույս ուներ

երջանկանալ Մայոտայի սիրով, բայց տեսնելով նրա անդավաճան զգացմունքները, համաձայնվում է դառնալ Մայոտայի եղբայրը, հարստությունը կիսել նրա հետ, թողնել հայրենիքը, մեկնել Պոլիս՝ շնչելու համար միևնույն օդը։ Ի վերջո, Մայոտայի ամուսնությունից հետո, նա պանդխտում է օտար երկիր՝ «մոլորյալ մարդկության ծառայելու» և դառնում «վայրենի ժողովրդոց փրկիչ»։

Տյուսաբը չի թաքցնում իր համակրանքը Կոմսի նկատմամբ։ Երբ Կոմսը անում է իր կյանքի պատմությունը, հեղինակը համակրական շատ խոսքեր է ասում «գաղղիական վեհանձն և օտարասեր զգացումների» մասին. Փարիզն անվանում է «մարդկության հայրենիքը», ուր օտարականը «կը կարծե երկրորդ հայրենիք մի գտնալ» (էջ 77)։ Նման արտահայտություններն էլ, հավանաբար, առիթ են տվել Ա. Ալպոյաճյանին Տյուսաբին մեղադրելու «տարապայման ֆրանսամոլության» մեջ և պնդելու, թե գրողը «պաղեցուցած է հայության գաղափարեն»[1]։ Բայց այս տեսակետը քննելուց առաջ փորձենք պատասխանել մեկ այլ, մեր կարծիքով, սկզբունքային նշանակություն ունեցող հարցի. ինչո՞ւ Տյուսաբը Կոմսի կյանքի պատմությունն անելիս, ստիպում է նրան մանրամասն (4 էջ) վերլուծելու Ֆրանսիայի վերջին տասնամյակների քաղաքական իրադրությունը, կատարելու պատմական էքսկուրսներ և անելու զանազան դատողություններ։ Միամտություն կլիներ, անշուշտ, այստեղ տեսնել Ֆրանսիայի պատմության մասին Տյուսաբի ունեցած գիտելիքների ցուցադրման անհեթեթ միտում։ Մեր կարծիքով բանն ավելի լուրջ է. այդ պատմությամբ Տյուսաբը քողարկված ձևով արտահայտում է իրեն խորապես հուզող մի միտք, որը նա չէր կարող ուղղակիորեն ասել սուլթանական գրաքննության պատճառով։

Կոմսը երկար է խոսում Նապոլեոնի տիրապետության մասին և հանդես է գալիս որպես ռեսպուբլիկական կարգերի կրքոտ կողմնակից. «Կը սիրեմ հասարակապետություն. երկու անգամ արյան և անիշխանության միջեն եւավ այն, և

[1] Ա. Ալպոյաճյան, *Ուսումնասիրություն Սրբուհի Տյուսաբի*, էջ 24—25։

երկու անգամ Նապոլեոններին փճացավ՝ Մեծն և Փոքրին, որք իրենց երկաթյա ձեռամբ խեղդեցին մտաց և գործոց ազատութիւնը» (էջ 82)։ Ակնարկելով երրորդ ռեսպուբլիկան, կոմսն ասում է. «Այսօր պանծալով կը տեսնեմ, թե հասարակապետութիւնն կը հաստատվի Գաղղիո մեջ» և ավելացնում. «Այն օրն որ հասարակապետութիւնը խեղդամահ ըլլա վերստին, հանձնառու չի պիտի ըլլամ երբեք անոր թագման հանդիսին ներկա գտնվելու. մայրապան չեմ ըլլար հայրենակցաց գործակից ըլլալով. այլ կը թողում հայրենիքս, կը փախչիմ՝ ձեռքերս չի ներկելու համար անոր արյամբն»։ Տյուսաբն էլ ահա այս դատողությունների մեջ ծրարում էր մի նվիրական դաղափար՝ ռեսպուբլիկայի անհրաժեշտությունը միապետական Թուրքիայի համար, այն հրկրի, ուր ցրված էր մեջլիսը և ուր, իր իսկ սուլթանի կարգադրությամբ, արգիլված էր «ռեսպուբլիկա» բառի գործածությունը։ Սրբուհի Տյուսաբի այս գաղափարը նույնպես պատմականորեն առաջադիմական էր։

Այժմ վիպասանուհու «ֆրանսամոլության» մասին։

Տյուսաբն իրականում Ֆրանսիայի նկատմամբ ունի անկողմնակալ, անաչառ մոտեցում. նա տեսնում է և՛ լավը, և՛ վատը, և՛ լույսը և՛ ստվերը։ Ի՞նչ վատ բան կա ֆրանսիական ժողովրդի հասցեին ասված նրա համակրալիր խոսքերի կամ Փարիզին տրված հիացական գնահատականի մեջ։ Եթե դա «ֆրանսամոլություն» է, ապա այդ նույն տրամաբանությամբ, նկատի ունենալով Տյուսաբի մի շարք ասույթները, հեշտությամբ նրան կարելի է համարել նաև... ֆրանսատյաց։ Հիշենք, օրինակ, «Կանանց դաստիարակությունը» հոդվածի հետևյալ տողերը. «Արդի ժամանակին մեջ ալ Գաղղիան տխուր օրինակ մը ներկայացուց մեզ ժողովրդյան մը, որ երբ կ՝ սկսի մերկանալ հառաքինութենե և ի կորուստ սկզբանց և բնավորության, կորստյան վհին մեջ կը վիժի»[1]։ Կամ ի՞նչ անուն տալ Ջեննելոնի և Մոլիերի հասցեին նետած Տյուսաբի կշտամբանքներին, այն բանի համար, որ նրանք բացասել են կամ թերագնահատել կանանց կրթության անհրաժեշտությունը։ Որ իսկապես Տյուսաբը օբյեկտիվ էր

[1] «Մասիս», 1880, № 2587։

Ֆրանսիայի նկատմամբ, երևում է հենց նույն «Մայոտա»-ից՝ խոստովանելով իր համակրանքը «Մեծն Նապոլեոնի» հանդեպ («անցյալ և ներկա դարուս իբրև մեծ երևույթը կը նկատեմ կայսրը»), կոմսը չի վարանում մատնանշել նաև նրա թերությունները. Նապոլեոնը շատ էր ոգևորված իր հաղթանակով և հաշվի չէր առնում ժողովուրդներին, որոնք «ի սկզբան կը մռնչեն ցած ձայնիվ, և հետո կորոտան, կսպառնան, և այն սրտմտությունը, որ ի ներքուստ կեռայր, կը հուզվեր, հանկարծ կը ճայթի՝ իբրև հրաբուխ, հուր և մահ շուրջ տեղացնելով» (էջ 80)։ Նապոլեոնի պարտությունը Ռուսաստանում հենց «ժողովրդոց ընդդիմությունն և զայրույթն» անտեսելու արդյունքն էր։

Տյուսաբը ոչ միայն չէր սուռել «հայության գաղափարն», այլև ջերմ հայասեր էր։ «Եթե Հայ մը ներկայանա Տիկին Տյուսաբ-փաշային և խնդրե լուսինն իրեն տալ, թերևս չմերժելու համար Հայու մը խնդրանաց՝ հնարք մը կը գտնե հրաշալի կինն՝ ըզլուսին երկրագունտին վրա փոխադրելու և խնդրողին տալու համար։ Այլ եթե բոլորով սրտիվ յուր ազգակցաց համար կաշխատի, չանտեսեր օտարներն... Արդարև անզուգական Հայուհի մ՝ է այդ կինն»,—այսպես է գրել Ե. Տեմիրճիպաշյանը (Մելանիա)[1], և այդտեղ ճշմարտության մեծ բաժին կա։ Տյուսաբը բազմաթիվ առիթներով ընդգծում է ազգային զգացմունքների, դաստիարակության նշանակությունը։ Ահա լսենք Մայոտային։ Նա ամեն ինչ անում է, որ իր հայ աշակերտուհիները սիրեն «Հայ ազգը մեր հին փառազարդ և նսեմ օրերուն պատմության մեջ. զի ամեն ոք իրականապես կրնա սիրել բայց ինչ որ ճանչցած և գնահատած է» (էջ 28)։

Երջանկացած Մայոտան Սիրային գրում է. «Եվ ո՞վ արդյոք առավել համակրանացս իրավունք ունի որչափ ազգս որուն կուզեմ ձոնել երջանիկ սրտիս տուրքը...» (էջ 141)։ Բայց հեղինակի ազգասիրությունն ամենից ավելի պերճախոս երևում է Սիրայի դատողություններում։ Սիրան ցավում է, որ ինքը գտնվում է «քնիկ երկրեն դուրս», զուրկ «հայրենի Հայ բարբառեն՝ որ կարծես կրկին գեղեցկություն կզդե-

[1] «Երկրագունտ», 1886, № 5, էջ 222 («Աղջկան մը օրագիրն»)։

նու երբ մեր ականջները կը դադրին լսելն յուր կորովալուր վանկերն» (էջ 23)։ «Անհնարին է անգոանել ազգային զգացումն և խեղդել գայն ընդհանուր մարդկութեան գաղափարին մեջ»,—ահա՛ Տյուսաբի մտածողությունը (էջ 24), նրա ֆորմուլան, որ նա հետևողականորեն անց էր կացնում ամեն մի առիթով։ Սիրան գտնում է, որ մարդ որքան էլ սիրի իր անձը, պարտավոր է սիրել նաև իր հայրենակիցներին, հայրենի վայրերն ու հիշատակները, մայրենի լեզուն, նախահայրերին ու դյուցազուններին. «այո՛, պիտի սիրե յուր եղբայրներն, և եթե չի պանծա անոնց փառավոր վիճակին վրա, գեթ պիտի գուրգուրա եթե առաքյալ ազգի պակաս են. Ո՞վ արդյոք առավել քան դՀայ թշվառ է, քանի որ աղքատ է և տգետ» (էջ 24)։ Սիրան պախարակում է իրեն, որ չի կարող օգնել ազգին ու գործել նրա օգտին և այդ նրան հոգեկան տառապանք է պատճառում[1]։

«Մայտա»-ում գործող անձերից յուրաքանչյուրը կատարում է որևէ ֆունկցիա։ Մայտան, Տիգրանը և Հերիգան կազմում են տրապիցիոն «եռանկյունին», կոմսի կերպարով ցուցադրված է Մայտայի սիրո հետևողականությունը, իսկ

---

[1] Փութթանակի մասինալով, Տյուսաբին հնարավոր է մեղադրել նաև... ամերիկասիրության մեջ։ «Մայտա»-ի առաջաբանում հեղինակը գրում էր, թե կանանց տխուր վիճակի դեմ «կը բողոքե մեծն Ամերիկա, օրրանն ազատության»։ Եվ ահա գրականագետ Ա. Բաբայանը այստեղից հանում է իր եզրակացությունը. «ի վերջո,—գրում է նա,—նրա (Տյուսաբի—Ա. Շ.) իդեալը Ամերիկան էր» («Տեղեկագիր» ՍՍՌՄ ԳԱ Հայկ. ֆիլիալի, 1941, № 3—4, էջ 28)։ Բայց դա ոչ թե համակրանքի ցույց էր, այլ պատմական իրողության խոստովանում։ Փաստ է, որ 19-րդ դարի վերջերից ֆեմինիզմը լայն տարածում գտավ Հյուսիսային Ամերիկայում և նույնիսկ հասավ որոշ հաջողության։ Հայտնի է, օրինակ, որ դեռևս 1869 թվականին Վայոմինգում կանայք ստացան ձայնի իրավունք. ընտրում և ընտրվում էին, կային կին երդվյալատենակալներ, հաշտարար դատավորներ և այլն (տե՛ս А. Бебель, Женщина и социализм, стр. 347—349)։ Տյուսաբը իրավունք ուներ այդպես գրել, որովհետև, ինչպես Բեբելն է նկատում, «Միացյալ Նահանգներում կանայք նվաճել են իրենց լրիվ քաղաքական-իրավական հավասարությունը, նրանք ընդդիմացել են նույնպես պոռնկության վերաբերյալ անգլիական կամ դրանց նման օրենքների ներմուծմանը» (նույն տեղում, էջ 378)։

Պետրոսի միջոցով՝ Հերիգայի չարագործությունը. Հրանույշի կերպարը նպատակ ունի գործողությանը հաղորդել դրամատիկ լրջություն (ուստի և այդ դերը կատարելուց հետո Հրանույշը մահանում է), Հուլիանեն և Լևոնը հարստացնում են վիպական գործողությունները՝ ստեղծելով թույլ արտահայտված սյուժետային երկրորդ գիծը։

Բայց այդ կերպարների մեջ կա մեկը, որի խաղացած դերը որոշ իմաստով բացառիկ է։ Առաջին հայացքից նա վիպական գործողությունների ոչ թե մասնակիցը, այլ հանդիսատեսն է։ Տիկին Սիրան է այդ։ Տյուսաբը նրա կերպարը պատում է խորհրդավորությամբ։ Հինանմյա այդ կնոջ և Մայտայի միջև կա ճակատագրի ինչ-որ ընդհանրություն։ Սիրան մի ժամանակ ունեցել է ծնողներ, սիրող ամուսին և զավակ, բայց այժմ միայնակ է իբրև «երկնահայաց և տերեվազարդ ծառին կոճղը զոր շանթը զարկավ և ավերեց»։ Քանի դեռ երջանիկ էր, նա չէր զգում կյանքի իմաստը և միայն դժբախտանալուց հետո է, որ ուսումնասիրել է կյանքը «առանց կրից և անշահասեր մտոք»։ Սիրան այժմ հիվանդ է, փակված Կորֆուում, փորձել է ընկերություն կազմել, բայց շրջապատի մարդիկ իրեն չեն հետաքրքրել և նա գերադասել է մնալ իր «ընտիր հեղինակների» գաղափարների հետ։ Մայտան իրեն ամբողջովին հանձնել է Սիրային, որին անվանում է «բարեկամուհի» ու «անձնվեր մայր» և որին վստահում է իր հոգու բոլոր բաղձանքները։ Մայտան նրան պատմում է իր կյանքի, իր հետ պատահած ամեն մի դեպքի մասին, իսկ Սիրան խորհուրդներ է տալիս։ Սիրան ուսուցչի իր միսիան չափազանց բարձր է գնահատում և անգամ այն ժամանակ, երբ նա ծանր հիվանդ է, մտածում է Մայտայի մասին, որ պետք է մնա միայնակ ու հուսահատվի։ Սիրան ապրում է հոգեկան ներքին տագնապ, նա զգում է, որ շատ ծանր է, երբ մարդ միայնակ է, երբ չկա հառաչանք ու ժպիտ, արտասուք և ուրախություն, բայց ոչինչ անել չի կարող, և սոսկումով է տեսնում, որ կյանքն անցնում է, իսկ ինքը չի թողնելու որևէ հիշատակ, ուստի և ուզում է օգտակար լինել Մայտային։

Եվ Սիրան հայտնում է իր մտքերը։ Տյուսաբը ջանում

է այնպես անել, որ այդ մտքերը չմնան առկախ, ձգտում է դրանք բխեցնել գործողությունների ընթացքից։ Այդպիսի կապ արտաքուստ պահպանված է. Մայտայի հետ պատահած կամ նրա հաղորդած որևէ դեպքի կապակցությամբ Սիրան անում է ընդհանրացումներ, դատողություններ, որոնք թեև օրգանապես չեն ձուլվում վեպի այուժեին, բայց ինքնըստինքյան շատ հետաքրքիր են Ռոմանտիզմի մի կարևոր սկզբունքը՝ սուբյեկտիվությունը իր առավել ուժեղ արտահայտությունն է գտել Սիրայի կերպարում։ Տյուսաբը ևս կարող էր ասել. Տիկին Սիրան այդ ես եմ, և իրավացի կլիներ։ Սիրան հեղինակի հասարակական իդեալի կրողն է, նրա հայացքների ու համոզմունքների արտահայտիչը։ Սիրայի հայտնած շատ մտքեր մեզ արդեն ծանոթ են Տյուսաբի հրապարակախոսական հոդվածներից։ Ավելին, գրողը Սիրային գրեթե բառացիորեն արտասանել է տալիս խոսքեր, որոնք արդեն նա գործածել է իր վեպի առաջաբանում։

Այն, ինչ մենք որոնում էինք «Մայտա»-ի վիպական պատմության մեջ, գտնում ենք Սիրայի դատողություններում, բայց գտնում ենք ոչ իբրև գեղարվեստական պատկեր, այլ որպես հրապարակախոսական դեղում։ Այս համեմատությունը նկատել են «Մայտա»-ի դեռ առաջին քննադատները։ Այսպես, Ռ. Պերպերյանը (Հրաչյա) գրել է. «Ըստ իս, այս վեպն երկու տարբեր մասեր կը պարունակե, մին վիպական ու մյուսն իմաստասիրական, որք՝ նման երկու գետերու որք վազքնթաց, բայց առանց իրար խառնվելու կերթան՝ կշարունակվին գործույն բովանդակ ընթացքին մեջ իրարմե զատ ու մեկին»[1]։ Ե. Տեմիրճիպաշյանը նույն միտքն էր արտահայտում՝ նշելով. «Սիրան գիրքն է, մինչ վեպն է Մայտան. Մայտան վեպին դյուցազնուհին է, Սիրան գրքին հեղինակուհին է»[2]։

«Մայտա»-ում Տյուսաբը հանդես է գալիս և՛ որպես գեղագետ, և՛ որպես հրապարակախոս։ Մենք տեսանք, որ գեղագետ Տյուսաբը բավականին թույլ է, նա չի կարողա-

[1] «Երկրագունտ», 1887, № 11, էջ 337—338։

[2] «Գրական ու իմաստասիրական շարժում», 1883, տետր Ը, էջ 187։

նում ստեղծել ոչ հասարակության կողմից ստրկացված կնոջ կերպար և ոչ էլ սոցիալական կոնկրետ միջավայր՝ իր սովորություններով ու կենցաղով, և միայն աշխարհագրական տեղանուններն են հուշում, որ գործողության վայրը Կ. Պոլիսն է։ Իսկ Տյուսաբ-հրապարակախոսը անհամեմատ ուժեղ է և համարձակ։

Մանոթանանք Սիրա-Տյուսաբի մտքերին։

Սիրան կնոջ ազատագրության ջատագովն է։ Նա՝ ուզում է, որ կինը դուրս գա «աշխարհիս բեմը», լինի «ազատ կին մի, ազատ՝ յուր գործերովն և գաղափարներով», վնասելի ընդհանուր հարգանք։ Նա կշտամբում է Մայտային, որ ամուսնու մահից հետո դարձել է հոռետես. «զրո՞ մ'ես որ հարգ կատանա միայն երբ ամուսին ըսված թվույն կը հետամտի»,—ասում է նա (էջ 10)։ Եվ ինչպես իր հրապարակախոսության մեջ, այնպես էլ այստեղ Տյուսաբը կնոջ ստրկության առաջին հանցավոր ճանաչում է հասարակությանը։ Ճիշտ է, նա մեղադրում է տղամարդկանց, որ ապարեզ չեն տալիս իրենց կանանց, չեն թույլատրում նրանց ապրել սեփական աշխատանքով, բայց «անիրավ և անօգուտ հասարակությունն է, որ իր օրենքներով, կրոնով ու նախապաշարումներով ստրկացրել է կնոջը։ «Կինը նախապաշարմանց և ընկերության զոհն է»,—Սիրայի այս եզրակացությունը (էջ 12) մի շառաչուն ապտակ է բուրժուական իրավակարգին։ Հասարակությունը բութ է ու անտարբեր մարդու նկատմամբ, ամենուրեք իշխում են ճամոլությունն ու շահասիրությունը, սուտը նվաճել է ճշմարտությունը, մոռացված են խիղճն ու բարոյականությունը. «Մթությունն այնչափ թանձրացած է, որ ոչ ոք կը հավատա լուսույն»,—ասում է նա։ Սիրան շատ է խոսում նախապաշարմունքների մասին, որոնք դահճի դեր են խաղում մարդու սրտի ու երազների, տառապանքների ու լացի նկատմամբ։ Կանայք նույնպես գերի են նախապաշարմունքներին և չգիտեն, որ այդ հրեշներին «մարդիկ անձամբ ստեղծեցին իրենց բանականության դեմ մարտ մղելու, չարշարվելու և մոլորելու համար. բարի կամ չարագույժ նշաններ հետևցնելով ընդհանուր օրինաց բնական ընթացքեն» (էջ 58)։

Սիրան ասում է, որ ինքը կյանքի ուսումնասիրությամբ պարզել է, որ երկու գլխավոր չարիք են վնասում մարդկությանը՝ կրոնը և անիրավությունը։ Այստեղից էլ նրա ծանր դատավճիռը, «կրոնքն հարստահարության և տանջանաց գործիք դարձած է» (էջ 38)։ Կրոնը մարդկանց թաղում է խավարի մեջ, չի թողնում, որ նրանք լուսավորվեն գիտության ջահով, իսկ կղերականները մարդուն դրել են երկաթե շղթաներում։ Երբ Մայսան, անձնատուր լինելով վշտերին, վճռում է մահնել վանք, Սիրան վրդովված խորհուրդ է տալիս չդիմել այդ անխոհեմ քայլին։ «Կա՞ բան մի,— ասում է նա,— այնչափ անգութ և բարբարոս, որչափ վանք մ՝ որ բույն մ՝ է թշվառության և հարստահարության, ուր կամքը, զգացումն ու միտքը շղթաներ կը կրեն, ուր կը գործադրվի վերջապես մարդկային բարոյական սրբապղծությունն... Մարդըն, որ ազատության համար ծնած է, կրնա՞ արդյոք շղթաներու մեջ հաճույք զգալ» (էջ 92)։ Սիրան վանքի պատերը համարում է՝ «մտաց, սրտին և լեզվին կախաղանն... կենաց մահը» և հորդորում է. «Հրաժարե՛ խորհուրդեդ, մրցե՛, տանջվե՛, մեռիր ի հարկին, բայց ազատ մեռիր...»։

Սա արդարացի և խիզախ քննադատություն է և Տյուսաբի առաջադեմ հայացքների վառ ապացույցը։ Անժխտելի է կրոնական դոգմանների ուղղակի կապը կնոջ ստրկական դրության հետ։ Այդ կապակցությամբ Գորկին գրել է. «...Պատմական ժամանակներում երկրագնդի բնակչության կեսի նկատմամբ պերճախոս, արհամարհական և նույնիսկ թշնամական վերաբերմունքը շատ ավելի ակնհայտ է արտահայտված կանանց մասին կրոնական, եկեղեցական հայացքներում, իսկ հատկապես սուր-թշնամական՝ քրիստոնեական եկեղեցու քրմերի մոտ։ Բոլոր ժամանակների և ժողովուրդների կրոնը տղամարդուն իրավունք էր ներշնչում կնոջը հաշվել «նրա տնտեսության շունը»։ Նրա հիմնական արժանիքը ճանաչվում էր մանկածնությունն ու տղամարդու կամքին անպայմանորեն ենթարկվելը»[1]։

Մ. Ճանաշյանը դառնությամբ է նկատում, որ կրոնի

[1] *М. Горький*, Собрание сочинений в тридцати томах, том 27, ГИХЛ, М., 1953, стр. 178.

մասին «երբեք նպաստավոր խոսք չունի Տյուսաբ»[1]։ Այդ ճշմարիտ է։ Բայց վիպասանուհին որքան էլ կրոնը համարեր «աներևույթ զորություն» (էջ 32), որքան էլ նրա քննադատությունը բուռն լիներ, այնուամենայնիվ նա աթեիստ չէր։ Այդ զգում էին Հ. Ասատուրն ու Մ. Օրմանյանը և հարկ էին համարում ընդգծել, թե Տյուսաբը «կը հավատար Աստծուն» և իր «հայադավան կրոնը անեղծ պահեց»[2]։ Գրողը հասարակական կյանքի երևույթների մասին ունի իր պատկերացումը։ Նրա ըմբռնմամբ կյանքում ամեն ինչ պայմանական է. այն ինչ այսօր վատ է, կարող է վաղը լավանալ։ Սիրան մի առիթով բերում է նաև կրոնի օրինակը. «կրոնքն՝ որ հոգվույն մխիթարությունն է, մոլեռանդության դարձավ, այսինքն ատելության...» (էջ 18)։ Մի ուրիշ տեղ կարդում ենք. «Վսեմ եղբայրասիրություն և հաշտարարություն քարոզող Քրիստոսի արյունեն՝ ի վեր կանգնեցավ սպառազեն և արյունարբու Քրիստոնեությունը» (էջ 154)։ Ուրեմն կրոնը իր հիմքով ընդունելի է, միայն թե այն վերասերվել է և հարկավոր է դնել իր հին, կուսական վիճակի մեջ, մաքրագործել։ Այս մտայնությամբ Տյուսաբը հիշեցնում է Ֆոյերբախին, որ նույնպես ուզում էր կատարելագործել կրոնը։

Գալով անիրավության, ապա Սիրան տեսել է միայն ուժից պարտված իրավունք, տեր ու տրուկ, իշխող տղամարդ ու գերի կին (էջ 39)։ Օրենքները նույնպես հորինվել են կնոջն ստրկության մեջ պահելու համար։ «Իրոք ի՞նչ կընե օրենքը,— հարցնում է նա,—օրենքը կնոջ վիզը չվան մի կանցունե, զոր կը սեղմե և կը թուլցնե ըստ հարկին։ Եվրոպայի ամենեն քաղաքակրթյալ ազգին օրինաց առջև ի՞նչ է կինն, եթե ոչ ամուսնույն ստացվածքը։ Ոչ նախաձեռնության իրավունք ունի, ոչ կամք, ոչ իշխանություն, ոչ ալ բողոքելու թույլտվություն՝ երբ սիրտը կարյունի, երբ միտքը կապստամբի» (էջ 104—105)։ Հիշեցնենք, որ այս փաստարկումը մեզ արդեն ծանոթ է «կանանց աշխատության սկզբունքը» հոդվածից։ Եվ պետք է խոստովանել, որ

---

[1] «Բազմավեպ», 1950, հունվար—մարտ, էջ 4։

[2] Հ. Ասատուր, Դիմաստվերներ, էջ 167, Մաղաքիա արքեպ. Օրմանյան, Ազգ և խոսք, Երուսաղեմ, 1929, էջ 429։

այդ չափապանց դիպուկ օրինակ էր։ Տյուսաբի վկայակոչած «Եվրոպայի ամենեն քաղաքակրթյալ ազգին» օրենսդրությունը (Code Napolèon կամ Code civil) Նապոլեոն առաջինի 1804 թվականին հրատարակած քաղաքական նշանավոր կոդեքսն է, որ դրվել է նաև Եվրոպայի մի շարք երկրների (Բելգիա, Իսպանիա, Փորթուգալիա, Իտալիա, Նիդերլանդներ) համապատասխան կոդեքսների հիմքում։ Այս օրենսդրությամբ կինը չէր կարող հանդես գալ դատարանում, պաշտպանել իրեն և ամբողջովին հանձնվում էր տղամարդու ողորմածությանը։ Վերջինս ազատ էր անօրինելու կնոջ գույքը, անգամ նրա օժիտը և այլն։ Առանձին հոդվածով կնոջը ապահարզան պահանջելու իրավունք էր շնորհվում, պայմանով, եթե նրա ամուսինը սիրուհուն ընդունել է կնոջ հետ՝ միևնույն սենյակում։ Այս խայտառակ հոդվածը վերացվեց միայն 1884 թվականի հուլիսին, այսինքն «Մայտա»-ի լույս ընծայելուց մեկ տարի անց[1]։

Տյուսաբին չի բավարարում ոչ միայն ֆրանսիական օրենսդրությունը, այլև ֆրանսիական revolյուցիան։ Սիրան, ըստ էության, ծաղրում է 1789-ին ընդունված նշանավոր «Մարդու և քաղաքացու իրավունքների դեկլարացիան», երբ ասում է. «Այն մեծ սկզբունքն, որ եվրոպական աշխարհին մեջ կը հռչակվին՝ այսինքն ազատության և հավասարության սկզբունքները, պարզապես ահագին բառեր են։ Ի՞նչ տեսակ հավասարություն է այդ որ առ ոտս արանց կը դնե մարդկության կես մասը. ի՞նչ է այդ ազատությունն որ կը զրկե կինը բողոքելու, գործելու, ձեռնարկելու կարողություններն»։ Սիրան մերժում է նաև ժամանակակից բարոյականությունը։ Բարոյականության նորմաները միատեսակ պետք է լինեն, բայց իրականում այդպես չէ։ Պետք է դեն նետել այն հնացած պատկերացումը, թե միայն կնոջ անհավատարմությունն է վնասում ընտանիքին և հասարակությանը. «Հասարակաց բարուց ապահովության համար արք ևս պատասխանատու են կանանց չափ» (էջ 103)։ Եթե անբարոյականություն է գործվում, ապա այն պետք է դատապարտվի ու

[1] Այս և մյուս փաստերը քաղված են Ա. Բեբելի նշված աշխատություններից (էջ 334—335)։

պատժվի, անկախ նրանից տղամարդն է մեղավոր, թե՝ կինը, որովհետև «Ինչ որ ընտանեկան սրբությունը կը պղծե՝ ոճիր մ՚ է։ Ինչ որ հասարակաց բարքերը կը խանգարե՝ մարդկության նախատինքն է։ Ինչ որ մոլություն է կանանց համար՝ մոլություն է նաև արանց համար ...ի վնաս թե ընտանեկան խաղաղության և թե ընկերական բարոյականության» (էջ 112)։

Ինչ բարոյականություն է արդի բարոյականությունը, որ արգելում է մարդու սպանությունը, բայց ներում ընդհանուր կոտորածներն ու պատերազմները։ Տյուսաբը շլմորած խճճվում էր ամբողջ շարք հակասությունների մեջ և չէր կարողանում դուրս գալ լաբյուրինթոսից։ Նա ցավում էր, որ մարդու խոսքն ու գործը չեն բռնում իրար. գիտությունը բարիք է գործում, մարդկանց փրկելու միջոցներ են հայտնագործում, բայց մյուս կողմից կատարելագործվում են մահաբեր գործիքները, օրհնվում է փրկարար ձեռքը, բայց ինչո՞ւ չի անիծվում մեռցնողը։ Ահա հարցեր, որոնց պատասխանը չէր գտնում գրողը։ Կյանքն ապականված է, անարդարությունն ու անիրավությունը նվաճել են ամեն ինչ «մոլությունն ու ստությունը կրոնից արդարության և... զարդուց ներքև կ՚ սքողվին ստեպ» (էջ 159)։ Իրականությունը Սիրային այնքան աղբոտված էր պատկերանում, որ նա երբեմն կոչ էր անում Մայոտային օգտվել ընձեռված ամենափոքր հնարավորությունից իսկ և վայելել կյանքն ու սերը։ «Վայելե ներկան՝ անփույթ ապագայիդ վրա»,—խորհուրդ էր տալիս նա։

Ինչո՞ւ է կինը ստրուկ, ինչո՞ւ նա «շղթաներուն շաչյունը լսելով ապրեցավ մինչև ցարդ առանց երբեք զանոնք խորտակելու փորձն ընելու», ինչո՞ւ «ամեն ազատ շավիղ, ամեն մտավոր սահման, ամեն փառաց ճամփա արգիլված է կանանց» (էջ 39, 41)։ Արդյոք բնությո՞ւնն է այդպես անարդար գտնվել, ո՛չ. «բնությունը գեղեցիկ և ընտիր հանգամանքով օժտած է կինը, բայց բռնությունն և օրենքը այս հանգամանքը խանգարեցին» (էջ 104)։ Ուրեմն կինը ոչ թե ստրուկ է ծնվել, այլ ստրկացվել է։ Այսպես ջարդուփշուր անելով ժամանակաշրջանի՝ տիրապետող դարձած ռեակցիոն

նախապաշարումները, որոնց համաձայն բնությունն է սահմանել կնոջ տխուր ճակատագիրը, Տյուսաբը, ֆրանսիական լուսավորիչների նման, գտնում էր, որ կանայք պետք է ստանան իրենց «բնական իրավունքները», ազատագրվեն, դառնան տղամարդկանց հետ իրավահավասար։ «Երբ,— ասում է Սիրան,—հավասարությունը տիրե երկու սեռին մեջ, այսինքն վայելից և պատժո, աշխատության և վարձատրության հավասարությունը, այն ժամանակ շղթաները կը ջախջախվին, սուտը կը դադրի և ընկերությունը կը շահի...» (էջ 105—106)։

Տյուսաբը համոզված լավատես էր։ Նա հավատում էր, որ կյանքի ապականությունը կմաքրվի, որ բոլոր մարդիկ, և՛ տղամարդը, և՛ կինը, կերջանկանան։ Այդ հավատքը լավ է արտահայտված Սիրայի խոսքերում. «Երբ մարդիկ խոսքերը գործին հետ համաձայնեցնեն, երբ հանուն արդարության անիրավությունը չի գործվի... և ոչ մոլությունը՝ առաքինության ներքև, և ոչ տգիտությունը՝ գիտության, հայնժամ նոր թվական մը պիտի հանդիսավորի՝ այսինքն հառաջադիմության թվականը, որ ծնունդ պիտի տա նոր մարդկության, պայծառացյալ շողշողուն լուսով, խաղաղությամբ, արդարությամբ և հավասարությամբ» (էջ 155)։

Սա է վիպասանուհու գերագույն բաղձանքը, լուսամած ապագայի երազանքը, որ ներհակ էր իրականությանը։ Քննադատներից մեկը հենց այդպես էլ ընկալում էր վեպը և կարծում էր, որ այն պահանջում է «կործանել մեզմով ընկերային արդի դրությունն և վերանորոգել զայն նոր հիման վրա»[1]։ Դրա համար էր, որ հակառակորդները Տյուսաբին անվանում էին «հեղափոխական» և վերագրում «բարոյապես Հայ ընկերությունն հեղաշրջելու կամ մանավանդ ուղիղ ճանապարհեն խոտորեցնելու նպատակն»։ Ե. Տեմիրճիպաշյանը վկայում է, որ գրողը «յուր մասնավոր խոսակցության մեջ զայրույթը կը հայտներ» նման եզրակացությունների դեմ[2]։ Եվ իր վրդովմունքի մեջ նա դարձյալ անկեղծ էր։ Տյուսաբը

---

[1] «Մասիս», 1884, № 3606։

[2] «Գրական և իմաստասիրական շարժում», 1885, տեսր յոթերորդ, էջ 123։

փափագում էր մարդկության «նոր թվականը», բայց ուզում էր հասնել այլ ճանապարհով։ Նա, Գր. Չիլինկիրյանի դիպուկ արտահայտությամբ, «խաղաղասեր հեղաշրջական» էր[1]։ Տյուսաբն ունի բազմաթիվ ճշմարիտ դիտողություններ, բայց դրանցից հանած նրա եզրահանգումները շատ են ողորմելի։ Նա գտնում է, որ կյանքը, հասարակական պայմաններն են ձևավորում մարդու վարքագիծը։ «Ես համոզված եմ,—ասում է Սիրան,—թե մարդս հրեշ չի ծնանիր, բայց պարագաները, պետքերը... մարդուս մղում կուտան յուր բախտը վճռելով»։ Սիրան բերում է Հերիգայի օրինակը. «Հերիգան իբրև ոճրագործ մեռավ, ուրիշ պայմաններու մեջ գուցե իբրև նշանավոր կին մեռներ» (էջ 152—153)։ Տյուսաբը գիտե, որ երջանիկ ապագան հեշտությամբ չի նվաճվում, որ «մարդկությունը տակավին շատ արյուններու մեջեն պիտի քայլե, յուր ճակտին վերջնական կերպիվ ջնջելե հառաջ այն աղետալի կարմիր դրոշմն, որ հետզհետե կը վերանորոգվի» (էջ 155)։ Երբեմն նա անորոշ ձևով խոսում է ժողովուրդների մասին, որոնք իրենց մարտիրոսությամբ սրբելու են «անիրավության և նախապաշարմանց հետքը»։ Բայց ամբողջ խնդիրն այն է, որ Տյուսաբը սուր է ճոճում ոչ թե հասարակական պայմանների, տիրապետող դասակարգի, այլ տգիտության ու խավարի դեմ։ «Դարեր ի վեր ժողովուրդները տգիտության զոհերն են»,— ասում է նա (էջ 159)։ Երբ Սիրան հորդորում էր կանանց ձեռք բերել «նախաձեռնության ոգի», միանալ ու զորավոր ուժ կազմել, խորտակել ստրկական կապանքները և այլն, և այլն, նա նկատի ուներ բացառապես երկու միջոց. լուսավորություն և աշխատանք։ «Աշխատությունն և լույսը հառաջ կը մղեն զայն՝ (մարդկությունը—Ա. Շ.) մեծ հանդիսացնելով,— ասում է նա (էջ 144), կամ՝ «ազգին զարգացումն աշխատությամբ ամեն հատկություններով կը կատարվի, մինչդեռ անոնց կործանումը մեղկութենե և մոլութենե կը հետևի» (էջ 123)։ Առանձին վերցրած՝ Տյուսաբի մտքերը վիճարկելի չեն և նույնիսկ արժեքավոր են։ Այսպես, երբ նա պնդում էր, թե կինը սեփական աշխատանքով, իր ճակատի քրտինքով պետք է ձեռք

[1] «Մասիս», 1883, № 3541։

բերի պատիվ ու հարգանք և հանի «անհատական անկախության» (էջ 143), ապա դա, ինչպես նշել ենք, սկզբունքորեն առողջ և ընդունելի տեսակետ է։ Բայց խնդիրն այն է, որ Տյուսաբը չէր ղեում տիրապետող հասարակական-տնտեսական պայմաններում իր դրույթի անիրագործելիությունը։ Աշխատանքի խնդրում վիպասանուհու հայացքները որոշակիորեն սահմանափակ են։ Մայոան արհամարհում է հասարակական կարծիքը՝ այդ «հոտգլուխ հրեշը», սկսում է աշխատել, գործատուն է բացում և ինքն էլ իր հերթին է ընկըսում դատողություններ անել աշխատանքի փրկարար ազդեցության մասին։ Հեղինակի պատկերացմամբ դա գրեթե մի հերոսություն էր։ Բայց նա մոռանում էր, որ չքավոր հայկինը և՛ դյուղում, և՛ քաղաքում վաղուց էր դարձել ամուսնու օգնականը, ու չնայած դրան չէր աղատագրվել։ Իրավացի էր Հ. Պարոնյանը, երբ ասում էր, թե Տյուսաբի «հանդիմանությունը կը վերաբերի այն մարդոց՝ որոնց կիներն կը խոստովանին և կը հավատան, թե կին մը կարգվելեն անմիջապես ետքը իրեն զարդարանքովն միայն զբաղելու է..., որոնց վրա անտանելի բեռ մ'է եղած կինն»[1]։ Նույն կշտամբանքն էր ուղղում վիպասանուհուն նաև Ա. Արփիարյանը՝ գրելով, թե նա «հայ կին» ասելով հասկանում էր «Պոլսո կամ Իզմիրի հայ գաղթականության պատկանող, եվրոպական տարազով պճնազարդիկ հայուհին միայն»[2]։

Աշխատանքի ու լուսավորության միջոցով Տյուսաբը ուզում էր ոչ միայն երջանկացնել կնոջը, նրան դարձնել «բանական էակին երկրիս վրա ունեցած կոչման» համապատասխան (էջ 17) ու ապահովել «ազգային հառաջադիմությունը», այլև ձգտում էր փրկել չքավորության լայն խավերին՝ ռամիկին (պլեբեյ), այդ «նեխոտ ցնցոտիքին», որ «գիշերը զիշտյակ ունի իբրև անկողին և ցերեկը՝ զանոթություն իբրև ընկեր» (էջ 146)։ Գրողը զգուշացնում է, որ «եթե կռիվ, հեղափոխություն ծագի, այն ժամանակ կենդանի մրուրը գազանաբար դուրս կը ցայտե, և ընկերության

---

[1] Հ. Պարոնյան, *Երկ*, հ. ե, Հայպետհրատ, 1935, էջ 238—239։

[2] Արփիար Արփիարյան, *Պատմություն ժե դարու Թուրքիո հայոց գրականության*, էջ 222—223։

վրա կը տարածե բոլոր հուսահատությունը, լրբությունը, անամոնությունը, սրտմտությունը, զորս անոթությունն և աղքատությունը դիզած և բարդած էին ժամանակներն ի վեր»։ Հետևաբար «այդ ցնցոտյաց մեջ աշխատություն մտցնելու է՝ անոթության վերջ տալով, այդ խավարի բույնին մեջ լույս ծավալելու է» (էջ 146)։ Այդ կերպ Տյուսաբը հույս ուներ արմատախիլ անել չարը՝ ռամիկին, մեղմել նրա ցասումը։ Այս լույսի տակ էլ պարզ է դառնում, թե ինչու վիպասանուհին Կոմսի պատմության մեջ շրջանցում է «Սևտանի նահմ օրերեն» հետո ընկած ժամանակաշրջանը; այսինքն Փարիզյան Կոմունան, և ինչու է նա համակրանքով վերաբերվում Կոմսի՝ «վայրենի ժողովրդոց փրկչի» նրա առաքելական գործունեությանը։

Ռամիկի նկատմամբ դասակարգային աններելի արգահատանքը, որ գրողի աշխարհայացքի ամենաստվերոտ կողմն է, «Մայտա»-ում շաղախված է «եղբայրասիրության» պեշիկթաշլյանական քարոզով։ Տյուսաբը չէր մոռացել իր ուսուցչի պատվիրանը և հնարավոր էր գտնում այն տարածել նաև «ռամիկների» վրա։ «Գրեթե ամեն բանով կ'ղբաղինք,— գրում է նա,—ամեն բանի վրա նայվածք մը կ' արձակենք, բայց ո՞վ արիություն ունի՝ առանց զզվանաց, մինչև գարշաբույր ռամկին մոտենալու, ու ժանտահոտ քուրջերու ներքև տեսնելու, վտիտ, հալևմաշ մարմիններ, և անասնո ներքև եղբայր մի ճանչնալուն» (էջ 146)։

Այսպես կրոնն ու օրենքները ձաղկող, նախապաշարմունքների ու կեղծ բարոյականության դեմ ծառացող Տյուսաբը վերափոխվում է սոցիալական խոցերը բարոյախոսությամբ դարմանող մի շարքային լիբերալի։ Բարեբախտաբար չքավոր զանգվածների մասին թյուր ու խառնակ դատողությունները վիպասանուհու ստեղծագործությունում միայն թռուցիկ արտահայտություն են գտել, և սերունդների աչքում նա մնացել է հանդուգն ու պայծառատես մի հեղինակ։

* * *

«Մայտա»-ն միանգամից հռչակեց Տյուսաբի անունը որպես հայ առաջին վիպասանուհու, իսկ նրա ըմբռստ հայացքները փոթորկեցին արևմտահայ հասարակական միտքը։ «Եվ ո՛չ գիրք մ՝ այնքան աղմուկ հարուցած էր, որքան հարույց Մայտան»,— պատմում է Ե. Տեմիրճիպաշյանը[1]։ Փաստերը համոզիչ կերպով հաստատում են, որ Տյուսաբի այս նշանավոր գործը գտել է բացառիկ լայն տարածում և թողել անջնջելի տպավորություն Մամուրյանն, օրինակ, գրում է. «Մի քանի շաբաթվան մեջ հարյուրավոր օրինակներ կսպառին, անլո՛ւր սպառումն ուրիշ որևէ նորատիպ հայ գրքույկի մը համար», և ավելացնում, որ ընթերցողները «կկարդան ու կլափեն Մայտան»[2]։ Տեմիրճիպաշյանը նույնպես մտաբերում է. «Եվ Մայտան լափվեցավ. իր բարձր գնույն հակառակ՝ իսկույն սպառեցավ,— օրինակին ոսկի մը տվող կայսր՝ եթե գտնվի»[3]։

Ուսումնասիրողները այս կամ այն առիթով խոսելով «Մայտա»-ի առաջացրած «ահագին աղմուկի» և «լրագրային պայքարի» մասին, տվել են միայն Հակոբ Պարոնյանի, Գրիգոր Զոհրապի, Ռեթեոս Պերպերյանի անունները։ Իրականում այդ գործի շուրջը վիճել են ու արտահայտել թե՛ կամ դեմ, նպաստավոր կամ մերժողական կարծիքներ հասարակական ամենատարբեր խավերի ներկայացուցիչները՝ գրող ու հրապարակախոս, մանկավարժ ու փիլիսոփա, վաճառական ու իրավաբան, հոգևորական ու հասարակական գործիչ։ Ասել թե արևմտահայ մամուլում որքան նյութ է տպագրվել «Մայտա»-ի մասին, խիստ դժվար է[4], բայց մի

---

[1] «Գրական և իմաստասիրական շարժում», 1885, տեսր յոթերորդ, էջ 120։

[2] «Արևելյան մամուլ», 1883, էջ 340։

[3] «Գրական և իմաստասիրական շարժում», 1887, տեսր առաջին, էջ 4։

[4] 80-ական թվականների արևմտահայ մամուլը մեզ է հասել թերի վիճակում։ Բավական է նշել, որ 1883 թվականի պարբերականների մի գգալի մասի («Հայրենիք», «Լույս», «Փունջ», «Ավետաբեր», «Մանգումեի էֆքյար», «Մեճմուայի հավատիա», «Թերճեմանը էֆքյար», «Ճեյհք») ոչ մի համար չի պահպանվել Հանրապետության դրադարաններում։

շարք փաստեր հաստատում են, որ դրանց քանակը բավականին մեծ է։ «...Ո՞վ կրնա ուրանալ թե Մայտայի վրա եղած բանագատությունք քանի մի հատոր Մայտաներ չեն կազմեր...»,—գրում էր «Ընտանիք» հանդեսը[1]։ «Երկրագունա» ամսագիրը 1884 թվականի ապրիլին, այսինքն վեպի լույս տեսնելուց գրեթե մեկ տարի անց, նույնպես խոստովանում էր. «նյութոց առատությունն ըզմեզ կը շվարեցներ»[2]։ Գր. Զիլինկիրյանի մի վկայությունից երևում է, որ «օտար գրագետները» նույնպես հոդվածներով արձագանքել են «Մայտա»-ին[3]։ Այս ամենը, ինչպես և մեր ձեռքի տակ եղած մոտ երկու տասնյակ նյութերը ցույց են տալիս, որ Սրբուհի Տյուսաբի առաջին վեպը ներկայացրել է հասարակական-գրական հետաքրքրություն և ժորժ Սանդի «Ինդիանա»-ի նման դարձել գաղափարական տարբեր հոսանքների վեճի առարկա։

«Մայտա»-ի մասին առաջինն արտահայտվեց Հ. Պարոնյանը՝ իր հրատարակած «Միծաղ» պարբերականում տպագրելով «Այտամ» երգիծական-այլաբանական գրախոսությունը։ Հանճարեղ երգիծաբանը այդ վեպը գնահատեց, մեկնակետ ունենալով ռեալիզմը։ Պարոնյանը չծաղրեց հեղինակի գաղափարները, կնոջ ազատագրման վերաբերյալ նրա նկրտումները։ Ճիշտ է, նա չէր բաժանում վիպասանուհու պատրանքներն աշխատանքի հարցում՝ մատնանշելով, որ կնոջն աշխատանքով ապահովելը դեռևս չի նշանակում նրա ազատագրություն։ Ե՛վ գեղջկուհիները, և՛ քաղաքի չքավոր կանայք «իրենց ճակտին քրտինքովն տան ծախքը կը հոգան», բայց շարունակում են մնալ թշվառ ու կարիքավոր[4]։ Պարոնյանը հանդիմանում էր «Մայտա»-ի հեղինակին, որ ձգտում էր բարոյախոսությամբ լուծել բոլոր կենճռոտ հարցերը, բայց մեծանուն դեմոկրատի համար ընդունելի էր վիպասանուհու հիմնական գաղափարը՝ երկու սեռերի իրա-

---

[1] «Ընտանիք», 1884, № 24, էջ 382։
[2] «Երկրագունա», 1884, № 4, էջ 166։
[3] «Մասիս», 1883, № 3539։
[4] Հ. Պարոնյան, Երկ, հ. 5, էջ 237։

վահավասարության պահանջը։ Պարոնյանն ավելի կարևորության էր տալիս երկի գեղարվեստական կողմին։

Տյուսաբը դաստիարակվել էր ռոմանտիկական գրականության տրադիցիաներով։ Նրա ուսուցիչը՝ Մ. Պեշիկթաշլյանը, ռոմանտիկ էր, իսկ գրողի սիրած հեղինակները ֆրանսիական ռոմանտիկներն էին՝ Հյուգոն, տիկին Սթալը և Ժորժ Սանդը։ Արևմտահայ վիպագրության մեջ 80-ական թվականների սկզբին գերիշխող ուղղությունը ռոմանտիզմն էր և ռեալիստական առանձին էջերը (օրինակ Ս. Տեր-Սարգսեանցի «Շահենն ի Սիպիր»-ում) էական որակ չէին կազմում։ Անգամ Գր. Զոհրապի «Անհետացած սերունդ մը» վեպը, որ տպագրվեց 1885—86 թվականներին, վերջին հաշվով, վրձինված էր ռոմանտիկ երանգներով։ Պարոնյանը քաջ գիտակցում էր, որ գրական այդ հոսանքը անհարիր էր ժամանակաշրջանի պահանջներին, չէր տալիս իրականության, սուբթանական բռնապետության և մշտահալած հայ ժողովրդի սոցիալական կյանքի իսկական պատկերը, ուստի և «Մայրա»-ն դարձնում էր թիրախ՝ հարվածելու համար ռոմանտիզմը։ «Կանոն է, օրենք է, անակնկալ տեսարաններով հափշտակել հանդիսականներուն միտքն»,—գրում էր նա[1]։ Դա հենց ռոմանտիզմի էական սկզբունքներից մեկն է, որին հավատարիմ էր նաև Տյուսաբը։ Պարոնյանը ծաղրում է ռոմանտիզմի նաև այլ «կանոնները»՝ «բռնազբոսյալ տեսարաններով» հրապուրվելը, բառերը «փոխաբերական ձևով» օգտագործելը, «պարզութենե և բնականե» հեռանալը և այլն։ Նա մեծ նշանակություն է տալիս համոզչականությանը («Մարդս կը հուզվի այն տեսարաններեն, որոնց կը հավատա») և մի քանի դիպուկ օրինակներով (մատանու պատմությունը, Հերիգայի սիրո խոստումները Պետրոսին, Կոմսի կողմից Մայրային հյուրընկալելը) ցույց է տալիս, որ վիպասանուհին չի հարգում գեղարվեստի այդ կարևոր օրենքը։ Այս բոլոր թերություններով էլ «Մայրա»-ն դառնում է «բարձրաթիւռ փետուրի մը արդյունք»։

«Մայրա»-ը ոչ միայն Պարոնյանի, այլև հայ դեմոկրա-

---

[1] Հ. Պարոնյան, նշ. հ. 5, էջ 243։

տական դրաքննադատության ամենաուշագրավ էջերից մեկն է։ Բայց անհրաժեշտ ենք համարում նկատել, որ սովետահայ պարոնյանագետներից ոմանք ըստ արժանվույն բարձր դնահատելով այդ գործը, երբեմն ընկալում են այն որպես «Մայտա»-ի ժխտումն, կամ էլ Տյուսաբի վիպը արժեքավորում են ելնելով բացառապես Պարոնյանի քննադատությունից՝ անտեսելով բուն ստեղծագործությունը իր գաղափարական-գեղարվեստական առանձնահատկություններով։ Այսպես, վաստակաշատ դրականագետ Ա. Տերտերյանը գտնում է, որ Պարոնյանը «ջախջախիչ քննադատության» է ենթարկել «Մայտա»-ն[1]։ Բայց մինչե՞ կարելի է «ջախջախել» մի վիպ առանց մերժելու նրա գաղափարները։ Եվ ապա, չպետք է մոռանալ, որ Պարոնյանի քննադատությունը որքան էլ խիստ և անխնա լինի, այնուամենայնիվ երգիծական քննադատություն է և «Այտամա»-ն էլ ոչ միայն գրականագիտական, այլև երգիծական գործ է, իսկ երգիծանքը, ինչպես հայտնի է սիրում է շափազանցություններ[2]։ Հետաքրքիր է, որ «Այտամ»-ի պերսոնաժներից մեկը՝ Միծաղը կշտամբում է Կրիտիկոսին՝ «աննշան թերության մը» մասին «շատախոսելու» և «շատ բարակ մանելու» համար[3]։ Այնուհետև, մեծարգո գրականագետը իրավացիորեն նշելով, որ «Պարոնյանը «Մայտայի» մեջ տեսնում է նաև հետաքրքիր մոմենտներ և ուրեմն նրա հեղինակին չի զրկում տաղանդից», ավելացնում է. «այդպիսով, բացատրվում է Տյուսաբի անդրանիկ վեպի առաջ բերած սենսացիան. եթե վիպասանուհին այսպես թե այնպես գրական կարիերա է ստեղծել, նա այս կամ այն չափով շնորհք ունի—ահա՛ այն հետևությունը, որ կարելի է անել Պարոնյանի մոտեցումից»[4]։ Քննադատը բերում է այդպիսի երկու «հետաքրքիր մոմենտներ», երբ Պարոն-

---

[1] Ակադեմիկոս Արսեն Տերտերյան, Երկեր, Հայպետհրատ, Երևան, 1960, էջ 683։

[2] Ա. Զոպանյանը «Հ. Հ. Պարոնյան» ուսումնասիրությունում նկատել է «Այտամ»-ի չափազանցություններըը, բայց դրանք վերագրել է հեղինակի ոճի «ծայրահեղություններին» և ոչ թե բացատրել նրա ստեղծագործության բնույթով («Մատիկ», 1895, № 8, էջ 278)։

[3] Հ. Պարոնյան, Երկ, հ. 5, էջ 230, 239։

[4] Ակադեմիկոս Արսեն Տերտերյան, Երկեր, էջ 684։

յանը խոստովանում է վեպում «ուշագրավ և արտառուչ տեսարաններին» առկայությունը և նկատում կնոջ հոգեբանության մեջ խորը թափանցելու վիպագրողի կարողությունը։ Դրանց կարելի է ավելացնել նաև այլ օրինակներ։ Պարոնյանը տարբեր առիթներով հաճախ է նշում վեպի զանազան «սքանչելի տողերը», ասում է, որ «գեղեցիկ կտորներն շատ են», որ Հերիքգալի արտաքինի նկարագրությունը «քաջ» է[1] և այլն, բայց դրանց մեջ չէ որ պետք է փնտրել ոչ վեպի «աննատցիայի» և ոչ էլ Տյուսաբի «գրական կարիերայի» գաղտնիքը։ «Սեննատցիա» առաջացրին Տյուսաբի առաջադրած գաղափարները, տիրապետող օրենքների, կրոնի, բարոյականության վրա նրա մոլորին գրոհները, իսկ գրողի կարիերան ապահովել են հայ գրականությանը մատուցած նրա պատմական-գրական անժխտելի ծառայությունները։

Մեր գրականագիտությանը հայտնի է միայն «Մայոտա»-ի առթիվ Հ. Պարոնյանի գրած «Այտամ» երգիծական թատերաձև գրախոսությունը։ Բայց մեծ գրողը, Ս. Տյուսաբի այդ նշանավոր վեպին նվիրել է մեկ ուրիշ, ոչ երգիծական հլուխ, որը պարոնյանագիտությանը մնացել է անծանոթ։ Պարոնյանի այդ հոդվածը, որի մասին կողմնակի աղբյուրներից ենք իմանում, տպագրվել է Կ. Պոլսում հրատարակվող «Լույս» լրագրի 1883 թվականի 368-րդ համարում։ Քանի որ մինչև այժմ հնարավոր չեղավ գտնել Պարոնյանի ժառանգության այդ պատառիկը[2] և նկատի առնելով դրա մեծ հե-

---

[1] Հ. Պարոնյան, նշ., հ. 5, էջ 236, 239, 211։

[2] «Լույս» լրագրի այդ համարը նրնանում գտնելու մեր փորձերը հաջողությամբ չպսակվեցին։ Փարիզի Նուպարյան, Բոստոնի հայ մշակույթի և Վենետիկի Մխիթարյաններն մատենադարաններում, ինչպես հայտնի մեզ ամերիկահայ արևելագետ Հ. Քյուրտյանը, «Լույսի» այդ թիվը չի պահպանվել։ Մենք հույս ունեինք այն ստանալ Վիեննայի Մխիթարյաններից, քանի որ նրանց մի հրատարակությունում («Լիակատար ցուցակ հայերեն լրագիրներու, որոնք կը գտնվին Մխիթարյան մատենադարանին մեջ ի Վիեննա, 1794—1921», 1921) այդ թիվը հիշվում էր։ Սակայն «Հանդես ամսօրյայի» խմբագրությունից մեզ տեղեկացրին, որ «Լիակատար ցուցակը» ամեն կողմե ճշտահավի չէ» և «Լույսի» իրենց հավաքածոյում 368 համարը պակասում է։

տաքրքրությունը գրողի ստեղծագործության ամբողջական ուսումնասիրման համար, նպատակահարմար ենք համարում բերել եղած հատվածները։

«Կը հարգեմ ձեր «Մայտայի» բառերն որ երբեմն իրենց հատուկ նշանակությամբ գործածված են»[1]։

«Մայտայի նյութին անկարելի է ձեր առաջադրած նպատակին տանող վեպ մը շինել, այլ է հթե Մայտան յուր ամուսինն կորուսանելե հետո ազնվական մոր դեր կատարեր և ընկճեր յուր աղջիկանը հետ այն անիրավության և նախապաշարմանց ներքև որոնց դեմ մաքառելու նպատակն ունիք»[2]։

«Անպատեհ տեսարաններ կը հանձախեն ձեր վեպին մեջ ինչպես նաև բռնազբոսյալ դավեր, որոնց հանգույցն արվեստով չլուծվիր։

«Երբ մեկն ձեր վեպն կարդա, ավարտե և դուցե, բնավ տպավորության մը ներքև չ'գտներ ինքզինք, և այս կապացուցանե դժբախտաբար թե վեպի մը մեջ ավելի բնական գույներով կենդանի պատկերներ կը փնտռվին քան թե ատին անդին ցանված վճիռներ, անհարմար տեսարաններ և այլն և այլն»[3]։

Դյուրին է նկատել, որ Պարոնյանի այս հոդվածը երգիծական բնույթ չի կրում և անտեղի գործ կլիներ վերոբերյալ հատվածները «Այտամ»-ում որոնելը։ Դա ավելի շուտ վիպասանուհուն ուղղված բաց-նամակ է, որը արևմտահայ լրագրության մեջ տարածված ժանր էր։ Այս հոդվածում ևս Պարոնյանը ռեալիստական էսթետիկայի պահանջներից է մոտենում «Մայտա»-ին և նշում վեպի գեղարվեստական խոցելի կողմերը։ Այդ իմաստով, երկու ելույթների ոգին նույնն է և մի ավելորդ անգամ հաստատում է, որ դրանք պատկանում են միևնույն մարդու գրչին։

---

[1] «Արշալույս արարատյան», 1883, 12 հոկտեմբերի, № 1233։

[2] Նույն տեղում, № 1234։

[3] Նույն տեղում։

Բայց ինչո՞ւ Պարոնյանը Տյուսաբի վեպին երկու անդամ է անդրադարձել։ Այս հարցին պատասխանելու համար փորձենք պարզել այդ գործերի գրության ժամանակը։

«Այտամը» տպագրվել է երգիծաբանի հրատարակած «Միծաղ» զավեշտահանդեսի 1883 թվականի հունիսյան տետրակում[1]։ Գալով «Լուսա»-ի հոդվածին, ապա այստեղ գործը փոքր ինչ դժվար է։ Դժբախտաբար մենք չենք գտել այդ թերթի 1883 թվականի և ոչ մի համար, բայց դատելով Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող «Լուսա»-ի նախորդ և հաջորդ տարիների որոշ համարներից, այն սկսած 1882 թվականի սկզբից, երբ Պարոնյանը նորից աշխատակցել է նրան (տե՛ս հունվարի 2-ի 213-րդ համարը) լուսա է. ընծայվել շաբաթական երկու անգամ՝ շաբաթ օրերը որպես «հանդես ապպայինն» և չորեքշաբթի օրերը որպես «գավառական թերթ»։ Եթե ընդունենք, որ որևէ պատճառով չի խանգարվել լրագրի լույս ընծայումը, ապա 368-րդ համարը կարող էր հրատարակված լինել 1883 թվականի հուլիսին։ Բայց նման եզրակացությունը քիչ հավանական է, քանի որ դրաքննական կամ այլ արգելքների հետևանքով «Լուսա»-ը նույնպես կանոնավոր լույս չի տեսել (այսպես 1882 թվականի առաջին 36 շաբաթում նախատեսված 72 համարի փոխարեն բաց է թողնվել միայն 56-ը)։ Մեր հաշվումներով Պարոնյանի նամակաձև հոդվածը տպագրվել է 1883 թվականի օգոստոսին կամ սեպտեմբերին։ Անկախ դրանից, մի բան անվերապահորեն պետք է ընդունել, որ այդ հոդվածը հաջորդել է «Այտամ»-ին։ Որոշակիորեն ասել, թե ինչու է Պարոնյանը երկրորդ անգամ արտահայտվել «Մայտա»-ի մասին, դժվար է, քանի որ ո՛չ իր, ո՛չ Տյուսաբի և ո՛չ էլ ժամանակակիցների մոտ առայժմ չի գտնվել դրան վերաբերող որևէ հիշատակություն։ Կարելի է ենթադրել, որ «Մայտա»-ի հեղինակին վշտացրել է իր վեպի երգիծական քննադատությունը, և Պարոնյանը հարկ է համարել «լուրջ ձևով» հիմնավորել իր կարծիքը։

Հակոբ Պարոնյանից հետո ժամանակի քննադատներից և ոչ մեկը չանդրադարձավ «Մայտա»-ի դեղարվեստականու-

[1] Տե՛ս այս աշխատության 96-րդ էջի ծանոթագրությունը։

թյանը, նրա գրական ուղղությանը։ Ինչպես երևում է Հրաշդանի (Արփ. Արփիարյան) քրոնիկներից, վեճեր են եղել նույնիսկ վեպի վերնագրի շուրջը[1], բայց դրանք չեն շոշափելի երգիծաբանի առաջադրած հանգուցայլեն խնդիրները։ Գրական հասարակությանն ավելի շատ զբաղեցնում էին Տյուսաբի քարոզած հայացքները, որոնք և ծնունդ տվեցին լարված ու տևական մի պայքարի։

Արդեն 1883 թվականի հուլիսին «Արևելյան մամուլ» հանդեսը մի թղթակցության մեջ հաղորդում էր, որ մայրաքաղաքում «մեծ աղմուկ և հետաքրքրություն է խլրտում գրգռող իրողությունը Մայտա անուն վեպն է»։ «Այստեղ,— շարունակում է թղթակցության հեղինակ Շահնուր—Մամուրյանը,—քոլերայի չափ ահ ու դող կապդեն ոմանց՝ իրավունք կանանց, հավասարություն և ազատություն կանանց բաների...»[2]։ Նա չէր թաքցնում իր համակրալից վերաբերմունքը Տյուսաբի գաղափարների նկատմամբ և գրում էր. «Կինն ինչպես ընտանեկան, գրական և ուսումնական, նույնպես գիտական, քաղաքային և քաղաքական ասպարեզին մեջ կարող պիտի լինի մարդուն հետ մրցիլ, եթե միայն իր բնական և իմացական կարողությունները հետզհետե մշակելու պայմաններուն մեջ դրվի...»[3]։

«Արևելյան մամուլ»-ի խմբագիրը զբաղվեց նաև «Մայտա»-ի հանգամանալի քննությամբ՝ իր հանդեսում զետեղելով մի առանձին գրախոսական։ Մամուրյանը «Մայտա»-ն բնութագրում էր որպես «եզական, հանդուգն գործ մ՝ հայ գրականության նկատմամբ, ոչ միայն հեղինակության, ձևին, ոճին, նյութին և նորության կողմե, այլև ոգվույն և բարոյականության կողմե»[4]։ Գրախոսը, սակայն, դիտում է, որ հե-

---

[1] «Ինչ գլուխներ չարչարվեցան գիտնալու թե ուստի՞ Մայտայի անունը»,—գրում էր Արփիարյանը («Արևելք», 1884, № 3, «Օրվան կյանքը»)։ Նա միաժամանակ այն ենթադրությունն էր անում թե հեղինակը իր վեպի վերնագիրը վերցրել է Ֆրանսիացի գրամատուրգ և գերասան Մոնթիլինիի «Ամածամբոն» դրամայի (բեմադրված 1836-ին, Փարիզում) հերոսուհու անունից։

[2] «Արևելյան մամուլ», 1883, էջ 338։

[3] Նույն տեղում, էջ 339։

[4] Նույն տեղում, էջ 340։

դինակը, հասարակական բարքերին ու սովորություններին «անհամաս» է և դրանց պատկերը վեպում «բնիկ գույներով» չի արտահայտել՝ ճիշտ նկատելով, որ վեպում «անհոդ իրողություններ իրարու կհաջորդեն, անակնունելին և հանկարծականն ամեն ինչ կպատահեն... տափանքն, անմեղությունն, ամուսնությունն, անհավատարմությունը, մատնությունն, նզիան, մահն ու երջանկությունն միայլակի արագությամբ և առանց շունչ տալու զիրար կվանեն» նա, ի տարբերություն Պարոնյանի, այդ ամենը բացատրում է ոչ թե դրողի ստեղծագործական նախասիրությամբ, այլ մարդու ու հասարակության բնույթով[1]։

Մամուրյանը «Մայտա»-ն համարում էր ոչ միայն վեպ, այլև մեծ ծրագիր։ Նրա կարծիքով այդ ծրագիրն արտահայտված է վեպի առաջաբանում, որ «կորոտա իբրև շանթապահ ամպրոպ» և որտեղ Տյուսաբն իբր «ցարդ անհայտ ճշմարտություններ երևան հանելու խոստանալով՝ կպատնա շանթել և ավերել ամեն ընկերային բունություն ու հիմնարկություն... և կավետե նոր օր և խաղաղության ծիածան՝ մ' իբրև սիրո և ներդաշնակության նշանակ՝ հայ կանանց միգաստատ երկնից կամարին վրա»[2]։ Բայց ինչպես գիտենք, վեպի առաջաբանում Տյուսաբն այդպիսի խոստում չի տալիս և ոչ էլ սպառնալիք է կարդում. այնպես որ քննադատի երկյուղը՝ «մի գուցե պատկերն ծրագրին անհավատարիմ գտնվի», միանգամայն անհիմն է։ Հասկանալի է, որ այդպիսի նպատակներ վերագրելով դրողին, Մամուրյանը պետք է դար այն հետևության, թե հեղինակային դաղափարները արտացոլված չեն։ Եվ իսկապես, հոդվածագրի պնդմամբ վեպում կանանց աղատության խնդիրը զբաղեցնում է «աննշան բաժին»[3]։

Մամուրյանի քննադատությունը շարժեց նրա դաղափարակից Գ. Չիլինկիրյանի վրդովմունքը, որը հանդես եկավ «Մայտա և Արևելյան մամուլն» ընդարձակ հոդվածով։

---

[1] «Արևելյան մամուլ», էջ 342—343։
[2] Նույն տեղում, էջ 341։
[3] Նույն տեղում, էջ 342։

«Բոլորովին անհամաձայն ենք իրարու հետ»,— գրում է նա[1]։ Հոդվածագիրը Մամուրյանին մեղադրում է «ընդհանուր և հրկդիմի» կարծիքներ արտահայտելու մեջ՝ ցույց տալով, որ նա ճիշտ չի հասկացել «Մայտա»-ի առաջադրանքը։ Չիլինկիրյանը սրամտորեն նկատում է, որ Մամուրյանի շարադրած ծրագիրը իրոք «քմածին և ուռուցիկ» է, բայց դրա հեղինակը ոչ թե վիպասանուհին, այլ ինքը Մամուրյանն է։ Մինչդեռ Տյուսաբի ծրագիրը շատ պարզ է ու համեստ։ Նա բողոքում է հասարակական անարդարությունների և կնոջ ստրկական վիճակի դեմ։

Բայց Չիլինկիրյանը դժգոհ է ոչ միայն Մամուրյանից, այլև «Մայտա»-ի բոլոր քննադատներից, անգամ նրանցից, ովքեր «ամենայն իրավամբ գովեցին ապնիվ հեղինակին ազատամտությունը, տաղանդը, հզկուն լեզուն, սիրուն և վառվռուն ոճը»[2]։ Տյուսաբի քննադատները չեն փորձել ուսումնասիրել նրա վեպի «բուն ոգին»։ Չիլինկիրյանը «Մայտա»-ն անվանում է «հայ գրականության համար հեղաշրջում մ՝» և գտնում է, որ վիպասանուհին հռչակելով կանանց ազատագրության սկզբունքը, դատապարտելով օրենքներն ու կրոնը, գործում է «սուրբ հանդգնություն»։ Տյուսաբը «ոչ միայն 19-րդ դարու արժանի զավակն է, այլ նաև ապագան հեղափոխելու սահմանված և դեռ չհանրացած ընկերային ու մարդկային ճշմարտությանց հռանդուն և անկեղծ առաքյալն»[3]։ Չիլինկիրյանն ասում է, որ Տյուսաբը ահաբեկված է «գրաքննության ուրվականեն», բայց, չնայած դրան, «հրկյուղած հավատացյալի մը պես վայրկյան մը կը ծնրադրե դարավոր մարտիրոսին (ազատության— Ա. Շ.) առջև, կանխե դահիճը...»[4]։

Ինչպես տեսնում ենք, Չիլինկիրյանը լավ է հասկանում Տյուսաբին։ Սակայն նշանավոր հրապարակախոսի ու քննադատի բոլոր դիտողությունների հետ չէ, որ կարելի է համաձայնել։ Նա գտնում է, որ վիպասանուհին զրիչ է վեր-

---

1 «Մասիս», 1883, № 3543։
2 Նույն տեղում, № 3539։
3 Նույն տեղում, № 3541։
4 Նույն տեղում։

ցրել ոչ թե «Հային ազգային և ընտանեկան կյանքը նկարագրելու և անկե գործնական փաստեր հաղելու» նպատակով, այլ «մնայուն երկ մը շինելու, թե՛ ներկային և թե՛ ապագային, թե՛ Հայ ազգին և թե՛ ընդհանուր մարդկության համար գրելու առաջադրությամբ»[1]։ Չիլինկիրյանը չէր զգում, որ «ազգայինն» ու «ընդհանուր մարդկայինը» ոչ միայն չեն բացառում, այլև փոխադարձաբար լրացնում են միմյանց։ Իսկապես մնայուն է միայն խորապես ազգային, ժողովրդի կյանքը, նրա խոհերն ու տրամադրությունները վառ, հարազատորեն արտահայտող գործը։ Այս կապակցությամբ արդարացի են Մամուրյանը և «Մայտա»-ի այն քննադատները, որոնք Տյուսաբին հանդիմանում էին հասարակական. հարաբերությունների, բարքերի ու սովորույթների պատկերը չտալու համար։ Այնուհետև, Չիլինկիրյանը Մայտայի պատիարակելու եղանակի մեջ (որ նպատակ ուներ ճանաչել տալ կյանքի «տգեղը և գեղեցիկը, սուտը և ճշմարիտը») շտապում էր տեսնել «իգական սեռին կրթության մասին հեղափոխության մը հարկը»։ Այստեղ պարզորոշ երևում է վմյուռնահայ մտածողի հայացքների լիբերալ երանգը։ Մայտայի «կրթության եղանակը» իսկապես «հեղափոխող» կլիներ, եթե այն նպատակ դներ տգեղն ու սուտը խորտակել և գեղեցիկն ու ճշմարիտը հաստատել ակտիվ ու դաժան պայքարով։ Վերջապես, Չիլինկիրյանը շատ էր խանդավառվում նաև վիպասանուհու սիրո փիլիսոփայությամբ։ Նրա համոզմամբ, եթե գործնականում, բոլորի կողմից ճանաչվի Տյուսաբի՝ «կնոջ սիրո վերևը միայն Աստված կա» սկզբունքը, ապա դրանով իսկ հնարավոր կլինի «դիմադրել ժամանակին և պատահարներեն արտադրվող ամեն փոփոխությանց» և կապահովվի «ընտանիքներու երջանկությունը»[2]։ Քննադատը բաժանում է հեղինակի հնավանդ մոլորությունը՝ չարիքների աղբյուրը թաղված է գիտակցության մեջ, կատարելագործեցե՛ք այն և կփրկվի մարդկությունը։

Արևմտահայ պահպանողականները չհապաղեցին դրոհել վիպասանուհու վրա։ Նրանցից նախահարձակը եղավ զմյուռ-

---

[1] «Մասիս», 1883, № 3541։

[2] Նույն տեղում, № 3540։

նահայ փաստաբան Կարապետ Ստեփանյանը։ «Մայտա»-ի յուր տեսնելուց շատ չանցած նա «Արշալույս արարատյան» հոգեյա լրագրում Տյուսաբին հղեց մի նամակ, ուր վարկաբեկեց նրա արտահայտած գաղափարները։ Նա «Մայտա»-ն անվանում էր «գեղեցիկ և կոկիկ գործ», դրվատում էր հեղինակի «սահուն, կոկիկ ու քաղցր ոճը», բայց մերժում էր ամենից էականը՝ երկու սեռերի իրավահավասարության պահանջը։ Կ. Ստեփանյանը չէր խորշում իրեն կնոջ ազատագրության նախանձախնդիր ներկայացնելուց, բայց պայմանով, որ կինը «իր սահմանին մեջ ազատ լինի»։ Նրա «տեսության» համաձայն կինը բաղկացած է երեք տարրից՝ տկարությունից, գեղեցկությունից և նրբությունից, ուստի և նա կարիք է զգում նեցուկի։ Սա կրոնական հայտնի ամբաստանություն է (կինը «տկար անոթ» է), որի դեմ ըմբոստանում էր Տյուսաբը, երբ տիկին Սիրայի շրթերով ասում էր. «Այդ անկարողությունն ո՞վ աշխատած է արդյոք ապացուցանելու, և ո՞վ կարող է ապացուցանել, քանի որ մինչև ցարդ կանանց նկատմամբ աշխատության դաշտ մը չի բացվեցավ» (էջ 41)։ Քննադատը հայտարարում է, որ վիպասանուհու գաղափարները զերծ չեն «տեսլական պաճուճանքեն» և նախատում է նրան «կնոջ նկատմամբ... ազատություն բառն իր ընդարձակ նշանակությամբ» գործածելու համար։ «Դուք, տիկին,—գրում է նա,—կուզեք այնպիսի իրավունք մը տալ կնոջ զոր արդեն բնությունը զլացած է անորմե, այսինքն կատարյալ ազատություն, և մարդուն՝ ձեր լեզվավ այրին հետ անթերի հավասարության իրավունքն։ Արդարև գեղեցիկ երևակայություն մ՝ է սա, եթե անգութ բնությունն իրացներ զայն...»[1]։ Այսպես, ուրեմն, բնությունն է երկու սեռերի անիրավահավասարության հեղինակը և նրա սահմանածը անհնար է խախտել։ Բայց չէ՞ որ այս ողորմելի ու թշվառ փաստարկն էր հերքում Տյուսաբը, երբ գրում էր, թե բնությունը տղամարդուն և կնոջը հավասար է ստեղծել, թե «բնության մեջ ամենայն ինչ տիեզերքին ընդհանուր օրինաց հպատակելով կը ծնի, ազատորեն կաճի, ազատորեն կապրի» (էջ 92)։ Մատնանշելով վեպի առաջաբանը, Ստե-

[1] «Արշալույս արարատյան», 1883, № 1208։

Ֆանյանը գրում էր, թե Տյուսաբն իր գաղափարները «գիրքերի քաղած» է։ Նա համոզված է, որ եթե գրողի ուշադրությունը դրավեր Ժյուլ Միշելի «Սիրը», ապա նրա պահանջները կլինեին «չափավորված»։ Դրանով քննադատը մատնում էր իր համոզմունքների աղբյուրը. նա ոգեշնչված էր Ֆրանսիական մանրբուրժուական փիլիսոփայի հայացքներով, որի բարոյախոսությունը, Էնգելսի արտահայտությամբ, առոգրված է «քաղքենիական շնչով»[1]։

Չբավարարվելով այսքանով, Ստեփանյանը երկրորդ անգամ անդրադարձավ «Մայտաս»-ին՝ հեղինակի հետ քննադատելով նաև նրա ստեղծագործության երկրպագու Գր. Զիլինկիրյանին՝ վերջինիս մեղ արդեն ծանոթ հոդվածի կապակցությամբ։ Ստեփանյանը «Արշալույս արարատյան»-ի մի քանի համարներում զետեղեց «Մեկնություն Մայտայի ի պ. Գրիգոր Զիլինկիրյանին» հոդվածը, որտեղ նրա ծայրահեղ պահպանողական հայացքները դրսևորվեցին իրենց ամբողջ մերկությամբ։ Նա հարձակվում է Զիլինկիրյանի վրա, որ տիկին Սիրային անվանել է «ճշմարտության և ազատության ոդի»։ «Եթե պ. Զիլինկիրյան,— գրում է քննադատը,— լավ հասկցած լիներ Տիկին Տյուսաբի երկին բուն ոգին... այդ ֆարոզող և բողոքող փիլիսոփայուհին իբրև դատապարտելի կին մը պիտի նկատեր»։ Ավելին. հեղինակի գաղափարախոսը «ըստ օրենի պատժապարտ՝ և փիլիսոփայական տեսությամբ մահապարտ կը դատվի»[2]։ Ստեփանյանը օրենքի, կրոնի և այլնի Տյուսաբի մերկացումները որակում է որպես «մեզի համար անպատեհ շարժում մ'»[3]։ Հատկանշական է, սակայն, որ քննադատը չկարողանալով սեփական ուժերով ժխտել Տյուսաբի հայացքները, հենվում է «մեր ազգի առաջին երգիծաբան գրագետին, պ. Պարոնյանի»[4] «Լույս»-ում հրապարակված հոդվածի վրա՝ բերելով դրանից մի քանի քաղվածք։ Դրանց շնորհիվ էլ մենք պատկերացում ենք

---

[1] *К. Маркс и Ф. Энгельс*, Сочинения, т. XXI, Госиздат, 1929, стр. 92.

[2] «Արշալույս արարատյան», *1883, № 1232։*

[3] *Նույն տեղում, № 1233։*

[4] *Նույն տեղում, № 1234։*

կազմում Հ. Պարոնյանի ստեղծագործության՝ մեզ անծանոթ էջի մասին։ Բայց այդ եւրույթը, ինչպես տեսանք, «Մայտա»-ի գաղափարները հերքելու ոչ մի հիմք չի տալիս, և եթե երգիծաբանը իրոք այդ կարգի որևէ դիտողություն արած լիներ, ապա Կ. Ստեփանյանը անշուշտ կվկայակոչեր այն։

«Մայտա»-ի շուրջը ծավալված վիճաբանությունները նոր ուժով բորբոքվեցին Կ. Պոլսի հայ մամուլում։ Այստեղ էր, որ ծնվեց Պերպերյան-Զոհրապ նշանավոր բանավեճը։ Ականավոր մանկավարժ Ռ. Պերպերյանը, որ «Հրաչյա» ստորագրությամբ «Մարդիկ և իրք» ընդհանուր խորագրով թղթակցություններ էր տպագրում «Երկրագունտ» հանդեսում, գովեստով արտահայտվեց «Մայտա»-ի մասին։ Համարելով այդ վեպը «գրական բողոք», նա նկարագրում էր նրա շարժած հետաքրքրությունը։ Վեպի գնահատումը թողնելով մի ուրիշ անդամվա, Պերպերյանը ողջունում էր հեղինակին, որ «լուրջ խնդիրներ կը հուզև հաճելի ձևի մը տակ և հրապուրալի ոճով»[1]։

Շուտով «Երկրագունտ»-ում երևաց Գր. Զոհրապի հոդվածը։ Երիտասարդ փաստաբանը, որ գրական առաջին քայլերն էր կատարում, իրեն հատուկ կրքոտությամբ կրակի տակ առավ Տյուսաբի գաղափարները։ «Կը գովեմ յուր (Տյուսաբի—Ա. Շ.) փայլուն ոճն՝ որ անմահ Պեշիքթաշլյանի գրիչն մեզ կը հիշեցնե... կը գովեմ այն վառվռուն պատկերներն, որոց Մայտայի գրեթե մեն մի էջին մեջ հանդիպելու հաճույքն կա... կը գովեմ վերջապես յուր բարձր դատողություններն... բայց չեմ գովեր երբեք յուր պաշտպանության եղանակը»,—անկեղծորեն գրում էր նա[2]։ Զոհրապը գտնում էր, որ չպետք է չափից ավելի ուժեղ լույս տալ հայերի «երկարատև մութին վարժված» աչքերին. իգական սեռի ազատագրությունը «կիզիչ օրվան խնդիր մը չի կրնար համարվիլ...»[3]։ Նա այնքան հեռուն էր գնում, որ ավելորդ էր համարում նույնիսկ կնոջ ազատագրության մասին խոսակցությունը, և եթե հարկավոր է բողոքել անհավասարու-

---

[1] «Երկրագունտ», 1883, հուլիս, էջ 215։

[2] Նույն տեղում, էջ 312։

[3] Նույն տեղում, էջ 306։

թյան դեմ, ապա... տղամարդիկ պետք է ձայն բարձրացնեն կնոջ դեմ, որ «սովոր է միայն վայելել այն քրտանց արդյունքը որոց բնավին չէ մասնակցած»։ Ջոհրապը կնոջ հասարակական անլիարժեքությունն էր քարոզում՝ պնդելով, թե նա որևէ մասնակցություն չի ունեցել քաղաքակրթության հսկա շենքի կառուցմանը, մարդկային հանճարի հրաշալի հայտնագործություններին։

Ջոհրապը պաշտպանում էր նաև Արևմուտքում լայնորեն տարածված «կնոջ բնական կոչման» թեորիան, որը դնում էր, որ «կինն ամուսին և մայր լինելե անդին չունի դեր մարդկային կենաց մեջ», «կինն թշվառության և անիծից տարր մ' է միայն և ոչ այլ ինչ»[1]։ Ա. Բեբելը ծաղրանքով էր գրում, թե «կնոջ կոչման վկայակոչումը, ըստ որի նա պետք է տնտեսուհի և դայակ լինի, նույնքան խորհրդաւոր է, որքան արքաների հավերժ գոյության վկայակոչումը միայն այն պատճառով, որ սկսած այն ժամանակներից, երբ գոյություն ունի պատմությունը ինչ-որ տեղում եղել են և արքաներ»[2]։ Ճիշտ է դիտված նաև, որ կնոջ նկատմամբ Ջոհրապի այդպիսի հայացքը հետադիմական էր[3]։ Ապագա մեծ նովելիստը տեղին է նկատում, որ Տյուսաբը չի կարողացել ցույց տալ կանանց «իրավանց և ազատության գործածության վայելուչ եղանակ մը», որ Մայտան իր ազատությունը չի ծառայեցնում մի այնպիսի նպատակի, որից օգտվեր ազգը կամ մարդկությունը։ Բայց նա միանգամայն անարդարացի էր և որոշակիորեն տուրք էր տալիս պահպանողական մտայնությանը, երբ դատապարտում էր վիպասանուհուն՝ կրոնն ու օրենքները խարազանելու համար։ «Կրոնքն, օրենքն, գուցե նախապաշարումներ են, բայց փրկարար նախապաշարումներ...»,—հայտարարում էր նա[4]։

Ջոհրապի քննադատությունը ստիպեց Ռ. Պերպերյանին հանդես գալ երկրորդ անգամ։ Նա, առանց երկմտելու,

---

[1] «Երկրագունտ», *1883, էջ 308, 309։*

[2] *А. Бебель*, Женщина и социализм, стр. 290.

[3] *Տե՛ս Մ. Չյուսյանի «Գրիդոր Ջոհրապ» մենագրությունը, Ե., 1957, էջ 218։*

[4] «Երկրագունտ», *1883, հոկտեմբեր, էջ 310։*

Տյուսաբին բնութագրեց որպես «ազատության անվեհեր ախոյան մը», իսկ նրա պաշտպանած դատը՝ վեհ։ Պերպերյանը հայհոյանք էր անվանում Զոհրապի այն խոսքերը, թե կինը «թշվառության և անիծից» տարր է։ «...Մոր կաթ չէ՞ ծծած այն (Զոհրապը—Ա. Շ.) որ արտասանեց այդ պժգալի ու քամնելի վճիռն. արդյոք չէ՞ խաղացած հրեշտակադեմ անբիծ քրոջ մը հետ, արդյոք չէ՞ սիրած երբեք և պարկեշտ կուսի մ' աչքերուն մեջ չէ՞ կարդացած իր կյանքը, իր երջանկությունը...»[1]։ Պերպերյանը ընդգծում է, որ «հավատարություն չնշանակեր ներկություն» և եզրակացնում է. կինը «իրավունք ունի ընդարձակ դաշտ մը պահանջել յուր կարողության կիրառության»[2]։

Ի պատասխան այս քննադատության, Զոհրապը, ինչպես ինքն էր տարիներ անց խոստովանում[3], «արևելքցիի համառությամբ» հարձակվեց Պերպերյանի վրա և «խարույկի մը պետք կա» հոդվածում պաշտպանեց իր համոզմունքները[4]։

Զոհրապ-Պերպերյան վիճաբանությունում ճշմարտությունը վերջինիս կողմն էր։ Պերպերյանը կնոջը դիտելով «գլխավոր գործի քաղաքակրթության», նույնպես ընկնում էր որոշ ծայրահեղության մեջ, բայց նրա տեսակետներն առաջադիմական էին, քանի որ մերժում էին մարդկային պատմության մեջ կնոջ նշանակության մասին Զոհրապի վնասակար ըմբռնումները։ Ա. Բեբելը բազմաթիվ ֆիզիոլոգիական տվյալների համադրությամբ, գիտական աշխատություններից քաղված փաստերով ցույց է տալիս, որ կանանց մտավոր անընդունակությունների մասին պնդումները չարամիտ հերյուրանքներ են միայն։ «Անտարակույս է,— գրում է նա,— որ տղամարդը և կինը տարբեր սեռի մարդիկ են և որ... նրանց ֆիզիոլոգիական ու հոգեբանական վիճակի մեջ գոյություն ունեն մի շարք առանձնահատկություններ։ Դրանք փաստեր են, որոնք ոչ ոք չի կարող և չի ժխտի, բայց դրան-

---

[1] «Բրկրագուհի», 1883, նոյեմբեր, էջ 340։

[2] Նույն տեղում, էջ 344։

[3] «Մասիս», 1901, № 43, էջ 675—676 («Մանոթ գեմքեր. Ռեքեոս Պերպերյան»)։

[4] Տե՛ս «Բրկրագուհի», 1883, դեկտեմբեր, էջ 363—368։

ցով չի կարելի հիմնավորել տղամարդու և կնոջ սոցիալական և ընտանեկան իրավահավասարության տարբերությունը: *Մարդկությունը, հասարակությունը, կազմված են երկու սեռից, նրանց գոյության և զարգացման համար անհրաժեշտ են»*[1]:

Ճիշտ չէր լինի, սակայն, «Մայտա»-ի դաղափարների նկատմամբ ամեն մի դրական վերաբերմունքից հետևեցնել, թե ավյալ քննադատը առաջադեմ էր: Զոհրապ-Պերպերյան վեճի կապակցությամբ արտահայտվից նաև առևտրական, կրթական դործիչ Հովհաննես Արշակունին[2]: *Նա համակարծիք էր Պերպերյանին, բերում էր մի շարք ավյալներ, վկայակոչում դանադան հեղինակների՝ ապացուցելու համար, թե «կինն կատարելապես հավասար է այր մարդուն»: Տյուսաբի ծրագիրը, որ հետու էր մարտական լինելուց, չափից դուրս «ձախ» էր թվում Արշակունուն: Նա կուզենար դրանից դուրս նետել հասարակության, կրոնի, բարոյականության մասին ասված մեղադրանքները, ազատվել նույնիսկ աշխատանքի պահանջից՝ ընդունելով միայն լուսավորության անհրաժեշտությունը: Վիպասանուհու «ցույց տված միջոցն է պարապելին և ոչ նպատակը»,—հայտարարում էր Արշակունին*[3]: *Այն հարցին, թե որն է իսկական միջոցը, քննադատը պատասխանում է. «Կրթություն, հոս է ահա կնոջ փրկությունն և սովավ միայն կարելի է զերծ մնալ հավետ ընկերական կենաց մեջ ստրկութենե և գերութենե...»*[4]: *Կրթությունը, Արշակունու համոզմամբ, հասարակությանը կտա ոչ միայն «կին բարի, կին պարկեշտ, կին առաքինի», այլև կվերացնի չքավորությունը: Սա զտարյուն լիբերալիզմի ծրագիրն է, կնոջը հյու-հնազանդ դաստիարակելու ծրագիր, որը քիչ ընդհանուր բան ունի Տյուսաբի հայացքների հետ:*

Հետաքրքիր է նաև Բանասերի «Մայտա և ազատություն

---

[1] *А. Бебель*, Женщина и социализм, стр. 302.

[2] «Երկրագունտ», *1884, №№ 1—4: Այս հոդվածը արտատպվեց նաև «Մասիս»-ի 1884-ի 3684—3686 համարներում:*

[3] «Երկրագունտ», *1884, № 1, էջ 30:*

[4] *Նույն տեղում, № 4, էջ 163:*

կանանց» հոդվածը[1]։ Հեղինակը Տյուսաբի վեպը քննում է երեք առումով՝ գրական, վիպական և իմաստասիրականի «Մայտայի գրական բարձր արժեքին վրա ամեն բանասեր համաձայն է»,—ասում է նա՝ սրա տակ, ըստ երևույթին, հասկանալով լեզվական կողմը։ Գալով վիպականին, Բանասերը «Մայտա»-ն համեմատում է «ռուսահայ հեղինակների» գործերի հետ և նկատում, որ դրանց նյութը «բուն ազգային կյանքն առնված լինելով... մեզ համար անհամեմատ ավելի հարգելի են»[2]։ Ինչ վերաբերում է իմաստասիրական կողմին, այստեղ լսում ենք հին կրկներգը. «Մայտա»-ն «կատարելապես անօգուտ եթե ոչ վնասակար» է, կանանց ազատագրության խնդիրն էլ «պարզապես ցնորական» է, որովհետև «օրենքներն անզոր են դիմադրելու բնության պահանջմանց»։ «Երկու սեռերուն համար հավասար իրավունք բնական պատճառներով անկարելի է»[3]։

Մի քանի խոսք վեպի մյուս քննադատների մասին։

Ե. Տեմիրճիպաշյանը, որ առհասարակ մեծ համարում ուներ Տյուսաբի մասին, բաց չթողեց պատեհ առիթը դրվատելու «մտքերն ու սրտերը վրդովող» այդ գործը։ «Մայտան,—գրում է նա,— նոր թվական մը կը բանա Հայոց գրական և ընկերական կենաց մեջ. նոր ձևով վիպասանություն մ՝ է, և նոր գաղափարներ կը հայտնե,—ձև ու գաղափար՝ նոր անտարակույս մեր ազգին համար»[4]։ Տեմիրճիպաշյանը առանձին ջերմությամբ է արտահայտվում գործատուն բացելու Մայտայի առաջարկի մասին։

Թովմաս Եսայանը նույնպես հրապարակեց «Մայտա և քննադատք նորա» վերնագրով մի հոդված, ուր վերամբարձ և խրթին ոճով, հռետորական շնչով, բայց անկեղծ ու անմիջական խոսում է «Մայտա»-ի բարձր արժանիքի մասին։ Նա վեպի՝ քննադատների կողմից չհասկացվելը բացատրում է նրանով, որ «մեր ժամանակին հոգին նորա հոլաթևած

---

[1] Տե՛ս «Մասիս», 1884, №№ 3606—3613։

[2] «Մասիս», 1884, № 3606։

[3] Նույն տեղում, № 3607։

[4] «Գրական և իմաստասիրական շարժում», 1883, տետր Ը, էջ 156։

չարձրությանը և քարոզած սկզբանացը դեռ ընտելացած չէ»[1]։ Նայանի կարծիքով «Մայտա»-ն ազատության համար մղվող պատերազմի «առաջին հայ զինվորն է»։

Պահպանողականությունը, սակայն, չէր նահանջում և նրա հարձակումները գնալով կատաղի բնույթ էին կրում։ «Զարմայր» կեղծանվամբ մի հեղինակ իր «Բարի մայրիկ» հոդվածաշարում մի առանձին գլուխ («Կանանց գործելու եղանակը») նվիրեց «Մայտա»-ին։ Նա այդ վեպը համարում է «ձախող տրամաբանության հետևանք»։ Ջնայած կան «փայլուն էջեր, հոանդուն կրից արտահայտություններ», բայց «գիրքը երբեք չբարձրացներ ճշմարտության և արդա-

րության բարբառը...»[2]։ Զարմայրը ջանում է անջրպետվել Զոհրապից՝ հայտարարելով, որ ինքը համաձայն չէ կնոջ նշանակության մասին նրա դատողություններին, բայց, ըստ էության, գնում է նույն ճանապարհով, երբ գտնում է, որ կնոջ գործունեությունը «յուր մայրական և ամուսնական պարտավորությունքն են»։ Հոդվածագիրը զայրացած է Տյուսաբի վրա, որ նրա վեպի շնորհիվ երևան են գալիս կնոջը տղամարդու նկատմամբ գերազանց դուրս բերելու, աստվածային հռչակելու ծիծաղելի ձգտումներ։ Նման փորձեր, իրոք, արվում էին[3], բայց դրանց մեջ ի՞նչ մեղք ուներ վիպասանուհին, երբ «Մայտա»-ն այդպիսի որևէ հիմք չէր տալիս։ Դեռևս Ռ. Պերպերյանը նախատեսում էր այդպիսի ելքը և ասում էր, որ դրանք կլինեն «աղեկ բաների աղտեղություններ»։

Զարմայրը փորձում էր Տյուսաբին մեղադրել անբարոյականության մեջ՝ գրելով, թե Ռասինի «Անդրոմաքե»-ում «ավելի պարկեշտ կը շարժի սիրո զսպանակը քան ի Մայտա»։ Նույն միտքը, ավելի բացահայտորեն, արտահայտեց մի ուրիշ հետադիմական, «վիպասան» Հակոբ Հաճյանը։ Նա,

---

[1] «Արեւելք», 1884, № 55։

[2] «Ընտանիք», 1884, № 9, էջ 130։

[3] «Աբշալույս արարատյանց»-ում 1883 թվականին ծավալվեց մի բանավեճ, որի մասնակիցները (Գրոթե, Կ. Ս. Անթառամ և այլք) ելնում էին երկու տեսերի հակադրությունից, բայց ոչ նեղդաշնակության, ինչպես Տյուսաբը։

ակնարկելով Տյուսաբին, գրում էր. «Ունեցանք հեղինակուհիներ, որ բոզուքյունը պաշտպանելով կանանց ազատություն քարոզեցին»։ Մանավորեցնելով իր խոսքը, Հաճյանը հայտարարում էր, թե Մայտան «սիրային հարաբերության նկատմամբ միայն ազատություն կուզե»[1]։ Այս արդեն գրողի հայացքների չարաթյուրումն էր։

Վախենալով Տյուսաբի գաղափարների ազդեցությունից, վիպասանուհու հետ բարեկամական զգացմունքներով կապված որոշ մտավորականներ անգամ չէին կարողանում թաքցնել իրենց վրդովմունքը և ավելի կամ պակաս անկեղծությամբ արտահայտում էին այն։ Առաջին հայացքից կարող է թվալ, թե Մաղաքիա վրդ. Օրմանյանը, որ գրողի եղբոր զավակների հայերենի ուսուցիչն էր, դրական է գնահատում «Մայտա»-ն. «Իբր գրական հեղինակություն, իբր իմաստասիրական գործ, և իբր բարոյական գիրք, նախապատիվ դիրք մը կը վայելե ոչ թե ժամանակիս Հայ մատենագրության մեջ, այլև բոլոր ժամանակակից այլալեզու մատենագրության մեջ նշանավոր տեղ մը ունենալու արժանի է»։ Բայց այդ միայն առաջին հայացքից։ Նա, դիմելով Տյուսաբին, սրդոզելով գրում է. «Հայտնած ունիք դուք ևս ինչ ինչ կարծիքներ որք օրինական, կրոնական և քաղաքական խնդրոց կը վերաբերին, և որք ոչ ամենեցուն ընդունելի պիտի լինին»[2]։ Տարիներ հետո, երբ վիպասանուհին կենդանի չէր, Օրմանյանն ավելի անկեղծ էր և Տյուսաբի գաղափարների կապակցությամբ ասում էր. «...Չկարողացա զինքը ի բաց կեցնել յուր դիտյալ վճռականության վտանգավոր համառութեններն»[3]։

Մենք արդեն ակնթարթ ենք ունեցել նշելու, որ Գրիգոր Օտյանը նույնպես վահանյանների մտերիմն էր։ Ինչպես երևում է, Օտյանն իր տարագրության տարիներին նամակագրական կապի մեջ է եղել Տյուսաբի հետ[4]։ 1898 թվա-

---

[1] «Մաղիկ», 1887, № 47, էջ 378 («Ազատություն կանանց»)։
[2] «Մասիս», 1883, 5 օգոստոսի, № 3500։
[3] Մաղաքիա արքեպ. Օրմանյան, Ծոհք և խոսք, Երուսաղեմ, 1929, էջ 429։
[4] Ա. Այվազյանը վիայակոչում է Գր. Օտյանի 1880 թ. հունվարի 4-ին Տյուսաբին գրած նամակի հետևյալ խոսքերը. «Երբ կանայք

կանին մի առիթով Հ. Ասատուրը հայտնում է, որ Օտյանը կանանց հարցի շուրջը նամակ է գրել Տյուսաբին և հրապարակում է դրանից որոշ քաղվածքներ[1]։ Հետագայում հրատարակվեց այդ նամակն ամբողջությամբ[2]։ Այստեղ Օտյանն իրեն ներկայացնում է կանանց դատի պաշտպան, բայց փորձում է արբադրել վիպասանուհու հայացքները լիբերալիզմի ոգով։ «Ամեն բան կընդունիմ,—գրում է նա,—միայն թե բնության հաստատած ներդաշնակությունը չխանգարի ու բնաւանիքը, այն պատվարը քաղաքակրթության, չքայքայի—չքայքայի որ չխզվին մարդկության մեծ ավանդությունքը...»։ Դժվար չէ տեսնել, որ Օտյանի և Տյուսաբի տեսակետները միմյանց ներհակ են. մեկը մտահոգված է «բնության ներդաշնակությունը» չխանգարելով, իսկ մյուսի համար այդպիսի խզումը անտարակուսելի իրողություն է, ելնում է դրանից և ձգտում վերականգնել «բնության ներդաշնակությունը»։

Այսպիսին է ահա արևմտահայ իրականության մեջ «Մայտա»-ի առաջ բերած արձագանքների ընդհանուր պատկերը։

Արևելահայ պարբերականների հակիրճ հաղորդագրություններից իմանում ենք, որ արդեն 1883 թվականի օգոստոսին «Մայտա»-ն ստացվել է Թիֆլիսում։ Ե՛վ «Մշակ»-ը, և՛ «Մեղու Հայաստանի»-ն խոստացան գրախոսել այն[3], բայց նրանցից և ոչ մեկը չանդրադարձավ այդ վեպին։ Միայն «Արձագանք»-ը տպագրեց մի ծանուցում, ուր հանդիպում ենք ուշադրության արժանի այսպիսի տողերի. «Թո՛ղ մեր հայ կանայք և օրիորդները, որոնք մեծ մասամբ արհամար-

---

ու անոնց մեջ Զեկի պես կին մը, կըսկսին հավատալ ու ոգևորիլ բանի մը համար, այն բանը միշտ հաջողած է և պիտի հաջողի. դի երկու ամենակարողություն կը ճանչնամ այս աշխարհիս վրա. սերն ու հանճար և Դուք երկուքն ալ ունիք» («Մամուլ», 1882, № 905, էջ 159)։ Մեզ չհաջողվեց գտնել այդ նամակը։

[1] Տե՛ս «Մասիս», 1898, № 18 («Մեր կյանքեն»)։

[2] Տե՛ս «Բյուզանդիոն», 1908, № 3645։

[3] Տե՛ս «Մշակ», 1883, № 108 («Ներքին լուրեր»), «Մեղու Հայաստանի», 1883, № 82 («Տանը լուրեր»), «Արձագանք», 1883, № 34, էջ 475 («Ներքին տեսություն»)։

վացին հաղորդումներ, որոնք մատնում էին Տյուսաբի ստեղծագործական հետագա ծրագրերը։ Այսպես, «Մասիս» լրագրի 1883 թվականի օգոստոսի 23-ի (№ 3514) «Ազգային լուրեր»-ում կարդում ենք. «Ազգային դրագիտուհի Աղն. Տիկին Սրբուհի Տյուսաբ հրատարակության հանձնած է երկրորդ վեպ մը, Մայտայի մեկ ու կես ընդարձակությամբ, որ կրնա համարվիլ առաջնույն շարունակությունը դաղափարաց կարգով, թեև ոչ պատմության կարգով, որ այս անգամ նամակաձև չէ»։

Այն տեղեկությունը, թե «Մայտա»-ի լույս ընծայումից արդեն 2—3 ամիս անց Տյուսաբը տպագրության է ներկայացրել իր «երկրորդ վիպը», իրականության չի համապատասխանում։ Ճշմարտությունն այն է, որ վիպասանուհին այդ շրջանում միայն աշխատում էր նոր վեպի վրա։ Այդ են հաստատում Ա. Արփիարյանի և «Նոր-Դար»-ի թղթակից Ալաքի վկայությունները։ Արփիարյան-Հրազդանը, որ նույնպես համոզված էր, թե «Մայտա»-ն հեղինակի առաջին քայլն է, իր քրոնիկներում գրել է. «...Անգամ մը որ Տիկին Տյուսաբ ստեղծեց առ մեզ ընտանեկան կյանքի վիպասանությունը, չկրնար գործադուլ ընել։ Ճաշելով ախորժակը կավելնա, ճաշեցինք Մայտան և մեր ախորժակը նոր գոհացում կը պահանջե։ Տիկին Տյուսաբ իր փափկասրտությանը մեծ ապացույց մը կուտա պատրաստելով մեզ նոր վեպ մը զոր արդեն ավարտած է և քիչ ատենեն տպագրության կը հանձնվի»[1]։ Ալաքը ևս նշում էր. «Մայտայի հեղինակուհին՝ յուր քննադատից ի պատասխան Սաթինիկ անվամբ նոր երկասիրություն մ՝ ալ գրեր է, որ պիտի հրատարակվի»[2]։ Ավելի հավաստի տեղեկություն ենք գտնում «Արեվելք»-ի հետևյալ ծանուցման մեջ, որտեղ ճշտված է վեպի վերնագիրը. «Կը լսենք թե Տիկին Սրբուհի Տյուսաբ իր հրատարակչին՝ Զենճիրճյան էֆենտիի հանձնած է յուր երկրորդ երկն, Սիրանույշ անուն, որ Մայտայի կրկին ընդարձակությունն ունի։ «Սիրանույշը» հրապարակ կելնե գրեթե մեկ ամիսեն... Ոմանք փափագ հայտնած են նորա հրատարակ-

---

[1] «Արևելք», 1884, № 3։

[2] «Նոր-դար», 1884, № 32 (<նամակ Թուրքիայից»)։

չին թևերթ առ թևերթ ստանալու նոր ծրկն, չսպասելու համար ամբողջին տպագրմանն[1]։ Շուտով «Երկրագունտ»-ը հայտնեց, թե արդեն մամուլի տակ է Տյուսաբի «Սիրանույշ»-ր[2], ապա և տպագրեց վեպի առաջաբանր[3]։ Իսկ վեպը լույս ընծայվեց ավելի ուշ, 1885 թվականի առաջին կեսին[4], թեև նրա տիտղոսաթերթի վրա նշված է «1884» թվականը։

«Սիրանույշ»-ը նույնպես ունի առաջաբան։ Այստեղ հեղինակը շարադրում է իր երկի գաղափարը. «Նպատակ ընտրած եմ դարձյալ ուսումնասիրել և դատապարտել ընկերական անիրավությանց մեկ քանիներն որք զկին կը ճնշեն ամուսնական պայմանաց ներքև» (էջ 167)։ Տյուսաբը մեծ նշանակություն էր տալիս ամուսնությանը, քանի որ «ամուսնությամբ ընտանիքը կը կազմվի, ընտանյոք՝ ընկերությունը»։ Վերջին հաշվով երջանիկ ամուսնությամբ է պայմանավորված հասարակական բարեկագրությունը։ Գրողը տեսնում է, որ ավանդական հայ ընտանիքը կազմալուծվում է, առևտրական հարաբերությունները ներխուժում են ընտանիքի ոլորտը, և ամուսնական առագաստի տակ ծվարում են այլասերումն ու անառակությունը։ Դրա պատճառն անսեր ամուսնությունն է. «...Այսօր ամուսնություններն առավել փառասիրության և վաճառականության խնդիր դարձած են քան թե մտերմական հոդերու»,—եզրակացնում է նա։ Ավելորդ է ասել, որ Տյուսաբը այս դեպքում ևս նկատի ունի բուրժուական ընտանիքը։ Վիպասանուհին առաջարկում է իր սոցիոլոգիական ծրագիրը. փրկել դժոխք դարձած «ամուսնական հարկը», փրկելու համար նաև հասարակությունը։ Տյուսաբը նորից հարձակվում է հասարակության և օրենքների վրա, որոնք անբարոյականության առանձնաշնորհումներ են վերապահում տղամարդուն։ «Ընկերային բարուց գոյությունը միայն մեկ սեռին բարոյականությամբն անհնարին է հաստա-

---

[1] «Արևելք», 1884, № 204 («Ազգային լուրեր»)։

[2] Տե՛ս «Երկրագունտ», 1884, հոկտեմբեր, էջ 488։

[3] Նույն տեղում, նոյեմբեր, էջ 522—527։ Այս առաջաբանն արտատպվեց նաև «Արևելք»-ում (1884, № 296)։

[4] Լույս ընծայման ազդը տե՛ս «Գրական և իմաստասիրական շարժում», 1885, հունիս, էջ 116 («Նորատիպ մատյանք»)։

տել, քանի որ երկու սեռից ջանից միությամբն է, և ի նույն ընտիր կետ նկրտելով է որ ընկերային գործին գեղեցիկ ամբողջությունը կը կազմվի»,—գրում էր Տյուսաբը՝ կրկնելով «Մայտա»-ի ծանոթ մտքերը (էջ 168)։ Նա դատապարտում է «բազում հեշտասեր հարուստներին», որոնք անտակուբյամբ են անցկացնում իրենց կյանքը, բայց իրենց կանացից պահանջում են սեր ու հարգանք։ «Սիրվի՛լ, հարգվի՛լ,—բացականչում է գրողը,—զարմանալի հավակնություն, հիմարական երազ»։ Տյուսաբն առաջարկում է իր հայեցակետը. սեր ոչ թե ոսկով, այլ փոխադարձ զգացմամբ։ Ահա վիպասանուհու, իր իսկ խոսքերով ասած, «փոքրիկ ու համեստ ծրագիրը»։ Եթե «Մայտա»-ն լոկ «գաղափարական» ստեղծագործություն էր, իսկ վիպական պատմությունը մի պայմանական միջոց՝ մտքերն «ախորժելի» ձևով արտահայտելու համար, ապա «Սիրանույշ»-ում հեղինակը արդեն որոշակի խոստովանում է, որ ինքը ջանացել է «Պոլսեբնակ հայոց ընկերային պատկերին դույզն մի մասն նկարագրել»։

Արդ, ինչպես են իրագործված այս խնդիրները։

«Մայտա»-ում Տյուսաբը անում է Կոմսի հետ կապված սիրային մի տխուր պատմություն. Կոմսը և գեղեցկուհի Քոռին սիրում են միմյանց, բայց աղջկա հայրը, իր վեց զավակների «ապագան փրկելու» համար, նրան նշանում է մի հարուստ մարդու հետ։ Քոռին չդիմանալով սիրած տղամարդուց բաժանվելու դառը կորստին, հարսանյաց հանդեսի օրը· ինքնասպան է լինում։ Այս ռոմանտիկ պատմության գաղափարական միտումը ակներև է. դրանով դատապարտվում են անազատ, հարկադրական ամուսնությունները։ Սակայն այդ միտումը «Մայտա»-ում ընդգծված չէր, իսկ այդ սիրո պատմությունը փաստորեն չէր առնչվում վիպական գործողություններին։ Ըստ երևույթին այդ զգացել է նաև հեղինակը։ Ուստի նա «Սիրանույշ»-ում ոչ միայն առաջատար գաղափար դարձրեց «սիրտն զգացմամբ կը շահվի և ոչ թե ոսկով» սկզբունքը, այլև, որպես սյուժետային հենք, օգտագործեց հիշատակված սիրային պատմությունը՝ հարստացնելով ու «տեղայնացնելով» այն։

Սիրանույշն ու Երվանդը նույնպես ուժգին ու փոխադարձ

սիրով են կապված։ Աղջկա հայրն ունևոր է, իսկ տղան որբ է ու աղքատ։ Երվանդը գիտե, որ առանց դրամի և հասարակական պատշաճ դիրքի անհնար է ամուսնանալ Սիրանույշի հետ, ուստի մեկնում է Իտալիա՝ կատարելագործվելու նկարչության մեջ։ Բայց իրականությունը շտապում է խախտել նրանց ծրագրերը։ Պետական բարձրաստիճան պաշտոնյա Դարեհյանը, հմայված Սիրանույշի արտաքինով և վայելուչ շարժուձևով, որոշում է կնության առնել նրան։ Սիրանույշն ստիպված է ենթարկվել հոր կամքին և դառնալ Դարեհյանի կինը։ Այդ ամուսնությունն ավարտվում է Սիրանույշի մահվամբ։ Փշրվում է նաև Երվանդի կյանքը. նա խելագարվում է։

Մենք տեսանք, որ «Մայոտա»-ում վիպական պատմությունը, վերջին հաշվով, չէր բխում առաջաբանից, իսկ «Սիրանույշ»-ում այուժետային սխեման անգամ հաստատում է առաջաբանում՝ հեղինակի հռչակած դրույթները. սերը առ ու ծախի առարկա է, բռնի ամուսնություններն ու դասային անհավասարությունները խորտակում են սերն ու ազնիվ մարդուն։

Վիպասանուհին չթաքցրած հակակրանքով է խոսում Կ. Պոլսի ամիրայական-ազնվական խավի մասին, որի կյանքին նա քաջ ծանոթ է։ «Այս Ամիրաները,—գրում է նա,—բռնավորաց դաս մի կը կազմեին, որոնց կամքերն օրենք էին, և որոշումները՝ վճիռ, ներքին ընտանեկան կենաց, ինչպես և ազգային գործոց մեջ։ Անիրավություն, բռնաբարություն, կողոպուտ, ըստ հարկին զամեն ինչ կը գործեին իրենց ազդեցությունն գործադրելու և կամ հարստությունն ավելցնելու մտոք... Ամիրաներն ազգին շահերուն ի նպաստ կը գործեին, երբ իրենց անձնական շահուց և կամ կառավարության օրինաց վնասելու երկյուղ չկար...» (էջ 179)։ Սիրանույշի հայրը՝ պ. Հայնուրը, ամիրայական այդպիսի գերդաստաններից մեկի շառավիղն է։ Նա ընտանիքում բռնակալ է, որի կամքը օրենք է բոլորի համար, իսկ ամեն մի դիմադրություն՝ ոճիր ու ըմբոստություն։ Հայնուրը սիրում է իր դստերը, բայց երջանկության մասին նրա պատկերացումները բոլորովին այլ են։ Երբ Դարեհյանը խնդրում է Սիրանույշի ձեռ-

քը, Հայնուն ուրախությունից քիչ է մնում «հիմարանա», և իսկույն համաձայնվում է՝ առանց դատեր կամ կնոջ կամքը հարցնելու։ Ուրիշ ի՞նչ էր նրան պետք. Սիրանույշը «հարստության և մեծության մեջ պիտի լյուղի», իսկ ինքը դառնալու է հասարակության մեջ իր հարստությամբ և բարձր տիտղոսներով նշանավոր մարդու խնամին։ Սերը, փոխադարձ կգացումը միայն «ոչինչ խոսքեր են»։ «Ծրբ կին մի հարստությամբ ու փառք կապրի ի՞նչ կլինա առավելն փափագիլ»,—զարմացած հարցնում է նա։

Ահա և Դարեհյանը։ Նա ապրել է շվայտ կյանքով և իր ննպատ հարստությունը վատնել խրախճանքներում ու գիշերաեր կանանց վրա։ Սիրանույշի աննման գեղեցկությունը, պարզությունն ու առաքինությունը զգլխիչ ազդեցություն են ունենում մինչև ուղն ու ծուծը ապականված այս գեղեցիկ երիտասարդի վրա։ Նրա հոգու խորքում արթնանում է վաղուց նիրհած մի զգացում. մաքրվելու, բարոյականանալու ինչ որ տարտամ փափագ. «մտացը մեջ հեղաշրջում եղավ, ամուսնական հարկը իբրև դրախտավայր փայլեցավ աչացն առջև, ու Սիրանույշ՝ իբրև էության իշխանուհին» (էջ 207)։ Սա հոգեբանական նուրբ դիտողություն է, և Տյուսաբն, այս առումով, կանխել է Տիգրան Կամսարականին, որի Արամ Նահապետյանը «վարժապետին աղջիկը» վեպում (1888) նույն շարժառիթներով է ամուսնանում Աստղիկի հետ։ Բայց հեղինակը հարազատ է մնում իրականությանը և ցույց է տալիս, որ այդ զգացումը վաղանցիկ է։ Տիրանալով Սիրանույշին, Դարեհյանը շատ շուտով զգում է, որ իր կինը չունի այն «բազմադիմի հրապույրները», ինչ իր նախկին սիրուհին։ Ո՛չ, համեստությունն ու առաքինությունը ձանձրացնում են «ապականյալ աշխարհի դյուցազնին» և նա վերադառնում է իր նախկին կյանքին, գնում դեպի ժանեթը, որ նրա համար հազար ու մի հրապույրներ էր թաքցրել։ Դարեհյանն ունի իր բարոյական ըմբռնումները։ Նա ազատ է ամեն ինչում, անգամ կարող է սիրուհու հետ շնանալ կնոջ ննջասենյակում և եթե բռնվի էլ, փույթ չէ. թանկարժեք ընծաները կարող են ջնջել ամեն մի վիրավորանք։ Այդպես էին սովորեցրել նրան։ Բայց եթե կնոջն են ամբաստանում «դավա-

ճանության» մեջ, ապա Դարեհյանն իրավունք ունի պատիվ պահանջել։ «Գիտե՞ս դու արդյոք թե այր մարդն ազատ է և թե անոր վրայեն արատը կը սահի աներևույթ ըլլալով, մինչ կնոջ վրա անջնջելի կերպիվ կը դրոշմվի»,—ասում է նա Սիրանույշին (էջ 345)։ Տյուսաբը ցույց է տալիս, որ իր «տոհմային ծննդյան ազնվականությամբ և ժառանգական հարըստության առավելությամբն սիգացող» Դարեհյանը մի ողորմելի մորթապաշտ է։ Երբ նա ծանր հիվանդ էր, Սիրանույշը նրան անձնվիրաբար խնամում էր։ Բայց ահա հիվանդանում է կինը և ամուսնու ամբողջ հոգատարությունը արտաքին ցույցերից այն կողմ չի անցնում. «Մեկ սենեկեն մյուսը կանցներ, կը պոռար, կը կանչեր, ամենուն դեմ կը նեղսնար, անկեղծապես կը փափագեր փրկել զյուր ամուսին; առանց սակայն որևէ վտանգի զանձն ենթարկելու»։ Իսկ երբ մահանում է Սիրանույշը, Դարեհյանը նրան վերջին հրաժեշտն իսկ չի տալիս՝ պատճառաբանելով, թե «յուր սիրտն անկարող էր սիրելի արարածի մի ցուրտ մարմինը տեսնելու»։ «Արժանավոր առարկություն անձնապաշտի, որ կուզե խնայել անձին որևէ հուզմունք զոր կարտադրե մեռելոց տեսարանը»—կծու հեգնանքով ավելացնում է հեղինակը (էջ 420)։

«Սքանչելի էր նա յուր մելամաղձոտ կապույտ աչերովը, ոսկեթել մազերովը, թափանցիկ ճերմակ մորթովը, դեմքին գծերուն կանոնավորությամբը և հասակին բարձրությամբը»,—այսպես է ներկայացված Սիրանույշը վեպում։ Տյուսաբն իր հերոսուհուն, մինչև Դարեհյանի հետ ամուսնացնելը, խնամքով նախապատրաստում է։ Նա մեծացել է մոր խնամատարությամբ, ծաղիկ հասակից սիրել գիտությունն ու առաքինությունը, ատել կեղծիքն ու նախապաշարումները։ Նա տեսել է, որ կրոնը «հուսահատ մարդկության հույսն ու ապավենը» լինելու փոխարեն «անարգ գործիք եղած էր կրոնականաց շատերուն ձեռքը, անոնց անձնական շահերը ապահովելու, խղճերը մոլորեցնելու, մարդիկ թալլելու, և մարդկության մեջ երկպառակության, թշնամանաց, ոխակալության սերմերը ցանելու և աճեցնելու համար»։ Սիրանույշը հավատարմության երդում էր տվել Երվանդին, բայց երբ

հայրը անարգում է նրան՝ «բոկոտն նկարչին» սիրելու համար և պահանջում կույր հպատակություն, նա փորձում է ընդդիմանալ։ Սիրանույշը մտածում է ոչ այնքան իր, որքան Երվանդի մասին։ «Հայրս երկու սիրտ պիտի ջախջախե, երկու կյանք պիտի մարե։ Փույթ չէր եթե ինձ միայն նահատակեր։ Բայց նահատակել զԵրվանդ, անոր հոգին պատառել, հանճարույն հուրը մարել, ո՜հ, ո՛չ, ո՛չ, անկարող եմ զայդ գործելու» (էջ 215)։ Նա, ինչպես Մայտան, պատրաստ է փակվել վանքում, միայն չուրանալ Երվանդին։ Բայց Սիրանույշը երդմնադրուժ է դառնում։ Չկարողանալով համոզել ամուսնուն և տեսնելով դատեր տառապանքները, ծանր հիվանդանում է տիկին Հայնուրը։ Սիրանույշը դրա պատճառը համարում է իրեն և նախընտրում դառնալ «սեփական սրտի դահիճը»։ «Մա՛յր, պիտի ապրիս, որդիական ձոհս պիտի փրկե զքեզ,—ասում է նաև—Ապրե՛ ու ես կուխտեմ առաջի երկնից ձոհելու քեզ սիրտս ու համայն էությունս, այսինքն ձոհելու քեզ Երվանդս, կուխտեմ, մա՛յր, կը լսե՞ս»։ Եվ նախանամությունը օգնության է հասնում, ապաքինվում է մայրը, իսկ «որդիական սիրո ծաղիկներով զարդարյալ» սիրո մարտիրոս Սիրանույշը դառնում է տիկին Դարեհյան։

Սիրել մեկին և ամուսնանալ ուրիշի հետ՝ սա ճշմարտացիորեն է արտացոլում իրականության տենդենցը (հիշենք Գ. Սունդուկյանի Անանուն «էլի մեկ ձոհ»-ում, Ա. Արփիարյանի Սաթենիկին «Դատապարտյալը» նովելում), և Տյուսաբն այդ հիմնավորել է յուրովի՝ ռոմանտիկորեն ընդգծելով իր հերոսուհու որդեսիրությունը։ Բայց զարգացած և ազատախոհ օրիորդը, որի «արյունը կեռայր նշմարելով կանանց ողորմելի և նվաստ դիրքն ընկերության մեջ» (էջ 182), ինքը նույնպես չի օգտվում իր «բնական իրավունքից» և շարունակում է կենակցել ամուսնու հետ՝ մնալով նրա անբարոյականության ականատեսը։ Սիրանույշի համեմատությամբ հասարակականորեն շատ ավելի ակտիվ էին Շիրվանզադեի Վարվառա Մինաևնան («Արամբին»), Սունդուկյանի Մարգա-

րիտը («Ամուսիններ»)[1], կամ Արփիարյանի Սաթենիկը («Դատապարտյալը»), որոնք քաջություն ունեցան թողնել իրենց անբարոյական կամ անհամապատասխան ամուսիններին։ Բայց վիպասանուհին այս դեպքում ևս փորձում է ռոմանտիկորեն արդարացնել հերոսուհուն։ Սիրանույշը Դարեհյանի տանը մնում էր մորը չվշտացնելու համար։ Նա այդպես էլ ասում է ամուսնուն. «Քու հարկիդ ներքև պիտի բնակիմ մորս կարևեր սրտին նոր հարված մի չտալու համար» (էջ 288)։ Սա, այսպես ասած, գեղարվեստական պատճառաբանությունն է։ Բայց կար նաև այլ՝ հիմնական պատճառ։ Տյուսաբը դեռևս վաղաժամ էր գտնում ապահարզանի պահանջը։ Սակայն այդ մասին հետո։

Սիրանույշը թույլ բնավորություն չէ։ Նա անկարող է ֆեղծել և Դարեհյանից չի թաքցնում դեպի Երվանդն ունեցած սերը։ «Երբեք զգալ չեմ ձևացուցած քեզ նկատմամբ սեր մի զոր չեմ զգացած,—նետում է նա ամուսնուն,—և դու բնավ չանադիր չեղար սրտիս վիճակը ճանաչելու։ Իբրև կարասի մ՝ ընտրեցիր իմ անձս արտաքին ձևերեն դատելով զիս, և իբր կարասի մեկ կողմ թողուցիր երբ բավականացար» (էջ 346)։ Սիրանույշը բողոքում է հասարակության դեմ, որ իրավունք չի տալիս իրեն բաժանվել անառակ ամուսնուց։ «Դո՛ւ,—զայրալից ասում է նա,—ի լուր աշխարհի գայթակղական կյանք մի՛ կը վարես, և սակայն ընկերությունը քեզ դատախազ չկանգնիր, ամենուրեք պատվով կընդունվիս ու կը մեծարվիս» (էջ 343)։ Սիրանույշն ամուսնու նկատմամբ միայն պարտավորություն է զգում։ «Ողջույն պարտավորությունդ իմ, ո՛վ ցուրտ բառ երբ սիրն չէ զայն առաջ-

---

[1] Հ. Աասատուրը առաջինն է նկատել այն ընդհանուրը, որ կա «Սիրանույշ»-ի և «Ամուսիններ»-ի միջև։ Նա մի առիթով խոսելով Գ. Սունդուկյանի կատակերգության մասին գրել է. «Նյութը նոր չէ նույնիսկ մեր գրականության մեջ։ Տիկին Տյուսաբ իր Սիրանույշից մեջ նույն խնդիրը հուզած է և գրեթե նույն պայմաններուն մեջ կը ներկայացնե մեզ կին մը, որուն կանխրավե ընկերությունը՝ իր անխիղճ դատապարտությամբ։

...Տիկին Տյուսաբ թեև իր պաշտպանած թեզը ծայրահեղության տարած է, սակայն շատ կարևոր դիտողություններ ալ ունի, որոնց արդարությունը կարելի չէ ուրանալ» («Մասիս», 1898, № 18)։

նորդողը»։ Լինելով աննահմանորեն բարի, Սիրանույշը խնամում է Դարեհյանին՝ մոռանալով, որ նա իրեն «լքման, նախատանաց ու դժբախտության մատնող անձն էր»։ Այդ մարդասիրությունը, «այլոց դժբախտությունը մեղմելու» պատրաստակամությունն էլ նրան գերեզման է տանում։ Եվ թեև այդ մահը պատահական էր, բայց տրամաբանական վախճանն էր նրա ապրած կյանքի։ Հեղինակը իր հերոսուհու ռոմանտիկ կերպարն ամբողջացնում է Օրվանդի հետ նրա ունեցած փոխհարաբերությունները նկարագրելիս։ Սիրանույշը հաճախ է արտասվալից աչքերով ծնրադրում այն հովանոցի առաջ, ուր վերջին հրաժեշտն էր տվել Օրվանդին, ուշագնաց է լինում նրա նամակը կարդալիս։ Սիրանույշն ամուսնանալուց մեկ օր առաջ, երբ անձը դեռևս ազատ էր, նվիրվում է Օրվանդի հիշատակին, խոսում նրա հետ «իբրև սիրահարի», նրան ուղղում մի նամակ, ուր այսպես է նկարագրում իր հոգեկան դրաման. «Անցյալ տարի հոգիս արև մի կը կրեր, և այս տարի մութ խավարը։ Ժպտուն հույսն էի, մահահրավեր անհուսությունն եմ։ Ապագան մերն է, կը գոչեի քեզ ցնծալով, արդ անցյալը կորոնեմ սարսափելով։ Կը փափագեի արևը փութացնելու յուր շրջանին մեջ, արդ կյանքրս կուտամ զայն կասեցնելու համար... Բերանս մնաս բարյավ կը մնչե քեզ, մինչ հոգիս անունդ կը հոլովե անդադար։ Սիրե՛լ էութեյանս բոլոր զորութեյամբն և հրաժարիլ կամովին ամեն բանե որ զիս կը ցնծացնե, կոգևորե, կապրեցնե, ահա՛ կատարածս, ո՛վ Օրվանդ»։

Ամուսնանալուց հետո էլ Սիրանույշը հավատարիմ է մնում Օրվանդի հիշատակին։ Նա թերթում է այն գրքերը, որ մի ժամանակ նայել են Օրվանդի հետ։ Սիրանույշի համար նվիրական է անգամ այն սպիտակ շրջազգեստը, որի վրա Օրվանդի արյան կաթիլներն էին մնացել, և երկյուղածությամբ համբուրում է դրանք, հրաժարվելով, սակայն, սիրած տղամարդուն հանդիպելուց։ Դրանով նա մտածում է ոչ թե Դարեհյանի, այլ իր արժանապատվության մասին։ Սիրանույշի միակ մխիթարությունն այն է, որ մահից առաջ պետք է տեսնի Օրվանդին...

Սիրանույշի ճակատագրին վիպասանուհին հակադրում է

Երվանդի քրոջ՝ Զարուհու ճակատագիրը։ Նրա ամուսինը՝ Հրանտը, անկարող է ստեղծել այն ճոխ ապրուստը, ինչ Թաբեհյանը։ Բայց նրանք երջանիկ են, քանի որ սիրում են միմյանց։ Իսկական երջանկությունը դրամի մեջ չէ. այս միտքը լավ է արտահայտված Հրանտի հետևյալ խոսքերում. «...Դիտե՛, Զարուհի, ինչո՞ւ մենք երջանիկ ենք. վասնզի մեր մեջ հավասարություն կա, վասնզի մենք երկուքս ալ համեստ ընտանիքե ենք, երկուքս ալ անարծաթ՝ իրարու վրա կը հենունք, զիրար կը պաշտպանենք, զիրար կը խնամենք, իրարու վրա կը գուրգուրանք» (էջ 230)։ Հրանտը ամուսնու կատարելատիպն է։ Նա ընդառաջում է կնոջ ցանկությանը և թույլ տալիս նրան աշխատել, նպաստել ընտանեկան բարեկեցությանը։ «Սիրանույշը» վեպից ավելի պարզ պատկերացում ենք կազմում Տյուսաբի աշխարհայացքի մասին։ Կինը կարող է դառնալ հասարակության լիիրավ անդամը միայն այն դեպքում, եթե լավ մայր ու ամուսին լինելու հետ մեկտեղ ապրի հանրային կյանքով։ Զարուհին այդպիսին է. նա որպես «ամուսին երանելի էր, մայր սիրակաթ և պիտանի անդամ ընկերության» (էջ 282, ընդգծումը մերն է—Ա. Շ.)։ Նույն միտքը ավելի որոշակի արտահայտված է դրոշի օրագրությունում. «Ինչո՞ւ գոյություն ունենա կինը հանրային կյանքեն հեռացնելու կանխորոշ ոգին»,—գրել է նա[1], և այդ անկասկած լավ կողմից է բնութագրում նրա աշխարհայացքը։

Երվանդը վեպում, ավելի ճիշտ Կ. Պոլսում՝ Սիրանույշի շրջապատում, քիչ է երևում։ Բայց հեղինակի համակրանքը նրա նկատմամբ ակներև է։ Նա Սիրանույշի գաղափարական ուսուցիչն է եղել, ինչպես Սիրան՝ Մայտայի։ Երվանդի ազդեցությամբ է Սիրանույշը եկել այն համոզման, թե «սիրո մեջ աղքատ ու հարուստ չկա»։ Ինքը Երվանդը ազնվականությունը համարում է «ժառանգություն մ՝ արյան, դափնյաց և ամոթո»։ «Ազնվականությունը,—ասում է նա,—դժոխային խտրոց մ՝ է ընդ մեջ զավակաց ընկերային մարմնոցն. հարստահարության ամենակարող ձեռքն է որ տկարը կը ջախջախե, արդարությունը կսպաննե, և որ կարհամարհե

[1] Թեոդիկ, *Ամենուն տարեցույցը*, Կ. Պոլիս, 1923, էջ 74։

տաղանդը, արժանավորությունը ու պատվակիր աղքատությունը։ Ազնվականությունը իրեն կը սեփականե փառքն ու հարստությունը՝ ոամկին գոչելով. «Դու պիտի ունենաս անշքությունը ի բաժին, ու հոգնաբեկ ճակտիդ քրտինքը իմ կենաց վայելքը պիտի պատրաստեն» (էջ 187)։ Օրվանդը «հաճեատ գործավորի» զավակ է և պատրաստ է հպարտանալ իր ծագմամբ։ Բայց սիրած աղջկա հանդեպ ունեցած սերը մղում է նրան հաշվի նստել պ. Հայնուռի ըմբռնումների հետ։ Նա վարդագույն երազներով է թողնում Կ. Պոլիսը՝ Սիրանուշից ժամանակավոր անջատումը դիտելով անխուսափելի միջոց երջանկության հասնելու ճանապարհին։ Օրվանդը նույնպես ռոմանտիկ բնավորություն է, որն ապրում է միայն իր սիրով։ Սիրանուշի ամուսնության լուրը նրան ապշեցնում է։ Օրվանդին թվում է, թե ինքը ընկղմվել է խոր քնի մեջ և ցնցում է մարմինը՝ համոզվելու համար արթո՞ւն է արդյոք։ Երբ Սիրանուշն առաջարկում է այլևս չհանդիպել իրեն, նա մակույկով նետվում է ծով և, խաղաղ լինի այն թե փոթորկոտ, անցնում է սիրուհու ծովահայաց պատուհանի առջևից՝ Սիրանուշին գոնե հեռվից տեսնելու ակնկալությամբ։ Կյանքը Օրվանդի համար դառնում է աննպատակ և խելագարությունը նրա միակ փրկությունն էր։

«Սիրանուշ»-ի առաջաբանում Տյուսաբը խոստովանում է, որ նա վեպ գրելիս այս կամ այն կերպ նկատի է ունեցել նաև եվրոպական կյանքի հանգամանքները։ Նա դեմ է ազգային նեղփակվածությանը, սահմանափակությանը, դեմ է որ «մեն մի ազգ կղզիանա մարդկության օվկիանին մեջ»։ Սա ընդհանրապես ճիշտ դրույթ է, բայց խնդիրն այն է, որ «եվրոպական աշխարհեն» առած նրա ոչ բոլոր կերպարներն են օգնում վեպի գաղափարական բովանդակության բացահայտմանը։ Օթե Ճուլիայի կերպարով հեղինակը ձգտում է ցույց տալ Օրվանդի հավատարմությունը Սիրանուշի սիրույն, ապա Լեոնարտոյի (որ մահանում է դատեր մահից հետո) և Վիրճինիոյի (որ մխիթարություն է որոնում հոր և քրոջ մահվան պատճառ դարձած Օրվանդի մեջ) ռոմանտիկ կերպարներն ավելորդ են և հետապնդում են «ընդհանուր պատկերն առավել հետաքրքրական» դարձնելու միտումը միայն։

Ուշագրավ կերպարներ են Ժաննեթն ու Ալֆոնսը։ Արդեն սակից, որ արձակագիրը ելնում էր այն պատկերացումից, որ ժողովուրդների կյանքում ընդհանուր շատ բան կա և իրեն ազատ էր համարում օրինակներ ու տիպեր քաղել այնտեղից, ուր նրանք գտնվեն, «բավական է, որ ճշմարիտ ըլլան»։ Ավելի պարզաբանելով իր միտքը, Տյուսաբը գրում է. «Հոռի տիպն գաղղիացիներեն քաղելուս պատճառն այն է, որ մեր մեջ բարեբախտաբար անբարոյականությունը հետին կետն հասած չըլլալոյի մինչև եղեռնական տրամերը սովորական բանի վերածելու աստիճան. ընտրեցի անձինքս գաղղիացվոց այն ստորին մասին մեջե ուր անբարոյականության աղետալի օրինակներ կը վխտան» (էջ 171—172)։ Այստեղ հետաքրքիրն այն է, որ Տյուսաբը մտահոգված է իր կերպարների ճշմարտացիությամբ ու բնականությամբ, մի հանգամանք, որի նկատմամբ նա անփույթ էր «Մայտա»-ում։ Ժաննեթն ու Ալֆոնսը «Սիրանույշ»-ում արտաքուստ հիշեցնում են Հերիգային ու Պետրոսին։ Վերջիններիս էությունը «արատավոր սերն» էր, իսկ Ժաննեթն ու Ալֆոնսը կյանքի մարդիկ են։ Ժաննեթը ոչ Դարեհյանին է սիրում և ոչ էլ դեպի Սիրանույշն է լցված անասնական ատելությամբ։ Նրա համար Դարեհյանը պարզապես մի «ոսկվո հանք» է, որը հարկավոր է ըստ հնարավորին երկար արդյունահանել՝ օգտագործելով և՛ սեփական մարմնի բարեմասնությունները և՛ «չար միտքը»։ Ալֆոնսն իր հերթին գործիք է դառնում Ժաննեթի ձեռքին՝ վերջինիս տարփածուին կողոպտելու դիտավորությամբ միայն։

Այսպես, ուրեմն, խախուտ են անսեր ամուսնություններով կազմված ընտանիքները. դասային հակադրությունների վրա հիմնված հասարակության մեջ «երջանիկ ամուսնությունն ոսկին ու պատիվներն են, և ոչ թե մարդը, ոչ թե բանականությունը, ոչ թե բարի հանգամանքն», և «ոսկին ու շքանշանները» չեն սրբում արտասուքն ու ամոքում վշտերը (էջ 263)։ «Սիրանույշ» վեպը հավաստում է այդ ճշմարտությունը։ Բայց ինչպե՞ս անել, որ ամուսնությունը դառնա «երկու հոգիների մեջ սուրբ դաշնադրություն» և ոչ «նվաստ ատ և տուր»։ Արդյոք ապահարզանը դրա լուծումը չէ՞։ Հեղի-

նակը Հրանտի և Երվանդի վեճում անդրադառնում է այդ խնդրին։ Հրանտը նախազգուշացնում է, թե Սիրանույշի հետ Երվանդի տեսակցությունները կարող են վերջանալ նրանով, որ Դարեհյանը կնոջը կուզարկի հոր տուն։ Իսկ Երվանդը զարմացած հարցնում է. «Եվ դու պատի՞ժ կը համարես ընթացք մի որ զիս մարդկանց երջանկագույնը կընե» (էջ 360)։ Ինչո՞ւ չլուծել այնպիսի ամուսնություն, որ միայն «վնասաբեր արդյունք կարտադրե», ու «հուսահատ և վշտալի հոգիներու» ազատություն չտալ (էջ 363)։ Բայց Հրանտը պատասխանում է, թե «հայերուն բարքերը համեմատաբար մաքուր են տակավին, և ընտանեկան կյանքը գոհացուցիչ». չատի նրանք կուրորեն չպետք է հետևեն եվրոպացիներին՝ դեղ փնտրելով «հիվանդության մեջ որ դեռ սպառնական դիրք մ՝ առած չէ» (էջ 364)։ Թեև Սիրանույշի ճակատագիրը օբյեկտիվորեն ապացուցում է ամուսնաթողության առավելությունը, բայց Տյուսաբը չի հարուցում այդ հարցը՝ հայ իրականության համար կանխահաս համարելով այն։

Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք գտնում անել մի դիտողություն։ Գրականագետ Հր. Թամրազյանը, իր «Շիրվանզադե. կյանքը և գործը» արժեքավոր մենագրությունում նշելով, որ հայ գրականության մեջ Շիրվանզադեի «Արամբին» վեպն է առաջին անգամ արծարծել ապահարզանի խնդիրը, գրում է. «Մենք, իհարկե, չենք կարող անտեսել և Ս. Տյուսաբի վեպերը, որոնցում նույնպես բարձրացված են կնոջ ինքնուրույնության և ընտանեկան ազատության հարցերը։ Բայց ճիշտ է և այն, որ Տյուսաբը երևույթները բընեելիս չկարողացավ դրանք դիտել հասարակական կյանքի ֆոնի վրա։ Բացի այդ, նա չուներ հստակ գաղափարական կոնցեպցիա իր նյութի մասին և զգալիորեն թույլ էր որպես արվեստագետ»[1]։ Ջենք կարող չափսոսալ, որ հարգելի գրականագետն այստեղ թույլ է տալիս անճշտություններ, որոնք թերևս արդյունք են Տյուսաբի ստեղծագործության նկատմամբ ունեցած կանխակալ մոտեցման։ Բեե խոսքն այն մասին է, որ Տյուսաբի վեպերում թույլ է հասարակական մի-

[1] Հր. Թամրազյան, Շիրվանզադե. կյանքը և գործը, Հայպետհրատ, Երևան, 1961, էջ 220։ (Ընդգծումները մերն են)։

ջավայրի գեղարվեստական պատկերը, կամ ստեղծագործական կարողությունների իմաստով վիպասանուհին, Շիրվանզադեի համեմատությամբ, համեստ հեղինակ է, այստեղ քննադատն անվերապահորեն իրավացի է։ Իսկ ինչ վերաբերում է այն մեղադրանքին, թե Տյուսաբը կանանց ազատագրության հարցը դիտել է ընտանիքի, բայց ոչ «հասարակական կյանքի ֆոնի վրա», այս խնդրում արդեն թամրազյանը ճիշտ չէ։ Տյուսաբը պահանջում էր, որ կինը տղամարդու հետ իրավահավասար լինի ոչ միայն ընտանիքում, այլև օրենքի առաջ, որ նա ունենա կրթության իրավունք, որ երկու սեռերի նկատմամբ կիրառվեն բարոյականության միևնույն նորմաները։ Վիպասանուհին երբեք իրավահավասարության հարցը չի հանգեցրել ամուսինների տարիքային տարբերություններին (Մայտան ամուսնուց փոքր էր 25 տարով, բայց իրեն երջանիկ էր զգում), նրանց հոգեկան հակումների անհամապատասխանությանը կամ կնոջ սեռական անբավարարվածությանը, որպիսիք այս կամ այն չափով հանդիպում են Շիրվանզադեի ստեղծագործություններում, այլ քննել է դրանք հասարակականորեն։ Տյուսաբը նույնպես ունի իր «գաղափարական կոնցեպցիան», որը, ճիշտ է, ռեվոլյուցիոն չէ, բայց հստակ է, և դրա ելակետային մոմենտները են՝ լուսավորությունն ու աշխատանքը։

Տյուսաբը «Սիրանույշ»-ում մնաց գաղափարական հին դիրքերում։ Նա գտնում է, որ հարկավոր է հետևել բնությանը, ուր «ըստ ինքյան ամեն ինչ ներդաշնակություն է»։ Վիպասանուհին գուրգուրում է ապագայի միևնույն երազանքը, ինչ «Մայտա»-ում։ «Երբ մարդիկ անիրավություն գործելու պետք չունենան, երբ տիրելու դիտավորություն չունենան, երբ իրենց շահերուն համար չստեն, չկեղծեն, իրարու դեմ մարտ չվարեն, կնոջ քովեն յուր ամուսինը չկորզեն, մոր ծոցեն զորդին չհափշտակեն, արյան գետերու մեջ վիժելու համար զանոնք, հայնժամ բնական ընթացքով... մարդիկ զիրար ընդգրկելով, իրարու ապաստան, իրարու հովանի կըլլան» (էջ 230)։ Գալու է մի օր, երբ մարդն ապրելու է ոչ թե իբրև անասուն այլ իբրև մարդ։ «Այն օրը կըծագի, երբ մտքերն իրենց խոր գիշերեն կելլեն, ու խիղճերը կրո-

նական շղթաներեն կազատին»։ Այսպիսով, Տյուսաբը համառ հետևողականությամբ շարունակում էր հավատալ, թե մարդկային միտքն ու գիտակցությունը կփրկեն իրեն՝ մարդուն։

* * *

Մենք գիտենք, որ հրապարակախոս Տյուսաբին շատ էր հուզում կնոջ աշխատանքի խնդիրը։ Նա հավատացած էր, որ կինը կազատագրվի և տղամարդու հետ հավասար իրավունքներ կվայելի, եթե չխորշի աշխատելուց, ապրի իր ճակատի քրտինքով։ Տիկին Սիրան նույնպես քարոզում էր աշխատանքի փրկարար անհրաժեշտության գաղափարը և նրա. խորհրդով է, որ Մայտան մտադրվում է գործատուն բացել, որպեսզի «թաղեցի չքավոր կանայք ապրուստի ապահով միջոց մի կարենան գտնել հոն» (էջ 142)։ «Սիրանույշ» վեպում հեղինակը վերստին անց է կացնում այն միտքը, թե երջանկության նվաճման կարևոր նախապայմանը աշխատանքն է։ Զարուհին երջանիկ է ոչ միայն իր սիրով, այլև նրանով, որ սեփական աշխատանքով է ապահովում իր իսկ գոյությունը։

Աշխատանքի գաղափարը Տյուսաբն ավելի հիմնավորից իր երրորդ՝ «Արաքսիա կամ Վարժուհին» վեպում, որ լույս ընծայվեց 1886 թվականին[1]։ Այս գործը հեղինակը ձոնել է իր դաստերը։ Մի համառոտ ընծայականում, որ փաստորեն փոխարինում է առաջաբանին, վիպասանուհին պարզում է

---

[1] Ընդունված է այս երկի գրության թվականը համարել 1887-ը, ինչպես նշված է գրքի առաջին հրատարակության տիտղոսաթերթի վրա։ Բայց փաստերը ցույց են տալիս, որ «Արաքսիա...»-ն հրատարակվել է ավելի վաղ։ Հայկակ-Աբփիարյանը մի թղթակցությունում հաղորդում է. «Արաքսիա» կամ «Վարժուհին» այս է տիկին Տյուսաբի նոր վեպը, որո տպագրությունն կավարտի այս շաբաթ» («Մշակ», 1886, նոյեմբերի 11, № 127)։ Արևմտահայ հանդեսներն իրենց դեկտեմբերյան համարներում ծանուցել են վեպի հրատարակությունը («Գրական և իմաստասիրական շարժում», 1886, էջ 219, «Արևելյան մամուլ», 1886, էջ 582), իսկ արևելահայ պարբերականները՝ Թիֆլիսում տարցվելը (տե՛ս 1886 թվականի «Արձագանք», № 47, էջ 614, «Ներքին տեսություն», «Նոր-Դար», № 213, «Քրոնիկոն», «Մեղու Հայաստանի», № 63, «Ներքին տեսություն» և «Մշակ», № 141, «Ներքին լուրեր»)։

իր հայացքն աշխատանքի մասին։ Նա կարծում է, որ հայկինը գործունեության ասպարեզ ունի, բայց նախապաշարումներն ու տգեղ սովորությունները արգելում են նրան գործել։ Տյուսաբը հորդորում է դատերն օրինակ վերցնել իր նոր վեպի հերոսուհուց՝ Արաքսիայից, նրա նման համարձակ ոտնակոխ անել նախապաշարումները, ունենալ «բարոյապես գույն մ'»։

Իսկ ինչպիսին է Արաքսիան վեպում։

Տյուսաբը պատկերում է պոլսահայ մի խեղճ ընտանիքի կյանքը։ Պարոն Վարսամյանը մի ժամանակ բավականին կարողություն է կուտակել, և նրա ընտանիքը նյութապես ապահով է եղել։ Բայց թղթախաղը խլել է այդ հարստությունը, թաղել նրան պարտքերի մեջ, դարձրել անդամալույծ՝ ընտանիքը մատնելով թշվառության ու աղքատության։ Տիկին Վարսամյանը անկարող է հաշտվել ստեղծված վիճակի հետ։ Աղքատությունը նրա համար անպատվություն է, բայց ավելի մեծ անպատվություն է աշխատանքը։ Այդպես չի մտածում Վարսամյանների միակ դուստրը՝ Արաքսիան։ Նա ստորություն է համարում ազգականուհու ողորմասիրությամբ ապրելը։ Քսանամյա այդ օրիորդն ստացել է լուրջ կրթություն, լեզուներ է ուսումնասիրել, կարող է աշխատել ու հոգալ ընտանիքի հոգսերը։ Նա թողնում է ծնողներին, մտնում հարուստ վաճառական Աբգարյանի տունը՝ դառնալով նրա դստրերի վարժուհին։ Արաքսիան, ինչպես և Մայտան ու Սիրանույշը, իրենց բնավորությամբ իրենց միջավայրի արդյունքը չեն. նրանց անմեղությունը, ազնվությունը, ազատաբաղձությունը նեռհակ է իրականությանը։ Բայց ահա հասարակական այն հարաբերությունները, որոնց զոհը դարձավ Սիրանույշը և որոնց կրքոտ քննադատությամբ հանդես էր եկել հեղինակը «Մայտա»-ում, այս վեպում հեշտությամբ պարտվում են Արաքսիայի կամքի ու աշխատասիրության առաջ։ Խոսքն այն մասին չէ, թե կյանքում չի կարող լինել մի Արաքսիա կամ մի իդեալական Ներսես, որի համար «աղքատ կամ հարուստ չկա, մարդ կա միայն»։ Խնդիրն այն է, որ Արաքսիայի երջանկանալը պատահականություն է և չունի սոցիալական հիմք։ Վիպասանուհին իր հերոսուհուն

օժտել է իմացական մեծ ունակություններով. նա թե՛ լեզվաբեթ է, թե՛ հմուտ տոմարագիտությանն ու հաշվապահության։ Բայց ի՞նչ կպատահեր, եթե Արաքսիան իր մոր նման անուս լիներ և Աբգարյաններին մոտ ծառայության մտներ, դիցուք, որպես աղախին կամ լվացարարուհի։ Մի՞թե այդ դեպքում ևս ներսես կնության կառներ նրան։ Վեպն ավարտվում է Արաքսիայի ամուսնությամբ։ Անցնում է մեկ տարի, բայց ոչ մի խոսք չի ասվում նրա հետագա ճակատագրի մասին։ Այդ լռությունը, սակայն, ավելի քան խոսուն է. հազիվ թե խոշոր վաճառական ներսես համաձայնվեր, որ իր կինը շարունակեր աշխատանքը և վարժուհի դառնար ուրիշների տանը։ Եվ Արաքսիան էլ այլևս չէր արտասանի երբեմն ասված իր խոսքերը. «Մեծ ենք ցորչափ մեր աշխատությամբ կապրինք, զի այնու եղանակավ անկախ դիրք մի կատանա մարդն ընկերության մեջ ու բարձրահոն կը քայլե» (էջ 539)։

Աշխատանքն ապեղծում է նյութական անկախության, առանց որի անհնար է կնոջ իրավահավասարությունն ու ազատագրությունը։ Վիպասանուհու այս տեսակետը, ինչպես նշել ենք, սկզբունքորեն ճիշտ է և ընդունելի։ Դա իրագործելի է, սակայն, այնպիսի հասարակարգում, որը չի կառուցված դրամի ու շահագործման վրա։ Տյուսաբը չհասավ այն գաղափարին, որ առանց հասարակական պայմանները փոխելու անկարելի է իրականացնել այդ սկզբունքը։ Գրողը կարեկցանքով է լցված դեպի ընչազուրկները և բարձր դասից պահանջում է եղբայրաբար վերաբերվել նրանց։ «Չգիտեմ ինչո՞ւ այսչափ հակամետ եմ աղքատներն սիրելու»,—գրել է նա իր անձնական նամակներից մեկում, 1887 թվականի նոյեմբերին[1]։ Բայց Տյուսաբը երբեք չհասկացավ «խոնարհագույններին», նրա տեսադաշտից դուրս մնացին այն բյուրավոր կանայք, որոնք հենց թեկուզ Թուրքիայում օրն ի բուն աշխատում էին, բայց կարիքավոր էին ու իրավազուրկ։

---

[1] Հ. Սևայի Տայեցի, Հուշագիր կենաց և գործունեության նախկին կայսերական յուսանկարիչ Գեորգ Ապտուլլահի, Վենետիկ, 1929, էջ 110։

Դա էլ հենց Տյուսաբի աշխարհայացքի ստվերոտ կողմն էր։

«Արաքսիա կամ Վարժուհին» վեպն ունի նաև գեղարվեստական կարգի մի՛ լուրջ թերություն։ Վեպի կոնֆլիկտը ծայրաստիճան պայմանական է։ Ներսեսի, Արաքսիայի և վերջինիս ընկերուհու՝ Վարդանույշի զգացմունքները ենթարկվում են ամենադաժան փորձությունների, որովհետև նրանք որոշել են իրենց սիրո մեջ... գաղտնապահ լինել։ Եվ դրանից օգտվում է չար ու խորամանկ տիկին Աբգարյանը. Արաքսիան մեղադրվում է անբարոյականության մեջ, Ներսեսի համար նա անհավատարիմ է, իսկ Վարդանույշը կարծում է, թե իր ընկերուհին խլել է սիրած երիտասարդին՝ Սիսակին։ Հասկանալի է, որ նման գաղտնապահությունն ու երդումները միայն ռոմանտիկ հնարքներ են։ Բայց չպետք է մոռանալ, որ ռոմանտիզմը նույնպես մերժում է արհեստականությունն ու բռնազբոսիկությունը։ Երբ ամեն ինչ պարզվում է, հերոսները զարմանում են իրենց վրա, որ խորհրդապահությամբ այդքան աղետներ են պատճառել միմյանց, իսկ Ներսեսը անում է մի բնորոշ խոստովանություն. «Առավելությունն ունեցանք... վեպի նյութ մի հայթայթելու» (էջ 631)։ Վեպի նյութ իրոք որ հայթայթված է, բայց հայթայթված է միամիտ ու անհամոզիչ եղանակով։

Եթե «Մայտա»-ում Տյուսաբը միայն հուշակել էր իր իդեալները, «Սիրանույշ»-ում ցույց տվել դրանց անհարիրությունն ու ներհակությունը իրականությանը, ապա «Արաքսիա կամ Վարժուհին» վեպում նա իրականությունն էր հարմարեցնում, համապատասխանեցնում իր գաղափարներին։ Բայց սա բնավ չի նշանակում, թե այս վեպում իրականության արտացոլումն ամբողջովին խեղաթյուրված է։ Հեղինակը կյանքում արատավոր ու դատապարտելի շատ բան է տեսնում։ Բարեկենդանի ընդհանուր ուրախության ու մի կտոր հացի կարոտ Վարսամյանների ընտանիքի նկարագրությունը կյանքի մի իրական հակապատկեր է։ Տյուսաբը բարեկենդանն անվանում է «նյութական կատակերգություն»՝ հասարակական տարբեր խավերի համար։ Ժողովրդական այդ տոնը կարծես ստեղծված է աղքատներին սփոփելու

համար, որպեսզի նրանք «պահվելով վայրիկ մի այլևայլ զգեստուց ներքև, և առժամանակյա տարբեր վիճակ մի փոխ առնելով՝ ուրիշ անձնավորություն մի ձևանան, և այսպես իրենց աղքատությունն ու դժբախտությունը մոռնան կեղծ երանության դիմակին ներքև»։ Իսկ հարուստներն այդ ուրախ օրերից օգտվում են իրենց կյանքի «ճոխ միօրինակությունը» ընդհատելու, ձանձրույթը փարատելու և զանազան հաճույքներ որոնելու համար (էջ 425)։

Իր վեպում Տյուսաբը շարունակում է բուրժուական բարոյականության մերկացումները։ Այս մասին խոսելիս առաջին հերթին պետք է հիշատակել տիկին Աբգարյանի կերպարը։ Իր խառնվածքով նա նույն Հերիգան է ու նույն ժանեթը, բայց էությամբ Դարեհյանի երկվորյակն է։ Տիկին Աբգարյանի «սիրո զոհեր» որոնելու պատճառը կիրքը կամ շահամոլությունը չէ։ Անբարոյականությունը, ինչպես և նոթաձևություններին հետևելը նրա շվայտ ու անաշխատ կյանքի գլխավոր հաճույքներն են։ Տիկին Աբգարյանը ևս Դարեհյանի նման ունի իր «պատիվը»։ Նրանք անմաքրության մարմնավորումն են, բայց դատախազ են կարգված անմեղության վրա (էջ 354)։

Եվրոպական միջավայրից միայն հոռի բարքեր յուրացնելը, այլասերվելն ու ապազգայնանալը բուրժուական հայ մտավորականության բնորոշ առանձնահատկություններից մեկն էր։ Այդ երևույթը տարբեր ժամանակներում նկատել ու վերարտադրել են Գ. Սունդուկյանը («Եվ այլն կամ նոր Դիոգինես»), Րաֆֆին («Թաթոսներ»), Գր. Զոհրապը («Կանանց բժիշկը») և այլք։ Տյուսաբը նույնպես «Արաքսիա»-ում ստեղծել է մի այդպիսի կերպար, որ նորություն է նրա ստեղծագործության մեջ։ Սիսակը, Արաքսիայի ազգականը, մեկնել է Փարիզ՝ փաստաբանություն ուսանելու, բայց ժամանակն անց է կացրել թատրոնների կուլիսներում և կանանց զարդասենյակներում։ Թերուս ու հավակնոտ այդ երիտասարդը վերադառնում է Պոլիս, հռչակում իրեն հմուտ իրավաբան և սկսում կանանց գայթակղեցնել, որի համար ուներ բոլոր առավելությունները. երիտասարդ էր, արտաքինը՝ համակրելի, լեզուն՝ ճարտարախոս ու շարժուձևը՝ բարեկիրթ։

կինելով փորձված կնոջս, նա հրապուրում է Արաքսիայի ընկերուհուն և ձգտում նրա հետ ամուսնանալով «սքանչելի առևտուր մ՝ ընել»։ Վիպասանուհին բնութագրելով Սիսակին, բացահայտ արհամարհանքով է խոսում նրա՝ ազգությունից խորթացած լինելու մասին։ «Սրտովն ու մտքովն օտարացած էր հայութենեն. ազգային զգացումը բառ մ՝ էր իրեն համար, հայ անունը նախատինք մի և հայ բարբառը բարբարոսական լեզու մի, վերջապես կարհամարհեր ինչ-որ հայ էր։ Սքանչացմամբ կը խոսեր ընդհանրապես ամեն նյութերու վրա որ օտարազգյաց կը վերաբերեր» (էջ 489)։

Սիսակի կերպարը «Արաքսիա...»-ի ուժեղ կողմն է։

* * *

«Սիրանույշ»-ը և «Արաքսիա կամ Վարժուհին» վեպերը մնալով «Մայտա»-ի գաղափարական շարունակությունը, նրա համեմատությամբ ավելի վիպական են։ Այս գործերում գերիշխողը հրապարակախոսական շունչը չէ. հեղինակը նույնպես մտքեր ու տեսակետներ է զարգացնում, բայց փորձում է դրանք բխեցնել կենսական հարաբերություններից։ Այս իմաստով, հատկապես հաջողված է «Սիրանույշ» վեպը, որն արկածապատում չէ, կոնֆլիկտն իրական է, և ճըշմարտացի են արտացոլված պոլսահայ աղնվականության բարքերն ու կենցաղը։ Տյուսաբը հրաժարվեց «Մայտա»-ի կոմպոզիցիոն վիպաձևից՝ նամականուց։ Այժմ պատմողն անմիջապես ինքն է՝ հեղինակը։ Այդ նրան թույլատրում է հերոսներին ցուցադրել կենդանի գործողություններում։ Վիպասանուհին չի շեղվում ռոմանտիզմի սկզբունքներից, բայց ջանում է հղկել իր վիպական արվեստը։ Մայտան, Տիգրանը, Սիրան կամ Հերիգան կարծես գործում էին ժամանակից ու տարածությունից դուրս, իսկ հեղինակի այս վեպերի գործող անձինք պոլսահայ որոշակի միջավայրի մարդիկ են՝ իրենց հայացքներով ու հետաքրքրություններով։

Վիպասանուհու վերաբերմունքը «Սիրանույշ»-ի և «Արաքսիա»-ի հերոսների նկատմամբ դարձյալ բացահայտորեն սուբյեկտիվ է։ Դրական կերպարները խստագույնս իդեալականացված են, որոնց վարքագծում Տյուսաբը պա-

կինելով փորձված կնոջս, նա հրապուրում է Արաքսիայի ընկերուհուն և ձգտում նրա հետ ամուսնանալով «սքանչելի առևտուր մ՝ ընել»։ Վիպասանուհին բնութագրելով Սիսակին, բացահայտ արհամարհանքով է խոսում նրա՝ ազգությունից խորթացած լինելու մասին։ «Սրտովն ու մտքովն օտարացած էր հայութենեն. ազգային զգացումը բառ մ՝ էր իրեն համար, հայ անունը նախատինք մի և հայ բարբառը բարբարոսական լեզու մի, վերջապես կարհամարհեր ինչ-որ հայ էր։ Սքանչացմամբ կը խոսեր ընդհանրապես ամեն նյութերու վրա որ օտարազգյաց կը վերաբերեր» (էջ 489)։

Սիսակի կերպարը «Արաքսիա...»-ի ուժեղ կողմն է։

* * *

«Սիրանույշ»-ը և «Արաքսիա կամ Վարժուհին» վեպերը մնալով «Մայոտա»-ի գաղափարական շարունակությունը, նրա համեմատությամբ ավելի վիպական են։ Այս գործերում գերիշխողը հրապարակախոսական շունչը չէ. հեղինակը նույնպես մտքեր ու տեսակետներ է զարգացնում, բայց փորձում է դրանք բխեցնել կենսական հարաբերություններից։ Այս իմաստով, հատկապես հաջողված է «Սիրանույշ» վեպը, որն արկածապատում չէ, կոնֆլիկտն իրական է, և ճշմարտացի են արտացոլված պոլսահայ աղնվականության բարքերն ու կենցաղը։ Տյուսաբը հրաժարվեց «Մայոտա»-ի կոմպոզիցիոն վիպաձևից՝ նամականուց։ Այժմ պատմողն անմիջապես ինքն է՝ հեղինակը։ Այդ նրան թույլատրում է հերոսներին ցուցադրել կենդանի գործողություններում։ Վիպասանուհին չի շեղվում ռոմանտիզմի սկզբունքներից, բայց ջանում է հղկել իր վիպական արվեստը։ Մայոտան, Տիգրանը, Սիրան կամ Հերիգան կարծես գործում էին ժամանակից ու տարածությունից դուրս, իսկ հեղինակի այս վեպերի գործող անձինք պոլսահայ որոշակի միջավայրի մարդիկ են՝ իրենց հայացքներով ու հետաքրքրություններով։

Վիպասանուհու վերաբերմունքը «Սիրանույշ»-ի և «Արաքսիա»-ի հերոսների նկատմամբ դարձյալ բացահայտորեն սուբյեկտիվ է։ Դրական կերպարները խստագույնս իդեալականացված են, որոնց վարքագծում Տյուսաբը պա-

խարակելի ոչինչ չի գտնում։ Նրանք ունեն և՛ հմայիչ արտաքին, և՛ զարգացած միտք, զգայուն են, անկեղծ ու ազնիվ։ Հեղինակը սենտիմենտալ միջոցներով ընդգծում է Սիրանույշի, Երվանդի, Արաքսիայի, Ներսեսի, Ճուլիայի, Վիրճինիոյի, տիկին Հայնուռի, Վարդանույշի արտակարգ զգացմունքայնությունը և նրբերբ հոգին։ Նրանք շատ դառնություններ են ճաշակում, հոգեկան ալեկոծությունից հաճախակի նվաղում են, արտասվում դառնաղի, հիվանդանում, բայց մնում են մաքուր ու վեհանձն և անկարող են վատերբեն վարվել թեկուզ նրանց նկատմամբ, ովքեր կամա թե ակամա չարիք են պատճառել իրենց (Սիրանույշը ներում է Մելքոնին, Ներսեսը՝ տ. Աբգարյանին, Ճուլիան խնդրում է հորը՝ սիրել Երվանդին)։

Բյուրեղյա է և նրանց սերը։ Տյուսաբն իր դրական հերոսների մեջ երբեք տեղ չի տալիս սեռական կրքին, նրանք նույնիսկ չեն համբուրվում։ Ի տարբերություն «Մայտա»-ի, Տյուսաբի վերջին վեպերում բացասական հերոսները սխեմատիկ չեն, զտարյուն չար չեն։ Հեղինակը նրանց բնավորության մեջ միշտ որոնում ու գտնում է ինչ-որ լավ բան, համակրելի գիծ։ Պ. Հայնուռը որդեսեր է, անհանգստանում է կնոջ հիվանդությամբ։ Դարեհյանն ապրում է անկեղծության ու զղջման վայրկյաններ, կամենում է ամեն ինչ խոստովանել կնոջը, տիկին Աբգարյանը աղախիններին չի ընտելացնում լրտեսության, Սիսակն ազնիվ է Արաքսիայի նկատմամբ, քաջություն ունի ապագա կնոջը խոստովանել իր անբարոյական ընթացքը, և այլն։ Բայց այդ ամենը չի փոխում նրանց էությունը և ընթերցողին նրանք պատկերանում են որպես բռնակալ, անբարոյական կամ այլասերված մարդիկ։

Այս վեպերում Տյուսաբը նորից օգտվում է ռոմանտիզմի արտահայտչական ամենատարածված միջոցներից մեկից՝ հակադրություններից։ Վիպասանուհին հակադրում է հերոսների արտաքինն ու ներքինը։ Ժաննեթը, Դարեհյանը, Ալֆոնսը ֆիզիկապես գեղեցիկ են, բայց հոգով այլանդակ։ Տիկին Աբգարյանը նույնպես, ինչպես Հերիգան, ճերմակամորթ է, վայելուչ հասակով, կանոնավոր դիմագծերով և սևաթույր

աչքերով, բայց նրա հոգին «օձերու բույն մ' էր»։ Տիկին Հայնուռի մահամերձ վիճակին հեղինակը հակադրում է բերկրացող բնությունը, իսկ բարեկենդանի ղվարթությանը՝ վարսամյանների քաղցած ընտանիքը։ Հակադրված են ոչ միայն շար ու բարի հերոսները, այլև տարբեր խառնվածքներ (Զարուհին ու Երվանդը, Արաքսիան ու իր մայրը, Աղավնին ու Արմինեն), հակասական ապրումներից տանջվում են թե՛ Սիրանույշն ու Զարուհին, թե՛ Արաքսիան ու Վարդանույշը։

Բնությունը Տյուսաբի աշխարհայեցողության մեջ կարեւոր դեր է խաղում։ Բնության մեջ է արտահայտվում այն ամենը, ինչ գեղեցիկ է ու կատարյալ։ Գրողն այս մտայնությունը հետևողականորեն անց է կացնում նաև «Սիրանույշը» և «Արաքսիա...» վեպերում։ Սիրանույշի և Երվանդի հրաժեշտի վկան միայն լուսինն է և նրանց երազանքն է. «Մերկուքին նայվածքն անոր վճիտ դեմքին մեջ թո՛ղ միանան» (էջ 177)։ Զարուհու և Լևոնի գահը բնությունն է, լուսավորությունը՝ «երկնից ջահերը» և նվագարանները՝ «թռչնոց ներդաշնակությունները» (էջ 193)։

Սիրանույշը Մայտայի նման սիրում է առանձնանալ ծովափին և իր հոգեվիճակին ընկեր դարձնել բնությունը. «Կը նայեր ջուրերուն խորության ու կը մտածեր թե նույնչափ անհատակ էին և յուր վիշտերը։ Կը նայեր հեզասահ ալյացորք լուսո փրփուրներ թավալելով կանցնեին կերթային, և կը հիշեր թե նույնպես անցած էին յուր երջանկության պայծառ օրերը» (էջ 270)։ Բնությունը մարդուն պարգևել է ազատություն, և Արաքսիան ջանում է պահել այն։ Մարդն ինքը բնության ամենասքանչելի հրաշալիքն է։

Տյուսաբը իր բացասական հերոսներին բնութագրելիս համեմատության ոչ մի եզր չի գտնում նրանց և բնության միջև, իսկ, ընդհակառակն, դրական հերոսները հանդես են գալիս բնության հետ, որպես նրա մի մասնիկը։ Ահա թե ինչպես է գրողը նկարագրում Արաքսիային։ «Երբ Արաքսիա կը նայեր՝ աչերեն արև կը ցոլար, իսկ երբ կը ժպտեր կարծես թե շրթունքը կոկոն մ' էր որ ի լույս կը բացվեր։ Իսկ գլուխը ծռած սև երկայն մազերն երբ կուրծքեն վար կախվեին,

կարծես թե սգո արձան մ՝ էր տխուր ուռենյոք սքողյալ, այնքա՛ն յուր ճերմակ կանոնավոր գծագրուβյունը այդ մութ շրջանակին առավել պայծառ դուրս կը ցայտեր» (էջ 428)։ Բնուβյան գեղեցկուβյունը գրգռում է Արաքսիային, բորբոքում նրա սերը, և նա ուզում է Ներսեսի հետ լինել։ Արաքսիան և Ներսեսը վարդի երկու կոկոնների մեջ են անձնավորում իրենց սերը։

Տյուսաբը, որպես ռոմանտիկ, հետևողական է։ Նա միշտ էլ գտնում է ամենատարբեր շտրիխներ, ստեղծում հնարքներ, որոնցով ավելի տպավորիչ է դարձնում այս կամ այն կերպարը, նկարագրվող երևույթը։ Սիրանուշը վեպում ներկայանում է միայն սպիտակ շրջազգեստով, Երվանդը՝ մուգ սևեռ ու թևերը կրծքին խաչած՝ հրաժեշտի պահին սիրող զույգի աչքերից նրանց ձեռքերի վրա կաթում է երկու շիթ արտասուք, «երկու անարատ հոգիներու հեղուկ խունկերն էին որք անեզրուβյան հետ խառնվեցան». Արաքսիայի ու Ներսեսի սերը պոռթկում է բնուβյան արհավիրքի պահին («Ահավոր էր սիրո այդ դաշնադրուβյունը մահվան վտանգին մեջ», էջ 480) և այլն, և այլն։

Ն. Գ. Չերնիշևսկին նկատել է, որ Ժորժ Սանդի վեպերում միշտ էլ առկա է էկզալտացիան, որը երբեմն դրսևորվում է հերոսների երազկոտուβյամբ, երբեմն էլ բնուβյան, մարդկանց ու երևույթների իդեալականացմամբ[1]։ Նման էկզալտացիան, ոգևորվածուβյունը, հուզաթաթավուβյունը այս կամ այն չափով հատուկ է նաև Տյուսաբի գործերին։ Տյուսաբը անկարող է սառը, անկողմնակալ շարադրել, անձանձիր միջամտում է գործողուβյուններին, գնահատում հերոսներին, նետում համակրանքի կամ. կշտամբանքի խոսքեր, անվանելով նրանց «չքնաղ», «նազելյաց նազելին», «քնքույշն» (Սիրանուշ) կամ «վագրուհի» (տ. Աբգարյան)։ Այդ ոգևորվածուβյունը հեղինակային խոսքում արտահայտվում է մերթ որպես ղեղում՝ մոր ու մանկան, սիրո ու ընտանիքի, գեղեցկուβյան ու տգիտուβյան մասին, իսկ ավելի շատ՝ որպես ամենատարբեր հարցերի շուրջ փիլիսոփայա-

[1] *Н. Г. Чернышевский*, Полное собрание сочинений, т. III, ОГИЗ, М., 1947, стр. 341.

կան խորհրդածություններ, իմաստալից արտահայտություններ ու աֆորիզմներ։ Ահա այդպիսի մի քանի օրինակներ նրա երեք վեպերից։

«Կյանքը շղթա մ՝է որուն օղակները մեր բաղձանքներն են կը կազմվին, որչափ այդ բաղձանքներն իրականանան, նույնչափ ալ նորանորներ կը ծնանին» (էջ 16). «Դժբախտության դպրոցը մարդս ձևակերպելու միակ միջոցն է» (էջ 23). «Շատ բառերն զգացման և գաղափարի աղքատություն կը հայտնեն» (էջ 27)։ «Կատարյալ երջանկության րոպե մի հավիտենականություն կարժե» (էջ 43). «Սիրո մեջ երբեք անձնվիրության ապացույցներն ավելորդ չեն համարվիր» (էջ 72). «Սանձ ընդունող և տրամաբանող սերը՝ սեր չէ... լավագույն է մահն մեծ, քան նվաստ կյանքն» (էջ 93). «Սերն աշխարհիս քաղաքացին է» (էջ 98). «Երաժշտությունը խազեր ունի ամեն զգացմանց համար» (էջ 246). «Սիրտն կանոնավորության մեջ նույնիսկ անկանոնություն է» (էջ 267). «Ոչինչ այնչափ անըմբռնելի է որչափ կնոջ մի սիրտը, զի անհատակ է այն» (էջ 288). «Մոռցված ըլլալու հավանականությունը դժբախտության մեջ կրկին դժբախտություն է» (էջ 317—318). «Փոխանակ լուսատու և հարթ հատակի՝ սիրտը խավար ու խորունկ խոռոչներ կը պարունակե» (էջ 435). «Համակերպիլ բախտին հարվածոց քժշկվիլ չի նշանակեր, այլ պարզապես սգո հետ եղբայրանալ է» (էջ 453). «Ոչինչ այնքան հոգինները կը միացնե որչափ մեծ վտանգը» (էջ 481). «Ո՞վ արդյոք կարողացած է մինչև յուր սրտին հատակը իջնել...» (էջ 571). «Տառապանքն ունի յուր բանաստեղծությունն..» (էջ 576) և այլն, և այլն։

Շատ է խոսվել Տյուսաբի վեպերի գեղարվեստական պակասությունների մասին, ըստ որում ամեն անգամ փութաջանորեն մատնանշվել են լեզվաոճական կարգի թերությունները։ «Բոլոր գործող անձերը,—գրել է օրինակ Վրթ. Փափազյանը,— միայն երկար ճառեր են արտասանում և երբեք չեն մոռանում հռետորական ոճը՝ միշտ գերազանցորեն պահպանված և ամենահասարկ խոսակցության մեջ

ազնվականորեն վայելուչ»[1]։ «Իրար սիրող երիտասարդ մը ու երիտասարդուհի մը,— ասում է Ա. Արփիարյանը,— երբ սենեկի մը մեջ միս մենակ են, սիրահարը խոսքը սիրուհին կ՝ ուղղե, զայն «Օ՜ կույս» անվաննելով, ինչպես Գաբրիել հրեշտակը իր խոսքը կուղերձեր Մարիամին»[2]։

Քննադատները՝ այստեղ իրավացի են։ Վիպասանուհին չարաշահում է հռետորական արվեստի միջոցները՝ կոչերը, բացականչությունները ու հարցումները։ Մայտան Սիրային դիմում է այսպիսի լեզվով. «Ո՜վ դու, հրկրորդ մայր իմ», «Ո՜վ բարեկամուհիդ իմ». կամ ահա ինչպես է խոսում Սիրանույշը Երվանդի հետ. «Միշտ հիանալի ես, ո՜վ իմ կորուսյալ հրեշտակս», «Ո՜վ առաքինության հրեշտակ» և այլն։ Նրա վեպերի հերոսները ավելի շատ խորհրդածում են, քան գործում, նրանց լեզուն անհատականացված չէ։ Հաճախ կյանքի ու մահվան մասին բարդ դատողություններ են անում մատաղահաս երեխաները՝ Հրանույշը («Մայտա») և Աղավնին («Արաքսիա կամ Վարժուհին»)։ Բայց այս ամենից չի կարելի հետևեցնել, թե Տյուսաբի երկերի լեզուն ու ոճը զուրկ են որևէ արժանիքից։ Բնորոշ է, որ Զոհրապի նման անողոք քննադատն իսկ, որի համար Տյուսաբի հայացքները հիմնովին մերժելի էին, այնուամենայնիվ գովեստով է խոսում «Մայտա»-ի «փայլուն ոճի», «վառվռուն պատկերների» և հեղինակի «խանդավառ երևակայության մասին»[3]։

Տյուսաբի լեզուն, ակադ. Հր. Աճառյանի գնահատմամբ, «ժամանակի աշխարհաբարն է, գրաբարի տարրերով բավական խառնված»[4]։ Ջնայած դրան, բառամթերքը չափազանց հարուստ է։ Նա ջանում է իր խոսքին հաղորդել էմոցիոնալ շունչ, հուզել ընթերցողին։ Գրողն առատորեն օգտագործում է պատկերների մի ամբողջ շարք՝ փոխաբերություններ, հա-

---

[1] Վ. Փափազյան, *Պատմություն հայոց գրականության*, Թիֆլիս, 1910, էջ 686։

[2] Արփիար Արփիարյան, *Պատմություն ժե զարու Թուրքիո հայոց գրականության*, էջ 114։

[3] «Երկրագունտ», 1883, № 9, էջ 315, 312։

[4] «Էջմիածին», 1951, հունվար—մարտ, էջ 45։

մամատութիւններ, մակդիրներ։ Նրան չի գոհացնում որևէ երևույթի ուղղակի գնահատականը և դրան իսկույն կցում է մի փոխաբերություն՝ ավելի ընդգծելով պատկերվող երևույթը։ Այսպես, ասելով, թե Հրանույշը հյուծված է, Տյուսաբն անմիջապես ավելացնում է. «Կարծես թե մահն իբրև հարսն ընտրած է անձին»։ Կամ հայտնելով, որ Հրանույշի մայրը մահացել էր ծննդաբերության ժամանակ, նա նույն միտքն արտահայտում է «գերեզմանին ծլած ծաղիկ մ՝ էր» գեղեցիկ փոխաբերությամբ (էջ 48)։ Վիպասանուհին, որ սիրում է ընդգծվածությունը, այդ նպատակով հաճախ է ստեղծում կոնտրաստիկ պատկերներ։ Հուլիանեի և Հրանույշի արտաքին հակադրությունը տրված է այսպիսի պատկերով. «Կարծես թե աշունն էր, որ գարուն կառաջնորդվեր» (էջ 55)։

Առհասարակ Տյուսաբը, միտումնավոր կերպով գերապանցապես բնությունից է պատկերներ քաղում և դրանք միշտ էլ քնարականորեն մելամաղձոտ են ու դիպուկ։ Տիկին Հայնուհի հիվանդության ժամանակ վարագույրները նրման են սգահար ուռիներին։ Սիրանույշի տառապալի ապրումներն առաջիկա ամուսնության կապակցությամբ բնութագրվում են այսպես. «Կարծես թե մեն մի օր հեգ կռահն հուսո փունջեն ծաղիկ մը կը հափշտակեր...» (էջ 235), իսկ Ճուլիայի հոգեվիճակը արտահայտված է հետևյալ պատկերով. «Գարնանային վարդը [Ճուլիան] սիրո ցուրտին սաստկութենեն կը թարշամեր. կը մեռներ վասնզի սրտի շող մի մերժված էր իրեն» (էջ 247)։ Տիկին Աբգարյանի կրտսեր դուստրը դաշտում ծաղիկներ է քաղում, այդ առթիվ վիպասանուհին ստեղծում է այս փոխաբերությունը. «Ինքը գարնան ծաղիկն էր որ աշնանային ծաղիկը կը քաղեր» (էջ 475)։

«Մայտա»-ում գրողն ստեղծել էր մի քանի հաջողված նկարագրություններ (ինչպես Ասիական Հիսարինը, էջ 20), որոնք սակայն ինքնանպատակ են և մնում են որպես յուրօրինակ «գեղարվեստական համեմունքներ»։ Իսկ «Սիրանույշ»-ում և «Արաքսիա...»-ում դրանք բացահայտում են վեպերի գաղափարական այս ու այն կողմը՝ Զարուհու և Լևոնի բնակարանի նկարագրությամբ Տյուսաբը շեշտում է նրանց ամուսնական իդիլիան, տիկին Աբգարյանի բնակա-

բանական ճոխության պատկերումը նպատակ ունի ցույց տալ տիրուհու զեխ կյանքը։ Գեղեցիկ է փոթորկի պատկերը «Արաքսիա...»-ում, որն, ինչպես գիտենք, մի ռոմանտիկ հնարք է։

* * *

«Սիրանույշը» և «Արաքսիա կամ Վարժուհին» վեպերը վիճաբանությունների նյութ չտվեցին[1]։ Դա բացատրվում է նրանով, որ այդ գործերը գաղափարական իմաստով նորություններ չբերեցին։ Դրանք նույնպես ծրագրային վեպեր էին, բայց զարգացնում էին «Մայտա»-ում արդեն հռչակված մտքերը։

Այնուամենայնիվ ժամանակի գրական քննադատությունը անտարբեր չմնաց։ Ե. Տեմիրճիպաշյանը, նախ, Ս. Տյուսաբին ձոնած մի բանաստեղծության («Մայր իմ և հայր իմ») ընծայականում «Սիրանույշ»-ը գնահատեց որպես մի պատկեր, «հորում կերևի կյանքն՝ յուր իրականությամբք և յուր բանաստեղծությամբք, յուր դառնագույն իրականությամբք և յուր քաղցրագույն բանաստեղծությամբք»[2], ապա այդ վեպին նվիրեց մի առանձին գրախոսական, որտեղ հե-

---

[1] *Այն մասին, թե ինչպես են ընդունվել «Սիրանույշն» ու «Արաքսիան...», արտահայտվել են իրարամերժ կարծիքներ։ Հ. Ասատուրն, օրինակ, նշել է, թե այս վեպերը նույնպես «վեճերու տեղի տվավ մեր գրականության մեջ» («Մասիս», 1898, № 18)։ Ա. Տերտերյանը հաստատում է, որ «Սիրանույշ»-ը դարձել է «տաք դիսկուսիայի աղբյուր» («Հայոց նոր գրականության պատմություն 19—20 դդ., Սրբուհի Տյուսաբ և «ռոմանտիկ ոճի» խնդիրը» 1931, առաջադրություն № 3/11, էջ 15)։ Բայց ահա Լ. Բաշալյանը գրել է. «Դիտվեցավ սակայն թե երկրորդ գործը («Սիրանույշը»—Ա. Շ.) չունեցավ առաջնոյն հաջողությունը» և դրա պատճառը համարում է «նորության հրապույրի» բացակայությունը («Մասիս», 1886, № 3807, էջ 630)։ Վիպասանության «մյուս հատորները աննշմարելի անցան»,—կարդում ենք Ա. Արփիարյանի մոտ («Պատմություն ժթ դարու թուրքիո հայոց գրականության», էջ 114)։ Հնարավոր է, որ այդ վեպերը, նույնպես վեճեր առաջ բերած լինեին, բայց այդ մասին առայժմ հավաստի ոչինչ չգիտենք (մանավանդ որ, ինչպես նշել ենք, արևմտահայ մամուլը մեզ է հասել թերի վիճակում)։*

[2] *«Բրկրագուցիո», 1885, հունիս, էջ 259։*

պինակի այդ և նախորդ գործերը համարեց «Երկու հարազատ քույրեր»[1]։ Մկրտիչ Փորթուգալյանի նորահաստատ «Արմենիա»-ի ուշադրությունից չվրիպեց «Սիրանույշ»-ը, որի լույս ընծայումը նա ազդարարեց մի առանձին ծանուցմամբ[2]։ Նշելով, որ հայ իրականության մեջ «միջավայրի պահանջներ» բառերի տակ արդարացվում են ամեն կարգի հասարակական ու բարոյական նախապաշարումներ, լրագիրը ընդունում էր դրանց դեմ հանդես գալու անհրաժեշտությունը։ «Կը շնորհավորենք ուրեմն Տիկին Տյուսաբը յուր այդ քաջության համար»,— գրում էր «Արմենիա»-ն, ավելացնելով, որ վիպասանուհու արտահայտած գաղափարները «խորին ուշադրության արժանի են»։ Երիտասարդ Լևոն Բաշալյանը «1885 տարին Թուրքիո հայ գրականության համար» հոդվածում տեսնում էր այն աճը, որ կատարել էր Տյուսաբը «Մայտա»-ից հետո։ «Իր երկրորդ գործով, Սիրանույշ.— ասում է նա,— Ազն. հեղինակուհին մեզ տվավ ավելի իրական վեպ մը, բարուց նկարով, հանգույցներով, դարձվածներով, ի մի բան շարժմամբ լեցուն»[3]։

Արևելահայ մամուլից միայն «Մշակ»-ն արձագանքեց «Սիրանույշ»-ին՝ տպագրելով Լեոյի ընդարձակ գրախոսականը[4]։ Լևոն դժվարանում էր որոշել այդ վեպի գաղափարական նպատակադրումը։ «Եթե, ասում է հոդվածագիրը, այդ երկը ձգտում է «դատապարտել կնոջ և մարդու վերաբերմամբ հաստատված ընկերական կարգերը, ուրեմն տիկին հեղինակը մասամբ հասել է իր նպատակին», իսկ եթե բողոքում է ծնողական բռնությունների դեմ, ապա դա հին երգ է։ Քննադատը չէր զգում, որ այդ ստեղծագործության մեջ հիմնականը ընտանիքի ու ամուսնության պրոբլեմն է, որ գրողը պաշտպանում է սիրով ամուսնության պահանջը, որպես ընտանեկան երջանկության ու հասարակական բարեկեցության էական նախադրյալ։ Ուրիշ ի՞նչ

---

[1] «Գրական և իմաստասիրական շարժում», 1885, տետր յոթերորդ, էջ 122։

[2] «Արմենիա», Մարսէյլ, 1885, 2 սեպտեմբերի, № 6։

[3] «Մասիս», 1886, № 3807, էջ 630։

[4] «Մշակ», 1886, № 42։

կերպ հասկանալ Լեոյի այն կշտամբանքը, թե ինչո՞ւ Տյուսաբը «մի կնոջ և մի ամուսնու մեջ» միայն «սիրային հարաբերություն» է տեսնում, «մի՞թե չկան ուրիշ տեսակ հարաբերություններ ևս, որոնք ավելի ծանրակշիռ նշանակություն ունենային», քան թե սերը»։ Հոդվածագիրը կարծում էր, որ հեղինակը ցանկացել է պարզապես ստեղծել «սիրային վեպիկ»։ Լեոն հիշատակում է գեղարվեստական մի շարք թերություններ (կողմնակի տեսարաններ ու պատկերներ, «ծանր ու բարակ փիլիսոփայություններ», թուլլ կերպավորում), բայց տեսնում է նաև որոշ ուշագրավ կողմեր։ Խոսելով այն մասին, որ Դարեհյանը աշխատում է Սիրանույշին անպայման բռնել որևէ հանցանքում, նա գրում է. «Այստեղ տիկին Տյուսաբի վեպի մեջ նկատելի է մի հետաքրքրաշարժ նորություն, մի դեռևս քիչ հայտնի պատկեր»։ Պատշաճը մատուցելով «լեզվագետ հեղինակին» («Մենք պատվում ենք նրա ծանր ու ողորկ լեզուն, բեղմնավոր գրիչը, աշխույժը»), Լեոն եզրակացնում էր, որ նրան «մեծ գործեր .ստեղծելու տաղանդը չէ շնորհած»։

«Մշակ»-ի էջերում Տյուսաբի անունը հաճախ է հոլովվել։ Ս. Արփիարյանը մի նամակում հայտնելով «Արաքսիա կամ Վարժուհին» վեպի առաջիկա տպագրության մասին, ավելացնում է. «Ինչ որ հաղորդեցին ինձ այդ վեպի մասին կրնամ անտի հետևցնել թե պ. Լեոյի քննադատություններեն պետք է օգտված լինի վիպասանը։ Ավելի պարզ, ավելի մեղմ, ավելի ճիշտն ըսելով, ավելի մարդկային կը համարվի Պոլսական բարուց այդ վեպը»[1]։

Հետաքրքիր է նաև հետևյալ փաստը։ Ր. Արծրունին 1886 թվականին «Մշակ»-ում հանդես եկավ «Կ. Պոլիս և Թիֆլիս» (մարտի 29, № 36) և «Երկու հասարակությունների փոխադարձ հարաբերություն» (ապրիլի 8, № 40) հոդվածներով։ Դրանց մեջ նա հակադրում էր արևելահայերին արևմըտահայերին՝ գտնելով, որ վերջիններս անգործունյա են, անընդհատ օգնություն են խնդրում, ապրում են մտավորապես խեղճ կյանքով և այլն։ Այդ մեղադրանքները վրդովեցին արևմտահայ մտավորականությանը։ «Արևելք»-ը նախ

[1] «Մշակ», 1886, № 127։

տպագրեց մի խմբագրական (ապրիլի 30), ապա և Ա. Արփիարյանի «Անցուկը մոռցուկ» հոդվածը, «Փունջ»-ում «Պարետ» կեղծանվամբ զայրալից պատասխան դրեց Ծերենցը։ «Արևելք»-ը, հերքելով Արծրունուն, մասնավորապես գրում էր, որ տաճկահայերի դրականությունը նույնպես ծաղկուն է եղել և թվարկում էր Ս. Տեր-Սարգսենցի, Շնորհնցի, Պեշիկթաշլյանի, Դուրյանի անունները։ «Եվ տիկին Սրբուհի Տյուսաբ,— շարունակում էր լրագիրը,— գրականության բոլորովին նոր ճյուղ մը կը հաստատե մեր մեջ յուր բնատիպ տաղանդով և ինքնագիր հեղինակությամբք»[1]։ Ինչպես երևում է, այդ վճճին մասնակցել է նաև Տյուսաբը։ Արփիարյանը իր հիշատակած նամակում տալիս է ուշադրության արժանի մի այսպիսի տեղեկություն. «Տարօրինակ մի տրամաբան է տիկին Տյուսաբ։ Յուր վեպերուն մեջ կաշխատի նկարել մեր կյանքի տգեղ կողմերն, կուզե ցույց տալ թե ընդհանրական տգեղություններ են, բայց երբ օր մը հրատարակեց «Արևելք» «Մշակի» հոդվածն Պոլսո Հայոց մասին, բորբոքվեցավ Տիկին. «Վրեժ, վրեժ» գոչեց և կոթնած Տոք. Շիշմանյանի բազկին կը մտներ ամենուրեք բողոքելու ընդդեմ «Մշակ»-»ի[2]։

Բայց Արծրունին Տյուսաբի նկատմամբ անկողմնակալ էր։ Նա «Հայոց վիպական գրվածներ» խորագրով մի առանձին առաջնորդող նվիրեց «Արաքսիա կամ Վարժուհին» վեպին[3], իսկ այդ քննադատության մասին արևմտահայ ըն-

---

[1] «Մշակ», 1886, № 70։ «Արևելք»-ի այս խմբագրականից բացի Արծրունին արտատպեց նաև Արփիարյանի հոդվածը։

[2] «Մշակ», 1886, № 127։

[3] «Մշակ», 1886, № 146։ Արդեն ասել ենք, որ «Արաքսիա...»-ն Թիֆլիսում սաացվել էր 1886 թվականի վերջերին։ «Նոր-Դարը»-ը և «Մեղու Հայաստանի»-ն գրքույկի նպատակը պարզելու համար արտատպել էին վեպի «Զոնա»-ը, իսկ «Արձագանք»-ը խոստացել էր ավելի ուշ մանրամասն խոսել նրա մասին։ Սակայն նա չպահեց իր խոստումը, միայն տպագրեց իր Կ. Պոլսի թղթակից Վաղինակի մի հոդվածը, ուր Տյուսաբի մասին կարդում ենք. «Ինքնուրույն վեպերու մեջ առաջին անգամ է հանդես եկավ Սրբուհի Տյուսաբ յուր Սիրաճույշով, որ նմանողություն մ' է յուր Մայուա առաջին հեղինակության և ավելի կը նմանի քերթողության ու ճառախոսության՝ քան վեպի։ Տիկին Տյուսաբի գրվածները փիլիսոփայական նախապատրաստության և կրթողության պեզ մ' են» («Արձագանք», 1886, № 8, էջ 120)։

թերցողներին իրավնկ դարձրեց «Մասիս»-ը[1]։ Ինչպես գիտենք, «Մշակ»-ի խմբագիրը և Տյուսաբը միմյանցից անկախ կնոջ մասին զարգացնում էին միևնույն հայացքը։ Ուստի չպետք է զարմանալ, որ Արծրունին «Արաքսիա...»-ի տենդենցը՝ «ապացուցաննելու ժամանակակից կյանքի մեջ կնոջ անկախ աշխատանքի անհրաժեշտությունը» գտավ «վերին աստիճանի համակրելի, հարգելի և օգտավետ»։ Տյուսաբը,— գրում էր նա,—«եթե չասենք մի նոր դարագլուխ է կազմում հայոց վիպագրության մեջ, գոնե նոր, մինչև այժմ չեղած տարր է մտցնում հայոց րոմանի մեջ, այն է հասարակական տենդենցիա, ձգտում հնացած կազմակերպությունը վերանորոգելու,— դարձյալ այդ դովելի, համակրելի և օգտավետ տենդենցիայի հետ միասին տիկին Տյուսաբի րոմանները մնում են... իրենց ձևերով ֆրանսիական րոմանտիական՝ անբնական դպրոցի հետևող»։ Ելնելով ռեալիզմի սկզբունքներից, Արծրունին մատնանշում էր, որ հեղինակը «ներկայացնում է մեզ անբնական, արվեստական, թ'ե լավ և թ'ե վատ տիպեր, զուտով բերում, հարմարեցնում, սազացնում է իր րոմանի չափից դուրս խճճված ֆաբուլայի մեջ՝ անցքեր, դեպքեր, պատահմունքներ...»[2]։

---

[1] Տե՛ս «Մասիս», 1887, № 3855, էջ 8 («Արձագանք»)։ Ի դեպ, նույն համարում էլ Աբելեաբյանը (Հրազդան), «Օրվան կյանքը» բաժնում տաբեմուտի երդիծական բաղձանքներ հղելով հայ մտավորականներին, Տյուսաբի մասին գրել է. «Ավետարանի վեց հիմար և վեց իմաստուն կուսյաների մասունքները։ Մեկնուբյուններըը փնտրել Արաքսիայի մեջ» (էջ 6)։ Այս առակի մասին տե՛ս Մ. Ալիք. Օրմանեան, Համապատում. կ. Պոլիս, 1911, էջ 684—686։

[2] Արծրունին իր հոդվածն ավարտում էր այսպիսի պատողությամբ. «Նվ գարձյալ տիկին Տյուսաբ այս րոպեիս իրավամբ համարվում է մեր գրականության մեջ ամենալավ վիպագրողներից մեկն. ի՞նչ կը լինեն մյուսները...

Իրականության ուսումնասիրելուն, խոր կերպով կյանքի երևույթների հետապնդելուն, իրական կյանքի դիտելուն, մարդու սրտի հոգեբանական ճիշտ և նուրբ քննելուն դեռևս ոչ մի հայոց վիպագրող չէ հասել։ Նրանք բոլորն էլ դեռևս ապրում են երևակայական աշխարհում, իսկ իրական կյանքի գաղտնիքները դեռևս անլուծելի, անբացատրելի, անմատչելի են մնում նրանց դիտողության համար, մաբ-

«Արաքսիա...»-ի նկատմամբ բավականին սուր դիրք գրավեց Ե. Տեմիրճիպաշյանը։ Նա իր գրախոսականում հայտարարում էր, որ Տյուսաբն «անկումե անկում կերթա»։ Այժմ քննադատը վերանայում է «Սիրանուշ»-ի առթիվ հայտնած կարծիքը և գտնում, որ այդ վեպը «արտաքուստ ավելի փայլուն՝ վատուժ ու ժժգույն էր իսկապես»։ Բացատրելով իր միտքը, Տեմիրճիպաշյանը գրում է. «Եթե Մայոտ ապագային վեպն էր. Սիրանուշ ներկային կը պատկաներ. Սիրանուշ ամուսին մ' ու սիրահար մ' ուներ, որպես արդի կանայք ընդհանրապես»։ Քննադատը «Արաքսիա...»-ի կապակցությամբ նկատում է. «Կյանքն և Հայ ընկերությունն հետ են այն գեղեցիկ պատկերին նմանելե, զոր ճարտար վրձինով մը գծած է Տիկին Տյուսաբ»։ Նա միամտություն է համարում այն, որ «ազնվապետական դասուն»՝ պատկանող երիտասարդն ամուսնանում է վարժուհու հետ[1]։ Թվում է, թե սրանք տեղին և ճիշտ դատողություններ են, բայց այդ միայն առաջին հայացքից։ Տեմիրճիպաշյանին մտահոգողը կենսական ճշմարտության աղավաղման փաստը չէ, նրա չափանիշն այլ է։ Տեմիրճիպաշյանի էկլեկտիցիզմն այստեղ երևում է իր ամբողջ էությամբ։ Իրեն հռչակելով «չքնաղ անձին»՝ Տյուսաբի հրկրպագուներից մեկը, նա միաժամանակ նշում է այն

դուս սիրտն ու հոգին անմատչելի են մնում բնալական հոգեբանական վերլուծման համար»։ Այս տողերը առիթ տվեցին «Մեղու Հայաստանի»-ին մի վերջին անգամ հարձակվելու «Մշակ»-ի վրա։ Քավության նոխազը դարձյալ Րաֆֆին էր։ «Ներք նույն մտքերը հայտնվեցին մի քանի տարի առաջ պ. Րաֆֆիի վեպերի մասին,—գրում է «Մեղու»-ն,—«Մշակը» պաշտպան հանդիսացավ նորա անբնական վիպասանության և ո՛ր եվրոպական հանճարի հետ չհամեմատվեցավ պ. Րաֆֆին «Մշակ»-ի թերթերում և որքան հիշողներ ու հայհոյանքներ չթափվեցան «Մեղու»-ի գլխին «Մշակ»-ի հայտնած վերոհիշյալ ճշմարիտ նկատմանց համար նույնիսկ «Մշակ»-ից, գամ պ. Գ. Մ. (Արծրունին իր հոդվածն այդպես էր ստորագրել—Ա. Շ.) մոռացկոտ է շատ և գամ այժմ հիշում է «լալ է ուշ քան երբեք առածը» («Մեղու Հայաստանի», 1886, № 63)։ «Մշակ»-ը չպատասխանեց այս քննադատությանը, թեև ամենատարբեր առիթներով նա շարունակում էր իր պայքարը «Մեղվի» դեմ, որը 1887 թվականից դադարել էր։

[1] «Գրական և իմաստասիրական շարժում», 1887, տետր առաջին, էջ 4, 5։

ահմանադիծը, որ բաժանում է իրեն վիպասանուհուց։ «Հա՛յամ իրարմե կը տարբերինք թե ինք մարդկային աղգի փրկութեան կը հալատա, իսկ ես կորստյան»[1]։ Նշանակում է, վեպի թուլությունը անկումայնության, հուսահատության բացակայությունն է։ Քննադատը ուշադրության արժանի է գտնում միայն Աղավնու մելամաղձոտ կերպարը։ Տյուսաբը պետք է այրի գրքի այն բոլոր էջերը, ուր խոսվում է Աղավնու՝ այդ «հիվանդության սերմի, հյուծախտի միգոտպի» մասին։ «Ես բարոյական հեղինակի հավակնություն չունիմ, ես կորուսանելու կոչում ունիմ. արդ, ինձ և ինձ նմաններու նեբելի է միգոտպներով լի գրվածներ տարածել Հայ բնակության մեջ»,—գրում է Տեմիրճիպաշյանը։

«Արաքսիա կամ Վարժուհին» վեպը գրախոսից նաև Գամերը (Տիգրան Արփիարյան)[2]։ Նա հասկանում էր, որ այդ գործը չի պատկանում «վիպական նոր», այսինքն ռեալիստական դպրոցին, բայց գտնում էր, որ այն ունի «բնականին շատ մոտ» էջեր։ Հոդվածագիրը դրանց թվին է դասում Վարսամյան ամուսինների փոխհարաբերության պատկերումը, ու. Աբգարյանի կերպարը, վեպի առավելություններից է համարում «այն տողերն, որք կը նկարագրեն կուսական սեր, ազնիվ զգացում, բարի սիրտ», մատնանշում է, թե մեր վեպերի մեջ «քիչ անգամ այդքան լավ պատկերացած է» Սիսակի նման մի երիտասարդ և այլն։ Տ. Արփիարյանը անում է մի շարք դիտողություններ՝ ներսեսի և Արաքսիայի սերը «քիչ մը աճապարանոք է կնքված», չեն համոզում Արաքսիայի և Սիսակի գիշերային ժամադրությունը, ու. Աբգարյանի նամակը Սիսակին, «դյուցազնական» է լեզուն, բայց ամբողջությամբ վերցրած «Արաքսիա...»-ն ընտիր գործ է։

Անհետաքրքիր չէ նաև Լ. Բաշալյանի կարծիքը «Արաքսիա...»-ի մասին։ Զոհրապի «Անհետացած սերունդ մը» վեպի առթիվ գրած գրախոսականում Բաշալյանը խոսում է նաև Տյուսաբի մասին՝ «Մայոտաեն հետո,—գրում է նա,—Սիրանույշն հառաջդիմություն մ' էր և այս երկուքեն հետո Արաբ-

---

[1] «Գրական և իմաստասիրական շարժում», 1887, տետր առաջին, էջ 7։

[2] «Մասիս», 1887, № 3857, էջ 24—25։

սիան մեծ քայլ մ' դեպ ի կատարելություն։ Արաքսիան երկ մ' էր ավելի կենդանի, ավելի բազմազան, ավելի զգացմամբ գրված։ Տիպարներն էին ավելի ճշգրտորեն նկարված, զգացումներն ավելի հոգածությամբ ի հայտ բերված, միջավայրերն ավելի ինամով պատկերացված»[1]։

* * *

Սրբուհի Տյուսաբի ստեղծագործության ամենահետաքրքիր հարցերից մեկը, անկասկած, վերաբերում է նրա և արևմտաեվրոպական ռոմանտիկների փոխհարաբերությանը, ավելի ճիշտ՝ գրողի վրա վերջիններս թողած ազդեցությանը։ Վիպասանուհին այդ մասին կոնկրետ ոչինչ չի ասում, միայն «Մայտա»-ի առաջաբանում խոստովանում է, թե իր հոգում արձագանք է գտել «ընկերական և կրոնական զեղծմանց» դեմ պայքարող հեղինակների ուժգին բողոքը։ Մի շարք կողմնակի փաստեր, սակայն, խոսում են հետաքրքրող խնդրի կապակցությամբ Տյուսաբի հակումների մասին։ «Սիրանույշ» վեպում գրողն իր հեղինակային խոսքում Ժորժ Սանդին անվանում է «անմահ» (էջ 211)։ Գիտենք, որ նա հիացել է Վիկտոր Հյուգոյով։ «Այն պահուն,— գրում է Ս. Երեմյանը,— երբ Ֆրանսիացի տիեզերահռչակ բանաստեղծը հաստատակամ կը վճռե ոևէ անձի նամակներուն չի պատասխանել, սակայն Տյուսաբի քնքույշ մեկ գրության չի կրնալով տոկալ, Սիրո մասին մեկ տողով հանճարեղ պատասխան մը կը գրե։ Եվ Հյուգոյի գրագիրը կը պատասխանե Տյուսաբին, որ մեծ բանաստեղծը նույն օրերը 300 նամակ անպատասխան էր թողած և միայն Տյուսաբին պատասխանած»[2]։ Հ. Ասատուրը հաստատում է, որ հայ վիպասանուհին Հյուգոյից խնդրել է «երկու բառ» և նրա նկարը։ «Թշվառներու հեղինակը այս խնդրանքը ընդունած ու գրած էր «Aimer c' est agir» («Սիրելը գործել է»)։ ...Այդ բառերը (Տյուսաբը—Ա. Շ.) շրջանակի մեջ անցնել տված, կը պահեր խնամքով»[3]։ Տյուսաբը

---

[1] «Մասիս», 1887, № 3877, էջ 182։

[2] Հ. Սիմեոն Երեմյան, Ազգային գիմքիր, գրագետ հայեր, յոթերորդ շարք, Վենետիկ, 1914, էջ 335։

[3] Հ. Ասատուր, Դիմաստվերներ, էջ 166։ Հյուգոյի պատասխանը հետաքրքրել է նաև ժամանակի այլ մտավորականներին։ Ս. Տեմիրճի-

բարձր համարում ուներ նաև տիկին Սթալի ստեղծագործության մասին։ Ահա թե ինչ է պատմում Շերենցը, «Օր մը Մայտայի հեղինակը հարցուց իրեն (Ք. Շիշմանյանին—Ա. Շ.), թե ինչ կը կարդար. «Տիկին տը Սթալի Քորինը, պատասխանեց»,—նկարագրյալ կանանց ո՞րն է քեզի հաճելի, ո՞ւմ կուզեիր նմանիլ հարցուց. «Լյուսին է ինձ հաճելի» եղավ պատասխանը. «այդ բնությունը կը սիրեմ ես»։—Ո՜հ, ես Քորին կուզեի լինել,—ըսավ Տիկինը»[1]։

Ժամանակակիցների և հետագա ուսումնասիրողների մոտ, որքան ասես, կարելի է գտնել հակասական հայտարարություններ, անվերապահ պնդումներ ու ենթադրություններ Տյուսաբի կրած ազդեցությունների մասին։ «Հեղինակին ծանոթությունը վայելողներեն լսած եմք...,—ասում է Բանասիրը,— որ օտար գրականության մեջ եղած վիպական հրատարակություններն ալ չկարդար և չէ կարդացած ընավ»[2]։ «Կ'ենթադրեմ թե բոլոր ֆրանսական մատենագրության ռոմանդիմ և դասական գործերուն մեծագույն մասին ծանոթ եղած է, և որոնց ազդեցությունը զորավոր կերպով կերևա իր երեք վեպերուն մեջն ալ, ուր կան էջեր որոնք այս կամ այն հեղինակը կը հիշեցնեն»,—գրում է Ա. Ալպոյաճյանը[3]։ Լսենք և այլ ուսումնասիրողների. «Իր վրա մեծապես ազդած է մատամ տը Սթալի «Գորին» սիրուն ընդարձակ վեպը»,— հավատացնում է Ս. Երեմյանը[4]։ Մ. Ճանաշյանը չբավարարվելով «Մայտա»-ի վրա Ռուսոյի «Նոր Էլոիզ»-ի և Գյոթեի «Վերթեր»-ի ազդեցությունները հայտնաբերելով, գտնում է, թե «Մատամ տը Սթալի Գորինը, ժորժ Սանի, Տյումա Որդիի վեպերը շատ բան հաղորդած են իրեն՝ իբրև մտածություն, պատկեր և

պաշյանը մտաբերում է. «Ագջի՛կս, ըսավ (Տյուսաբը—Ա. Շ.) օր մը, Սիա Էֆենտիին օձիքեն չը պիտի ազատիմ, Վիկտոր Հյուկոյին հատակը բեր կարդացուր» («Մասիս», 1901, № 8, էջ 115)։

[1] Էռնեսթ Լբկուվիե, *Բարոյախոսություն կնկանց։ Թարգմանեց յոթերորդ տպագրութենեն Թադուհի Շ. Մելիք-Ափարյանց*, հատաջաբան Շերենցի, Կ. Պոլիս, 1889, էջ Թ—Ժ։

[2] «Մասիս», 1884, № 3606։

[3] Ա. Ալպոյաճյան, *Ուսումնասիրություն Սրբուհի Տյուսաբի*, էջ 26։

[4] Հ. Սիմեոն Երեմյան, *Գրագետ հայեր*, յոթերորդ շարք, էջ 350։

խոհք,— բայց նե փոխադրելով հայկական միջավայրին իր կրած տպավորությունները՝ ճիգ մը կը կատարե պոլսահայ մեր բարքերը սրբագրելու. իր այս պատշաճեցումի փորձը արդեն մեծ քայլ մ' էր»[1]։

Ճիշտ չէր լինի հախուռն կերպով մերժել բոլոր այս տեսակետները՝ հայտարարելով դրանք հնարովի ու արհեստական։ Անտարակույս նման եզրակացությունների համար ուսումնասիրողներն ունեցել են ինչ-որ կռվան։ Երբեմն նրանց շփոթության մեջ են գցել հարցի երևույթական, խաբուսիկ կողմերը։ Մ. Ճանաշյանի կարծիքով «Մայտա»-ի և «Յուլիա կամ Նոր Էլոիզ» ու «Պատանի վերթերի տառապանքները» գործերին միացնողը վիպական ձևն է՝ նամականին։ Այդ իմաստով էլ ժան-ժակ Ռուսոն ու Գյոթեն ազդել են վիպանուհու վրա։ Բայց այդ տրամաբանությամբ «Մայտա»-ի վրա հնարավոր է հեշտությամբ հայտնագործել նաև Սամյուել Ռիչարդսոնի, ժերմեն Սթալի «Դելֆինա» կամ, ասենք, Ֆեոդոր Դոստոևսկու «Խեղճ մարդիկ» վեպերի ազդեցությունը, որոնք նույնպես գրվել են ավելի վաղ ու նամակաձև են։ Տյուսաբի և ֆրանսիական ռոմանտիկների գործերում ևս հետազոտողներն ընդհանրություններ են տեսել։ Իրոք, Սթալը նույնպես կերտել է ըմբոստ, ուժեղ կամքի տեր կանանց կերպարներ («Կորինա կամ Իտալիա» վեպի հերոսուհին դրանով էր հրապուրում Տյուսաբին), իսկ Ալեքսանդր Դյումա Որդու «Կամելիազարդ տիկինը» վեպի ու դրամաների թեմատիկ-գաղափարական հիմքը բուրժուական ընտանիքի պրոբլեմն է (ինչպես «Սիրանույշ»-ում)։ Այս առումով կարելի է խոսել միայն որոշ նմանության մասին։

Բայց ազդեցություն Տյուսաբն անպայման կրել է։ Նրա հիշատակած՝ «Ընկերական և կրոնական զեղծմանց դեմ բողոքող» հեղինակները, առաջին հերթին, ֆրանսիական մեծ լուսավորիչներն են։ Վիպասանուհին յուրացրել էր նրանց ուսմունքը գաղափարների վերափոխիչ նշանակության մասին և հաճախ է (գրեթե բառացիորեն) կրկնում նրանց մտքերը։ Կրոնի էության վերաբերյալ գրողի պատկերացումները նույն-

---

[1] Հ. Մեսրոպ Վ. Ճանաշյան, *Պատմություն արդի հայ գրականության, հ. առաջին*, էջ 252—255։

պես գալիս են ոչ այնքան Սթալից ու Սանդից, որքան լուսավորիչներից։ Տյուսաբի աշխարհայացքի վրա նկատելի հետք է թողել նաև ռուսոյիզմը։ Ամեն անգամ, երբ նա խոսում էր մարդու «բնական իրավունքների» մասին, քարոզում բնության մեջ երջանկանալու համոզմունքը, ոգեշնչվում էր Ռուսոյի «Բնության մեջ մարդիկ հավասար են» գաղափարով։ Բայց միայն այդքանը։ Տյուսաբը չմնաց ո՛չ լուսավորիչների, ո՛չ էլ Ռուսոյի հետևողական հետևորդը։ Երբ վիպասանուհին ծաղրում էր «ազատության և հավասարության» սկզբունքները, դրանով իսկ օբյեկտիվորեն ցույց էր տալիս լուսավորական հայացքների սնանկությունը։ Մյուս կողմից՝ նրա մոտ որևէ արտահայտություն չգտան մասնավոր սեփականության՝ որպես շարիքի և քաղաքակրթության կործանարար նշանակության վերաբերյալ ռուսոյիզմի հիմնորոշ սկզբունքները։

Ավելի հաճախ Տյուսաբի անունը զուգորդվել է Ժորժ Սանդի անվան հետ։ Տեմիրճիպաշյանը հայ վիպասանուհուն կոչել է «Արևելից Ժորժ Սան»՝ ավելացնելով, որ նա «իր կենաց պարագաներուն մեջ՝ հավետ կամ նվազ կը հիշեցնի այն ֆրանսիացի հեղափոխական դրագիտուհին»[1]։ Տեմիրճիպաշյանն այդ ասելով նկատի ունի ամենից առաջ «Մայոտա»-ն։ «Երբ Մայոտան երևեցավ, հարցուցին շատեր, թե Ժորժ Սանե՞ն թարգմանված էր, թե Էնտիանայի ու Լելիայի հեղինակին մեծ անտիպ գո՞րծն էր, այնքա՞ն փայլ ուներ այդ վիպասանությունն ու այնքա՞ն բարձր իմաստասիրական և բնական հավակնություն՝ սկսյալ հառաջաբանեն»[2]։ Տ. Արփիարյանը նույնպես փորձում է կոնկրետ լինել. «Սրտի ու հոգվո խնդիրներու և զգացմանց ուսումնասիրության մեջ Տիկին Տյուսաբ կը հիշեցնե զԺորժ Սան, այնքա՛ն խոր կը թափանցե սրտին ու հոգվույն և այնքա՛ն լավ գիտե պատկերել տիպար մը, զգացում մը, տեսարան մը»[3]։

Տյուսաբի կրած ազդեցության հարցին ամենից ավելի ուշադրություն է դարձված պրոֆ. Ա. Տերտերյանի

---

[1] «Գրական և իմաստասիրական շարժում», 1883, տետր Ը, էջ 156։

[2] Նույն տեղում, 1885, տետր յոթերորդ, էջ 121։

[3] «Մասիս», 1887, № 3857, էջ 25։

«Սրբուհի Տյուսաբ և «ռոմանտիկ ոճի» խնդիրը» ձեռագրի իրավունքով հրապարակված աշխատությունում և հատկապես գրականագետ Ա. Բաբայանի «Սրբուհի Տյուսաբ» հոդվածում։

Ժորժ Սանդը առաջադիմական ռոմանտիզմի կարկառուն ներկայացուցիչն է, և ուսումնասիրողները Տյուսաբին կապելով նրա հետ, օբյեկտիվորեն ընդունում են հայ վիպասանության առաջադեմ ռոմանտիկ լինելը։ Եվ դա ճիշտ մոտեցում է։ Պետք է ցավել միայն, որ բազմերախտ գրականագետ Ա. Տերտերյանը հետևողական չգտնվեց և հետագայում «Պարոնյանի դեղագիտական հայացքները» աշխատությունում Տյուսաբին ու Մերենցին դիտեց հայ գրականության մեջ Շատոբրիանի ռոմանտիզմի «բուրժուա-դեմոկրատական թևը»[1]։ Անհնարին է վիպասանությունը (և Մերենցի) մարդասիրական ու լավատեսական գաղափարները հաշտեցնել գրական ռեակցիոներ Շատոբրիանի ոդու հետ, որի ստեղծագործություններում լիաձայն հնչում են մոայլ անհուսության, միստիկ ու կրոնական տրամադրությունները։ Եվ ապա, մի՞թե հետադիմական ռոմանտիզմը առհասարակ կարող է ունենալ բուրժուա-դեմոկրատական բովանդակություն։

Տյուսաբը Ժորժ Սանդի ջերմ երկրպագուն էր, որին լայն հռչակ բերեցին ռեսպուբլիկական և սոցիալ-ուտոպիկ գաղափարներով ներծծված նրա վեպերը։ Ճիշտ է նկատված, որ Տյուսաբն ավելի շատ ոգևորվել է նշանավոր գրողի 30-ական թվականների գործերով («Ինդիանա», «Վալենտինա», «Լելիա», «Ժակ»), որոնցով, հեղինակի իսկ խոսքերով ասած, ինքը հարցնում էր, թե «ինչ է ամուսնության բարոյականությունը այն ձևով և այն իմաստով, ինչպիսիք նրան տրվում են մեր օրերում», թե հասարակության մեջ ինչպես է ըմբռնվում ու բացատրվում սերը[2]։ Կնոջ ստրկական վիճակի դեմ բողոքով, կրթության ու սիրո իրավունքների պահանջով Տյուսաբը հիշեցնում է Ժորժ Սանդին։ Դեռ ավելին. կարելի է ասել, որ մի շարք խնդիրներում հայ վիպասանուհին հետևում է Ժորժ Սանդին։ Կրոնը պետք է մարդուն ոչ թե

---

[1] Ա. Տերտերյան, *Երկեր*, էջ 681։

[2] *Жорж Санд*, Избранные сочинения, т. 2, ГИХЛ, М., 1950, стр. 585, 586.

ատրկացնի, այլ վերադառնալով իր նախկին անաղարտ վիճակին, օգնի նրան լավագույն կյանք նվաճելու գործում։ Կրոնի նման մեկնաբանությունը Տյուսաբը, ըստ էության, փոխ էր առել Ժորժ Սանդից։ Վերջինս նույնպես աթեիստ չէր, բայց կրոնի վերածնունդը նրա իդեալների իրականացման վճռական պայմանն էր։ Ահա թե ինչ ենք կարդում վիպասանուհու 1836 թվականի նամակներից մեկում. «...Վերականգնել նախագո հավասարությունը և հարություն տալ աստծո սահմանած կարգին,—ահա այն կրոնը, որ հռչակում եմ ես...»[1]։ Կոմսը («Մայտա») իր հայացքներով Ժորժ Սանդի Տրենմորն է («Լելիա»)։ Տարբեր պարագաներում են նրանք հանդես գալիս, բայց ընդհանուր են նրանց գաղափարներն ու գործելու շարժառիթները։ Երկուսն էլ անձնական դժբախտությունից հետո են հոգեկան վերափոխում ապրում, հասկանում կյանքի իմաստը և իրենց կյանքի նպատակը տեսնում բարեգործության, դժբախտներին օգնելու և սփոփելու մեջ։ Սա ցույց է տալիս, որ իրոք Ժորժ Սանդը ազդեցություն է թողել հայ գրողի աշխարհայեցողության վրա։ Բայց նա չի ընդօրինակել, մեխանիկորեն չի կրկնել Ֆրանսիացի վիպասանուհուն։

Տյուսաբը գրում էր հայ կնոջ մասին, և բոլոր դեպքերում հաշվի էր առնում հայ կյանքն ու իրականությունը։ Սանդի հերոսուհիները հաճախ են լքում իրենց ամուսիններին, հրաժարվում նրանցից, երբ համոզվում են, որ հուսախաբ են եղել (Ինդիանան հեռանում է Դելմարից, փախչում Ռայմոն Ռամյերի մոտ), իսկ Տյուսաբը խստագույնս դատապարտում էր ամուսնական անհավատարմությունը՝ դիտակցաբար չհարուցելով ապահարզանի խնդիրը։ Ժորժ Սանդի հերոսներն ըմբոստ են, ծառանում են հասարակության դեմ և, որպես այդ բողոքի յուրատեսակ արտահայտություն, ինքնասպան են լինում (Նունը, Ինդիանան, Ռալֆ Բրաունը, Վալենտինան ու Բենեդիկտը, պոետ Ստենիոն, Ժակը և այլք) կամ հեռանում հասարակությունից ու ամփոփվում «մայր բնության» գրկում, մինչդեռ Տյուսաբի հերոսները բողոքում

---

[1] *Жорж Санд*, Избранные сочинения, т. 2, ГИХЛ, М., 1950, стр. 616.

են միայն խոսքով։ Տյուսաբի վեպերում տիրաբար իշխում է կնոջ ազատագրության գաղափարը։ Ժորժ Սանդի՝ անգամ 30-ական թվականների գործերը շատ ավելի սոցիալական են. դրանց մեջ բախվում են հասարակական տարբեր շահեր, գործում են հակամարտ ուժեր ու դասակարգեր։ Սանդը «Վալենտինա»-ում ստեղծեց գյուղացի Բեննեդիկտի դրական կերպարը, իսկ Տյուսաբի մոտ աշխատավորական ղանգվածների ներկայացուցիչները միայն ֆոն են կազմում։

Այս փաստերը վկայում են, որ Ժորժ Սանդը տակավին իր առաջին շրջանի ստեղծագործություններում շատ ավելի արմատական էր, քան հայ վիպասանուհին։ Եվ այդ հասկանալի է. նրանք տարբեր ժամանակաշրջանների, տարբեր իրականությունների ծնունդ էին. մեկը ոգևորված էր ուտոպիստն և օպտիմիստն դասակարգերով, որոնք Հուլիսյան միապետության տարիներին նիրհած չէին և պատրաստ էին գրոհի նետվել Լուի Ֆիլիպի տիրապետության դեմ, իսկ մյուսը՝ ահաբեկված էր արևելյան ամենաբիրտ բռնակալությունից և ստիպված էր գաղտնագիր ձևով արտահայտել բուրժուական ռեսպուբլիկայի «անմեղ» պահանջն իսկ։

Ե՛վ Ժորժ Սանդը, և՛ Սրբուհի Տյուսաբը իսկապես մեծ ուշադրություն էին նվիրում իրենց հերոսների հոգեկան աշխարհին, քնարական անմիջականությամբ նկարագրում նրանց ապրումները։ Բայց Տյուսաբի վեպերը գեղարվեստորեն շատ են զիջում Ժորժ Սանդի գործերին։ Վերջինիս երկերում առկա է հասարակական միջավայրի պատկերը։ Եթե Ժորժ Սանդը, իր իսկ խոսքերով, զգուշանում էր «ֆաբուլայի ավանդական և միամիտ նենգահյուսումից»[1], եթե նա գերադասում էր իր կերպարներին բնութագրել գործողությունների մեջ ցուցադրելով միայն, ապա Տյուսաբն, ընդհակառակն, գիտակցաբար դիմում էր այդպիսի միջոցների։

---

[1] *История французской литературы*, т. II, 1789—1870 гг., изд. АН СССР, М., 1956, стр. 275.

ԳԼՈՒԽ Ե

ԿՅԱՆՔԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ

«Արաքսիա կամ Վարժուհին» վեպի ընծայականում Սըրբուհի Տյուսաբը հայտնում էր, որ այդ թեթև իր վերջին գործն էր։ Դրա պատճառը ստեղծագործական ուժերի սպառումը չէր, ինչպես ենթադրել են ոմանք, այլ հեղինակի վատառողջ վիճակը, որ գնալով աղետալի էր դառնում։ «Արաքսիա...»-ի լույս տեսնելուց մի քանի ամիս առաջ Ե. Տեմիրճիպաշյանը (Մելանիա) հայտնում էր, որ վիպասանուհուն «բժիշկն արգիլած է գրական ծանր աշխատություն»[1]։ Պահպանվել են Տյուսաբի մի քանի նամակները լուսանկարիչ Գ. Ապտուլլահին[2], ուր նա հաճախ է գանգատվում իր «հրեշ գլխից», որ թույլ չի տալիս «պարզ ձեռագործով անգամ զբաղելու»[3]։ «Ծթե զիս տեսնես,— գրում է Տյուսաբը 1887 թվականին,— պիտի զարմանաս արտաքին երևույթիս վրա, այնշափ պիտի կարծես թե առողջ եմ. և սակայն գլուխս նույն վիճակին մեջ է»[4]։

Չկարողանալով «ո՛չ կարդալ և ոչ ալ գրել», ինչպես նաև մտահոգվելով ամուսնու գործերով (որի նկատմամբ սուլթա-

---

[1] «Երկրագունտ». 1886, № 5, էջ 221 («Ակնկան մը օրագիրն»)։

[2] Գ. Ապտուլլահը (1839—1918) նույնպես աշակերտել է Մ. Պեշիկթաշլյանին և հավանարար նրա ու Տյուսաբի բարեկամական ջերմ մտերմությունը այդ տարիների արդյունքն է եղել։ Ս. Երեմյանը վկայում է, որ Ապտուլլահը ունեցել է «100 են-ավելի նամակներ» («Գրագետ հայեր», յոթերորդ շարք, էջ 337), բայց դրանցից պահպանվել են 13-ը, որոնք և հրատարակել է Ե. Տայեցին իր ուսումնասիրությունում։

[3] Հ. Ե. Տայեցի, Հուշագիր կենաց և գործունեության նախկին հայաբնակ լուսանկարիչ Գեորգ Ապտուլլահի, էջ 107, 108։

[4] Նույն տեղում, էջ 100։

նը փոխել էր իր վերաբերմունքը), Տյուսաբն ապրում է հոգևոր անհանգստություն։ Նրան այլևս չեն հետաքրքրում այն հավաքույթները, որ առաջվա նման կազմակերպվում էին իրենց սալոնում։ Այժմ վիպասանուհու միակ մխիթարությունը մնում էր հանրօգուտ գործունեությունը։

1887—1889 թվականներին Տյուսաբը դարձյալ եռանդուն հանգանակություններ է կատարում Դպրոցասեր տիկնանց ընկերության և Երզնկայի դպրոցի օգտին[1], նյութական լայն օժանդակություն է կազմակերպում Խասգյուղի Գալֆայան նշանավոր որբանոցին, որտեղ խնամվում էին մի քանի տասնյակ որբեր[2]։ Նա հաճախ է լինում դպրոցներում, իր խորհուրդներով օգնում ուսուցիչներին ու աշակերտներին։ 1887 թվականի մայիսին գրողը այցելում է Կ. Պոլսի Կենտրոնական վարժարանը. «...Շատ գոհ եղա հոն տեսած ու քննածներես»,—գրում է նա իր բարեկամին[3]։ 1889 թվականի ապրիլին Տյուսաբն իր դստեր և Միացյալ ընկերությունների գործադիր ժողովի ատենապետ Հովհաննես Թորոսյանի ուղեկցությամբ լինում է Գալֆայան որբանոցում, զրուցում սանների հետ, նայում նրանց ձեռագործերը։ Ներսիսյան աղջկանց վարժարանում նա քննում է աշակերտուհիների գրավոր աշխատանքները[4]։ Տյուսաբի անձնական ջանքերի շնորհիվ ձեռք է բերվում Հ. Այվազովսկու մի նկարը և դրվում Միացյալ ընկերության վիճակահանության[5]։ Այդ տարիներին գրողն ստանձնում է Ասիական ընկերության[6] լսարանների հովանավորությունը՝ կազմակերպելով գրական-երաժշտական մի

---

[1] Հ. Ե. Տայեցի, Հուշագիր Գեորգ Ապտուլլահի, էջ 107։

[2] Տե՛ս «Արևելք», 1889, №№ 1581 և 1612 («Ազգային լուրեր»)։

[3] Հ. Ե. Տայեցի, Հուշագիր Գեորգ Ապտուլլահի, էջ 102։

[4] «Արևելք» 1889, № 1589 («Տիկին Տյուսաբ վազա ի Գալֆայան որբանոց Խասգյուղի»)։

[5] «Արևելք», 1889, № 1380։

[6] Այս ընկերությունը (հիմնված 1876-ին Խասգյուղում) նպատակ ուներ էժան կամ ձրի դասագրքեր հայթայթել հայկական դպրոցներին։ Տյուսաբը 1887 թվականի մայիսին հրավիրվել է դասախոսելու ընկերության բանախոսարանում, բայց հրաժարվել է իր «խեղճ ու տկար դլխի» պատճառով (տե՛ս Հ. Ե. Տայեցի, Հուշագիր Գեորգ Ապտուլլահի, էջ 102)։

քանի հանդեսներ, որոնց մասնակցել են Տ. Չուհաջյանը, Ռ. Պերպերյանը, Թ. Թերզյանը, Ե. Տեմիրճիպաշյանը և այլք[1]։

Կոստանդնուպոլսում պատրաստվում էին տոնել Պետրոս Ադամյանի բեմական գործունեության 25-ամյա հոբելյանը։ Տյուսաբը նորից խանդավառված է, նա ոչ միայն դառնում է հոբելյանական մասնախմբի նախագահը[2], այլև գրիչ է վերցնում և պատրաստում մի ստեղծագործություն, որ արտասանելու էր հոբելյարը։ Դա էլ դարձավ վիպասանուհու կարապի երգը։

Մեզանում հանճարեղ ողբերգակի և հայ անդրանիկ վիպասանուհու մասին խոսվել է բացառապես Ադամյանի հոբելյանի կապակցությամբ։ Իրականում Ադամյանի և Տյուսաբի փոխհարաբերությունները ամենևին էլ էպիզոդիկ բնույթ չեն կրել, այլ եղել են մտերմիկ ու բարեկամական։ Դրանց ուսումնասիրությունը թույլ է տալիս պարզել կամ առավել լավ պատկերացնել Ադամյանի կյանքի վերջին շրջանի (ավելի ճիշտ՝ 1886—1889 թվականների) հետ առնչվող որոշ խնդիրներ։

Որքան էլ զարմանալի լինի, Տյուսաբի սալոնի՝ այցելուների թվում, դատելով Հ. Ասատուրի հիշողություններից, մենք չենք հանդիպում Ադամյանի անվանը։ Դա կարող է բացատրվել նրանով, որ Տյուսաբի ստեղծագործական արբունքի տարիներին (1883—1886) Ադամյանը բացակայում էր Կոստանդնուպոլսից, իսկ երբ նա վերադարձավ մայրաքաղաք (1888, օգոստոս), վիպասանուհին արդեն քաշվել էր գրական հրապարակից, և Ասատուրը չէր կարող ենթադրել, թե նրանց միջև կարող է լինել որևէ հարաբերություն։ Մինչդեռ հենց այդ շրջանում է, որ նրանց միջև հաստատվում է (թերևս շարունակվում է) ջերմ ու անկեղծ բարեկամություն, որի մասին վկայում է ոչ այլ ոք, քան ինքը՝ Տյուսաբը, իր նամակներից մեկում։

---

[1] Այս հանդեսների մանրամասն նկարագրությունները տե՛ս «Երկրագունտ», 1887, էջ 161—173, 1888, էջ 97—106, ինչպես նաև՝ «Արևելյան մամուլ», 1887, հունիս, էջ 302, «Մասիս», 1887, № 3874 և այլն։

[2] Հրանտ Ասատուր. Դիմաստվերներ, էջ 161։

Սակայն ամենից առաջ մի քանի խոսք Ադամյանի հոբելյանի մասին։

Արդեն ասվեց, որ հոբելյարն արտասանել է նաև Տյուսաբի գրած մի գործը, բայց թե ինչ է ներկայացրել այդ ստեղծագործությունը, ստուգապես հայտնի չէ։ Ադամյանին նվիրված գրականության մեջ այդ առթիվ որոշակի ոչինչ չենք գտնում։ Պետք է խոստովանել, որ Տյուսաբի մասին եղած հոդվածներում քիչ թե շատ հանգամանալից տեղեկությունները համեմված են զանազան անճշտություններով։ «Արևելք» օրաթերթը վիպասանուհու մահախոսականում նշում է, որ Ադամյանն իր հոբելյանի ժամանակ արտասանել է «Որդեկորույս ծնողք մը» անվամբ Տյուսաբի մենախոսությունը, որը «մեծ տպավորություն թողուց ունկնդիրներուն վրա»[1]։ Նույնն է պնդում «Արտեմիս» հանդեսի հեղինակը («Զ»)՝ ավելացնելով, սակայն, թե Տյուսաբը եղել է հոբելյանի նախագահը[2] (սա ճիշտ չէ, Տյուսաբը չի եղել նույնիսկ հոբելյանական հանձնաժողովի կազմում)։ Հ. Ասատուրը Տյուսաբի գործը համարում է «Մենախոսություն մը, արձակ բանաստեղծություն»[3], Հր. Աճառյանը հաստատում է, որ Տյուսաբի «մենախոսությունը» ունեցել է «Որդեկորույս ծնողք մը» վերնագիրը, որի մեջ «սգավոր մայրը ներկայացնում է իր աղջկա անփոխարինելի կորուստը և ծնողական տառապանքները»[4]։

Դժբախտաբար, մինչև այժմ չի հայտնաբերվել Տյուսաբի այդ ստեղծագործությունը, սակայն ժամանակի մամուլում կան հիշատակություններ, որոնք ցույց են տալիս, որ այդ գործը (արձակ բանաստեղծություն կամ մենախոսություն) ոչ ունեցել է «Որդեկորույս ծնողք մը» խորագիրը, և ոչ էլ դերասանը մարմնավորել է մոր ապրումները։

«Արևելք» օրաթերթը 1888 թվականի դեկտեմբերի 10-ին ծանուցում է, որ Ադամյանի հոբելյանը տոնվելու է «թատերական շքեղ ներկայացմամբ մը, հորում հայազգի

---

[1] «Արեւելք», 1901, № 4525։
[2] «Արտեմիս», 1901, № 1, էջ 26։
[3] Հրաչ Ասատուր. Դիմաստվերներ, էջ 161։
[4] «Էջմիածին», 1951, հունվար—մարտ, էջ 45։

տաղանդավոր դերասանն յուր գլխավոր դերերե միույն մեջ փայլելե զատ, պիտի արտասանե վսեմաշուք Տիկին Տյուսաբ փաշայի ընտիր մեկ մենախոսությունն»[1]։ Հոբելյանը նշելուց երկու օր առաջ (դեկտեմբերի 28) թերթը զետեղում է հանդեսի ծրագիրը, որտեղ արդեն ճշտված է մենախոսության վերնագիրը, «Քերթողն որդեկորույս հեղին. տիկին Սրբուհի Տյուսաբ, պիտի ներկայացնե Պ. Հ. Ադամյան»[2]։ Հանդեսի հաջորդ օրը «Արևելք»-ը տալիս է նրա ընդարձակ նկարագրությունը, որից համենայն դեպս պարզ է դառնում, թե ով է մենախոսության հերոսը. «...ի բեմ եկավ Պ. Ադամյան՝ վսեմ. Տիկին Տյուսաբ փաշայի հորինած սրտահույզ և զեղեցիկ մենախոսության մեջ որդեկորույս հյուծյալ քերթողի կերպարանաց ներքև, մահամերձ ու երազացնոր, օրհասականի խեղդուկ և սրտաճմլիկ հազով մը։ Մեծանուն դերասանին հաջողություննն այնքան մեծ եղավ այս տեսարանին մեջ, որ հանդիսականք չորս անգամ ի տես կոչեցին զինքն եռանդագին ծափահարությամբք և կեցցեներով»[3]։

Հոբելյանից մի քանի շաբաթ անց հրապարակային փորձ է արվում վարկաբեկել Ադամյանին։ Դրան գումարվում է հանդեսի ծախսերի վիրավորական հաշիվը և այդ ամենը շարժում են Ադամյանի զայրույթն ու վրդովմունքը։ Ալեքսանդր Ստեփանյանին գրած նամակներից մեկում (1889, փետրվարի 2) դերասանը պատմում է, որ «բոլորը կատաղած են» իր նկատմամբ ցուցաբերված անբարյացակամության դեմ և ավելացնում է. «Տիկ. Սրբուհի Տյուսաբ՝ նույնպես»[4]։ Այս առիթով բանասեր Գ. Ստեփանյանը նկատում է. «Մեզ հայտնի չէ, թե վիպասանուհի Սրբուհի Տյուսաբը ի՛նչ դիրք է բռնել։ Մամուլում այդ մասին ոչինչ չկա»[5]։ Ժամանակի մամուլում այդ մասին իրոք ոչինչ չկա, բայց կա Տյուսաբի վերևում արդեն հիշատակած՝ 1889 թվականի փետրվարի 12-ի նամակը, որն օգնում է մեզ կռահել գրողի

---

[1] «Արեւելք», 1888, № 1482։
[2] Նույն տեղում, № 1497։
[3] Նույն տեղում, № 1500։
[4] Պետրոս Ադամյան, Նամակներ, Երևան, 1959, էջ 217։
[5] Նույն տեղում, ծանոթագրություններ, էջ 306։

վերաբերմունքը թե՛ հետաքրքրող հարցի և թե՛ Ադամյանի նկատմամբ ընդհանրապես։ Ստորև բերում ենք այն հատվածները, որոնց մեջ խոսվում է Ադամյանի մասին։

«...Անցյալ երկուշաբթի օր[1] Ադամյան եկավ. խուռն բազմություն ունեի. և բոլոր օտարազգիներն խիստ գոհ եղան յուր ձևերեն։ Երկու օր հառաջ Dorinne-ին[2] տոնն էր. Ադամյան զայդ իմանալով եկավ կիրակի առավոտուն[3] և օրն ի բուն մեզի հետ անցուց, այսինքն 25-ի չափ հրավիրեյոց հետ՝ որոնց առջև յուր զաղղիական մենախոսությունն[4] րրավ և զամենքն սքանչացուց։

Հայերը ոչ միայն այդ մարդուն հարգը չեն ճանաչեր, այլ կը հարստահարեն. նույնիսկ անճոռնի Նիկողոսյանի մի անհիմն դատապարտություններն հրատարակելով, զորս Ադամյան պատասխանելով ի դերև հանեց, և շատերն ստուդություններ առնելով համոզվեր են անոնց անստուգության վրա[5]։

Այսօր երեքշաբթի վայրիկ մի Ադամյան եկավ և իմացուց ինձ թե հանձներ են իրեն երեկ՝ հաշիվն յուր հոբելյանի։ Երևակայե 80 ոսկվո չափ կարծեմ ծախք մի հաներ են, տեսա հաշիվը, բայց չեմ հիշեր իրապես. զոր օրինակ 1300 դահեկան իր կենսագրության հրատարակության համար, և չգիտեմ ինչ գումար, երևակայե՛, իրեն տրված պսակին և ծաղկեփունջին համար։ Լավա՞ծ բան է արդյոք որ ինքը՝ դերասանը յուր անձին ծաղիկ նվիրե։ Ադամյան ինքզինքեն դուրս ելած էր, կատղած որչափ կրնաս երևակայել. այնուհետև կելնեն մարդը կը դատապարտեն, կը քարկոծեն։

---

[1] Փետրվարի 4-ին։

[2] Dorinne (նաև Դորի, Տոռի)—Ս. Տյուսաբի դուստրը։

[3] Փետրվարի 10-ին։

[4] Հավանաբար Ֆ. Գոբևի «Գործադուլ դարբնաց» պիեսի մի մենախոսությունն է, որ Ադամյանն արտասանել է հոբելյանական հանդեսում։

[5] Խոսքը Գրիգոր Նիկողոսյանի նամակի («Արևելք», 1889. № 1517) և Գ. Ադամյանի պատասխանի («Արևելք», 1889, № 1519) մասին է։ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս բանասեր Գ. Ստեփանյանի ծանոթագրություններըը (Պետրոս Ադամյան. «Նամակներ», էջ 305—306)։

Ա՜հ, բարեկամս Պոլիս գեղարվեստի երկիր չէ ապահովապես»[1]։

1889 թվականի մարտին Ադամյանը ևս հրավիրվում է մասնակցություն ունենալու Ասիական ընկերության մի հանդեսին, որին նա համաձայնվում է մեծ սիրով։ Նախապես որոշված էր այդ միջոցառումն անցկացնել մարտի 12-ին (հին տոմարով), որտեղ ինչպես ծանուցում էր «Արևելք»-ը «Պետրոս էֆ. Ադամյան պիտի արտասանե հայերեն՝ Որդեկորույս fերթողն. հեղինակություն Վսեմ. Տիկին Տյուսաբ փաշայի և ֆրանսերեն՝ Շեյքսբիրի «Համլեթ» թատերգութենեն մի նշանավոր հատված»[2]։ Մարտի 15-ին թերթը տեղեկացնում է, որ երեկոն տեղի է ունենալու «հատաջիկա կիրակի» (19-ին) և գոհունակությամբ ավելացնում է. «... պ. Ադամյան, որ անձնվիրաբար յուր մասնակցությունը շնորհած է Լսարանին, պիտի ներկայացնե Վսեմ. Տիկին Տյուսաբ փաշայի սրտահույզ մենախոսությունն, Որդեկորույս fերթողն, և՛ ֆրանսերեն լեզվով Համլեդի հիմարության հռչակավոր տեսարանը»։ Հետաքրքիր է նաև, որ նշանավոր էռնեստո Ռոսսին (որ այդ ժամանակ դաստրոլներ էր տալիս Պոլսում) նույնպես հրավիրվել է «Ներկա գտնվել հայ արվեստագիտին ներկայացմանը»[3]։

Իր մի թղթակցությունում Հայկակը, համառոտակի պատմելով այդ «գրական խնճույքի» մասին, ցավով գրում է, թե «պ. Ադամյանի ձայնը մարած էր և կարող չեղավ բան մը ըսել»[4]։ Իսկ «Արևելք» օրաթերթը այսպես է նկարագրում այդ հանդեսը. «...Երաժշտություն. և ի՞նչ երաժշտություն. Սեճֆոնի մը, լուրջ, հանդիսավոր, դաժա՞ն ու դժխե՞մ, և ահա բեմին վրա է Պ. Ադամյան, բայց ո՛չ Որդեկորույս Քերթողին մաշած թափթփած հագուստներով, կիսաբաց շապկին տակեն երևալով վտիտ ու սմսեղուկ կուրծքն, դիմացը վրա օրհասականի տառապանքն աղեկիզիկ, ո՛չ ալ Տանը-

---

1 Հ. Ն. Տայեցի, Հուշագիր Գևորգ Ապտուլլահի, էջ 116 – 117։

2 «Արևելք», 1889, № 1546։

3 Նույն տեղում, № 1559։ Ինչ-ինչ պատճառներով Ռոսսին չի մասնակցել այդ հանդեսին։

4 «Մշակ», 1889, № 38։ («Նամակ Թուրքիայից»)։

մարքային իշխանադուն է սուրը մեջքին, վայելուչ լոդիկ մը իրանն ամփոփած և փետրավոր գլխարկը գլխուն, այլ Ադամյան պարզ, քաղքենիի հագուստով, հորդառատ մազերը ծածանուտ, միշտ սիրուն, միշտ համակրելի։ Սկած է ծանուցանելու, որ կոկորդի հիվանդության մը պատճառավ, որ երեք շաբաթե ի վեր զինքը կը նեղե, չկրնա մասնակցիլ Լսարանին, ըստ բժշկական պատվերի... Ձայնն արդարև մարած է, սուր և նվաղուն շշյուններով կելլա կոկորդեն»[1]։

Այս տխուր հանդեսից մի քանի ամիս անց, 1889 թվական նոյեմբերին, Սրբուհի Տյուսաբը դատեր հետ մեկտեղ մեկնեց Փարիզ՝ բուժվելու[2]։ Ճանապարհին վիպասանուհին կանգ առավ բուլղարական Ֆիլիպպե (այժմ Պլովդիվ) քաղաքում, ուր տեղի հայ հասարակության պատգամավորությունը հոգևոր առաջնորդ Ռուսճուքլյանի գլխավորությամբ ջերմ ընդունելություն ցույց տվեց նրան[3]։ Հռչակավոր ներսպաթոլոգ, ֆրանսիական Ակադեմիայի անդամ ժան Մարտեն Շարկոն (1825—1893) Տյուսաբի մոտ հայտնաբերեց նյարդային սուր բորբոքումներ։ Բայց տևական բուժումից հետո նրա վիճակը նկատելիորեն ապաքինվում է։ «Կրնամ ըսել որ վերականգնացա բարոյապես և ֆիզիքապես, թեև գլուխս բոլորովին առողջացած չէ մինչև ցարդ»,—գրում է նա 1890 թվականի մարտին[4]։

Մոտ երկու տարի մնալով Փարիզում, Տյուսաբը հետաքրքրվում է Ֆրանսիայի կյանքով, դիտում ճարտարապետական հուշարձանները, այցելում թանգարանները, լինում թատրոններում, ունկնդրում համերգները, ներկա գտնվում Դեպուտատների պալատի ու Գերագույն դատարանի նիստերին, շփվում մինիստրների, դեպուտատների, հոգևորականների, դիվանագետների հետ։ Օգտվելով պատեհ առիթից, նա երաժշտական բացառիկ ընդունակություններով օժտված իր դստերը՝ Դորիին, ներկայացնում է Շառլ Գունոյին և

---

[1] «Արևելք», 1888, № 1563։

[2] Նույն տեղում, № 1750։

[3] «Արևելյան մամուլ», 1889, նոյեմբեր, էջ 341 («Լրաքաղ»)։

[4] Հ. Ե. Տայեցի, Հուշագիր Գեորգ Ապտուլլահի, էջ 126։

Ամպրուազ Թոմային, որոնք նրան փայլուն ապագա են դուշակում[1]։

Փարիզյան նամակներից մեկում Տյուսաբը պատմում է, թե ինքն ինչքան ջանքեր է գործադրել «Նուվել որվյու»-ի («Նոր հանդես») հռչակավոր խմբագիր Ժյուլեաս Ադանին հանդիպելու համար։ Հայ վիպասանուհին ոչ միայն ծանոթանում, այլև մտերմանում է Ադանին և վերջինս հրավիրում է նրան նորից այցելել իրեն։ Որոշ փաստեր թույլ են տալիս հասկանալու, թե ինչու էր Տյուսաբը ձգտում մերձենալ այդ նշանավոր ֆրանսուհուն, որի սալոնը մի ժամանակ ականավոր ռեսպուբլիկականների հավաքատեղին էր։ Տյուսաբին, անկասկած, գրավում էր Ադանի հայրենասիրությունը, սուր-թանական բնավորության նկատմամբ տածած ատելությունը։ «...Մատամ Ադամին հետ տեսնվեցա, կատարելապես հակաթուրք է. քեզի հակառակն ըսողները սուտ են խոսած», —ուրախությամբ հայտնում էր նա Ապտուլլահին[2]։ Թերևս կար նաև այլ պատճառ։ Դեռևս 1887 թվականին մի հեղինակ («Միռա») «Զմայլումներ» հոդվածում արտահայտել էր այն միտքը, թե Տյուսաբը «փոխանակ լոկ յուր ընտիր վիպերով մեր մեջ բարվոք գրելու, բարվոք խորհելու, բարվոք ապրելու եղանակներն ուսուցանելու, հարկ է որ միանալով Մելանիայի (Ե. Տեմիրճիպաշյանի—Ա. Շ.) հետ գեղեցիկ սեռին հատուկ թերթի մի խմբագրություն ստանձնե՝ աջակից ընտրելով հատընտիր գրագիտուհյաց հույլ մի, որով մեր սեռին իմացական մակերևույթն ավելի կը բարձրանա և կարդյունավորի»[3]։ Անհավանական չէ, որ Տյուսաբը նույնպես ունենար այդպիսի մտադրություն և Ադանի հետ նրա հանդիպումները հետապնդեին հայ կանանց համար որևէ պարբերական հիմնելու շուրջը խորհրդակցելու նպատակը։

Սրբուհի Տյուսաբը պայծառ հույսերով թողեց Փարիզը։ Բայց վերահաս դժբախտությունը խորտակեց նրա կյանքը։ Պոլիս վերադառնալուց մի քանի ամիս անց, 1891 թվականի օգոստոսի 31-ին, թոքախտից մահացավ 18-ամյա Դորին։

---

[1] «Արևելք», 1891, № 2200 («Օր. Տորին Տյուսաբ»)։

[2] Հ. Ե. Տայեցի, Հուշագիր Գեորգ Ապտուլլահէ, էջ 120։

[3] «Մասիս», 1887, № 3905, էջ 408։

Այդ անփոխարինելի կորուստը Տյուսաբին կտրեց ոչ միայն գրականությունից, այլև արտաքին աշխարհից։ «Իր մեջ,— գրել է այդ առթիվ Սիպիլը,—մայրը կնոջմեն և գրագետեն ավելի զորավոր եղավ»[1]։ Վիպասանուհին այրեց իր արխիվը, մոռացության մատնեց ամեն ինչ։ Պատմում են, որ նա տնից դուրս էր գալիս միայն գերեզմանատուն գնալու համար, ուր սպիտակ վարդենիների օրորի ներքո ննջում էր սիրասուն Դորին... «...Կյանքս, սիրտս, են... լի, լի, լի հրեշտակիս հիշատակալն»,—գրում էր նա իր նամակներում[2]։

Ջուր էր փորձում Մաղաքիա Օրմանյանը մխիթարել սգակիր կնոջը և հորդորել հաշտվելու «հին բարեկամին»՝ գրչի հետ[3]։ Տյուսաբն ընտելացել էր վշտերին. «Կյանքն անտանելի է ինձ համար... զավակս կուզեմ, կը փնտրեմ ամեն տեղ»։ Նա զարմանում էր, որ մարդիկ հարգ են ընծայում «այնպիսի բանի, որ հարգ չունի, այսինքն կենաց»[4]։ Ոչ վեպերը և ոչ էլ բարեկամները չկարողացան մեղմել գրողի վիշտը։ Որդեկորույս մորը այլ հարցեր էին հուզում։ Նա Օրմանյանից պահանջում էր բացատրել, թե «ինչպես պիտի ըլլան հոգիներու զգացումները, հարաբերությունները, գործողությունները և փոխադարձ սերը», իսկ եպիսկոպոսը անզոր էր նրան օգնել. «Այդչափ մանրամասնություն փորձառական զննության չեն կրնար ենթարկվիլ»[5]։ 1892 թվականի ամռանը Գրիգոր Չիլինկիրյանն այցելեց իր վաղեմի բարեկամուհուն և տեսավ նրան «վշտի և թշվառության կենդանի արձան մը դարձած»։ «Կը հավատա՞ս Աստուծո էության և հոգվո անմահության...»,—այս հարցով դիմեց Տյուսաբը Չիլինկիրյանին և այդ հարցը համոզեց զմյուռնահայ փաստաբանին, որ վիպասանուհին զբաղված է «մարդուս անդըր-

---

[1] «Լույս», 1903, № 41, էջ 644։

[2] Հ. Ե. Տայեցի, Հուշագիր Գեորգ Ապտուլլահի, էջ 127—128։

[3] Տե՛ս Մ. Օրմանյանի 1892 թ. մարտի 15-ի նամակը Մ. Տյուսաբին («Ամտղաբերդ», Իսթանպուլ, 1952, ապրիլ, № 1, էջ 7)։

[4] Տե՛ս Մ. Տյուսաբի նամակները Գ. Ապտուլլահին (Հ. Ե. Տայեցի, Հուշագիր Գեորգ Ապտուլլահի, էջ 131, 133 և այլն)։

[5] «Անահիտ», 1936, № 1—3, էջ 61 («Օրմանյան Սրբազանի նամակը տիկին Սրբուհի Տյուսաբինն»)։

դամբանական ճակատագրին ու նախասահմանության վերաբերող անլույծ և սոսկալի» խնդիրներով[1]։ Իսկապես, Տյուսաբի 1894 թվականի նամակներում հաճախ են հանդիպում այսպիսի մտքեր. «Մահը դուռ կը բանա նոր աշխարհի», կրոնը մարդու «մեծագույն հարստությունն» է[2]։ Դրանք խոսում են այն մասին, որ Տյուսաբը սփոփանք էր որոնում կրոնի մեջ, հավատում հոգու անմահությանն ու հանդերձյալ կյանքին, ուր նա հույս ուներ հանդիպել Դորիին։ Դատեր սերը այնքան ուժեղ էր, որ վիպասանուհին զգալով մոտալուտ մահը, կաթոլիկություն ընդունեց՝ նրա կողքին թաղվելու համար։

Հաջորդում էին տարիները միմյանց։ Տեղի ունեցավ արևմտահայության առաջին եղեռնը, գրական հորիզոնում փայլում էին նորանոր անուններ, վերջնականապես հաղթանակեց ռեալիզմը։ Իսկ Տյուսաբը շարունակում էր փակվել Դորիի սենյակում, երկար ու տառապալի աղոթել դաշտային ծաղիկներով շրջանակված դատեր նկարի առաջ։

Բայց Տյուսաբին չէին մոռացել, նրան հիշում էին սիրո ու ափսոսանքի զգացումով։

1898 թվականին Սիպիլը մի հոդված նվիրեց Տյուսաբին («Կիսադեմքերը քողին ետևեն. վայրկենական»), ուր խոստովանում էր նրա ծառայությունները հայ գրականության. «Ինքը հանդուգն «ֆեմինիստ» մը իր երկերուն մեջ,— գրում էր նա,— անկեղծ արհամարհող մը կեղծավոր պատշաճությանց, քաջություն ունեցած է ըսելու ճշմարտություններ, որոնց առջևեն զարհուրած ետ-ետ պիտի փախչեր մեր պշրասեր կիներուն ծփծփուն առաքինությունը։ Եվ այդ ճշմարտությունները ներկայացուցած է մեզի ոչ թե ժանյակե բուրակապահիկներու մեջ ժապավենով փաթված, այլ բաց թուղթի վրա, լուրջ, պարզ և անաշառ, ինչպես է իր վրա ամեն բան՝ նայվածքը, ժպիտը, կեցվածքը, մինչև արդուզարդն անգամ»[3]։ Բարեկամներից մեկը Սիպիլի հոդվածը ցույց

---

[1] «Արեւելյան մամուլ», 1894, № 6, էջ 167։

[2] Հ. Ե. Տայեցի, Հուշագիրը Գեորգ Ապտուլլահի, էջ 133—135։

[3] «Մասիս», 1898, № 76։ Հետագայում Սիպիլը կարծում էր, թե այս հոդվածը տպագրվել է 1899-ի վերջերին, «Արեւելք»-ում։

ուվեց Տյուսաբին, և նա ցանկություն հայտնեց հանդիպել հեղինակին։ «Կիրակի օր մըն էր,—վերհիշում է Սիպիլը,—երբեք չպիտի մոռնամ։ Ծաղիկ հասակի բոլոր ավյունս վերածնած կը զգայի իմ մեջս, և մանկության երկչոտություններով կը բաբախեր սիրտս, երբ զարկի տան դուռը... Շատ խոսքեր ունեի իրեն, ինչպես հին մտերիմի մը, որ տարիներով օրորած էր սիրտս իր տաքուկ զգացումներով և անույշ, շատ անույշ պատկերներով»։ Սիպիլը նույնպես Տյուսաբին գտնում է սևազգեստ ու տխրադեմ։ «Այդ տաղանդավոր կինը,—շարունակում է նա,—առանց արդուզարդի արվեստակության, գիտեր գերազանցորեն վայելուչ ըլլալ իր հոգիին ու մտքին ույժովը միայն։ Իր ռոմանդիկ գաղափարներովը որքա՞ն վեր կը գտնեի զինքը բարիզյան իրապաշտ վեպերու ժանեկազարդ հերոսուհիներեն, որոնք իրենց պգեստներուն հետ կը մերկանան իրենց հրապույրներեն...

Հիմակ կը հասկնայի կնոջ դերին, կնոջ պաշտոնին, կնոջ բարձր կոչման վրա իր ըմբռնումները»[1]։

Զապել Եսայանը նույնպես Տյուսաբի երկրպագուներից էր։ Նա պատմում է, թե ինչպես ընկերուհիներով կարդում էին վիպասանուհու գործերը և ջանում դրանց մեջ «դարման գտնել մեզ հուզող հարցերին»։ Մի օր էլ Զապելն իր ընկերուհի Արշակուհու (հետագայում Թեոդիկի կինը) հետ որոշում են այցելել գրողին։ Տյուսաբը նրանց ջերմությամբ է ընդունում։ «Տիկին Տյուսաբ,—մտաբերում է Զ. Եսայանը,—լսելով, որ գրական ասպարեզին թեկնածու մըն եմ, ինձ նախազգուշացուց, ըսելով, որ այդ ասպարեզը կնոջ համար ավելի շատ տատասկներ ունի, քան դափնիներ։ Ինձ ըսավ թե մեր իրականության մեջ դեռ անհանդուրժելի կհամարեն, որ կին մը հրապարակ գա և ուզե իր տեղը գրավել։ Հաղթահարելու համար այդ բոլորին, պետք էր միջակութենե վեր ըլլալ։

...Տիկին Տյուսաբ խոր ազդեցություն գործեց մեր վրա։ Վերադարձին ոգևորությամբ կխոսեինք»[2]։

---

[1] «Լույս», 1903, № 41, էջ 642—643։

[2] Զապել Եսայան, Մելիհտաթի պատեզնները, Գահիրա, Երևան, 1935, էջ 293—294։

Սրբուհի Տյուսաբը մահացավ 1901 թվականի հունվարի 3(16)-ին քաղցկեղից։ Նրա աճյունն ամփոփվեց Շիշլիի լատինաց գերեզմանատանը՝ դստեր կողքին։ Ննջեցյալի հարազատները նրա շիրմի վրա կապնեցրին մի համեստ հուշարձան ֆրանսերեն մի տապանագրով.

«Այստեղ հանգչում է Սրբուհի Տյուսաբը, մեռած 1901-ի հունվարի 16-ին։

Հրաշալի կնոջն ու մորը, նրան որ ուներ սրտի բոլոր առաքինությունները և մտքի բոլոր շնորհները։

Հավերժ հարգանք և ափսոսանք»[1]։

Հայ մամուլը Պոլսում և Թիֆլիսում, Զմյուռնիայում և Ալեքսանդրապոլում, Մարսելում և Նյու-Յորքում, Վենետիկում ու Կահիրեում արձագանքեց վիպասանուհու մահվանը։ Այդ տխուր առիթով հայ մշակույթի գործիչները նորից անդրադարձան «տաղանդավոր վիպագրի», «հռչակավոր հայ կնոջ», «ինքնատիպ գրագիտուհու», «հայ գրական հորիզոնի թագուհու» գործունեությանը։ «Նա մեռավ, բայց նրա անունը չի մեռնի մեր գրականության մեջ»,— գրում էր Լեոն[2]։

* * *

Տյուսաբի մահից հետո նրա թղթերում «Մայտա»-ի ֆրանսերեն օրինակից բացի հայտնաբերվեցին վիպասանուհու ֆրանսերեն հիշատակարանը և «Մտքեր ու մաքսիմաներ» խորագրով մի քանի էջեր։ Քանիցս մամուլում խնդիր է հարուցվել տպագրել Տյուսաբի օրագրերը, բայց մինչև օրս ամբողջական վիճակով լույս չեն տեսել և այժմ դրանց ճակատագիրը մնում է անհայտ։ Սիպիլն առաջինն էր, որ 1903 թվականին հրատարակեց մի պատառիկ։ Հետագայում Թեոդիկը, նախ, ընթերցողի ուշադրությանը ներկայացրեց «Մտքեր...»-ի առանձին քաղվածքներ «Մտածումներ» վերնագրով, ապա և տպագրեց օրագրությունից բավականին ընդարձակ հատվածներ։ Այլևայլ առիթներով լույս տեսան Տյուսաբի մի քանի նամակներ։ Այդ նյութերի մասին այս

---

[1] Թեոդիկ, *Ամենուն տարեցույցը*, 1914, կ. Պոլիս, էջ 46։

[2] «Մուրճ», 1901, № 7, էջ 197։

ու այն կապակցությամբ արդեն խոսել ենք։ Այստեղ ուզում ենք բավարարվել միայն մի քանի ընդհանուր դիտողություններով։

Առանձին նշումները ցույց են տալիս, որ Տյուսաբը օրագրություն է պահել 70-ական թվականներից սկսած։ Հավանական է, որ 1884 թվականին հրապարակված «Ի հիշատակ սիրելի մորս տիկին Նազլը Վահան» հուշերը այդ օրագրության մի մասն են։ Վիպասանուհու հիշատակարանը կերազանցապես անձնական բնույթի է, ուր նա անկեղծորեն կրուցում է ինքն իր հետ տարբեր խնդիրների շուրջը։ Տյուսաբը շատ է խոսում կնոջ ճակատագրի, երկու սեռերի փոխհարաբերությունների մասին, և այդ ինտիմ գրառումների մեջ մենք դարձյալ կարդում ենք նույն մտքերը, ինչ հեղինակի հրապարակախոսական ելույթներում ու վեպերում։ Նա ուզում է, որ կինը չդատապարտվի «սովերի մեջ գործելու երկրորդական դերով մը», այլ թույլ տրվի նրան գործելու իր «բովանդակ ազատությամբ»[1]։ «Ո՞վ է կինը եթե ոչ զոհը մարդկային ընկերության»,—վերստին հարցնում է Տյուսաբը և պահանջում «հօգուտ մարդկային ընկերության» օգտագործել կնոջ բարոյական ուժերը, դարձնել նրան «հանրային կյանքի» մասնակից։ «Բայց,—շարունակում է նա,— պիտի առարկեն ինձ. այդ պարագային ո՞վ պիտի մնար տանը, ո՞վ պիտի խնամեր ընտանիքը»։ Գրողը ընդունում է, որ «գործավորուհիները» դրա համար ժամանակ չունեն, ուստի նա զբաղվում է «այն կինով, որ բարեկեցիկ է քիչ շատ, կամ անով, որ տեր է բարձր դիրքի»[2]։ Այս կանանց էլ, որոնք ունեն ամեն մի հնարավորություն, բացի գործելու ցանկությունից, նա ուղղում է իր կշտամբանքը։

Ուշադրության արժանի երկրորդ մոմենտն այն է, որ գրողի «Մտքեր ու մաքսիմաներ»-ում առավել հստակությամբ են երևում նրա ընդհանուր աշխարհընմբռնման մի քանի էական կողմերը։ Տյուսաբը չէր հասկանում հասարակական զարգացման իրական պատճառները և իդեալիստորեն ամեն ինչ բացատրում էր հոգեկան գործոններով։ «Կրոնք, Ազա-

---

[1] Թեոդիկ, *Ամենուն տաբեցույցը*, կ. Պոլիս, 1923, էջ 73։

[2] Նույն տեղում, էջ 74։

տութիւն և Սեր, ասոնց չարաչար գործածութեամբ է որ հառաջ եկած են Կեղծաւորութիւնն, Անիշխանութիւնն ու Ապականութիւնը»։ «Ազգերու տկարութիւնն է որ ծնունդ տված է բռնակալներու»,—հավատացնում է նա[1]։ «Մըտքեր...»-ում կարելի է գտնել նաև այլ կարգի շատ խորհրդատվություններ ու նկատողություններ։ Հետևյալ խորհրդածությունները ապացուցում են, որ Տյուսաբը իրոք «խորհող ու փիլիսոփայող» մի մտավորական էր, ինչպես սիրում էին ասել նրա մասին ժամանակակիցները. «Երբ մարդ յուր իրավունքները պաշտպանել չգիտեր, արժանի չէ պանոնք վայելելու», «Անձնական կարծիք չունեցողը կը նմանի հայելիի մը ուր կցոլա ամեն մարդու կարծիքը», «Համակերպիլը եղբայրակցիլ է դժբախտութեան հետ», «Երբ մեր ծնողաց արժանիքներուն վրա պարծինք, ապացուցած կըլլանք արժանիք մը չունենալնիս», «Ազատական դաղափարներ կը քարոզեն. բայց երբ իշխանութեան գլուխ անցնին՝ քարոզածնին շուտ կը մոռնան ու կը խորհին միայն տիրապետելու վրա»[2]։

Վիպասանուհու նամակներում ու օրագրերում կան էջեր, որոնք ունեն գեղարվեստական արժեք։ Այդպիսին է, օրինակ, օրագրության այն հատվածը, որ, ըստ երևույթին, հրատարակչի կողմից վերնագրված է «Գարուն»։ Դա մի գեղեցիկ արձակ բանաստեղծություն է, ուր երևում է բնապաշտ Տյուսաբը։ «Կը լսեմ թռչնոց դայլայլը։ Արդյոք անոնք ի՞նչ կըսեն իրարու. բույնին քաղցրությա՞ն վրա կը խոսին, կամ կուրախանան սա գեղեցիկ արևին վրա որ կը փողփողի, և կամ այն ծաղկի՞ն վրա որ կը փթթի՝ իրենց հաճույք առթելու համար... Կը լսեմ թռչունը որ կը շարունակե՝ իր մեղանույշ գեգեղը, ընկերուհին որ պատասխան կուտա անոր, հետո անոնք իրարու կը խառնեն ձայներնին։ Տարվույն օրհնյալ եղանակին՝ գարնան մեջ ենք, ճաճանչ, բույր կամ երգ է ամեն ինչ, հիացումո՞վ կը համակե զիս՝ ինչ որ կը թրթռա կամ կը բաբախե ուժգին... Բայց մարդը դաշտերեն նախապատիվ սեպած է քաղաքը, լայնարձակ հորիզոնեն՝ բնա-

[1] Թեոդիկ, Ամենուն տաբեցույցը, Կ. Պոլիս, 1914, էջ 45, 47։
[2] Նույն տեղում, էջ 48։

կարաններու սեղմ տանիքները, արևուն պայծառութենեն՝ շենքերու տամուկ շուքը... Երգեցե՛ք միշտ, ո՜վ թռչնիկներ, բարձրացե՛ք դեպ ի երկին կապուտակ, վար իջե՛ք, ճովողեցե՛ք և անհուն համերգին մեկ ձայնանիշը եղե՛ք։ Ինչո՞ւ չեմ կրնար ես ալ, ձեզի պես, սիրած բոլոր էակներուն հետ վերաթռչիլ, մոտենալ երկնից և հոնկե գոչել Հավիտենականին. «Քանիո՜ն գեղեցիկ է բնությունը, Տե՛ր, և ձեռակերտդ ինչքա՜ն վսեմ։ Որքան հեշտ է սիրել քաղաքներու ժխորեն հեռու, անծիր հորիզոններու արբեցության մեջ»[1]։

* * *

Այժմ երբ մենք ծանոթացանք Տյուսաբի կյանքին ու գործին, կարելի է անել մի քանի հետևություններ՝ վիպասանուհու ստեղծագործության ընդհանուր արժեքն ու նշանակությունը բնութագրելու իմաստով։

Դեպի գրականություն Սրբուհի Տյուսաբը մղվել է ամենից առաջ իր քաղաքացիական պարտքի թելադրմամբ։ Վ. Գ. Բելինսկին ժորժ Սանդի մասին գրել է. «Ինչպիսիք էլ լինեն նրա սկզբունքները, կարելի է դրանց հետ չհամաձայնվել, կարելի է դրանք չքաժանել, կարելի է դրանք կեղծ գտնել, բայց չի կարելի չհարգել նրան իբրև մարդու, որի համար համոզմունքը հոգու և սրտի հավատք է»[2]։ Այդպիսին էր և հայ վիպասանուհին։ Նրա համար նույնպես հայ կնոջ ազատագրության խնդիրը և՛ հավատք էր և՛ համոզմունք։ Այդ հանգամանքը մենք առանձին ուշադրության արժանի ենք գտնում, որովհետև ժամանակին արտահայտվել է մի առավել քան տարօրինակ կարծիք, համաձայն որի գրականությունը եղել է Տյուսաբի համար ժամանց, ինքնանպատակ «հոգեկան գոհացման» առարկա միայն։ «Հոգեկան հրճվանքի տեսակետը միայն կրնար աչքի առջև ունենալ ամեն անգամ որ գրիչը ձեռք առներ»,—պնդել է Արամ Անտոնյանը (Մերսեաես)[3]։ Տյուսաբը քանիցս («Մայտա»-ի առաջաբա-

---

[1] Թեոդիկ, *Ամենուն տարեցույցը*, կ. Պոլիս, 1923, էջ 72—78։

[2] *В. Г. Белинский*, Собрание соч. в 3-х томах, т. II. ОГИЗ, М., 1948, стр. 356.

[3] «Մասիս», *1901*, № 2, էջ 21։ (Ընդգծումը մերն է—Ա. Շ.)։

նում, ե. Տեմիրճիպաշյանին հղած նամակում) խոստովանել է, որ ինքը գիտակցաբար է նվիրվել գրականությանը։ Այդ միտքը ամենայն հստակությամբ արտահայտված է նաև «Սիրանույշ» վեպի առաջաբանում։ «Մեծ է հավատքս վասնզի համոզման մի վրա հիմնված է։ Մեծ է քաջությունս վասնզի պարտականության գաղափարեն արտադրված է» (էջ 172)։ Սիպիլը, որ շատ լավ էր հասկանում ու գիտեր Տյուսաբին, ահա թե ինչ է գրել նրա մասին. «Իր միտքը հասարակ միտք չէ, ոչ ալ կյանքը հասարակ կյանքը. ինքը հացի կամ փառքի համար գրող մը չէր... Իր հոգին գթությամբ լեցուն իր ներին նկատմամբ, գրեց անոր համար, խոսեցավ անոր համար, գործեց անոր համար...»[1]։

Որպես ստեղծագործող, Տյուսաբն ուրույն տեղ է գրավում մեր գրականության պատմության մեջ։ Հայ գրողներից առաջինը բարձրացնելով կնոջ ազատագրության խնդիրը, նա դրանով իսկ, Ա. Չոպանյանի դիպուկ արտահայտությամբ, «այր մարդու գրականություն մը ըրած է»[2]։ Դա դրական խիզախություն էր, և այդ խոստովանել են շատ ուսումնասիրողներ։ «...Ով այսօր,—գրել է Ա. Ալպոյաճյանը,—երբ իր երկերը ձեռք կառնենք, մենք՝ դեռ երեկվաններս, կզարմանանք կնոջ մը այն հանդգնության վրա, որ 1880—90 շրջանին մեջ թե գրական հրապարակ եկած է, և թե ընդհանրության հակառակ գաղափար մը տարածած է»[3]։ Ա. Արփիարյանն անարդարացիորեն ուրանում է վիպասանուհու ստեղծագործության նշանակությունը։ Տյուսաբի վեպերը, ասում է նա, «մեր ժամանակակից մատենագրության մեջ նշանավոր տեղ մը չկրավեցին, ու նաև զգալի ազդեցություն չունեցան հայ կնոջ և հայ ընկերական կյանքին վրա»[4]։ Իրականում գրողի գործերը, և հատկապես «Մայտա»-ն, ընթերցողների ամենալայն շրջանների վրա ունեցել են բացառիկ մեծ ազդեցություն։

---

[1] «Լույս», 1903, № 41, էջ 643։

[2] «Մաղիկ», 1895, № 2, էջ 38։ (Հկինները գրականության մեջ»)։

[3] Ա. Ալպոյաճյան, Ուսումնասիրություն Սրբուհի Տյուսաբի, էջ 20—21։

[4] Արփիար Արփիարյան, Պատմություն ԺԹ դարու Թուրքիո հայոց գրականության, էջ 223։

